

892.7

7-14

5702 714

ՀԱԶԱՐ ՈՒ ՄԷԿ ԳԻՇԵՐՆԵՐ

ԱՐԱՊԱԿԱՆ ՎԷՊԵՐ


ԹԱՐԳՄԱՆԵՑ

Մ. Մ.

ՀԱՏՈՐ ՀԻՆԳԵՐՈՐԳ

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ



ԶՄԻՒՌՆԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ

1871

57-40000

շատ մ'ուրիշ մարդիկ առնելով՝ որոնք շղթաներ, շրուշակներ և խորազան մը միասեղ բերեր էին :

Երբ Ապու Հասան անոնց դարուստը տեսա՝ սոսկաց այն բերուած գործիներէն և բոլոր ճիգը թափեց որ անոնց ձեռքէն զինքն ազատէ . բայց դձուհապանս՝ որ խորազանը ձեռք առեր էր, զանի հանդարանցուց անոր կռնակին քանի մը հարուած իջեցնելով : Այս հարուածներուն վրայ Ապու Հասան հանդարտ կեցաւ և դձուհապանն իր մարդիկներովն ուզածին պէս վարուեցաւ անոր հետ : Շղթաներով կապեցին զանի, շրուշակներն անցուցին և երբ այսպէս կաշկանդեցին՝ զանի իր տունէն հանեցին և յիմարանոցը տարին :

Այն ինչ Ապու Հասան փողոցն ելաւ որ անհամար բազմութիւն մ'անոր չորս կողմն առին : Մէկն անոր կուռի մը կտար, ուրիշ մ'ապտակ մը, ուննք ալ անոր գլխին թշնամանք կը թափէին խենդ, յիմար, ցնտրեալ կոչելով :

Բոլոր այս ծանր նախատանաց՝ Ապու Հասան կը պատասխանէր . «Միայն Աստուած է մեծ ու հզօր : Կուզեն որ խենդ ըլլամ, թէ և խելքս գլուխս է, այս նախատինքն ու վատութիւններն Աստուծոյ սիրոյն համար կը կրեմ : »

Այս կերպով Ապու Հասան յիմարանոցը տարուեցաւ : Այն տեղ բնակեցուցին զինքն ու երկաթէ վանդակէ մը կապեցին . իսկ զայն դուցելէն առաջ՝ յիմարապահն որ այս սոսկալի արհեստին վարժ էր, յիսուն խորազանի հարուած տուաւ անինսց անոր ուսերուն և կռնակին, և երեք շարաթ շարունակ մի և նոյն հարուածները կը տեղաւորէր, և ամէն անգամուն սա խօսքերը կը կրկնէր . «Իսկէք դլախ դողվէ և Ըսէ եթէ կ'ուզես թէ հաւատացելոց իշխանն ես : — Ես քու խորհրդէդ պէտք չունիմ, կը պատասխանէր Ապու Հասան, ես խենդ չեմ, բայց եթէ երբէք խենդեմս՝ այսպիսի դժբաղդութեան մը մէջ մի միայն քու տուած հարուածներէդ պիտի ընկնիմ : »

Սակայն Ապու Հասանի մայրն ամէն օր կանոնաւոր կերպով կ'զար իր որդին տեսնելու, և չէր կրնար իր արասուքը բռնել քանի կը տեսնէր որ Ապու Հասան օր օրի կը հալէր, կը մաշէր և իր քաշած ցաւերուն վրայ կը դանդաղէր և կը հառաչէր : Եւ արդարեւ ուսերը, կռնակն

ու կողերը սեցած ու վիրաւորուած էին, և չէր գիտեր որ կողմը դառնալ քիչ մը հանդիստ գտնելու համար : Մարմնոյն կաշին քանի մը անգամ փոխուեցաւ, երբ այս սոսկալի բնակարանը կը դանուէր : Մայրը կը ջանար անոր հետ խօսելով միթիթարել և քննել թէ արդեօք մի և նոյն մտքի վրայ է և միշտ կը պնդէ թէ հաւատացելոց իշխանն է, բայց քանի բերանը բանար այս կէտին ակնարկելու համար՝ այսպիսի կատաղութեամբ անոր վրայ կը յարձակէր և կը վռնտէր որ կ'ստիպուէր թողուլ երթալ, և անոր անընկճելի յամառութեան վրայ անմիթար դառնալ :

Ապու Հասան որչափ որ 'ի սկզբան համոզուած էր թէ ինքն ամիրապետի պէս հազուեր, անոր պաշտօնը վաւեր, ամիրապետի պէս հրամաններ տուեր և գօրծաղրուեր էին, և թէ արթնալուն նոյն համոզումն ունէր, սակայն ժամանակ անցնելով այս զաղափարներն սկսան մտքէն քիչ քիչ ցրուիլ :

«Եթէ ամիրապետ և հաւատացելոց իշխան ըլլայի, կ'ըսէր երբեմն ինքնովին, ինչո՞ւ համար քունէս արթնալուս տունս պիտի դանուէի իմ սովորական հաղուստովս : Ինչո՞ւ համար ներքինապետն, ուրիշ բազմաթիւ պաշտօնեաներ և դեղանի կիներ իս չպիտի շրջապատէին : Ինչո՞ւ համար ճեաճիւր վէզիւրն՝ որ իմ ոտքիս առջև տեսայ, ինչո՞ւ համար այնքան կուսակալներ, պաշտօնեաներ, որոնք չորս կողմն առեր էին, իս երեսի վրայ պիտի ձգէին : Անտարակոյս շատոնց այս ողորմելի վիճակէս իս կ'աղաատէին, եթէ անոնց վրայ իշխանութիւն մ'ունենայի : Այս ամէնն երազ մ'էր, և պէտք չէ որ հակառակը պնդեմ : Իրաւ է որ օստիկանութեան գատաւորին ապստրեցի որ իմամն ու չորս խորհրդակիւն ձեռերը պատժէ, ճեաճիւր վէզիւրին հրամայեցի որ մօրս հաղար ոսկի տանի տայ, և իմ հրամաններս կատարուեցան : Ահա այս բանիս խելքս չհասնիր : Բայց տակաւին քանի քանի բաներ կան զոր չեմ ըմբռներ և երբէք չպիտի կարենամ ըմբռնել : Աւստի Աստուծոյ կ'ապաւինիմ, որ ամէն բան գիտէ և կը ճանչէ : »

Ապու Հասան այս խորհուրդներով և զղացումներով պաշարուեր էր, երբ իր մայրը հասաւ : Այնքան հալած մաշած տեսաւ զինքն որ առաջուանէ աւելի յորդ արասուք թափեց : Հեծկլտալու ատեն, սովորաւոր

կան բարեւր տուաւ . Ապու Հասան բարեն ընդունեց , և քանի որ յիմարանոցն էր առաջին անգամ իր մայրը կը բարեւէր : Ասի լաւ նշան մը սեպեց : « Լաւ ուրեմն , որդեակ , ըսաւ անոր արտասուքը սրբելով , ի՞նչպէս ես , ի՞նչ ջրի մէջ է խելքդ : Արդեօք ցնորքդ և սատանային քեզի ըսած խօսքերը մէկզի ձգեցիր : — Մայր իմ , պատասխանեց Ապու Հասան՝ հանդարտ ձայնով և այնպիսի կերպով մ'որմէ կ'իմանցուէր թէ նրչափ ցաւ կ'զգար իր մօրը դէմ այնպէս բռնութեամբ վարուելուն , իմ մեղքութիւնս կը ճանչեմ , բայց կ'ազատեմ ներքս այն նողկալի մեղքը զոր քեզի դէմ գործեցի և բոլոր սրտով կ'ատեմ : Մի և նոյն աղաչանքը կը մատուցանեմ զբացիներուն՝ տուած գայթակղութեանս համար : Երազ մը խելքս մըրքեցուց , բայց այս երազս այնքան արտաքոյ կարգի և ճշմարտաման էր որ կրնամ հաւատարմութիւն տրել զի ինչիս այսպիսի բան մը դարձ իզնէ աւելի պիտի ապշէր և իմ այլանդակ վարմունքէս աւելի այլանդակ վարմունք մը պիտի ունենար : Հիմակ իսկ խօսելու առենս այնքան յուզուած եմ , որ դժուարաւ կը հաստամ թէ ինձ պատահածն երազ մ'ըլլայ , այնքան արթուն մարդու բրած գործոց նմանութիւն ունի : Ինչ և է , կ'ուզեմ հաստատապէս կարծել թէ երազ և ցնորք էր տեսածս . համոզուած եմ իսկ որ ամիրապետի մը ստուերն անդամ չեմ , այլ Ապու Հասան քու որդիդ : Այն , ես եմ այն որդիդ որ քեզ միշտ պատուած է , մինչև այն աղէտալի օրն որուն յիշատակն իս ամօթապարտ կը թողու . և մայրդ իմ , քեզ միշտ կը պատուեմ և բոլոր կենացս մէջ պիտի պատուեմ , ինչպէս որ պարտաւոր եմ : »

Այս խնայտուն , մտայնի խօսքերը լսելով՝ Ապու Հասանի մօրն ՚ի վաղուց թաղած վշտակցութեան , կարեկցութեան արտասուքն՝ ուրախութեան , մխիթարութեան և սիրական որդւոյն համար ունեցած գործող արտասուքի փոխուեցաւ՝ իր որդին գտնուելով :

« Որդեակ իմ , գոչեց նա՝ ուրախութեամբ յափշտակուած , այդպէս բանաւոր կերպով խօսելով լսելով այնքան մեծ բերկրութիւն և գոհունակութիւն կ'զգամ որպէս թէ երկրորդ անգամ աշխարհ բերի քեզի . պէտք է որ այդ արկածին վրայ իմ կարծիքս քեզի յայտնեմ և բան մը իմացնեմ որ կարելի է բնաւ մխարէզ անցած չէ : Իրկուն մ'ընթերթի

հրախրած օտարականդ՝ ձգեր գացեր էր առանց սենեկիդ գուռը դուրս գլու , ինչպէս որ իրեն ապարեր էիր , ահա այս պատճառաւ սատանան խույզ մտած և քեզի ցնորած է : Աւտի պարտաւոր ես , որդեակ , շնորհակալ ըլլալ Աստուծոյ որ քեզ այն սատանայէն ազատեց և աղօթելով որ ուրիշ անգամ այս սրողայթին մէջ քեզ չ'նետէ :

— Իմ հիւանդութեանս բնապատճառը դատար , պատասխանեց Ապու Հասան , և ճիշտ այն դիշեր տեսայ երազն որ զլուխս տակն ու վրայ ըրաւ : Մակայն ապարեր էի յատկապէս վաճառականին որ դուրս ելնելէն ետե՛ դուրս դուցէ , և հիմակ կ'իմանամ որ պատուէրս չէ կատարեր : Ես ալ քեզ համամիտ և համոզուած եմ որ ստոանան դուրս բաց գտած , ներս մտած և այն ցնորական դաղափարները մխարս լեցուցած է : Ա՛րեւի թէ Մուսուլի մէջ չ'լիտեն թէ հոսկից կ'զայ այն վաճառականն . իսկ մենք լիովին համոզուած ենք Պաղտատի մէջ որ սատանան միայն կ'զայ և այսպիսի ցաւալի երազներ մեզի կը բերէ , երբ դիշերները մեր սենեկին դռները բաց թողունք : Յանուն Աստուծոյ , մայր իմ , քանի որ Աստուծոյ շնորհիւն ահա բոլորովին բժշկուած եմ , կը պաղատիմ քեզ , որչափ որ կարելի է պաղատիլ քեզի պէս բարի մայր մը , որ իս այս դժոխքէն հանել տաս և ազատես իս այն դահճին ձեռքէն որ անտարակոյս իմ մահս պիտի պատճառէ , եթէ աւելի այս անգ մնամ : »

Ապու Հասանի մայրն՝ որ յետին ծայր մխիթարուեր և սիրտը շարժեր էր իր որդւոյն զյանտութեան դաւանալը տեսնելով , իսկոյն դնաց յիմարապահ՝ գտաւ , անոր իմացուց որ որդին բոլորովին խելքը գտեր է . և յիմարապահն ալ եկաւ , զանի քննեց և իր ներկայութեանս աւտար ազատութիւն տուաւ :

Ապու Հասան իր տունը դարձաւ և շատ օրեր մնաց որպէս զի լաւ կերակուրներ ուտելով իր առողջութիւնը գտնէ , քանի որ յիմարանոցը շատ խեղճութեամբ կ'ապրէր : Բայց երբ ինքզինքը գտաւ , և ոյժը կազլուրեց , սկսաւ ձանձրանալ առանց ընկերութեան մնալուն : Աւտի շուտով իր առջի կիսնքն սկսաւ վարել , այսինքն սկսաւ ամէն օր բաւական ուտելիք հողալ , որպէս զի ամէն իրկուն հիւրի մը հացկերոյթ սայ :

Այն օրն որ նախորդ սովորութեան համեմատ՝ Ապու Հասան արևը մարը մտնելու ատեն՝ Պաղտատի կամրջին ծայրը գնաց որպէս զի իր առջևն եխող օտարականն իր առնը հայի հրաւիրէ, ամոյց առաջին օրն էր, ճիշտ այն օրն, ինչպէս որ ըսինք, որ ամիրապետը սովորութիւն ունէր ծպտեալ ելնելու քաղքին մէկ գունէն գուրս, որպէս զի անձամբ դիտէ թէ արդեօք անկարգութիւն մը կը պատահի, և իր իշխանութեան սկիզբէն կարգադրած սեսչութեան հակառակ բան մը կ'ըլլայ :

Ապու Հասան այն ինչ հասեր և քիւին մօտ դրուած նստարանին վրայ բազմեր էր, երբ կամրջին միւս ծայրն իր աչքը նետելով՝ ամիրապետը տեսաւ որ դէպ իրեն կգար, իբր Մուսուլի վաճառական ծպտեալ, առաջին անգամուն պէս և իր հետն ունէր նոյն գերին : Ապու Հասան աներկբայ ըլլալով որ իր բոլոր կրած տառապանաց բուն պատճառն ամիրապետն էր, զոր Մուսուլի վաճառական կը կարծէր, վասն զի գուրս ելնելու ատեն սենեկին դուռը բաց ձգեր էր, գող ելլաւ զանի տեսնելով և ըսաւ . «Աստուած այս փորձանքէն աղահէ իս : Ահա այս է կարծեմ՝ իս կախարդող գիւհահայն » : Այս ըսելով գլուխը դէպ 'ի գետին ջրանցքը դարձուց՝ քիւին վրայ կը թնկնէր, որպէս զի անցնելու ատեն զանի չտեսնէ :

Ամիրապետն՝ որ Ապու Հասանի երեսէն վայելած զուարճութիւնն աւելի երկարել կ'ուզէր, հետևեալ օրն արթննալուն իր տան մէջ ամէն ըսած և ըրած բաներուն վրայ անդեկութիւն առնլու հոգ տարեր էր բոլոր անցած դարձածին հմուտ էր : Նորէն չափազանց զուարճացաւ իմանալով Ապու Հասանի վիճակն ու յիմարանոցին մէջ բոլոր կրած նեղութիւնը : Բայց որովհետև այս միտպետը վեհանձն էր և արգարսուէր և զիտեր էր որ Ապու Հասան կրնար աւելի երկար ատեն զինքը զուարճացնել . ասկէ վատ՝ կասկածելով որ ամիրապետութեան կարծեցեալ աստիճանէն հրաժարելէն ետև՝ նորէն իր առջի կեանքը պիտի վարէ, յարմար գտանց զանի իրեն մօտ առնլու համար, Մուսուլի վաճառականի հազուատով ծպտիլ ամոյցն սկիզբն, ինչպէս որ արդէն ծպտեր էր, որպէս զի աւելի անոր նկատմամբ խորհածն 'ի գործ պնէ :

Ուստի Ապու Հասանը տեսաւ ճիշտ այն միջոցին որ այն ալ զինքը նշմարեց, և անոր ընթացքէն հասկցաւ իսկոյն թէ որչափ դժգոհ է իրմէ, և իր միտքն էր անորմէ խոյս տալ : Ասոր համար Ապու Հասանի նստած քիւլէն քերեց անցաւ, և երբ անոր մօտ եկաւ, զլուխը ծոեց և անոր դէմքը նայեցաւ ակնապիշ : «Միթէ դու ես, իմ սիրելի Ապու Հասան, իմ եղբայրս, ըսաւ անոր . ողջոյն քեզ . ինքզեմ 'ներէ ինձ քեզ համբուրելու :

— Իսկ ես, պատասխանեց Ապու Հասան՝ առանց Մուսուլի վաճառականին նայելու, չեմ բարևեր քեզ, ոչ քու բարևէդ և ոչ համբոյրներէդ պէտք ունիմ : Ուստի ճամբադ շարունակէ, գնա :

— Ըստ ուրեմն, վրայ բերաւ ամիրապետը, միթէ իս չես ճանչեր, միթէ քեզի հետ անցուցած իրկունս մոռցար . ասկէ ամիս մ'առաջ իս տունդ հրախրելով հայկերոյթ տալդ չես յիշեր : — Ա՛չ, պատասխանեց Ապու Հասան՝ առջի կերպովն, ես քեզ չեմ ճանչեր և չեմ գիտեր թէ ի՞նչ բանի վրայ խօսիլ կ'ուզես : Գնա, շուտ ճամբադ դնա, ըսի քեզ : »

Ամիրապետն՝ Ապու Հասանին այս խրոխտ ընթացքէն չհասեցաւ : Քաջ գիտէր որ Ապու Հասան իր վրայ պարտք դրեր էր անդամ մը մեծարած օտարականին հետ վերստին շտեմտիլ . նոյն ինքն Ապու Հասան յայտներ էր իր այս վարմունքը, սակայն չցիտնալու կը զարնէր : «Չեմ կրնար հատալ, յարեց նա, որ իս ջճանչես . երկար ատեն չկայ որ զիրար տեսնաք և կարելի չէ որ այսպէս շուտով իս մոռցած ըլլաս : Աստարակոյս ինձի գէմ ունեցած ատելութեանդ մէկ դժբաղդ պատճառ մը պիտի ըլլայ : Սակայն պէտք է յիշես որ քեզի իմ բարեմաղթու խօսքերովս երախտագիտութիւնս յայտնեցի . մանաւանդ քու փափաքած մէկ քանի բաներուդ համար խօսք առի քեզի իմ ազդեցութիւնս բանեցնել, և այս ազդեցութիւնս թեթև բան չէ :

— Չեմ գիտեր, պատասխանեց Ապու Հասան, թէ ի՞նչ կրնայ ըլլալ քու ազդեցութիւնդ, և բնաւ փափաք չունիմ զայն փորձելու . բայց սա զիտեմ սր քու բարեմաղթութիւնն իմ յիմարութեանս պատճառ եղան : Յանուն Աստուծոյ, կ'ըսեմ քեզ նորէն, ճամբադ դնա և նորէն մի վշտացնէր իս :

— ԱՏ, եղբայր իմ Ապու Հասան, պատասխանեց ամիրապետը զանի համբուրելով, չեմ կրնար այս կերպով քեզնէ հեռանալու զիջանիլ: Քանի որ իմ բազդէս երկրորդ անգամ քեզի կը հանդիպիմ, պէտք է որ երկրորդ անգամ մ'ալ իս հիւրընկալես, ինչպէս որ ամիս մ'առաջ ըրիր, և կ'ուզեմ նորէն քեզի հետ զինի խմելու պատին ունենալ:»

Ասոր վրայ Ապու Հասան պնդեց թէ այդպիսի բանէ մը պիտի զբոյշուլայ: «Բաւական ինքզինքիս տէրն եմ, յարեց նա, և չեմ կրնար զիջանիլ քեզի պէս մարդու մը հետ նորէն կապուիլ, քանի որ գացած տեղը դժբաղբութիւն կը բերես: Գիտես այն առակն որ կ'ըսէ. Թմբուկը կուտակի առ և ճամբադ գնա: Այս առակն ինքզինքիդ յարմարցուր: Միթէ հնարի է անդադար նոյն բանը կրկնել քեզ. Աստուած հետք ըլլայ: Արդէն երեսեդ բաւական աղէտ քաշեցի. չեմ ուզեր նորէն զլիսիս նոր փորձանք բերել:»

— Իմ բարեսէր Ապու Հասան բարեկամս, վրայ բերաւ ամիրապետը զանի նորէն համբուրելով, այնպիսի խտտութեամբ կը վարուիս հետս որուն չէի տպաներ: Կարգչեմ այդպիսի անարգալի լեզու մը մի գործածեիր ինձի դէմ, և հաւատի եղիր որ ես քու անկեղծ բարեկամի եմ: Ուստի շնորհ ըրէ պատմելու ինձ զլիսիդ եկած փորձանքն, ես որ քու բարիքը ուզած եմ, որ միշտ կ'ուզեմ և առիթ մը կը վնտուեմ զարկանելու այն սխալմունքն որուն պատճառը խօսքիդ նայելով ես եմ, կ'ըսես, եթէ իրօք ես եմ յանցաւորը:»

Ապու Հասան ամիրապետին թախանձազին աղաչանայ զիջաւ, և զանի իր մօտ նստեցնելէն ետև՝ «Քու թերահաւատութիւնդ ու զլիսացաւութիւնդ, ըսաւ, իմ համբերութիւնս հատցուցին: Քեզի պատմելիքէս պիտի հասկնաս եթէ յանիրաւի քեզ յանցաւոր կը դանձմ:»

Ամիրապետն Ապու Հասանի մօտ նստաւ. և Ապու Հասան պալատին մէջ քունէն արթննալէն մինչև իր սենեակը գտնուելով արթննալն ինչ որ զլիսէն անցած էր պատմեց, իբր ճշմարիտ երազ մը և ըսաւ այն մանր մունր պարագաներն որոց ամիրապետն իրեն չափ տեղեակ էր և նորէն մեծ զուարճութիւն զգաց: Յետոյ այս երազին ըրած տալաորութիւնն իր մտքին վրայ չափազանց կերպով բացատրեց, որպէս թէ ինքն էր հաւատացելոյ իշխանը:

«Այս տալաորութիւնը, յարեց նա, այնպիսի այլանդակ վիճակի մէջ նետեց իս որ իմ դրացիներս ստիպուեցան իս կաշկանդել և յիմարանոցը նետել տալ, ուր կրնամ ըսել թէ անգութ, բարբարոս և անազոբ կերպով իս շարժարեցին. բայց բան մը կայ որ քեզ պիտի զարմացնէ և անտարակոյս մտքեդ ալ չանցնիր, այս է թէ բոլոր այս դժբաղբութիւնները քու երեսեդ քաշեցի: Ար յիշես անշուշտ որ ընթրիքէն ետքն ապստրեցի քեզ որ սենեկէս ելնելուդ դուռը դոցես: Այս ինքիրս չկատարեցիր, ընդ հակառակն դուռը բաց թողուցիր. ուստի սատանան ներս մտաւ և գլուխս երազներով լցուց, որմնք թէև ամբողջ ժելի երեցան ինձ, տակայն անբաւ աղէտից պատճառ եղան և ահա ասոր համար կը տրոնջամ: Հետեւապէս քու անհոգութիւնդ տեղի տուաւ մեծ յանցանքի մ'որուն պատասխանատու ես, վասն զի սոսկալի և զզուելի գործ մ'ըրի՞ ոչ միայն մօրս վրայ ձեռք վերցնելով, այլև քիչ մնաց որ զանի ոտքիս տակ պիտի ճզմէի, մայրապապան պիտի ըլլայի, և այս ալ այնպիսի բանի մը համար որ ես ամօթահար կը մնամ քանի մտածեմ. վասն զի իս իր որդին կոչեալուն, ինչպէս որ իրօք իր որդին եմ, և ես պնդելուս թէ հաւատացելոց իշխանն եմ, ինչպէս որ կը կարծէի ըլլալ, որ այս բաներս պատահեցան: Ասկէ դատ՝ դրացիներուս տուած գայթակղութեանս պատճառը դու ես, վասն զի մօրս աղաղակները լսելով եկան նայեցան որ զանի սպաննելու վրայ եմ. ահա այս բաներս չէին պատահեր թէ որ դուրս ելնելու ատենդ դուռը դոցելու չմոռայիր, ինչպէս որ աղապրեր էի: Գրացիներն ալ տունս չէին դար առանց հրամանիս, և որ առելի ցաւալին է, իմ յիմարութեանս սկանառես չէին ըլլար: Ես ալ չէի ստիպուեր անոնց զարնելու՝ ինքզինքս պաշտպանելով, և իս ալ չէին կապեր, ինչպէս որ ըրին, ծեծելով և յիմարանոցը չէին տաներ, ուր որ ամէն օր, կրնամ այս բանս հաւատաւել, կարծէի թէ դժոխքն եմ քանի անդադար խարազանով իս դանակոծ կը կոփէին:»

Ապու Հասան իր տրտունջներն ուժգնութեամբ և աշխուժութեամբ կը պատմէր: Ամիրապետն իրմէ առելի քաջ տեղեակ էր անցած դայածին, և կ'ըմայլէր ինքնին գիտելով որ իր երևակայած հնարքն ուղիղն պէս յաջողեր և Ապու Հասանն այն մտքորութեան մէջ ձգեր էր, ինչպէս

որ զեռ կը տեսնէր . բայց այս պատմութիւնը լսելուն , զոր խիստ պարզամտութեամբ պատմեր էր Ապու Հասան , չկրցաւ քահ քահ չհինդալ :

Ապու Հասան՝ որ իր պատմութիւնը կարեկցութեան արժանի կը սեպէր և կը յուսար որ ամէն մարդ իր վիճակին անտարբեր չէր կրնար մնալ , դայթակդէցաւ Մուսուլի սուտ վաճառականին քահ քահը ընելով :

«Միթէ այսպէս քթիս խնդալով ծաղրել կ'ուզես իս , ըսաւ նա , կամ միթէ կարծես թէ կատակաւ կը խօսիմ , մինչդեռ ամէն բան անկեղծօրէն կը պատմեմ քեզ : Այս ըսածս հաստատելու համար առելի զգալի փաստեր կ'ուզես : Ահա , նայէ , դու աչքովդ դիտէ , և այսուհետեւ եթէ կրնաս ըսէ թէ կը սխալիմ :» Այս խօսքերն ըսելով Ապու Հասան ծոխցաւ և ուսերն ու կուրծքը բանալով՝ իր ընդունած խարազանի հարուածներէն մնացած վէրքերն անոր զցուց :

Վմիրապետը տակուսով տեսաւ այս վէրքերն : Ապու Հասանի վրայ խոճաց , և ցաւեցաւ որ կատակով եղած բան մ'այսպիսի աղէտալի հետևանքներ ունեցիր է : Ուստի խնդրեցին եկաւ , և Ապու Հասանը սրտովին համբուրելով ,

«Ոտք ելիք , կ'աղաչեմ , իմ սիրական եղբայրս , ըսաւ անոր ծանր գէմբով մը , եկուր , տունդ ելթանք . այս իրևուն ալ քեզի հետ զուարճանալ կը փափաքիմ : Աւազն եթէ Աստուած յաջողէ , պիտի տեսնես որ ամէն բան կարգի պիտի մանէ :»

Ապու Հասան՝ իր գիտաորութեան և երզման հակառակ՝ ամիրապետին զգուանաց չկրցաւ գէմ կենալ , թէ և միշտ կարծէր թէ Մուսուլի վաճառական մ'է : «Խնդիրդ կ'ուզեմ կատարել , ըսաւ անոր , բայց սա պայմանաւ որ երգուով ըսնելու խօսք տաս ինձի , այսինքն թէ պէտք է սենեկէն ելնելու աստեղ գուռը դոյցես , սրպէս զի նորէն սասանանս դալով զլուխ տակն ու վրայ չընէ , ինչպէս որ առաջին անգամ ըրաւ :

Մուս վաճառականն ամէն բան խոտապաւ : Երկուքնին ալ ոտք ելան և քաղքին ճամբան բռնեցին : Ամիրապետն Ապու Հասանի սիրան առելի ևս շահելու համար , ըսաւ . «Աստահ եղիք իմ վրայ , խօսքս

պիտի պահեմ , պատուոյս վրայ կ'երկնում : Ուստի պէտք չէ վարանիս և վստահութիւնդ իզնէ դլանաս , քանի որ ամէն տեսակ բարիք և երջանկութիւն կը բարեմաղթեմ քեզ և որոց արդիւնքը հարկաւ պիտի տեսնես :

— Ես քեզնէ բարիք չեմ խնդրեր , պատասխան տուաւ Ապու Հասան անոր խօսքը կտրելով . սրտովին քու թախանձանաց կը զեջանիմ , բայց բարեմաղթութիւններդ քեզի պահէ . կ'աղաչեմ նաև , յանուն Աստուծոյ , որ ամենեկն բան մը չմաղթես ինձի համար : Գլխիս եկած չարեաց աղբիւրն , ոչ միայն դուռը բաց մնալն է , այլև քու բարեմաղթութիւններդ :

— Լաւ ուրեմն , պատասխանեց ամիրապետն՝ ինքնին ծիծաղելով Ապու Հասանի հիւանդ երեակայութեան վրայ , քանի որ այդպէս կ'ուզես՝ պիտի հնազանդիմ , և կը խոտտանամ քեզի համար բարիք մը չմաղթել : — Ուրախ եմ որ այդպէս կը խօսիս . դո՛հ պիտի ըլլամ եթէ խոտտուով պահես , ուրիշ բան չեմ պահանջեր քեզնէ :»

Ապու Հասան և ամիրապետը՝ գերին հեան առնելով՝ որոշեալ տեղին մտեցան այսպէս խօսելով . մութը կոխելու վրայ էր երբ Ապու Հասանի տունը հասան : Իսկոյն մայրը կանչեց և լոյս բերել տուաւ : Ամիրապետին ըսաւ որ բազմոյն վրայ նստի , և ինքն ալ անոր մօտ նստաւ : Քիչ ատենէն ընթրիքը սեղանին վրայ դրուեցաւ , զոր իրենց մօտ բերեր էին : Առանց քաշուելու կերան , և երբ լմնցուցին՝ Ապու Հասանի մայրն եկաւ սեղանը վերցուց , պտուղներ բերաւ . նոյնպէս զինի , բաժակ , և ապա ձղեց զնաց և նորէն չերեցաւ :

Ապու Հասան նախ իրեն բաժակը լեցուց և ապա ամիրապետինն : Ամէն մէկը հինգ վեց բաժակ պարպեց աննշան իրերու վրայ խօսելով : Երբ ամիրապետը զխոց որ Ապու Հասանի զլուխն սկսեր էր տաքնալ , անոր սիրոյ խօսք մը բացաւ և հարցուց թէ արդեօք երբէք կին մը սիրած է :

«Եղբայր իմ , պատասխանեց Ապու Հասան ընտաներար՝ որպէս թէ իրեն հաւատար մէկու մը կը խօսէր , ես միշտ սէրը կամ ամուսնութիւնն , ինչպէս որ կ'ուզես ըսէ , զերութիւն մը սեպեր եմ և երբէք անոր լծին տակ մտնելու չեմ փափաքիր . իսկ մինչև ցայսօր կրնամ խոտ

տովանիլ որ մինակ սեղանն , աղօր կերակուր , և մանտանդ զինի սի-
 բեր եմ . վերջապէս իմ միակ փառաբաց է դրօսմու և բարեկամաց հետ
 զուարճալի օրեր անցնել : Սակայն չեմ բտեր թէ բոլորովին ամուսնու-
 թեան և սիրոյ անզոյ և անտարբեր եմ . կը կարգու էի եթէ երազիս
 մէջ տեսած գեղանի և զուարթ կնիսն պէս մեկու հանգիւղէի , որ զի-
 շերներն ինձի հետ անցնելու համէր , որ երդել , նուազել և խօսակ-
 ցիլ զիստար , և վերջապէս ինձի հաճոյք և խնդութիւն պատճառելու
 համար ամէն ճիւղը թափէր :

«Վերջապէս այսպիսի էակի մը համար իմ անտարբերութիւնս սիրոյ
 կը փոխէի և երջանիկ կ'աղբի : Բայց այսպիսի կ'լին մ'նը կրնամ
 դանել , բայց եթէ հաւատացելոց իշխանին պաշտոնը , ճեպիւնը վէզի-
 բին ապարանքը , կամ նախարարաց տունը , քանի որ շատ սակ ունին
 այսպիսի էակներ ձեռք ձգելու համար : Աւստի աւելի ազէկ ունիմ
 զինի շիշով դո՛հ բլլալ , որ թեթեւ ծախսով ձեռք կը ձգուի :» Այս
 բնելով բաժակը լեցոյց ու ըսաւ . «Գու ալ քու բաժակդ առ որ զինի
 լեցնես և շարունակենք այս զուարճութիւնը վայելել :»

Երբ ամիրապետն ու Ապու Հասան խմեցին , «Մեղք որ , ըսաւ ա-
 միրապետը , քեզի պէս կենցաղապէս մարդ մը , որ սիրոյ անտարբեր
 չես , այդպիսի մնառ որ և առանձին կեանք մը կը վարես :

— Ենտեղութիւն մը չեմ տեսներ , պատասխանեց Ապու Հասան ,
 իմ վարած անդորը կեանքս նախապէս համարելովս կնիսն մ'ընկերու-
 թեանէ՛ որ թերեւս գեղեցկութեան կողմէ ինձ համէր չպիտի բլլար , և
 ասկէ զատ՝ իր տղեղութեամբ և զէգութեամբը տեսակ տեսակ ցրտեր
 պիտի պատճառէր :»

Այս կիտին վրայ բաւական երկայն խօսեցան , և ամիրապետը տես-
 նելով որ Ապու Հասան իր ուզած վիճակին մէջ կը գտնուի . «Վոյ
 հոյն իմ վրաս թող , ըսաւ անոր , քանի որ պարկեշտ մարդու ճաշակն
 ունիս , քու ուզածդ քեզի պիտի գտնեմ , և ամենեւին սուղ չպիտի նստի
 քեզի :» Աւստի մեկէն շին առաւ Ապու Հասանի բաժակն ալ մեկտեղ ,
 և արդէն գործածած փոշիէն անոր մէջ քիչ մը նետեց վարպետու-
 թեամբ մը , զինին լեցոյց և բաժակն անոր ներկայելով . «Առ , ըսաւ
 անոր , և այժմէն խմէ այն գեղանի կնիսն կենաց որ քու երջանիկս :

թիւնդ յարատեւելով՝ քեզ դո՛հ պիտի ընէ :»

Ապու Հասան խնդալով առաւ բաժակն , և զլուին օրօրելով , «Ենչ
 որ կ'ուզէ թող բլլայ , ըսաւ նա , քանի որ կ'առջարկես՝ փառաբար կը
 կատարեմ : Չեմ կրնար քու առջև անբարարար երեւիլ և քու
 սիրող կարել այս անշուն խնդրոյն համար : Աւստի խոստացած գեղե-
 ցիկ կնիկանդ կենաց պիտի խմեմ , թէև իմ վիճակէս դո՛հ բլլալով՝ քու
 խոստանալդ ստակի մը չեմ առնուր :»

Այն ինչ Ապու Հասան ըմպելին խմեց որ իր վրայ թմբութիւն մ'ե-
 կաւ , ինչպէս որ առջի անգամուն եկեր էր , և ամիրապետը նորէն ու-
 ղածին պէս զանի գործածեց : Անմիջապէս գերիին ըսաւ որ Ապու
 Հասանն առնու և պաշտոնը տանի : Գերին զանի վերջոյց , և ամիրա-
 պետն՝ որ առջի անգամունս պէս Ապու Հասանը ետ չպիտի զրկէր ,
 անոր տան դուռը դպցեց :

Գերին բեր շալակն առած ամիրապետին ետեւէն գնաց մինչև սրահ
 լանս , և Ապու Հասանը չորրորդ սրահին մէջ բազմեցի մը վրայ դնել
 առաւ , ուսկից ամիս մ'առաջ այսպէս թմբած և քնացած նորէն տու-
 նը զըկեր էր : Անկողինը գնեւէն առաջ՝ հրանայեց որ ամիրապետական
 հազուանն անոր հազցունեն . այս գործողութիւնն իր առջևը կատա-
 րել առաւ . յետոյ պատուիրեց ամենուն որ երթան սրահին , և սենե-
 կապետին , նոյնպէս բոլոր միւս սպաներուն , նուազածուներուն և նա-
 ժիշաներուն ըսաւ որ հետեւեալ օրը կանուխ ներկայ գտնուին անվրէպ
 Ապու Հասանին սենեակն և ապապրեց որ ամէն մէկն իր դերը լաւ խա-
 ղայ :

Ամիրապետն ալ գնաց պառկելու , Մէսրուբին ապապրելով որ դա
 զինքն արթնցնէ իր պահաւրած սենեակը մտնելէն առաջ :

Մէսրուբ ամիրապետին ըսած ժամուն զանի արթնոյց , հազուեցոյց
 շուտ մը և ամիրապետը գուրս ելաւ , որպէս զի Ապու Հասանի պատ-
 կած սենեակն երթայ : Սպաները , ներքինիներն և նուազածուները
 դրան առջև դտաւ , որոնք անոր զաւրտեան կ'սպասէին : Իմացոյց հա-
 մառօտ կերպով իր զխոսարութիւնն , և յետոյ գնաց զոյ գահճին
 մէջ վանդակին ետեւը կեցաւ : Մէսրուբ , բոլոր միւս սպաները , նա-
 ժիշաներն ու նուազածուներն անոր ետեւէն ներս մտան և Ապու Հա-

22293-59

սանի քնայած բազմոցին բոլորտիքը շարուեցան, այնպէս որ չէին ար-
դիւեր ամիրայեան իրենց բոլոր գործերը տեսնելու :

Անէն բան այսպէս կարգադրելէն ետև՝ երբ ամիրայեանին փոշին իր
ազդեցութիւնը ներդրածեց, Ապու Հասան արթնցաւ առանց աչքերը
բանալու, և քիչ մը մաղաս հանեց, զոր ոսկի ամանի մը մէջ առին՝
առջի անդամուան պէս : Նոյն սրահուն եօթը նուագախումբը սկսան
երգել և իրենց սիրուն ձայնով շեփորներու, անոյշ սրինդներու ձայնակի-
ցելով խիստ ախորժելի համերգ մը յորինեցին :

Ապու Հասանի զարմանքը չափազանց եղաւ երբ այս ներգաշնակ եւ
բաժնուած թիւնը լսեց . աչքերը բացաւ, և աւելի ևս հիացաւ երբ իր
չորս կողմը կեցող և իրեն ծանօթ նաժիշկներն ու սպաները տեսաւ :
Արդէն երազին մէջ տեսած սրահին պէս երեցաւ նոյն սրահը, մի և
նոյն լոյսերը, նոյն զարդարանքը, նոյն կարասին կային :

Նուագարանները լուեցին, որպէս զի ամիրայեանը կարող ըլլայ
մտադիր գիտել թէ նոր հիւրն ի՞նչ կերպարանք պիտի առնու և իր
զարմացման մէջ ի՞նչ պիտի ըսէ : Տիկիները, Մէսրուր և բոլոր սպա-
ները խորին լուսթիւն մը պահելով իրենց տեղը կեցան յարգանօք :

Աւանդ, գոչեց Ապու Հասան մտաբեր խածնելով՝ և այնպիսի
բարձր ձայնով որ ամիրայեանն ուրախութեամբ անոր ձայնը լսեց, ահա
մի և նոյն երազը կը տեսնեմ, այն անուրջն որ ամիս մ'առաջ իմ
միտքս պաշարեց . կարծեմ թէ նորէն ծեծ պիտի ուտեմ, յիմարանօքը
պիտի մանեմ և երկաթէ վանդակն : Ամենազօր Աստուած իմ, յարեց
նա, քու երկնային նախախնամութեանդ կ'ապախնիմ : Երէկ իրկուն
իմ առնս հրաւիրած հիւրս ապիրատ մարդ մ'է, վանս զի այս երա-
զին և անկից դալիք աղէտիցս պատճառն այն է : Այն դատաւանն ու
նենդաւորը խոտացեր էր երգմամբ որ դուրս ելնելու ասուն սենեկիս
դուռը պիտի գոցէ, բայց խօսքը չբատարեց, սատանան ներս մտաւ, և
ահա գլուխս կը խանգարէ ամիրայեանի և ուրիշ կախարդիչ ճիւղեր-
բու երևոյթներով : Աստուծոյ կրակին դաս, սատանայ, և երանի թէ
քարերու լեռան մը ասիւր ստակիս :»

Այս վերջին խօսքերն ըսելէն ետև՝ Ապու Հասան աչքերը գոցեց և
ինքզինքն ամբոփելով՝ մտածեց բոլորովին շփոթած : Պահ մ'ետքը

18-18222

նայցաւ դանոնք և սողիս անդին նայելով բոլոր առարկաներուն, «Տէր
Աստուած, գոչեց նա նուազ զարմացմամբ և ժպտելով, ինքզինքս քու
նախախնամութեանդ կը յանձնեմ, իս սատանային փորձութենէ պղատ
պահէ :» Յետոյ աչքերը գոցելով, «Իմ ընելիքս գիտեմ, յարեց նա,
պիտի քնանամ մինչև որ սաղանն քովէս հեռանայ և եկած տեղը
դառնայ, եթէ մինչև կէսօր ալ պատկած մնամ :»

Մակայն չթողուցին որ քնանայ, ինչպէս որ կը մտադրէր : Սրտից
զօրութիւնն, արդէն տեսած տիկիներէն մէկն, անոր մօտեցաւ և
բազմոցին ծայրը նստելով, «Ե՛րբանոց հաւատացելոց, ըսաւ անոր յար-
գանօք, կ'աղաչեմ Ձեր վեհափառութեան ներել ինձ եթէ կը համար-
ձակիմ ըսելու որ նորէն չքնանայ, այլ բոլոր ճիւղը թափէ արթնալու,
վանս զի լուսնաբու վրայ է :

— Բաշուէ, սատանայ՝ ըսաւ Ապու Հասան՝ այս ձայնը լսելով :
Յետոյ Սրտից զօրութեան երեսը նայելով «Միթէ իս հաւատացելոց
իշխանս կ'անուանես : Անշուշա իս ուրիշի տեղ կ'առնուս :

— Այս անունը Ձեր վեհափառութեան կտամ, վրայ բերաւ
Սրտից զօրութիւնը, քանի որ բոլոր մահմետականաց վեհապետն էք
և ես ալ, որ այժմ պատիւ ունիմ ձեզ խօսելու, ձեր աղախինն եմ :
Անտարակոյս Ձեր վեհափառութիւնը գրօսնուլ կը փափաքի, յարեց նա
ինքզինքը մոռնալ ձեռնցնելով, կամ թերեւս անշահ երազի մ'արգիւնքն
է, բայց եթէ ձեր աչքերը բանալու հաճիք, ձեր երեակացութիւնը
պաշարող ամբերը կարելի է ցրուին, և այն ասուն պիտի տեսնէք որ
ձեր պարանոնն մէջն էք, և ձեր չորս կողմը միայն ձեր սպաններն և բու-
լոր գերիները կը դանուին և պատրաստ են իրենց սուլորական ծառա-
յութիւնն ընելու : Մակայն Ձեր վեհափառութիւնը պէտք չէ զարմա-
նայ ինքզինքն այս սրահիս քան թէ անկողինն մէջ տեսնելով . երէկ իրս
կուն այնքան շուտով քնացաւ, որ չուզեցինք զինքն արթնցնել մինչև
սենեակը տանելու, և բաւական համարեցինք նոյն բազմոցին վրայ
հանգիստ թողլու :»

Սրտից զօրութիւնն Ապու Հասանի այնքան բաներ ըսաւ, որ վերս
ջապէս եկաւ նստաւ նա կարծելով թէ ստոյգ են : Աչքերը բացաւ և
զանի ձանչեց, ինչպէս նա Մարգարտեայ փուռնա ու արդէն տեսած

միւս կիներն : Այն ատեն ամէնքը մօտեցան և Սրտից զօրութիւնը նուրէն խօսիլ սկսելով, «Իշխանոք հաւատացելոց և երկրիս վրայ մարդարէին փոխանորդ, բաւ նա, ներեցէք մեզ յայտնելու նորէն որ ելնելու ատեն է, վասն զի արեւը հիմակ պիտի երևի :

— Հատ զլիսացաւ էք, վրայ բերաւ Ապու Հասան աչքերը շփելով. ես հաւատացելոց իշխանը չեմ, այլ Ապու Հասանն եմ, շատ քաջ զիտեմ և ասոր հախառակը չէք կրնար համոզել իս : — Մենք Ձեր վեհափառութեան ակնարկած Ապու Հասանը չենք ճանչեր, վրայ բերաւ Սրտից զօրութիւնն, և ոչ իսկ կ'ուզէր ճանչել. մենք ձեզ իբր հաւատացելոց իշխանը զիտենք, և չէք կրնար համոզել մեզ որ այն չըլլաք :»

Ապու Հասան աչքն ամէն կողմը կը դարձնէր և կ'զմայլէր ինքզինքը մի և նոյն սրահին մէջ տեսնելուն. այս ամենուն պատճառն անկէ առաջ տեսած երազին նման երազ մը կը կարծէր և անոր ցաւալի հետեւանքէն կը վախնար : «Աստուած ողորմի ինձ, գոչեց նա աչքերը վեր վերցնելով իբր մարդ մ'որ ուր ըլլալը չգիտէ, ինքզինքս քեզի կը յանձնեմ : Այս ամէն անցած դարձածը տեսնելէն ետեւ չեմ կրնար տարակուսիլ որ սատանան սենեակս մտած և իմ երեւակայութիւնս կը պաշարէ և կը վրդովէ :» Ամիրապեան՝ որ զանի կը տեսնէր և անոր բացազանչութիւնները մտիկ կ'ընէր, բոլոր սրտով սկսաւ խնդալ և դժուարաւ կըցաւ իր քրքիջը բռնել :

Սակայն Ապու Հասան նորէն պտուկի և աչքերը դոյցեր էր : «Իշխանոք հաւատացելոց, բաւ անոր իսկոյն Սրտից զօրութիւնը, քանի որ Ձեր վեհափառութիւնը չուզէր ոտք ելնել, թէ և մեր պարտաւորութեան համեմատ խնայ տուինք որ լուսնալու վրայ է, և թէ և հարկ է որ ձեզի յանձնուած կառավարութեան զեկը վարէք, ձեր մեզի տուած արտօնութիւնն 'ի դրո՞ծ պիտի գնենք այսպիսի պարտոյսի մը մէջ :»

Նոյն պահուն անոր մէկ թեւէն բռնեց և միւս կիները կանչեց, որոնք եկան օգնեցին, և անկողնէն հանելով Ապու Հասանը կերպով մը սրահին մէջ տեղը դրին և նստեցուցին : Յետոյ ամէնն իրարու ձեռք բռնեցին և սկսան չորս կողմը պարել ամէն նուազարանաց և դպիրուն ձայնին, որոնք իր գլխին և ականջներուն մօտ կը հնչեցնէին :

Ապու Հասան անմեկնելի մտաւանջութեան մէջ կը դանուէր : «Միթէ իրաւ ամիրապետ և հաւատացելոց իշխանն եմ» ըսաւ ինքն իրեն = Վերջապէս՝ այս անստուգութեան մէջ՝ բան մը կ'ուզէր ըսել, բայց նուազարանաց ազմուկն անոր ձայնը կը խափանէր : Մարդարտեայ փունջին և առաւօտեան աստղին նշան ըրաւ որ խօսիլ կ'ուզէ, մինչդեռ ձեռք ձեռքի բռնած անոր բոլորակը կը պարէին : Իսկոյն պարն ու նուազարանները դադրեցան և անոր մօտեցան : «Մուտ մի ըսէք, ըսաւ անոնց բարեմտօքէն, և խօսաւականեցէք թէ ո՞վ եմ :

— Իշխանոք հաւատացելոց, պատասխանեց Առաւօտեան աստղը, Ձեր վեհափառութիւնը մեզ փորձել կ'ուզէ անշուշտ այդ հարցումն ընելով, իբր թէ չգիտէք թէ հաւատացելոց իշխանն էք, և այս ու հանդերձեալ աշխարհի Արարչին մարդարէին փոխանորդն : Եթէ այսպէս չէք հաւատար, ըսելէ թէ կ'երազէք : Եւ կարելի է որ անուրջ մը պաշարած ըլլայ ձեր միտքը, քանի որ սովորականէն աւելի քնացաք այս գիշեր. սակայն եթէ Ձեր վեհափառութիւնը կը ներէ ինձ յայտնելու, պիտի լսեմ թէ երէկ բոլոր օրն ինչպէս անցուցիք :» Այս ըսելով պատմեց անոր թէ ինչպէս խնամն ու չորս ձերուները պատժել տուաւ, ինչպէս վէզիլին ձեռքը հաղար ոտիկ զրկեց Ապու Հասան անուն մարդու մը մօրը. նոյնպէս թէ ինչ ըրաւ իր պալատին ներքի կողմն, և թէ ինչ անցաւ այն երեք սրահներուն մէջ ուր սեղան նստաւ, և ինչպէս վերջին սրահը մտաւ :

«Ահա այս վերջին սրահին մէջն էր, յարեց նա, որ Ձեր վեհափառութիւնը մեզ իր քովը նստեցնելէն ետեւ՝ մեզ պատիւ ըրաւ մեր երգերը լսելով և մեր ձեռքէն գինի խմելով, մինչև այն ատենն որ Սրտից զօրութեան նկարագրած կերպով Ձեր վեհափառութիւնը քնացաւ : Այն ատենէ վեր Ձեր վեհափառութիւնն՝ իր սովորութեան հախառակ խորունկ բուն մը քաշեց մինչև հիմակ որ առտու է : Մարդարտեայ փունջը, բոլոր միւս ազախները ու պաշտօնակաները՝ որ այս տեղ ներկայ են, իմ ըսածին կրնան վիպել : Առաջի թող Ձեր վեհափառութիւնը պատրաստուի իր ազօթքն ընելու, վասն զի ժամանակ է :

— Աւա, լւա, վրայ բերաւ Ապու Հասան զլուին օրելով, եթէ

ձեր խօսքը մտիկ ընեմ՝ քիչ քիչ պիտի հաւտամ ձեր ըսածին : Սակայն ես , յարեց նա , կը սնդեմ որ ամէնքնիդ պիտե՛նք էք և փախուկ : Յաւաւի է պղ բանը , վասն զի սիրուն անձեր էք : Քաջ գիտցիք որ ձեզ վերջին անգամ տեսնելէս վեր իմ տունս գացի , այն տեղ մօրս հետ կուլու ըրի , իս յիմարանոցը տարին , և այն տեղ ակամայ երեք շաբաթ մնացի , և յիմարագահն ալ ամէն օր շարունակ խարազանով կը կոփեր իս : Հիմակ կ'ուզէք հաւտամ թէ այս ամէնն երազ էր . իրաւի քթէս կը բռնէք :

— Իշխանդ հաւատացելոյ , պատասխանեց Առտօտեան ասողը , պատրաստ ենք ամէնքնիս ալ Ձեր վեհափառութեան ամենէն սիրական բանին վրայ երդում ընել , որ բոլոր ըսածներդ անուրջ են : Երէկուանէ վեր սրահէն դուրս չելաք , և մինչև հիմակ շարունակ կը քնանայ յիք :

Այս տիկինն այնպիսի վստահութեամբ կը հաստատէր թէ բոլոր ըսածները ճշմարիտ են , թէ սրահը մանեղէն վեր դուրս ելած չէ , որ Ապու Հասան նորէն սկսաւ մտածել թէ որո՞ւն հաւտայ , և թէ ինքն արդեօք ամիրապետն է : Այս մտտութիւն մէջ ընկրմած մնաց բաւական ատեն : Ո՛ր երկին , կ'ըսէր ինքնովին , արդեօք Ապու Հասանն եմ , թէ հաւատացելոյ իշխանը . մե՛ծդ Աստուած , իմ միտքս լուսաորէ : Ճշմարտութիւնն ինձի յայտնէ , որպէս զի ինչ ընելիքս գիտնամ :

Յետոյ իր վերալի օսերը բացաւ և կանանց ցոյց տալով , « Նայեցիք , ըսաւ անոնց , և ըսէք թէ արդեօք այսպիսի վերքեր երազի կամ քնանալու ատեն մարդ կրնայ ընդունիլ : Իսկ ես կրնամ հաւատաւոր իւրական բաներ են ասոնք , և դեռ զգացած ցոտս անտարակուսելի ապացոյց մ'է : Բայց եթէ քունիս մէջ հասաւ այս փորձանքը գլխիս , իւրաւ որ տարօրինակ , զարմանալի և խելքէս մտքէս վեր փորձանք մի է :

Ապու Հասան այս անտուղութեան մէջ գտնուելով՝ ամիրապետին մէկ պաշտօնատարը կանչեց , որ իր քովը կեցեր էր , և ըսաւ . « Մօտեցիր , և սա ականջս խած որ նայիմ թէ քուն եմ թէ արթուն : » Պաշտօնատարը մօտեցաւ , ականջին ծայրը բռնեց և ակուսոյրմն այնչափ սաստիկ խածաւ որ Ապու Հասան սօսկալի աղաղակ մ'արձակեց :

Այս աղաղակին հետ նուազարանները նուազեցին նոյն պահուն , և տիկիններն ու պաշտօնատարները սկսան պարել , երգել և Ապու Հասանի բոլորակը ցատկարել , այնպիսի աղմուկ մը հանելով՝ որ ինքն ալ կանդով լցաւ . և շատ մը խեղութիւններ ըրաւ : Միւսներուն պէս սկսաւ երգել , ամիրապետին հագուտը պատուեց , զլուխը դրած խոյրը գետինը նետեց , և գրեթէ մերկ , լոկ շապիկ և վարտիկ հագած , յանկարծուսա ելաւ և երկու կանանց մէջ նետուեցաւ , անոնց ձեռքէն բռնեց և սկսաւ այնպիսի խեղկատակ շարժումներ ու ձևեր ընել , որ ամիրապետը չլըցաւ աւելի ևս իր պահուած տեղը կենալ : Ապու Հասանի այն միմտական կերպերն այնպէս մը զրդուեցին իր քրքիջն որ կրնակին վրայ ընկաւ , և իր ձայնն ամէն նուազարաններէն և դափերէն աւելի բարձր ելաւ : Այնքան երկար տևեց իր ծիծաղն որ քիչ մնաց պիտի մարէր : Ի վերջէ ելաւ և վանդակը բացաւ : Այն ատեն զլուխը դուրս հանելով , « Ապու Հասան , Ապու Հասան , գոչեց նա , միթէ իս մեռցնելու միտք ունիս այսպէս ծիծաղել տալով : »

Ամիրապետին ձայնին՝ ամէնքը լուեցին և աղմուկը դադրեցաւ : Ապու Հասան ալ կանկ առաւ միւսներուն պէս և ձայնն ելած կողմը դարձուց զլուխն : Ամիրապետը ձանչեց , և նոյն պահուն՝ Մուսուլի վաճառականը : Սակայն բնաւ չշուարեցաւ , ընդ հակառակին , գիտեց որ խիտաւրթուն էր , և բոլոր պատահած բաներն իրական բաներ են և ոչ թէ երազ մը : Կնքն ալ սկսաւ կատակի զարնել գործն և ամիրապետին հետ իյնալ :

« Հան , հան , գոչեց նա անվրդով անոր երեսը նայելով , ի՞նչ , դու հոն ես , Մուսուլի վաճառական : Ի՞նչ , դու ի՞նչուէս կրնաս գտնաւորիլ որ քեզ կը մեռցնեմ , դու որ պատճառ եղար և մայրս ծեծեցի և ես ալ ծեծ կերայ երկար ատեն յիմարանոցը . դու որ չարաչար դանակած ընելտուիր իմ թագիս իմամն ու չորս ձերուսիները . վասն զի ես բան մը չըրի , և մեղքը շնչեքդ . դու միայն իմ միտքս խանգարեցիր և խեղդու խելաւ բաներ ընել տուիր : Ա երջապէս միթէ դու չե՞ս բռնաւորը , մինչդեռ ես միայն նախատինք կրեցի :

— Իրաւունք ունիս , Ապու Հասան , պատասխանեց ամիրապետը ծիծաղը շարունակելով , բայց քեզ միսիթարելու և բոլոր նեղութեանցդ

փոխարեւը տալու համար, պատրաստ եմ, և թող Աստուած վկայ ըլլայ, քու ուզած կերպովդ պէտք եղած հաստցումն ընել ։»

Այս խօսքերն աւարտելով՝ ամիրապետը դահլճէն վար իջաւ և սրահը մտաւ ։ Խօստ գեղեցիկ հաղուստ մը բերել տուաւ և հրամայեց նաժիշաներուն որ Ապու Հասանը հաղուեցնեն մանկլաւիկներուն տեղ ։ Երբ զանի հաղուեցուցին, «Ի՛նչ իմ եղբայրս ես, ըսաւ անոր ամիրապետը գրկելով, ինչէ կնչ որ կը փափաքես ինդրէ և պատրաստ եմ տալու ։

— Իշխանդ հաւատացելոյ, վրայ բերաւ Ապու Հասան, կ'աղաչեմ Ձեր վեհափառութիւնն ըսել ինձ թէ ինչ ըրաւ իմ զլուխ այսպէս խանդարելու համար, և ձեր խորհուրդն ինչ էր ։ ամէն բանէ առաջ այս կէտը պարզել կ'ուզեմ, որպէս զի խելագատակս տեղը գայ ։»

Ամիրապետն ուզեց Ապու Հասանը գոհ ընել և անոր ըսաւ ։ «Նախ պէտք է գիտնաս որ տեւալ ծպտեալ գուրս կ'ենեմ, մանաւանդ զիշերոներն, որպէս զի անձամբ քննեմ թէ Պաղատտի մէջ ամէն բան կարողին է թէ ոչ, և որովհետեւ հետաքրքիր եմ նաև իմանալու թէ ինչ կ'անցնի քաղքին շրջականներն, որոշած եմ ամէն ամսոյն զլուխը գրտերը շրջան մ'ընել և ասոիս անդին պտըտելէն ետեւ՝ կամրջէն կը վերագառնամ ։ Այն իրկուն որ իս տունդ հրաւիրեցիր, այս պտոյտն ընելէն կը դառնայի ։ Երբ խօսակցութեան ատեն՝ զխտեցի որ միայն քան ու չորս ժամուան համար ամիրապետ ըլլալ կը փափաքէիր, որպէս զի թողիդ խնամն ու չորս ձերունիները զգաստութեան բերես պատժելով ։ Այդ փափաքդ զքօսանքի գրդիւ մը գտայ, և այս մտօք զայն կատարելու միտքս գրի ։ Քուն բերող փոշի մ'ունէի քովս որով մարդ ժամանակէ մ'ետքը միայն կրնայ արթնալ ։ Այն փոշիէն քիչ մը նետեցի բաժակիդ մէջ, թէ և դու չտեսար, և զիսիդ խմեցիր ։ Իսկոյն քունը պաշարեց քեզ, և գերիխ ձեռօք քեզ վերցնել տալով պալատս բերի՛ տանդ գուռը բաց թողլէն ետեւ ։ Աւերող է բոն թէ պալատին մէջ ինչեր անցան, երբ արթնցար, բոլոր ցորեկը մինչև իրկուն ։ Երբ աղէկ մը մեծարեցին քեզ իմ հրամանովս, աղախիններէն մէկը քու վեղջին խոնձ բաժակիդ մէջ նոյն փոշիէն թափեց ։ Իսկոյն վրագ թմբիր մ'եկաւ, և քեզ բերող գերբին միջոցաւ նորէն տունդ փոխաւ ։»

գրել տուի քեզ, ասպարեղով որ գուրս ենելու ատեն գուռը բաց թողու ։ գու ինքնին պատմեցիր ինձ թէ հետևեալ օրերն ինչեր հասան զլուխը ։ Ձէի կրնար երևակայել որ այս առթիւ այնքան նեղութիւն ու վիշտ պիտի քաշէիր, բայց, ինչպէս որ արդէն խօսք տուի, ամէն միջոց պիտի գործածեմ քեզ միտթարելու և ամէն չարիք մտցնել տալու ։ Աւստի նայէ, մտածէ թէ ինչ կրնամ ընել քեզի համար, և բացէ ՚ի բաց փափաքդ յայտնէ ։

— Հրամանատարդ հաւատացելոյ, վրայ բերաւ Ապու Հասան, թէ և շատ տառապանք քաշեցի, բայց քանի որ իմ տիրոջ և վեհապետին կողմէն հասան անոնք զլիխս, բոլորովին կը մոռնամ ։ Իսկ Ձեր վեհափառութեան վեհանձնօրէն խոտապցած բարեաց մասին, հաւատախի եղիք որ աներկմիտ եմ թէ անդրդուելի է ձեր խոտաւմը, բայց որովհետև անձնական շահը վրաս ներդրածութիւն մը չունի, և դուք ալ իմ փափաքս յայտնելու աղատութիւն կը շնորհէք ինձ, այս շնորհը միայն կը խնդրեմ, որ ներեք ինձ, ձեր քովը մտառ ունենալու, որպէս զի իմ բոլոր կենացս մէջ ձեր մեծութեան գովաբանն ու զարմացողն ըլլամ ։»

Ապու Հասանի այս անշահասիրութեան նշանը լիովին ամիրապետին համարումը գրաւեց ։ «Հաճելի է ինձ խնդիրդ, ըսաւ անոր, այդ շնորհը քեզ կտամ, կրնաս աղատօրէն ամէն ժամ և ուր որ գտնուիմ պալատս գալ երթալ ։» Նոյն միջոցին պալատին մէջ անոր սենեակ մը յատկացուց ։ Իսկ թողալին գալով ըսաւ թէ իր գանձապետներուն պէտք չէ գիտէ, այլ ուղղակի իրեն և անմիջապէս հրամայեց իր յատուկ գանձապահին որ հազար ոսկի տայ Ապու Հասանի ։ Այս ալ ամիրապետին առջև յարդանօք շնորհակալ եղաւ, և հաւատացելոյ իշխանն ալ ըստ սովորութեան՝ խորհրդարանն ելաւ դնաց ։

Ապու Հասան այս պատեհ առիթը բռնելով՝ դնաց շուտով իր մօրն ինաց տալու անցած դարձածն ու իր բաղդը ։

Յայտնեց անոր որ բոլոր իրեն պատահածները բնաւ երազ չէին, թէ օր մ'ամբողջ ամիրապետութեան պաշտօն վարեր և իբր այն պատիւներն ընդուներ է, թէ իր խօսքերուն վրայ ամենին չտարակուսի, փսն զի նոյն իսկ ամիրապետին բերնէն ինացեր էր եղելութիւնը ։

Այու Հասանի պատմութեան լուրն իսկոյն Պաղտատ քաղքին մէջ տարածուեցաւ, մինչև մտաակայ դաւաճները հասաւ և անկից ալ աւելի հեռաւոր երկիրներ՝ բոլոր եզական և զուարճալի պարագաներով:

Այու Հասան՝ ստացած նոր շնորհիւր շարունակ ամիրապետին քովը կը գտնուէր: Որովհետև ՚ի բնէ զուարթ էր և ուր որ գտնուէր ուրախութիւն կը գրգռէր իր ուշիմ խօսքերով և կատակներով, ամիրապետը կը պահանջէր որ իր քովէն չհեռանայ, և ինչ խրախճանք որ ունենար՝ պէտք էր որ Այու Հասան ալ ներկայ գտնուէր: Երբեմն Ջիւպիտէին քովն ալ կը տանէր զանի, և Այու Հասան իր պատմութիւնն անոր պատմելով շատ զուարճութիւն պատճառէր էր: Ջիւպիտէ անորմէ կ'ախորժէր, բայց զխտեց որ ամէն անդամուն որ ամիրապետին հետ իր սենեակը դար, աչքն իր աղախիններէն մէկուն վրայ կը տնկէր, որուն անունն էր Նուզճաթուլ-Մուատատ, ուստի միտքը դրաւ այս բանս ամիրապետին յայտնել:

Եւ իշխանդ հաւատացեալաց, ըսաւ իշխանուհին ամիրապետին, կարելի է չես տեսներ որ քանի Այու Հասան քեզի հետ այս տեղը գայ, շարունակ Նուզճաթուլ-Մուատատի կը նայի և միշտ զանի կ'ամբողջնէ: Դու ալ կրնաս ասկից երևակայել որ Այու Հասանի աչքը բռնած է զանի: Ուստի եթէ կը հաճիս, դէշ չեմք ըներ իրարու հետ կարգելով:

— Տիկին, ըսաւ ամիրապետն, այնպիսի բան մը միտքս կը ձգես զոր շատոնց ընել պէտք էի: Այու Հասանի կարծիքն ամուսնութեան մնասին դիտեմ, և անոր խոստացեր էի այնպիսի կին մը տալ որմէ դո՛հ ըլլայ: Շատ ուրախ եմ որ այս կէտը յիշեցուցիր ինձ, և կը զարմանամ թէ ինչպէս այս խոգիրը յիշողութենէս ելեր էր: Բայց աւելի լուր է որ Այու Հասան իր սրտին հաւանածն առնու: Սակայն քանի որ Նուզճաթուլ-Մուատատն ալ անորմէ կը հաճի, պէտք է որ այս ամուսնութեան գործը կատարենք: Ահաւասիկ երկուքնին ալ այս տեղ են, բաւական է որ հաւանութիւն տան:

Այու Հասան ամիրապետին և Ջիւպիտէին ոտքն ընկաւ իր երախտաղիտութիւնը յայտնելով ընդունած բարեաց համար: «Մեծ պատիւ է ինձ, ըսաւ, ձեր ձեռքէն այսպիսի կին մ'ընդունիլը: Բայց արդեօք յուսալի է որ Նուզճաթուլ իր հաւանութիւնը սոց, ինչպէս որ ես

պատրաստ եմ»: Այս խօսքերն աւարտելով, իշխանուհին աղախինէ երեսը նայեցաւ, և այս ալ իր յարգական ըութեամբն ու երեսին կարմրութենէն կերպով մը հասկցուց որ պատրաստ է ամիրապետին և Ջիւպիտէին կամաց հետեւիլ:

Ամուսնութիւնը լմացաւ և հարսնիքը սլալատը կատարուեցաւ մեծ շքեղութեամբ և քանի մ'օր տևեց: Ջիւպիտէ իր աղախինն ճոխ պարզէնէր շնորհեց ամիրապետին հաճելի ըլլալու համար, և ամիրապետն ալ իր կողմէն ՚ի յարգանս Ջիւպիտէի, Այու Հասանի շատ մը ընծաներ պարգևեց:

Հարսն ամիրապետին արգէն որոշած մէկ բնակարանը տարին ուր իր ամուսինն անհամբեր կ'սպասէր: Պալատին բոլոր երաժիշտներն ու զուսաններն սկսան բարձրաձայն նուազել երբ հարսը ներս մտաւ:

Այսպիսի պարագաներու մէջ սովորական հանգէմներն ու զուարճութիւններ եղան, և այնուհետև ամէնքը ձգեցին գայլին և նոր փեսան ու հարսը թողուցին որ իրենց սէրը վայելեն հանդարտօրէն: Այու Հասան և նոր հարսը չափազանց սիրով էին. այնպիսի կատարեալ միութեամբ կապուած էին, որ բայ ՚ի այն ժամանակներէն որ մին ամիրապետին և միւրը Ջիւպիտէին կ'երթար այցի, միշտ մէկտեղ էին և իրարմէ չէին հեռանար. իրաւ է որ Նուզճաթուլ սէր և համակրութիւն ազդելու յատկութիւնն ունեցող կին մ'էր, քանի որ ամիրապետին արգէն ըսածին պէս, իր փափաքած կ'ինն էր, այսինքն կարող էր իրեն հետ զլուխ զլլի սեղան նստիլ և զուարճանալ: Այս բնաւ որութեան տէր ըլլալով՝ իրենց ժամանակը շատ զուարճութեամբ կ'անցնէին, հետևապէս սեղանին միշտ պատրաստ էր, գոտորիկ և համդիկերակուրներով լի, զոր խոհալաճառ մ'անոնց կը մատակարարէր: Սպասուց զարանին վրայ միշտ ընտիր գինի կը գտնուէր, և այնպէս մը դրուած էր որ ուղածնուն պէս կ'առնուին և կը խմէին երբ սեղան նստած ըլլային: Այն տեղ ախորժելի առանձնութեամբ մը կ'ստղէին, կատակներ կ'ընէին, և քահ քահ կը խնդային երբ ծիծաղելի խօսք մը գտնէին: Ընթրիքը յատկապէս ուրախութեամբ կ'ընէին. մինակ ընտիր պտուղներ, կարկանդակներ և բլիթներ կ'ուտէին, և ամէն անդամուն որ բաժակ մը պարպէին՝ փոփոխակի կ'երգէին, և իրենց երգին նխթը

նոյն միջոցին իրենց խօսակցութեան վրայ կը դառնար : Այս անսպաս-
րաստից երգերուն հետ երբեմն վին ալ կը զարնէին կամ իրենց զխօ-
ցած մէկ նուագարանը :

Ապու Հասան և Նուզհաթուլ-Աուտաստ այսպէս երկար ատեն կեր-
ու խումով անցուցին : Բնաւ իրենց կերակուրին ծախսը չէին մտածեր ,
և խոհապաշտը պէտք եղածը հողացեր էր արտուի : Արդարացի էր
որ փոխարէն դումար մը ստանար , ուստի իր հաշուեցուցակը ներկայա-
ցուց : Գումարը խիստ մեծ էր , այս գումարին աւելցուցին նաև
հարսիլիին համար եղած հանդերձի , կերպասի և խիտ ընտիր դո-
դոհարներու համար եղած ծախան , և համադումարն այնքան ահալին
երեցաւ որ թէև ոչ , տեսան որ ամիրապետէն և Զիւլայիտէէն պար-
զև ստացած գումարներէն մինակ իրենց պարտքը տալու չափ ստակ
մնացեր էր : Այս վիճակն իրենց անցելոյն վրայ մտածել տուաւ , թէև
ներկայ չարեաց չէր կրնար դարմանել : Ապու Հասան հարկ տեսաւ խո-
հապաշտուն առնելիքը վճարել , կինն ալ անոր համաձայն էր : Ուստի
զանի կանչեցին և իրենց բոլոր պարտքը վճարեցին , առանց յայտնելու
թէ այս վճարքն ընելով ինչ մեծ ներգութեան մէջ կ'իյնային :

Խոհապաշտուն այսպէս նոր կոխուած մաքուր ստակով իր առնելիքը
վճարուած տեսնելով շատ դոհ եղաւ . իսկ Ապու Հասան և իր կինն ի-
րենց դանձին յատակը տեսնելով դոհ չեղան : Խորին լուծիւն մը պա-
հեցին , և շփոթեր մնացեր էին տեսնելով որ իրենց ամուսնութեան
առջի տարիէն այսպիսի ներգութեան մէջ ընկեր էին :

Ապու Հասան քաջ կը յիշէր որ ամիրապետն իր պալատն ընդունելով
զինքը խոտացեր է բոլոր պիտոյքը հողալու : Բայց զիտելով որ քիչ
ժամանակի մէջ անոր լիաձեռն պարզեաները վատներ էր , ոչ միայն նո-
րէն ձեռք բանալու արամադրութիւն չունէր , այլև չէր ուզեր ամօ-
թապարտ մնալ ամիրապետին յայտնելով իր շտայութիւնն ու կարօտու-
թիւնն : Ասկէ զատ իր հօրեհայրական ստացուածքն իր մօրը ձգեր էր ,
երբ ամիրապետը զինքն իր քովը պահեց , և բնաւ միտք չունէր մօրը
քակլին դիմել , որով պիտի ստիպուէր իմացնել անոր թէ իր հօրը մա-
հուանէ ետև հետևած անկարգութեանց մէջ նորէն ընկեր էր :

Իր կողմէն ալ Նուզհաթուլ-Աուտաստ որ Զիւլայիտէի առատա-

ձեռնութիւններն և շնորհած ազատութիւնն ամուսնութեան առ թիւն՝
իր ծառայութեանց և սիրոյն բաւական փոխարէն կը համարէր , կար-
ծէր թէ աւելի բան խնդրելու իրաւունք չունէր :

Աերջասպէս Ապու Հասան լուծիւնն ընդմիջեց , և ճակատը բաց
Նուզհաթուլ-Աուտաստի երեսը նայելով , զարջ կը նկատեմ , ըսա-
ւանոր , որ դու ալ իմ դանուած շփոթութեանս մէջ կը գտնուիս և այս
ցաւալի պարագային մէջ արդեօք ինչ միջոց բռնել պէտք է կը մտա-
ծես , քանի որ առանց կասկածելու յանկարծ մեր ստակը հատու :
Զգիտեմ որ այս մասին ինչ կարծիք ունիս . ես կը մտածեմ որ ինչ որ
պատահի , մեր սովորական ծախսէն բան մը չպակտեցնենք , և յուսամ
որ դու ալ ինձի համամիտ ես : Ար մնայ ստակ ճարելու միջոց մը
գտնել , առանց վատօրէն մտաբալու , ոչ դու Զիւլայիտէէն և ոչ ալ ես
ամիրապետէն , և կարծեմ թէ ես ճար մը գտայ : Բայց յաջողելու հա-
մար պէտք է որ իրարու աջակցինք :»

Ապու Հասանի այս խօսքերը Նուզհաթուլ-Աուտաստին շատ հա-
ճելի եկան և անոր յոյս տուին : Յետ ալ այս կիտին վրայ գլուխ կը
յոյնեցնէի , ըսաւ , և եթէ ցարդ խօսք չբացի , պատճառն այս է որ
դարման մը չէի գտներ : Ար խոստովանիմ որ ըրած առաջարկութիւնդ
մեծ հաճոյք կը պատճառէ ինձ : Բայց քանի որ ճարը գտար և իմ ա-
ջակցութեանս կարօտ ես , կ'ըսես , յաջողելու համար , շուտով յայտնէ
թէ ինչ պէտք է ընել , և պիտի տեսնես որ ձեռքէս եկածը պիտի ը-
նեմ :

— Արդէն քաջայայտ էի , վրայ բերաւ Ապու Հասան , որ աջակից
պիտի գտնուիս ինձ այս գործին մէջ , քանի որ քեզի ալ կը վերաբերի :
Ուրեմն հիմակ պիտի ըսեմ քեզ թէ այս մեր դրամական ներգութեան
մէջ ինչպէս կ'ընանք ստակ ձեռք ձգել , գոնէ քիչ մը ժամանակուան
համար : Պէտք է որ սրբտիկ խարէութիւն մը բանեցնենք դու Զիւլայի-
տէին մօտ , և ես ամիրապետին , և հաւատտի եմ որ սնով պիտի զուար-
ճանան , և այս մեր հնարքն անսպասուել չպիտի մնայ : Իմ խորհած
հնարքս սա է . պէտք է որ երկու քնիս ալ մեռնինք :

— Երկու քնիս ալ մեռնինք մի , ընդմիջեց Նուզհաթուլ-Աուտա-
տատ : Եթէ կ'ուզես՝ մինակը մտիր , ես դեռ կեանքէ ձանձրացած

չեմ, և ըսածս ծանր չգայ քեզ, այսչափ շուտով մեռնելու միտք չունիմ: Եթէ այս միջոցէն տարբեր միջոց մը չունիս՝ կրնաս զայն ՚ի գործ գնել, վասն զի զիտցիր որ այդ բանին չեմ խառնուիր:

— Արջափ ըլլայ կին էք, պատասխանեց Ապու Հասան, ըսել կուզեմ թէ զարմանալի աշխուժութիւն ու անհամբերութիւն մ'ունիք. չես թողուր որ խօսքս աւարտեմ: Աւտի համբերէ քիչ մը և ինձ մտիկ ըրէ, և այն ատեն պիտի տեսնես որ դու ալ իմ ուզած մահաւորս մեռնելու պիտի փափայքիս: Արնաս երեւակայել որ միտքս ճշմարտասպէս մեռնիլ չէ, այլ սուտ մեռել ըլլալ:

— Ահ, այդ բանին խօսք չունիմ, ընդմիջեց Նուզհաթուլ-Աուատատ. քանի որ սուտ պիտի մեռնինք, քեզի հետ եմ. կրնաս իմ վրայ վստահիլ. պիտի տեսնես թէ այդ ըսած կերպովդ մեռնելու համար ինչ եռանդով պիտի օգնեմ քեզ. վասն զի բացէ ՚ի բաց կ'ըսեմ որ անգրասի հակառակութիւն մ'ունիմ առջի հասկցած կերպովս շուտ մը մեռնիլ:

— Լառ ուրեմն, դո՛հ պիտի ըլլաս, շարայարեց Ապու Հասան, իմ հնարքս ՚ի գործ գնելու համար նախ սուտ մեռել պիտի ըլլամ; անմիջապէս պատանք մը կ'առնուս և իս կը պատասես, իբր թէ իբօք մեռած եմ: Յետոյ սենեկին մէջ տեղը կը դնես, ըստ սովորականին, ապարօշտ երեսին վրայ դրուած և ոտներս դէպ ՚ի Մէքքէ գարձած; և զերեզման տարուելու պատրաստ: Երբ այսպէս ամէն բան պատրաստուի, կ'սկսիս ողբալ և ասանկ պարագաներու մէջ՝ սովորական արտասօք կը թափես, հաղուստներդ պատուելով և մազերդ փետելով, կամ դոնէ, այնպէս մը կը ձեացնես թէ կը փետես, և ապա լալային և մազերդ թափած Զիւպիտէին կը ներկայիս: Իշխանուհին արտասօքիդ պատճառն իմանալ պիտի ուզէ, և երբ հեծկլտանօք անոր խնդիրը բացատրես՝ անտարակոյս քեզ ցառակից պիտի ըլլայ, և թող մանս ծախսն ընելու համար քեզի գումար մը պիտի պարզուէ. նոյնպէս դամբանական ծածկոյթ մը շինելու և պատուած զլեւտիդ տեղ նոր մը կարելու համար քեզ զիտցակ պիտի տայ: Երբ այն գումարով և զիտցակով վերադառնաս, սենեկին մէջ տեղէն պիտի ելնեմ և դու իմ տեղս պիտի մեռնիս: Սուտ մեռել կ'ըլլաս, և ես ալ քեզ պատանքելէն

ետե՛ Զիւպիտէին մօտ խողացած գերդ պիտի երթամ ամիրասպետին քովը խողալու, և կը յուսամ որ ամիրասպետն ալ իս պարզեօք պիտի դարձնէ, ինչպէս որ Զիւպիտէ քեզ դարձուց:

Երբ Ապու Հասան այս խորհուրդը բացատրեց, «Արծեմ թէ այս հնարքը շատ զուարճալի պիտի ըլլայ, ըսաւ Նուզհաթուլ-Աուատատ, և չեմ սխալիք ըսելով որ ամիրասպետն ու Զիւպիտէ պիտի հաւնին: Ար մնայ գործն աղէկ բռնել. իմ մտիս ես իմ դերս լաւ պիտի խողամ, մանաւանդ որ մեծ օգուտ պիտի ծագի անկէ թէ քեզի և թէ ինձի համար: Արեմն ժամանակ չի որուեսնը: Աս պատանք մ'առնելու ատենս, հաղուստդ հանէ և միտակ շապիկդ ու վարտիկդ պահէ. պատանքել զիտեմ, վասն զի Զիւպիտէի սպասուորելու ատենս երբ ազախին մը մեռնէր՝ պատանքելու հոգը ինձի կը յանձնէր:»

Ապու Հասան փութաց Նուզհաթուլ-Աուատատին ըսածը կատարել: Արեւակին վրայ երկնցաւ, սենեկին մէջ տեղն ուր պատանքը տարածուած էր: Թևերը ծալեց և թողուց որ կինը զինքն այնպէս մը պատատէ որպէս թէ պատրաստ ըլլար զազազը գրուելու և զերեզման տարուելու: Իր կինն անոր ոտքերը դէպ ՚ի Մէքքէի կողմը գարձուց, դէմքն ամենանորբ բեհեզով մը զոցեց և վրան ապարօշտ դրաւ այնպէս որ շնչառութիւնը չկարէ: Յետոյ իր գլխի կապոցը քակեց, մազերը թափեց և զանոնք փետել ձեացնելով սխառ ողբ ու կոծ ձգել, երեսները զարնել և սուգի ուրիշ ցոյցեր ընել: Այն վիճակին մէջ դուրս ելաւ, ընդարձակ բակէ մ'անցաւ որ Զիւպիտէի սենեակն երթայ:

Նուզհաթուլ-Աուատատ այնպիսի սուր աղաղակներ կ'արձակէր որ Զիւպիտէ իր սենեակէն լսեց: Հրաման սուաւ իր աղաղակներուն որ տեսնեն թէ ուսկից կ'ան այն լսած ձայներն: Իսկոյն վանդակաւոր պատահանները վազեցին և գարձան Զիւպիտէին ըսին թէ Նուզհաթուլ-Աուատատ լայով ու ողբալով պալատը կ'այ: Զիւպիտէ անհամբեր ըլլալով հասկնալու թէ ինչ պատահած է, ոտք ելաւ և մինչև նախասենեկին դուռը դնաց զանի զիմաւորելու համար:

Նուզհաթուլ-Աուատատ իր գերը կատարելապէս խողաց: Այն ինչ Զիւպիտէն լսեաւ, որ ինքն անձամբ վարադոյրը բացեր կ'սպասէր

անոր , աղաղակները բարձրացուց յառաջ դալով , մազերն անխալիբ փե-
տեց , աւելի ուժգին երեսներն ու կուրծքը զարկաւ և յորդ արտասուք
թափեց :

Զիւպիտէ իր աղախինն այս տարօրինակ վշտակրութեան մէջ տես-
նելով՝ հարցուց անոր թէ ի՞նչ ունէր և ի՞նչ ձախորդութեան պատու-
հեր է :

Նուզհամթուլ-Մուստատ փոխանակ պատասխանելով՝ ատեն մ'ես
հեծկլտալը շարունակեց , զանոնք զսպելու անկարող ցուցնելով ինք-
զինքն : «Աւաղ , իմ պատուելի տիկինս ու տիրուհիս , գոչեց նա վեր-
ջապէս՝ փղձկեցով , աւելի ի՞նչ մեծ և դժնդակ դժբաղդութիւն մը
կրնար պատահիլ քան այն որ կ'ստիպէ իս դալ Չեր վեհափառութեան
ոտքն ընկիլ : Աստուած քեզ երկար օրեր տայ , իմ յարգելի իշխանու-
հիս , և միշտ իր հովանիին ներքե պահէ ձեզ : Ապու Հասան , խեղճ
Ապու Հասան , զոր ձեր առատաձեռնութեամբը պատուեցիք , և ամի-
րայեւտին հետ խօսքը մէկ ընելով իս անոր կին տուիք , մեռաւ :»

Այս վերջին խօսքերն աւարտելով՝ Նուզհամթուլ-Մուստատ աւելի
սկսաւ լալ ու հեծկլտալ և նորէն իշխանուհւոյն ոտքն ընկաւ : Զիւպի-
տէ չափազանց զարմացաւ այս լուրն առնելով : «Ի՞նչպէս , Ապու Հա-
սան մեռաւ , գոչեց նա , այն քաջաուսղջ , զուարճախօս մարդը մե-
ռան : Իրաւ որ չէի յուսար այնպիսի մարդու մը մահուան լուրն այս-
պէս շուտով իմանալ , քանի որ աւելի երկար ապրելու երես ունէր և
ապրելու ալ արժանի էր :» Զիւպիտէ տկամայ ցաւէն արտասուեց : Ա-
ղախիններն ալ որ ստէպ Ապու Հասանի կատակներուն մանտակեց կղեր
էին , երբ Զիւպիտէի և ամիրայեւտին հետ ընտան երար կը խօսակ-
ցէր , արտասուք թափելով այս կորուստին վրայ զզայցած ցաւերնին
յայտնեցին :

Զիւպիտէ , իր աղախիններն ու Նուզհամթուլ-Մուստատ թաշկի-
նակնին իրենց աչքին վրայ դրած՝ երկար ատեն լալով և հեծկլտալով
անցուցին այս կարճեցեալ մահուան վրայ : Ի վերջէ Զիւպիտէ իշխան-
ուհին լուրթիւնն ընդմիջեց : «Անդամ , գոչեց նա սուտ որբեւորիին
գառնալով , կարելի է իր մահուան պատճառը գու ես : Անշուշտ քու
զէդ բնաօրութեամբդ այնքան վիշտ պատճառած ես որ վերջապէս

քու փափաքիդ հասար զանի գերեզման իջնցնելով :»

Նուզհամթուլ-Մուստատ Զիւպիտէի յանդիմանութենէ շատ վերեւ
և որում երևելով , «Ա՛հ , տիկին , գոչեց նա , կարճեմ թէ Չեր վե-
հափառութեան մօտ իրր աղախին սրասարեւելու ատենս բնաւ այդպի-
սի գէշ պաղափար մ'իմ ընթացքիս վրայ ունենալու առիթ չեմ տուած
քեզ , որ հիմակ իմ սիրելի երկանս մահուան պատճառ համարիս իս :
Եթէ այդ բանը համեղմամբ կ'ըսես , ինքզինքս աշխարհին ամենէն
դժբաղդ կ'իկնը սլտի սեպեմ : Ես Ապու Հասանը սիրեցի , ինչպէս որ
խանդաղին կ'իկն մ'իր էրկիլը կը սիրէ , և կրնամ առանց մնապարծու-
թեան ըսել որ իրեն արժանի եղած դորովաղին սիրովս սիրեցի զինքն ,
և ինքն ալ իր բանաւոր յօժարամտութեամբը ցոյց կտար ինձ որ նոյն
գորովանք կը սիրէր իս : Հաւատի եմ որ ինքն ալ այս ըսածս պիտի
ստուգէր թէ որ կենդանի ըլլար : Բայց , տիկին , յարեց նա իր արտ-
սուքը նորոգելով , իր ժալը հասեր էր , և այս է միայն պատճառն իր
մահուան :»

Արդարև Զիւպիտէ արդէն դիտեր էր որ իր այս աղախինը նոյնօրի-
նակ և անվրդով անոյշ բնաւորութեամբ , մեծ հլու թեամբ և եռանդով
իրեն կը ծառայէր , որմէ կ'իմացուէր որ աւելի յօժարասիրտութենէ կը
դորձէր քան թէ 'ի սրասարեւելութենէն : Ուստի աներկբայ անոր խօս-
քին հաւատայ և իր գանձապետուհւոյն հրամայեց որ երթայ զանձէն
հարիւր ոսկի և մէկ ձեռք գիւրակ բերէ :

Գանձապետուհին քսակն և դիպակն առած եկաւ , և Զիւպիտէի
հրամանաւ Նուզհամթուլ-Մուստատին ձեռքը տուաւ :

Այս գեղեցիկ պարզէն ընդունելով՝ Նուզհամթուլ իշխանուհւոյն
ոտքն ընկաւ և խնամարհարար շնորհակալ եղաւ , մեծ գոհութեամբ
սրտի որ յաջողեցաւ : «Գնա , ըսաւ անոր Զիւպիտէ , դիպակն անու-
նայդ զողաղին վրայ ծածկէ , և ստակն ալ անոր արժանի յուղարկաւ-
րութեան մը համար դորձածէ : Յետոյ քու տրամութիւնդ մեղմէ , ես
քու հողդ սլտի տանիմ :»

Այն ինչ Նուզհամթուլ-Մուստատ Զիւպիտէին քովէն հեռացաւ որ
ուրախութեամբ աչքերը սրբեց և խելոյն Ապու Հասանի քովը գնաց
իր խաղացած գերին յաջող ելլեն անոր իմաց տալու :

Նուզճաթուլ—Առատատ ներս մանելուն քահ քահ մ'է ձգեց՝ Ապու Հասանն առջի վիճակին մէջ գտնելով, այսինքն սենեկին մէջ տեղը պատանքուած : «Ռոք էլիր, ըստ անոր՝ շարունակ ծիծաղելով, և եկուր տես Ձիւպիտէին ըրած խարէութեան պտուղն : Այսօր ալ ուտելիք ունինք և անօթութենէ չպիտի մեռնինք :»

Ապու Հասան շուտ մ'ոտք ելաւ և իր կնոջ հետ շատ ուրախացաւ քակով ոսկին և դիպակի կոտոր տեսնելով :

Նուզճաթուլ—Առատատ այնքան դո՛հ էր այս խարէութեան մէջ յաջողելուն, որ չէր կրնար իր խնդութիւնը դադել : «Այս բաւական չէ, ըստ իր էրկան ծիծաղելով, ևս ալ կ'ուզեմ ստա մեռել ըլլալ և տեսնել թէ դու ալ ինձի չափ ճարպիկ պիտի բրթիս ամիրապետէն քաշելու ինչ որ Ձիւպիտէէն քաշեցի :

— Ահա այս է կանանց ողին, վրայ բերաւ Ապու Հասան. իրաւունք է բռնել որ միշտ կը պարծին թէ մարդիկներէն աւելի կ'արժեն, թէ և շատ անգամ անոց խորհրդովը միայն լաւ բան մը կրնան ընել : Իրաւի աղ որ բան մը կ'ըլլար եթէ չկարենամ դոնէ քու ըրածիդ չափ խաղախաղալ ամիրապետին մօտ՝ քանի որ ես եմ այս խարէութեան հնարիչը : Բայց անտի խօսքերով ժամանակ չանցնենք. դու ալ ինձի պէս ստա մեռել եղիք և պիտի տեսնես թէ ինչպէս պիտի յաջողիմ :»

Ապու Հասան իր կինը պատանքի մէջ դրաւ, նոյն տեղը տեղաւորեց, Մէքքէի կողմը դարձուց անոր ոտքերն, և սենեկէն դուրս ելաւ սակն ու վրայ, ապարօշն անկարգ փաթթած, մարդու մը պէս որ մեծ արամութեան մէջ կը գտնուի : Նոյն վիճակին մէջ ամիրապետին քովը դնաց, որ նոյն պահուն ճեպփէր վէզերին և ուրիշ վստահութիւնը վայելող նախարարաց հետ խորհրդի նստեր էր : Գուռը ներկայացաւ, և բարապանն ալ քաջ դիմաւորով որ Ապու Հասանի համար ամէն դուռաց էր, թողուց որ ներս մանէ : Ապու Հասան թաշկինակը ձեռքն և բաշքերուն վրայ դրած՝ յառաջ անցաւ, իր ստա արտաքին որ յորդառատ կը վազէր պահելու համար, և կուրծքը կը զարնէր սաստիկ, ահ ու վահ ընելով, այնպէս որ չափազանց վիշտ մը կը յայտնէր :

Ամիրապետն՝ որ միշտ ստիւր էր Ապու Հասանն ուրախ զուարթ տեսնելու, շատ զարմացաւ այն սխաւը վիճակին մէջ գտնի տեսնելով :

Իր ուշադրութիւնը խորհրդին գործերէն դարձուց և անոր արամութեան պատճառը հարցուց :

«Հրամանատարդ հաւատացելոց, պատասխանեց Ապու Հասան հեծկրաւով և անդադար հատաչելով, խիստ մեծ դժբաղդութիւն մը հասաւ դէպիս : Աստուած Ձեր վեհափառութեան շատ օրեր տայ որ այսպէս փառաւորապէս կ'առաջարկէք : Նուզճաթուլ—Առատատ, զոր ինձի կնութեան տուիք, որպէս զի իմ մնացած օրերս անոր հետ անցընեմ, աւան . . . :»

Այս բացաղանջութեամբ Ապու Հասան այնպիսի վշտահար սիրտ մը ցցուց որ իրր թէ աւելի խօսիլ չկրցաւ և յորդ արտաք թմախեց :

Ամիրապետն՝ որ հասկցաւ թէ Ապու Հասան իր կնկանը մահը յայտնելուց, սաստիկ վիշտ ցցուց : «Աստուած ողորմի հողուն, ըստ նա վշտալին դէմքով մը : Բարի աղախին մ'էր և զանի Ձիւպիտէ և ես քեզի տուինք որպէս զի հաճոյք պատճառենք. աւելի սպրելու արժանի էր :» Այն ատեն արտաքը սկսան վազել, և իր թաշկինակն առնու ստիպուեցաւ զանոնք սրբելու համար :

Ապու Հասանի վիշտն ու ամիրապետին արտաքը ճեպփէր վէզերին և միւս նախարարաց արտաքն ալ զրգուեցին : Ամէնքն ալ Նուզճաթուլ—Առատատին վրայ սկսան լալ, մինչդեռ նա անհասկեր կ'ըսա պատէր Ապու Հասանի ձեռնարկութեան յաջող ելքը տեսնելու :

Ամիրապետն Ապու Հասանի վրայ մի և նոյն դատողութիւնն ըրաւ, ինչ որ ըրեր էր Ձիւպիտէ կնկանը վրայ : «Բռնաւտական, ըստ անոր զայրալին ձայնով մը, միթէ քու վատ ընթացքով կնկանդ մահուն պատճառ չեղմբ : Գոնէ 'ի պատիւ իմ Ձիւպիտէ կնոջս անոր հետ յարդանօր վարուիլ պարտաւոր էիր, քանի որ միւս աղախիններէն աւելի զանի կը սիրէր, և անորմէ զրկուելու հաճեցաւ քեզի կնութեան տալու համար : Այս է քու երախտապիտութեանդ նշանը :

— Հրամանատարդ հաւատացելոց, պատասխանեց Ապու Հասան՝ առաջինէն աւելի դառն արտաք թմախելով, ինչպէս Ձեր վեհափառութիւնը կրնայ մտածել որ այդպիսի մեծ ապրախտութիւն մ'ընեմ, քանի որ ձեր երախտիքն ու շնորհները լիութի վայելեցի և որոց բնաւ չէի յանդիմեր յուսալու : Իմ կինս Նուզճաթուլ—Առատատն ոչ միայն

այս ստորագաներուն համար, այլ ուրիշ ընտիր ընտիր յատկութեանցը համար իրեն վայել սիրով և զօրովանօք կը սիրէի: Բայց, աէր իմ, յարեց նա, այս էր ճակատագիրն և Աստուած չուզեց որ վայելեմ այն երջանկութիւնը որ Ձեր վեհափառութեան Զիւպիտէին շնորհիւր տուցեր էի:»

Ապու Հասան ճշմարիտ տրամութեան մ'երեւոյթներ տալով իր երեսին՝ այնչափ լաւ խաղաց իր դերն որ ամիրապետն՝ արդէն զիսնալով որ էրիկ կնիկ շատ սիրով կ'ապրին, բոլոր ըսածներուն հաւատ ընծայեց և անոր խօսքերուն անկեղծութեան վրայ տարակոյս մը չունեցաւ: Արքունի գանձապետը ներկայ էր, և ամիրապետը հրամայեց որ գանձատունն երթայ և Ապու Հասանին համար հարիւր ոսիկ և կտոր մը դիպակ բերէ: Ապու Հասանն անմիջապէս ամիրապետին ոտքն ընկաւ իր երախտագիտութիւնը յայտնելու և ըրած ընծայէն շնորհակալ ըլլալու: «Գնան գանձապետին հետ, ըսաւ անոր ամիրապետը. զիսկալը դադարէն վրայ կը նստես և ստակով փառաւոր թաղում մը կը կատարես: Յուսամ՝ որ քու սիրոյդ այս վերջին նշանն ալ անոր տալու հոգ կը տանիս:»

Ապու Հասան ամիրապետին այս բարեսէր խօսքերուն խորին խոնարհութեամբ մը պատասխանեց հեռանալով: Գանձապետին ետևէն դնաց, երբ ոսիկով քսակն ու դիպակը ձեռք ձգեց՝ իր տունը դարձաւ ուրախանալով որ այնչափ շուտով իրեն մեծ անհանգստութիւն պատճառող դրամական նեղութեան առաջն առնելու միջոցները շուտ մը ձեռք ձգեց:

Նուզաթով-Աուստատ այն տաղտկալի վիճակին մէջ մնալէն յողներով՝ Ապու Հասանի չարասեց որ դայ այն տխուր վիճակէն զինքը հանէ, այլ դրան բացուիլը լսելուն՝ դէպ անոր վազեց և ըսաւ. «Լաւ, միթէ ամիրապետն ալ Զիւպիտէին պէս շուտ մը խարուեցաւ:»

— Ահա կը տեսնես, սրտասխանեց Ապու Հասան կատակ ընելով և քսակն ու դիպակն կտորը ցոյց տալով, որ ես ալ ողջառողջ կնկան մը մահն ողբալու այնչափ ձարսլիկ եմ, ինչպէս որ դու լալկան կինս կենդանի էրիկդ լալու:»

Սակայն Ապու Հասան աներկմիտ էր որ այս կրկնակի խաբէութեան

թիւնն անշուշտ երևան պիտի եկնէ. ուստի իր կնկան պէտք եղած հրահանգը տուաւ որպէս զի միտքան շարժին դալկը դէպքերու մասին: Յետոյ յաւելուց. «Արչափ որ ամիրապետն և Զիւպիտէն տեսակ մը շփոթութեան մէջ ձգենք, նոյնչափ վերջէն հաճոյք պիտու գլան, և կարելի է նոր պարզեներ տալով իրենց դժուարակութիւնը մեզի յայտնեն:» Այս նկատումով աւելի սիրտ առին խաբէութիւնը յառաջ տանելու քան ուրիշ որ և իցէ պատճառաւ մը:

Թէպէտև ամիրապետն ուրիշ շատ մը գործեր ունէր կարողացելու խորհրդին մէջ, բայց սրովհետև անհամբեր էր երթալ Զիւպիտէին աղախինի վրայ իր վշտակցութիւնը յայտնել, Ապու Հասանի մեկնելէ քիչ մ'ետքն ելաւ և խորհուրդն ուրիշ օրուան ձգեց: Մեծ վէպիրն և ուրիշ պաշտօնատարները մնաս բարև ըսին և դաջին:

Այն ինչ գուրս ելան, ամիրապետը Մէսրուրին ըսաւ, որ բնաւ իր քովէն չէր հեռանար, և իրեն խորհրդակիցն էր. «Իմ ետևէս եկուր և ինձի պէս եկուր իշխանութեան ցաւակից եղիւր իր աղախինին՝ Նուզհաթով-Աուստատի մահուան վրայ:»

Ուստի միասին Զիւպիտէի սենեակը գոցին: Երբ ամիրապետը գուռը հասաւ, վարացոյցը կէս մը բացաւ և դիտեց որ իշխանութեան քաղցնցի մը վրայ տրտում նստեր և աչքերն արտատ քով դեռ լեցուն էր:

Ամիրապետը ներս մտաւ, և դէպ 'ի Զիւպիտէի մօտենալով, «Տիկին, ըսաւ անոր, աւելորդ է ըսել թէ որչափ կը վշտակցիմ ձեր ցաւերուն, քանի որ զիտես թէ որչափ տրտմութեանց նոյնչափ ուրախութեանց անտարբեր չեմ. բայց ամէնքնիս ալ մահկանացու եմք, և Աստուծոյ պիտի գարձենք մեզի տուած կեանքն, երբ ժամանակը դայ: Նուզհաթով-Աուստատ, քու հաւատարիմ աղախինդ, յիրաւի այնպիսի ընտիր ձիբքեր ունէր որ ձեր համարման արժանի էին, կը հաւանիմ որ այս համարմանդ նշաններն անոր մահուանէ կտքն ալ չես զլանար իրմէ: Սակայն նկատեցէք անգամ մ'որ ձեր ողբն անոր կեանք չլրնար տալ. ուստի, տիկին, թէ որ կը հատաք ինձ և իս կը սիրէք, այս կորստեան վրայ պէտք է որ միեթաբուիք և աւելի հոգ տանիք ձեր առողջութեան վրայ որ ինձի թանկագին է, և իմ երջանկաւ»

Թիւնս կը կազմէ :»

Եթէ իշխանուհին մէկ կողմէն զմայլեցաւ ամիրասպետին փափուկ զգացումներէն , միւս կողմէն շատ զարմացաւ Նուզճաթուլ-Աուտասա տին մահուան լուրն առնելուն , քանի որ այս լուրը ընտա չէր դուշակեր : Աստի այնքան մեծ եղաւ զարմանքն որ սրճ մ'առանց պատասխան մը տալու լուռ կեցաւ : Իր զարմանքը կ'աւելնար առած լուրին հակառակ լուր մ'առնելուն , և ափ 'ի բերանս կը մնար : Աւերջապէս ուշաբրեցաւ , և բերանը բանալով ,

«Իշխանդ հաւատացելոց , ըսաւ զարմանք յայտնող դէմքով ու ձայնով մը , շատ շնորհակալ եմ ձեր յայտնած գողորիկ զգացմանը համար , բայց ներքեցէք ինձ ըսելու , որ աղախնոյս մահուան վրայ տուած լուրէդ բան մը չեմ հասկնար . աղախինս ողջ առողջ է : Աստուած ձեզ ինձի սրճէ , սէր իմ : Եթէ տրամութեանս պատճառն իմնալ կ'ուզէք՝ Ապու Հասանի մահն է , իր էրիկը , քու մտերիմդ , մարդ մը զոր կը յարգէի ոչ միայն դուք ալ կարգեւորդ համար , այլ անոր համար որ հաճեցաք ինձ ծանօթ ընել զինքն , և ատեն ատեն շատ աղէկ դուարձուց իս : Բայց , սէր իմ , իր մահուան վրայ այնքան անզոյ կը տեսնեմ ձեզ , և զինքն այնպէս շուտով մտաջաք , թէ և սուէպ կ'ըսէիք թէ մեծ հաճոյք կ'զգայք որ այնպիսի մարդ մը ձեր քովն ունիք , որ զարմանալով կը զարմանամ անտարբերութեանդ վրայ , և ձեր անզոյալութիւնն անելի աչքի կը դարնէ , երբ փոխանակ Ապու Հասանի մահն ինձ յայտնելու՝ անոր կնիկն անհիմն մահը կը յայտնէք :»

Ամիրասպետն՝ որ կարծէր թէ աղախինն մահուան կատարելապէս տեղեակ է , և իրաւունք ունէր այսպէս կարծելու , վասն զի աչքով տեսեր և ականջովը լսեր էր եղելութիւնը , սկսաւ խնդալ և ուսերը բարձրացնել Զիւպիտէին այն խօսքերուն վրայ : «Մէսրուր , ըսաւ դէպ անոր դառնալով և խօսքն անոր ուղղելով , ի՞նչ կ'ըսես իշխանուհուին խօսքին վրայ : Յիթէ չէն կարծեր թէ տիկինն ըն երբեմն ցնորք կ'ունենան և աններելի են : Վասն զի դու ալ ինձի պէս տեսար և լնցիր :» Եւ յետոյ Զիւպիտէին կողմը դառնալով , «Տիկին , ըսաւ անոր , Ապու Հասանի մահուան վրայ մ'ողբար , քաջառողջ վիճակի մէջէ : Աւելի լաւ կ'ընես եթէ սիրական աղախնիդ վրայ լսա , քիչ մը

տաջ իր էրիկն իմ սենեակս եկաւ իր կնիկն մահն իմաց տալու լալով և ողբալով : Հրամանս ըրի որ անոր հարկըր ոսկի և դիպակի կտոր մը տան , որպէս զի մխիթարուի և վախճանելոյն թաղումը կատարէ : Մէսրուր , որ ահաւասիկ ներկայ է և ամէն բան տեսաւ , կրնայ իմ ըսածս ստուգել :»

Իշխանուհին այս խօսքերուն չհատուց և կարծեց թէ ամիրասպետը կատակ կ'ընէ : «Իշխանդ հաւատացելոց , վրայ բերաւ նա , թէ և կատակ ընել կը սիրես , կը համարձակիմ ըսելու որ կատակ ընելու ատենը տակ ընել կը սիրես , կը համարձակիմ ըսելու որ կատակ ընելոյս մահուան վրայ չէ , իմ ըսածս շատ ճշմարիտ է : Կնիկին իմ աղախնոյս մահուան վրայ չէ , այլ Ապու Հասանին վրայ , որուն մահը կ'ողբամ , և պէտք է որ դու ալ ինձի հետ ողբաս :»

— Եւ ես ալ , պատասխանեց ամիրասպետը խիստ ծանր կերպով մը , առանց կատակի կ'ըսեմ քեզ որ մեծապէս կը սխալիս : Մեռնողը Նուզճաթուլ-Աուտասան է , և Ապու Հասան քաջառողջ է ու կնիկդանի :»

Զիւպիտէի ծանր եկաւ ամիրասպետին չոր ու ցամաք պատասխանն : «Իշխանդ հաւատացելոց , պատասխանեց նա վառվռուն ձայնով մը , Աստուած քեզ այդ սխալմունքէն ազատէ : Քիչ քիչ պիտի կարծեմ թէ քու սովորական խոհեմութիւնդ կարուսեր ես : Ներէ ինձ վերստին ըսելու որ Ապու Հասանն է մեռնողն , և Նուզճաթուլ-Աուտասան , իմ աղախինս , հանդուցելոյս որբեարին կենդանի է : Թամ մը կայ որ ասկից ելաւ : Այնպիսի վշտազին վիճակի մէջ եկաւ երեցաւ ինձ որ եթէ յայտնապէս իր տրամութեան պատճառն ալ չըսէր՝ իր հեծկտանքէն պիտի դուշակէի և լսյի : Իմ բոլոր կիներս հետս լսյին , և կնիկն այս մասին վրայել : Կրնան նաև ըսել որ անոր հարկըր ոսկի և դիպակի կտոր մը տուի , և ներս մտնելուդ իմ երեսխս վրայ նշմարած տրամուկտոր մը տուի , և ներս մտնելուդ իմ երեսխս վրայ նշմարած տրամուկտոր մը տուի , և ներս մտնելուդ իմ երեսխս վրայ նշմարած տրամուկտոր մը տուի : Ես ալ կը պատրաստուէի իմ վշտակոյութիւնս յայտնել քեզ երբ դու ներս մտար :»

Զիւպիտէի այս խօսքերը ընելուն՝ ամիրասպետը քահ քահ ինզպով դուցեց . «Յիրաւի , տիկին , սարքէն է կամակորութիւնդ : Ես ալ կը սիրեմ , յարեց նա իր ծանր կերպարանն առնելով , որ Նուզճաթուլ ,

Առատասն է մեռնողն : — Ա՛չ, կ'ըսեմք քեզ, տէր իմ, վրայ բերաւ իսկոյն Զիւպիտէ նոյն ծանր կերպարանքով, Ապու Հասան մեռաւ : Զես կ'ընար ինձ հաւատացնել անհիմն բան մը :

Ամիրապետը բարկութենէ կրակ առաւ, իշխանուհիէն հեռի բազմոյն մը վրայ նստաւ, և խօսքը Մէսրուրի ուղղելով, «Շուտ մը դնա, բաւ, նայելու թէ երկուքէն ո՞րը մեռեր է, և եկուր ճշմարիտն ինձ իմաց տուր : Թէև բոլորովին ստոյգ եմ որ Նուզհամթուն է մեռնողը, բաւազոյն կը համարեմ այս կերպով իրողութիւնը ստուգել, քան թէ յամարել այնպիսի բանի մը վրայ որ ինձ քաջայայտ է :»

Ամիրապետը դեռ խօսքը չաւարտած Մէսրուր մեկնէր էր : «Պարհապէ մը պիտի տեսնես թէ մեզնէ ո՞վ իրաւունք ունի, դ.ն. թէ ես :

— Ես քաջ համոզուած եմ որ իրաւունքն իմ կողմն է, և դու ինքնին պիտի տեսնես որ Ապու Հասան մեռած է, ինչպէս որ ըսի :

— Ես ալ, պատասխանեց ամիրապետն, այնչափ ստոյգ եմ որ Նուզհամթուն—Առատասն է, որ պատրաստ եմ զբաւ գնել քեզի հետ որ Ապու Հասան կենդանի և մեռնողն երկինն է :

— Մի՛ կարծեր թէ այդ կերպով կ'ընաս համոզել իս, սրտասխառնեց Զիւպիտէ, զբաւդ կ'ընդունիմ : Ես ալ այնքան հաւատի եմ Ապու Հասանի մահուան վրայ, որ պատրաստ եմ զբաւ գնելու ամենէն սիրական բանին համար, եթէ դու ոչ ինչ բան մ'ալ գնես : Քաջ գիտես թէ ի՞նչ ունիմ ձեռքս և թէ ի՞նչ բան ամենէն աւելի սիրելի է ինձ, ինչ որ կ'ուզես ընտրել և առաջարկել, զբաւ պիտի պահեմ ինչ հետևութիւն որ ունենայ :

— Քանի որ այդպէս կը սնդես, ըսաւ այն ատեն ամիրապետն, իմ Հեշուտութեանց պարտէզս քու Նկարաց պալատին դէմ զբաւի կը դնեմ, մին միւսէն աւելի կ'արժեն : — Հարկ չէ զիմանալ, վրայ բերաւ Զիւպիտէ, եթէ քու պարտէզդ իմ պալատէս աւելի կ'արժէ, ինդիրդ այդ բանին վրայ չէ : Բաւական է որ քու կողմէդ զբաւ զբաւիդ մէկ հաւատար բանն ընտրես, ես խօսքին վրայ եմ և զբաւն այսպէս որոշուած է : Բնաւ խօսքս ետ չեմ աւանդեր, թող Աստուած վիպելուս :» Ամիրապետն ալ նոյն երգումն ըրաւ, և ապա մէջը կարեցին Մէսրուրին վերադարձին սպասելով :

Մինչդեռ ամիրապետն ու Զիւպիտէ այսպէս աշխուժու կը վիճէին Ապու Հասանի և Նուզհամթունի վրայ, Ապու Հասան որ անոնց վէճը դուշակեր էր՝ ամէն բանի պատրաստուէր էր : Երբ հեռուէն Մէսրուրը տեսաւ մինչդեռ կիկանը հետ վանդակին ետեք նստած կը խօսակցէր, և զիտեց որ շիտակ իրենց բնակարանը կը դիմէ, իսկոյն դուշակեց թէ ի՞նչ մտքով կ'դար : Իր կնիկանն ըսաւ որ նորէն սուտ մեռել ըլլայ, ինչպէս որ արդէն խօսքը մէկ ըրեր էին՝ առանց ժամանակ կորուսելու :

Արդարև ժամանակը սուղ էր, և Ապու Հասան հապու ատեն դտաւ իր կ'ինը պատատել և ամիրապետին տուած դիպակն անոր վրայ ձգել : Յետոյ իր բնակարանին դուռը բացաւ, և վշտաբեկ ու տրտում երեստով, աչացը վրայ թաշկինակը բռնած, սուտ վախճանելոյն զլիսուն վերեւ նստաւ :

Այն ինչ այս գործողութիւնն ըրաւ որ Մէսրուր սենեակը մտաւ :

Այս դամբանական տեսարանին Մէսրուր գաղտնի խնդութիւն մը զգաց ամիրապետին իրեն յանձնած հրամանին նկատմամբ : Երբ Ապու Հասան դանի տեսաւ՝ անոր առաջն առաւ, և յարգանքով անոր ձեռքը համբուրելով, «Տէր իմ, ըսաւ հառաչելով, ամենամեծ տրտութեան մէջ կը տեսնես իս իմ՝ ամուսնոյս Նուզհամթուն—Առատասն մահուան ըր, զոր ձեր բարկութեամբ կը պատուէիք :»

Մէսրուր այս խօսքին սիրաբ շարժեցաւ, և անկարելի եղաւ հանդուցելոյն յիշատակին քանի մ'արտասուք չնուիրել : Գլխին կողմէն մեռելին դամբանական ծածկոյթը վերոյց, և անոր երեսը նայեցաւ, որ բաց էր, և ապա դոյցելով, «Չկայ ուրիշ Աստուած այլ Աստուած, ըսաւ նա խորին հաւաչով մը : Պարտաւոր ենք անոր կամաց հնազանդել, և ամէն արարած անոր ծոցը պիտի դառնայ : Նուզհամթուն—Առատասն՝ բըյրդ իմ, յարեց նա հառաչելով, քու կեանքդ շատ քիչ տեւեց, Աստուած ողորմի հողուդ :»

Յետոյ Ապու Հասանի կողմը դարձաւ որ յորդ արտասուք կը թափէր : «Իրաւունք ունին ըսելու, յարեց նա, որ կանանց խելքը կարճ է, Զիւպիտէ՛ իմ ամենաբարի տիրուհիս այս վիճակին մէջէ : Առեց համոզել ամիրապետը թէ դու մեռած ես և չէ թէ քու կ'ինդ, և թէև ամիրապետն ամէն ձիգ թախեց անոր սխալմունքը վարատելու, չլրջութեամբ

յաջողիլ է իմ վկայութիւնս անդամ մէջ բերաւ որպէս զի ճշմարտութիւնը հաստատէ, քանի որ երբ եկար այն տխուր լուրը յանանելու ներկայ էի, բայց անօգուտ եղաւ: Մինչև անդամ իրարու դէմ կ՛ծու խօսքեր ըսին, որոց վերջ չպիտի տրուէր թէ որ ամիրապետը Զիւլպիտէն համոզելու համար իս քեզի չդրիէր իրողութիւնը կրկին ստուգելու մտօք: Բայց կը վախճամ որ նորէն չպիտի յաջողիմ, վասն զի կիները համոզելու համար ինչ փաստ որ առաջ բերուի, դարձեալ անդրդուելի կամակորութեամբ իրենց կարծիքը կը սրտաշարունեն:

— Աստուած՝ հաւատացելոց իշխանին հաղտալիւս խելքը միշտ անփորձ և լու ճամբուն մէջ պահէ, վրայ բերաւ Ազու Հասան՝ միշտ լաւազին աջօք և հեծկլոտահատ խօսքերով: Ահա աչքովդ եղելութիւնը կը տեսնես և Նորին վեհափառութեան աւելօք բան մը չըսի: Եւ եւրանի թէ, դոչեց նա իր հնարքն աւելի սքօղելու համար, այսպիսի տխուր և վշտալի լուր մ'անոր տալու առիթ մը չբարտահէր: Աւաղ, անկարող եմ բացատրել թէ ինչ մեծ կորուստ ըրի այսօր:

— Ըսածդ իբրա է, վրայ բերաւ Մէսրուր, և հաւատարի եղիր որ տրամութեանը մասնակից կ'ըլլամ. բայց վերջապէս պէտք է որ միտթարուիս և այդ չափ վշտացդ մէջ չթաղուիս: Ակամայ կը թողում քեզ ամիրապետին քովն երթալու. բայց իրբև շնորհ կը խնդրեմ, յարեց նա, որ դառնալէս առաջ մեռելը չվերցնես, վասն զի անոր թաղման ներկայ գտնուիլ կ'ուզեմ և անոր հոգւոյն համար աղօթել:»

Արդէն Մէսրուր գացեր էր իրեն յանձնարարութիւնը կատարելու, երբ Ազու Հասան որ զանի մինչև դուռը կ'առաջնորդէր, յայտնեց թէ մեծ պատիւ ըրած պիտի ըլլայ իրեն յուղարկաւորութեան գալով: Ազու Հասան վախճալով որ Մէսրուր կը վերադառնայ իրեն բան մ'ըսելու համար, ժամանակ մ'աչքովն անոր հետևեցաւ, և երբ բաւական հեռացաւ՝ նորէն ներս մտաւ. Նուզհաթուլ-Աուտատը պատանքին հանեց, և անոր ըսաւ. «Ահա նոր տեսարան մ'ալ խաղցիկք, բայց կ'երևակայեմ որ այս վերջինը չէ, և հաւատարի եմ որ Զիւլպիտէ իշխանուհին Մէսրուրի խօսքին չպիտի հաւատայ, ընդ հակառակն՝ պիտի ծաղրէ զանի. շատ զօրաւոր պատճառներ ունի այս մասին անոր հաւատ չընծայելու: Աւստի պէտք է որ նոր դէպքի մը սպասենք:» Երբ

Ազու Հասան այս խօսքերը կ'ըսէր, Նուզհաթուլ-Աուտատ ժամանակ ունեցաւ իր զղեսանները հաղնելու. երկու քնին ալ մեկտեղ դաշին բարձրացին վրայ՝ վանդակին առջև նստելու, որպէս զի անցած դարձածը դիտեն:

Սակայն Մէսրուր Զիւլպիտէին սենեակը հասաւ՝ ծիծաղելով և ծափ զարնելով, որպէս թէ զուարճալի բան մ'ունէր իմացնելու:

Ամիրապետը բնականապէս անհամբեր կ'ստատէր. կ'ուզէր այս գործին վրայ լուսաւորուիլ, մանաւանդ անոր համար որ իշխանուհին ալ հակառակը սնդեղով զինքը վերաւարեր էր, ուստի երբ Մէսրուր տեսաւ, «Անդամ դերի, դոչեց նա, ինդալու ատեն չէ, բերանդ չես բանար, բայց ՚ի բայ խօսէ, նո՛ւ է մեռնողը՝ երբ կը թէ կ'ինք:»

— Իշխանդ հաւատացելոց, պատասխանեց շուտ մը Մէսրուր՝ ծանր կերպարան մ'առնելով, Նուզհաթուլ-Աուտատան է մեռնողն, և Ազու Հասան Ձեր վեհափառութեան առջև երեցածին պէս միշտ տրտում ու տխուր է:»

Ամիրապետը Մէսրուրին խօսքը կտրելով, «Ազար լուր, դոչեց նա քահ քահ խնդալով՝ «Վարաց պալատը քիչ մ'առաջ Զիւլպիտէի քու տիրուհւոյդ, իսկ հիմակ այն պալատն ինն է: Գրաւ դրեր էինք հեան և եթէ կորուսէի՛ իմ Հեշտութեանց սրբաեղն անոր պիտի տայի. ուստի այդ լուրէն աւելի ատործելի լուր մը չէիր կրնար բերել ինձ, վարձքդ տալու չպիտի մոռնամ: Բայց հիմակ թողունք այս կէտը. կէտ առ կէտ սրտմէ ինձի թէ ինչ տեսար:»

— Իշխանդ հաւատացելոց, շարունակեց Մէսրուր, Ազու Հասանի բնակարանը հաննելով անոր խուցը մտայ, որ բաց էր. շատ տխուր գտայ զինքն և անբաղար իր կնիանը մահը կ'ողբար: Մեռելին գլխին վերելը նստեր էր. մեռելը սենեկին մէջ տեղը դրեր էին, ոտքերը դէպ ՚ի Մեքքէի կողմը դարձած էին, վրան ընծայ ըրած դիւրակի կտորդ ձգեր էին: Իմ վշտակցութիւնս յայտնելէն ետե՛ւ անոր մօտեցայ, և գլխուն վրայէն սաւանը վերցնելով, Նուզհաթուլ-Աուտատը տեսայ որուն երեսն արդէն փոխուեր և ուռեր էր: Ազու Հասանը յորդորեցի որ միտթարուի, և հեռանալու ատենս ըսի իրեն որ թաղման հանգիստին ներկայ գտնուիլ կ'ուզեմ: Աւստի արջաչեցի որ իմ

վերագրածիս տրամ: Ահա Ձեր վեհափառութեան տուած հրամանին վրայ այսչափս միայն կրնամ խօսիլ:»

Երբ Մէսրուր այս տեղեկութիւնները հաղորդեց, «Ես ալ աւելի բան չեմ ուզեր խնայել, բաւ ամիրապետը սրտովին ծիծաղելով, և շատ դոհ եմ որ սրաշօծող կէտ առ կէտ կատարեր ես:» Յետոյ Չիւսիտէ իշխանուհւոյն դառնալով, «Լաւ ուրեմն, տիկին, ըսաւ անոր ամիրապետը, միթէ այսպիսի հաստատ ճշմարտութեան դեմ բան մը ունիս ըսելու: Միթէ դեռ կը հաւատնս որ Նուրհայիթուլ-Առատատ կենդանի և Ապու Հասան մեռած ըլլայ, և վերջապէս չպիտի խոստովանիս որ դրաւդ կորուսիր:»

Չիւսիտէ չհաւտայ որ Մէսրուր ճշմարիտն ըսած ըլլայ: Աւտի ամիրապետին ըսաւ. «Ի՞նչպէս կ'ուզես որ այս գերիին խօսքին հաւատ ընծայեմ: Լիբր մ'է, որ ըսածը չգիտէ: Աչ կոյր եմ և ոչ անմիտ. և սաքովս տեսայ Նուրհայիթուլ-Առատատն իր մեծ տրտմութեան մէջ, ևս անձամբ անոր հետ խօսեցայ, և իր էրկան մահուան վրայ ըսած խօսքերն ականջովս լսեցի:»

— Տիկին, վրայ բերաւ Մէսրուր, քու և ամիրապետին կենաց վրայ կ'երգնում, որ Նուրհայիթուլ-Առատատ մեռած է և Ապու Հասան կենդանի է: — Սուտ կը խօսիս, անպիտան ու արհամարհելի գերի, պատասխանեց Չիւսիտէ բոլորովին զայրացած, և կ'ուզեմ քեզ շփոթել:» Անմիջապէս իր կիները կանչեց՝ ձեռքերը զարնելով, խմբովին ներս մտան: Իշխանուհւոյն անոնց ըսաւ. «Այս տեղ եկէք, և ճշմարիտն ըսէք: Ո՞վ էր ինձ եկող և խօսող անձը՝ հաւատացելոյ իշխանը դեռ չեկած:»

Բոլոր կիները պատասխան տուին թէ խեղճ վշտալի Նուրհայիթուլ-Առատատն էր: «Իսկ դու, յարեց նա դանձադաս հուշիին խօսելով, ի՞նչ հրամայեցի քեզ տալու անոր: — Տիկին, պատասխանեց դանձապահուհին, Ձեր վեհափառութեան հրամանաւ Նուրհայիթուլ-Առատատին հարիւր ոսկի և դիպակի կտոր մը տուի, և առաւ այս բաները հեար տարաւ: — Լաւ ուրեմն, թշուառական անարժան գերի, ըսաւ այն ատեն Չիւսիտէ ցամամբ, այս բոլոր խօսքերուն ի՞նչ պատասխան ունիս: Հինակ սրն կ'ուզես որ հաւատամ, դանձադաս աղախիններն:»

ինձի թէ ոչ քեզի:»

Մէսրուր Չիւսիտէի պատասխան տալու համար բռտական պատժաւներ ունէր, բայց որովհետև աւելի զայրացնելու կը վախնար, երկշտութիւն ցցող և լուռ կեցաւ, թէև ունեցած փորձերով լիովին համոզուած էր որ Նուրհայիթուլ-Առատատ մեռած էր, և ոչ թէ Ապու Հասան:

Չիւսիտէի և Մէսրուրի մէջ այս վէճն անցնելու ատեն, ամիրապետն՝ երկու կողմէն բերուած փաստերը լսելէն ետև՝ դարձեալ իր համոզումը չփոխեց, քանի որ ինքն անձամբ տեսեր էր Ապու Հասանն, և Մէսրուր ալ նոր տեղեկութիւններ բերեր էր, սրտովին կը ծիծաղէր՝ զիտելով որ Չիւսիտէ սաստիկ զայրացեր էր Մէսրուրէ դեմ:

«Տիկին, ըսաւ Չիւսիտէին, հարկ է նորէն կրկնել այն խօսքը զոր չգիտեմ՝ ո՞վ կ'ըսէ թէ կիներն ատեն ատեն խելքի պակսութիւններ ունին, և քու ընթացքէդ ակնյայտի կ'երևի թէ այս խօսքը շատ ճշմարիտ է: Մէսրուր նոր եկաւ Ապու Հասանի քովէն, ըսաւ թէ իր յատուկ աչքովը տեսեր է որ Նուրհայիթուլ-Առատատը՝ սենեկին մէջ տեղը մեռած գրուեր է, իսկ Ապու Հասանը կենդանի և մեռելին քովը նստած գտեր է. արդ՝ անոր վկայութեան չնայելով՝ թէ և անձիտելի է, դարձեալ չես հաւտար, և այս բանս չեմ կարող ընքոնել:»

Չիւսիտէ ամիրապետին ըսածին ականջ կատել չուզելով, «Իշխանուհւոյն հաւատացելոյ, ըսաւ նա, ներէ ինձ եթէ կասկածելի կը թուին ինձ ձեր խօսքերը, կը դիտեմ որ Մէսրուրի հետ խօսքը մէկ բերեր էք իմ սիրտս ցատցնելու և համբերութիւնս հապցնելու, և որովհետև կը նաշտիմ որ Մէսրուրի բերած տեղեկութիւններն առաջուց ձեր մէջ շտիտած դաւ մ'է, ինդրեմ ներել ինձ որ ես ալ իմ կողմէս Ապու Հասանի բնակարանը մէկը դրիեմ որ հասկնամ թէ կը սխալիմ թէ ոչ:»

Ամիրապետը հաւանութիւն տուաւ և իշխանուհւոյն այս կարեւոր յանձնարարութիւնն իր գայեկին յանձնեց: Այս գայեակը տարօք կիւն մ'էր, և միւս կանանց հետ այն տեղ ներկայ էր: «Գայեակ, ըսաւ նա, մտիկ ըրէ, Ապու Հասանի, կամ լաւ ևս, Նուրհայիթուլ-Առատատը:»

ուստատի ընակարանը դնա, քանի որ Ապու Հասան մեռած է: Այլ տեսնես թէ ամիրապետին ու Մէսրուրի Տեա վէճն ինչ բանի վրայ կը դառնայ. ուստի շատ խօսք պէտք չէ, ամէն բան զիտէ և ինձ եկուր խնայուր, և եթէ աղբոր լուր մը բերես՝ աղբոր ընծայ մը պիտի սուսնուս: Շուտ մը դնա և մ'ուշանար դարձիր:»

Գայեակը ճամբայ ելաւ, և ամիրապետը Զիւպիտէին շփոթութիւնը տեսնելով կը հրճուէր, բայց Մէսրուր՝ իշխանուհւոյն իրեն դէմ բարկութենէ սաստիկ վիրաւորուած, զանի խաղաղելու միջոցներ կը փտուէր, այսպէս որ ամիրապետն ու Զիւպիտէ իրմէ զոհ ըլլան: Ուստի շատ ուրախացաւ տեսնելով որ իշխանուհին իր դայեակը կը զրկէր Ապու Հասանի ընակարանը, վասն զի համարուած էր որ անոր տալիք տեղեկութիւնն ալ իրենին նման պիտի ըլլար և ինքզինքն արգարացնելով անոնց աչքը նորէն պիտի մանկէր:

Իսկ Ապու Հասան՝ որ վանդակին ետեէն անդադար դուրս կը դիտէր, հեռուէն դայեակը տեսաւ. հասկցաւ որ Զիւպիտէի կողմէն իբրև սպառդամաւոր կը զրկուի նա: Ուստի իր կենը կոչեց, և առանց վարանելու իր ընելիքին վրայ, «Ահա, ըսաւ անոր, իշխանուհւոյն դայեակին որ ճշմարտութիւնն իմանալու կդայ, հիմա ես պէտք է որ սուտ մեռել ըլլամ:»

Ամէն բան պատրաստ էր: «Նուզհաթուլ-Աուտատ շուտ մ'Ապու Հասանը պատանքեց, Զիւպիտէի տուած դիպակի կտորն անոր վրայ ձգեց և ապարօշն երեսին վրայ դրաւ: Գայեակն իր պաշտօնը կատարելու եռանդով՝ շտապաւ եկեր հասեր էր: Երբ սենեակը մտաւ, «Նուզհաթուլ-Աուտատը տեսաւ որ Ապու Հասանի գլխին վերերը նստեր էր, հերարձակ և լալաղին, և ողբ ու կոծ արձակելով այստեղն ու կուրծքերը կը զարնէր:»

Գայեակը սուտ որբեւարիին մօտեցաւ, «Իմ սիրական «Նուզհաթուլ-Աուտատս, ըսաւ անոր տխուր դէմքով մը, քու ցաւդ վրդովելու, և քեզ կաթողին սիրող էրկան մը համար թափած արտասուքը արդիւլելու չեկայ: — Ահ, բարի մայր, ընդմիջեց ողորմազին սուտ որբեւարին, կը տեսնես զլիխ եկած փորձանքն և ինչ թշուառութիւն հասաւ ինձ սիրական Ապու Հասանիս մահովն. այս մարդն որուն հետ

Զիւպիտէ, իմ և քու սիրելի տիրուհիդ ու ամիրապետը կարգեր էին: Ապու Հասան, սիրական էրիկս, զոչեց նորէն, ես քեզի ինչ ըրի որ այսպէս շուտով ձգեցիր իս ու գացիր: Միթէ միշտ քու քան թէ իմ կամքս կատարած չեմ. աւանգ, ես ողբմն ինչ «Նուզհաթուլ-Աուտատս ինչ պիտի ըլլամ այսուհետեւ:»

Գայեակն արմանքն ու զարմանքը կը տանէր տեսնելով որ ամիրապետին ներքինին ըսածները բոլորովին սուտ են: «Այն սեւերես Մէսրուրը, զոչեց նա բացապանչութեամբ ձեռքերը դէպ ՚ի երկին վերցնելով, այն սեւերես Մէսրուրն արժանի է որ Աստուծոյ կրակին զայ, քանի որ իմ տիրուհւոյս և ամիրապետին մէջ այսպիսի երկպառակութիւն ձգեց՝ այն անձուհի սուտն ըսելով: Պէտք է որ, աղջիկս, ըսաւ նա «Նուզհաթուլի դառնալով, ըսեմ քեզ թէ ինչ անդապմութիւն զորձեց այն անօրէն Մէսրուրն, որ մեր տիրուհւոյն առջև սխեց այն երեսութեամբ թէ դու մեռած ես և Ապու Հասան ողջ է:»

— Աւանգ, բարեմիտ մայր, զոչեց «Նուզհաթուլ-Աուտատս, երանի թէ ըսածը ճշմարիտ ըլլար. հիմակ այս վիշտերը չէի կրեր, և իմ սիրելի էրկանս վրայ չէի ողբար:» Այս վերջին խօսքերն աւարտելով՝ յորդ արտասուք թափեց, և այսպէս իր վշտին սաստկութիւնը յայտնեց:

Գայեակը «Նուզհաթուլ-Աուտատին արտասուքէն յուղուելով՝ անոր մօտ նստաւ, ինքն ալ սկսաւ լալ, և կամաց կամաց Ապու Հասանի գլխուն մօտեցաւ, կամաց մը վերցոյց ապարօշն երեսին վրայէն որ զանի ճանչէ:»

«Ահ, ինչք՞ Ապու Հասան, ըսաւ նա անոր երեսը շուտ մը ծածկելով, կ'աղաչեմ Աստուծոյ որ հոգուդ ողորմի: Մնաս բարև, աղջիկս, ըսաւ նա «Նուզհաթուլ-Աուտատին, եթէ կարենայի աւելի ես քովդ մնալ՝ յօժարակամ կը կենայի. բայց չեմ կրնար ուշանալ, պարտաւոր եմ անմիջապէս երթալ և այն ապիրատ Մէսրուրին ըսած անխտհեմ սուտովը տիրուհւոյս զգացած վշտալի անհանդատութիւնը փարատել, որ հաստատեց երդմանը իսկ որ մեռած ես:»

Այն ինչ Զիւպիտէի դայեակը դուրս ելնելով գուռը գոցեց, որ «Նուզհաթուլ-Աուտատս, որ քաջ գիտէր թէ դայեակը նորէն չպիտի

դատնայ , քանի որ տիրուհւոյն երթալու կը շտապէր , իր արտունքը սրբեց , Ապու Հասանին պատանքը հանեց , և երկուքնին ալ գային վանդակին ետևը՝ բազմոցին վրայ նստան , այս խորեմութեան վախճանին սպասելով անհամբեր , և միշտ սրտորաստ դանտելով ամէն անպատեհութեանց առաջն առնելու :

Չիւպիտէի դայեակն՝ իր սրտառութեան հնայելով՝ աւելի շտապադարձաւ քան եկաւ , որպէս զի այս ուրախալի լուրը ժամ առաջ իր տիրուհւոյն հաղորդէ : Իշխանուհւոյն սենեակը մտաւ շնչասպառ , և պարզմտօրէն ամէն բան Չիւպիտէին պատմեց :

Չիւպիտէ խիստ զգալի ակործանօք մտիկ ըրաւ դայեկին պատմութիւնն , և իր խնդութիւնը յայտնեց , վասն զի երբ դայեակը խօսքը լնցոյց , անոր ըսաւ այնպիսի ձայնով մ՝որ դատը վատտիլը կը ցուցնէր : « Հիմակ հաւատացեալոց իշխանին պատմէ նոյն բանն , որ կարծէթէ փախուցեր ենք , և ասկէ զատ՝ կ'ուզէ հաւատացնել որ մեր կրօնին զգացումն ու Աստուծոյ երկիւղը չունինք : Սեւերես գերիին ալ ըսէ դործն , որ լրբօրէն սուս կը խօսի , մինչդեռ ես ճշմարտութեան վրայ աներկմիտ էի : »

Մէսրոբ որ կարծէր թէ դայեկին սրտողամտորութիւնն ու տալիք տեղեկութիւնն իրեն նպաստաւոր պիտի ըլլան , չտիպանայ վիրտորուեցաւ տեսնելով որ իր ակնկալութեան հակառակ դարձաւ գործն : Ասկէ զատ՝ ստատիկ ծանր կգար իրեն Չիւպիտէին անհնարին բարբարիութիւնն այնպիսի բանի մը համար որ կարծէր թէ տարակոյս չվերցնէր : Աւստի դո՛հ եղաւ որ դայեկին հետ խօսքի դալու առիթ մը ունի , քան թէ իշխանուհւոյն հետ , որուն պատասխան տալու չէր համարձակեր ակնածութեան հակառակ չգործելու համար : « Փօօսաւ պտուռ , ըսաւ դայեկին բացէ 'ի բայ , ստախօս մ'ես դու . բոլոր ըսածներդ անհիմն են , ևս իմ յատուկ աչքովս տեսայ 'տուհսամթուլ-Առուստատը սենեկին մէջ տեղը մեռած :

— Գու ես ստախօս մը , և անձողնի ստախօս մը , վրայ բերաւ պատուար նախատելի ձայնով մը , որ այդպիսի սուտ մը կ'ըլեցնելու կը համարձակիս ինձի , որ Ապու Հասանի քովէն կգամ , որ մեռած սլաւկեր էր , ինձի որ հիմակ քաջաւորջ կինը տեսայ :

— Ես խարերայ չեմ , պատասխանեց Մէսրոբ , դու կ'աշխատիս միայն սուտ ու պատիւ խօսքերով մեզ խաբել :

— Ահա ասով լրբութիւն կ'ըսեն , պատասխանեց դայեակը . քանի որ 'տորին վեհափառութեան առջև իս սուտ հանելու կը ճգնիս , թէ և ես իմ աչօքս հիմակ տեսայ իսկ Ապու Հասանը մեռած և կինը քաջաւորջ :

— Գայեակ , պատասխանեց նորէն Մէսրոբ , աւելի աղէկ կ'ընես թէ որ չխօսիս , վասն զի կը զառանցես : »

Չիւպիտէ Մէսրոբին այս անբաղաքալարութիւնը տհաճութեամբ տեսաւ , մինչդեռ իր ներկայութեան նախատանօք կը վարուէր դայեկին հետ : Աւստի այս ստակալի նախատանայ պատասխանելու դայեկին ժամանակ չտալով , « Իշխանդ հաւատացելոց , ըսաւ նա ամիրապետին , այս գերիին լրբութիւնը կ'ուզեմ որ պատժես , քանի որ իր ընթացքով քեզ ալ նախատած եղաւ : Չիւպիտէ աւելի չկրցաւ խօսիլ , այնքան զայրացր էր , և արտաւքը կը խեղդէին իր ձայնը :

Ամիրապետն՝ որ այս վիճարանութեան ներկայ էր , ինչ ընելիքը չգիտցաւ , պարապ տեղ կը խորհէր , չէր կարող այս հանելու կը մեկնել : Միւս կողմէն իշխանուհին , Մէսրոբ , դայեակն ու արախիմն ըն՝ որ հոն էին , չգիտէին թէ որնու հաւտան և լուռ ու մունջ կը կենային : Աւերջապէս ամիրապետը բերանը բացաւ :

« Տիկին , ըսաւ խօսքը Չիւպիտէին ուղղելով , կը նայիմ որ ամէնքոնիս ալ ստախօս ենք , ես առաջինը , դու ալ Մէսրոբ , և դու դայեակ . գոնէ չեմ իր որ մեկուն խօսքն աւելի հաւատալի ըլլայ քան միւսինն . ուստի ելնենք և մենք անձամբ Ապու Հասանի բնակարանն երթալով ստուգենք թէ ճշմարտութիւնն իր կողմն է : Ես այս միջոցէն ուրիշ միջոց մը չեմ տեսներ մեր կասկածները փարատելու և մեր միտքը հանդարտելու : »

Այս ըսելով ամիրապետն ոտք ելաւ , իշխանուհին ետևէն գնաց , և Մէսրոբ յառաջ անցաւ դուռը բանալու համար :

« Իշխանդ հաւատացելոց , ըսաւ նա , ուրախ եմ որ Ձեր վեհափառութիւնն այս միջոցը կը գործածէ , և իմ ուրախութիւնս աւելի մեծ պիտի ըլլայ երբ դայեկին ցոյց տամ որ չէ թէ կը զառանցէ , քանի որ

այս խօսքս շատ անհամար երեցաւ դժբաղդարար իշխանուհւոյն , այլ միայն թէ բերած տեղեկութիւնը ստոյգ չէ :»

Գայեակը լուռ չկեցաւ . «Լուռ կեցիր , սենեակ մարդ , վրայ բերաւ նա , այս տեղ քեզնէ զատ մարդ մը չզտանցեր :»

Զիւպիտէ՝ որ Մէսրուրի գէմ սաստիկ կատղեր էր , չկրցաւ հանդուրժել տեսնելով որ նա դարձեալ իր դայեակին վրայ կը յարձակի : Ուստի իսկոյն պատասխանեց . «Անորէն գերի , ինչ որ ըսես՝ կը սնդեմ որ դայեակս ճշմարիտը հաղորդեց ինձ , իսկ դու իմ աչքիս ստախօս մի ես :

— Տիկին , վրայ բերաւ Մէսրուր , եթէ դայեակը լիովին ստոյգ է թէ՛ Նուզհամթուլ-Աուատատ ողջ և Ապու Հասան մեռած է , թող ինձի հետ դրաւ մը բռնէ , հաւատարի եմ որ չհամարձակիր :»

Գայեակն իսկոյն պատասխանեց . «Ոչ միայն կը համարձակեմ , այլ քեզ խօսքովդ պիտի գատապարտեմ , նայինք պիտի կրնան խօսքդ ետ առնուլ :»

Մէսրուր իր խօսքն ետ չառաւ . ուստի դրաւ բռնեցին ամիրապետին և իշխանուհւոյն առջև , սա սրբամանաւ որ կորսնցնողն արձաթածողելի օսկեղոյն դիպակի կտոր մը տայ միւսին :

Ամիրապետին և Զիւպիտէի սենեակը թէև բաւական հեռու էր , Ապու Հասանի և Նուզհամթուլ-Աուատատի բնակարանին գիւնջը կիջնար : Ապու Հասան անոնց դալը տեսաւ , Մէսրուրն առջևէն , և Զիւպիտէի դայեակն ու աղախիններն ետևէն . իսկոյն կնիւնն խնայուց՝ յայտնելով որ չափազանց սխալած պիտի ըլլայ եթէ անոնց այցելութեամբը չբաւուրի : Նուզհամթուլ-Աուատատն ալ վանդակէն նայեցաւ և մի և նոյն բանը տեսաւ : Թէև երբիւր կանխաւ ըսեր էր թէ անոնք այցի կզան , դարձեալ կինը սաստիկ զարմանք յայտնեց : «Հիմակ ի՞նչ պիտի ընենք , գոչեց նա , մեր բանը բուսաւ :

— Ամենէն բանէ մը մի վախնար , վրայ բերաւ Ապու Հասան անդրդուելի պողարիւնութեամբ մը , միթէ արդէն մոռցած որ այս մասին քեզի ըսածներս : Միտակ երկու քնիս ալ սուտ մեռել ըլլանք , ինչպէս որ արդէն խօսքը մէկ ըրեր ենք , և պիտի տեսնես որ ամէն բան յաջող էլք մը պիտի ունենայ : Անոնք ծանր ծանր կզան , մենք ալ ատեն

կ'ունենանք ամէն բան պատրաստելու միջև . որ դուրը համին :»

Արդարև Ապու Հասան և իր կինն ըստ կարի փաթթուեցան այլ և այլ բաներով , և սենեակին մէջ տեղն՝ իրարու մօտ երկնալէն ետև՝ դիւպակի կտորները վրանին առին և այսպէս հանգարտ այս մեծանուն անձերուն այցելութեան սպասեցին :

Աերջապէս այս նշանաւոր այցելուները հասան . Մէսրուր դուր բացաւ , և ամիրապետը Զիւպիտէին հետ սենեակը մտան՝ իրենց բուր մարդիկներով : Չափազանց զարմացան և անշարժ կեցան այս դամբանակն տեսարանին առջև : Այս գէպքին վրայ չիտէին թէ ի՞նչ խորհին : Ի վերջէ Զիւպիտէ ձայն հանեց և ամիրապետին ըսաւ .

«Վիտն , երկու քնիս ալ մեռեր են : Անչափ ըրիք , ըսաւ նա ամիրապետին երեսը նայելով , որպէս զի հաւատացնէք ինձ որ իմ սիրական աղախինս մեռած է , որ իրօք վախճաներ է , և տարակոյս չկայ որ իր էրկանը կորստեան վրայ զգացած ցաւէն մեռած պիտի ըլլայ :

— Աւելի լաւ կ'ընես եթէ ըսես , սրտասխանեց ամիրապետն , որ Նուզհամթուլ-Աուատատ մեռած է առաջ , և յետոյ Ապու Հասան իր ցաւերուն չլիմանալով հողին փշած պիտի ըլլայ . ուստի պէտք է խոտովանիս որ դրաւ կորուսիր , և թէ՛ Վկարուց պալատդ այսուհետև խն է :

— Ես ալ կը սնդեմ , սրտասխանեց Զիւպիտէ՝ ամիրապետին ընդգիւմնիտութենէ՝ զրդուելով , թէ դու կորուսիր դրաւդ , և Հեշտութեանց պարտեղդ իմն է : Ապու Հասան առաջ մեռած է , քանի որ դայեակը արդէն ըսաւ որ կինն ողջ տեսեր է և իր էրկան վրայ կլար :»

Ամիրապետին և Զիւպիտէի այս հակաձառութիւնն ուրիշ վէճ մը գրդուեց : Մէսրուր ու դայեակը նոյն կացութեան մէջ էին . ասոնք ալ դրաւ զրեր էին և իւրաքանչիւրն իր կողմէն կարծէր թէ զրաւը շահեր է : Այս վէճն բուռն կերպարանք մը կ'առուր , և ներքինապետը դաս յեկին հետ պատրաստ էին անձուոնի նախատիքներ իրարու ուղղել :

Աերջապէս ամիրապետն անցած դարձածին վրայ խորհելով ինքնին կը վրայէր որ Զիւպիտէ իրեն չափ իրաւունք ունէր ըսելու թէ զրաւն ինքը վատակած է : Այս արկածէն ճշմարտութիւնն երևան չկարենալ հանելու արտօնութենէ՝ երկու մեռելներուն մօտեցաւ և անոնց զլլուծն

վերևը նստաւ՝ Զիւպիտէի վրայ յաղթանակը տանելու հնարք մը մտածելով : «Այս, գոչեց պահ մ'եաքն, Աստուծոյ անուան վրայ կերգնում որ հազար ոսկի պիտի տամ անոր որ պիտի ըսէ ինձ թէ աստնցմէ հին առաջ մեռաւ :»

Այն ինչ ամիրապետն այս վերջին խօսքերը լնցուց, որ Ապու Հասանը ծածկող դիպակին տակէն ձայն մը լսեց որ կը գոչէր . «Իշխանդ հաւատացելոց, ես առաջ մեռայ, ինձի տուր հազար ոսկին :» Եւ նոյն պահուն Ապու Հասանը տեսաւ որ իր ոտքին առջև երկիր պողաւ : Իր կիներն ալ նոյնպէս ծածկոցը հանեց և դնաց Զիւպիտէի ոտքն ընկաւ, և պատշաճութեան համար դիպակով ծածկուեցաւ . բայց Զիւպիտէ ահազին աղաղակ մ'արձակեց, որով ներկայ գտնուողներուն սոսկումն աւելցուց : «Աերջապէս իշխանուհին իր վախը փարատելով անպատում ուրախութիւն մ'զգաց տեսնելով որ իր սիրական աղախինը յարութիւն առեր է, ճիշտ այն միջոցին որ անոր մահուան վրայ անմխիթար կը դանուէր : «Ահ, անզգամ, պոռայ նա, քու պատճառաւ ինչ ցաւքաշեցի գիտես արդեօք . սակայն սրտովին կը ներեմ քեզ, քանի որ ճշարիտ է թէ չես մեռած :»

Ամիրապետն ալ իր կողմէն երկիւղ մը չյայտնեց, ընդ հակառակն Ապու Հասանի ձայնը լսելուն քիչ մնաց խնդալէն պիտի ճաթէր, մահուանդ տեսնելով որ երկուքին ալ պատանքնին մէկդի ձգելով ելան, և Ապու Հասան ծանրաբար հազար ոսկին կը խնդրէր առաջ մեռած ըլլալուն :

«Այդ ինչ է, Ապու Հասան, ըսաւ նորէն ամիրապետը քահ քահ խնդալով, միթէ ծիծաղը շարժելէն իս պաննելու միտք ունիս : Այդպէս մեզ խաբելու խորհուրդն ինչպէս գլխիդ մէջ ծնաւ, այնպիսի կիտի մը վրայ որ բնաւ մեր մտքէն չէր անցներ :

— Իշխանդ հաւատացելոց, պատասխանեց Ապու Հասան, բայց էի բաց պիտի ըսեմ քեզ հիմակ : Ձեր վեհափառութիւնը քաջ գիտէ որ կեր ու խումը միշտ սիրած եմ : Ձեր տուած կիներն այս կիրքս չմեղմացուց, ընդ հակառակն՝ զայն սաստկացնելու յօժարութիւններ տեսայ անոր կողմէն : Այսպէս մեր բնաւորութիւնն իրարու յարմար գալով՝ Ձեր վեհափառութիւնը դիւրաւ կրնայ դատել, որ եթէ ծովու չափ

զանձ մ'ունենայինք իսկ՝ անոր յատակը գտնելու միջոցներ չպիտի պակսէին մեզ . ահա այս բանս հանդիպեցաւ մեզ : Իրարու հետ ապրելէն վեր՝ Ձեր վեհափառութեան պարզ և ներուր աղոր ճաշեր ընելու համար ոչ ինչ չինայեցինք : Այս առտու մեր խոհալմաճառին հետ հաշիւ տեսնելով՝ գիտեցինք որ մեր ունեցած պարտքն անոր վճարելու համար մեր քովը ստակ մը չպիտի մնար : Այն ատեն մեր անցելոյն վրայ խորհրդածութիւններ, և ապագային մէջ աւելի լաւ ապրելու խորհուրդներ մեր միտքը պաշարեցին : Շատ մը խորհուրդներ ըրինք և մէկդի թողուցինք : «Աերջապէս այս տխուր վիճակին մէջ ընկնելով զզացած ամօթնիս և Ձեր վեհափառութեան յայտնելու երկիւղնիս այս հնարքը թերադրեցին մեզ որպէս զի մեր պիտոյնց հասնինք, այս թեթեւ խարեութեամբ ձեզ խաբելով, և վստահ ըլլալով որ Ձեր վեհափառութիւնը մեզ ներելու շնորհ պիտի ընէ :»

Ամիրապետն ու Զիւպիտէ Ապու Հասանի անկեղծ խոստովանութեանէ շատ գոչ եղան, և անցած դարձածին վրայ սրտմտութիւն մը չյայտնեցին . ընդ հակառակն՝ Զիւպիտէ որ այս խնդիրն իր և ճշմարիտ իրողութիւն մը համարեր էր, սկսաւ ինքն ալ ծիծաղել, մտածելով թէ Ապու Հասան ինչեր հնարեր է իր նպատակին հասնելու համար : Ամիրապետն որ գրեթէ անզգար կը ծիծաղէր, այնքան տարօրինակ կը թուէր իրեն այս հնարքն, Ապու Հասանի և կիսկանն ըսաւ . «Իմեռեալս եկէք երկուքնիդ ալ . խօստացած հազար ոսկիս քեզի պիտի տամ, իբր նշան ուրախութեանս որ չէք մեռած :

«Իշխանդ հաւատացելոց, վրայ բերաւ Զիւպիտէ, բաւական համարէ, կ'աղաչեմ, մինակ Ապու Հասանի հազար ոսկի տալու : Իսկ կիսկան գալով՝ ես իմ որոշումն ըրի :» Նոյն պահուն՝ իր գանձապահուհին, որ իր հետն էր, ապսպրեց որ «Կուզամթուլ-Մուստատին ալ հազար ոսկի տայ, որպէս զի իր կողմէն կենդանութեան վրայ զզացած ուրախութիւնը յայտնէ :

Այս կերպով՝ Ապու Հասան և Կուզամթուլ-Մուստատին իր սիրական կիներն, ամիրապետին և Զիւպիտէ իշխանուհւոյն շնորհաց մէջ երկար ատեն ապրեցան, և մինչև մահ անոնց առատաձեռնութենէ ստացան իրենց պիտոյնց համար պէտք եղած ծախսերը :

ՊԼՏՄՈՒԹԻՒՆ ԱԼՍՏԻՆԻ ԿԱՓ ՀՐԱՇԱԼԻ ԿԱՆԹԵՂԻՆ

Ձինասանի մէկ թագաորութեան խիստ հարուստ և ընդարձակ մայրաքաղաքին մէջ, որուն անունն այս միջոցիս մտքէս ելեր է, Մուստաֆա անուն դերձակ մը կար: Այս դերձակը շատ աղքատ էր, և իր աշխատութեամբը հազիւ թէ իր կնկանն և Ասաուծոյ առած մէկ որդին հոգալու կարող էր:

Որդին՝ որուն անունն էր Ալատոին, շատ դէշ դաստիարակութիւն առեր և հետեապէս մտի կրկն արհայեք էր: Անդդամ, կամակոր և իր հօրն ու մօրն անհնազանդ էր: Երբ քիչ մը մեծցաւ՝ իր ծնողքը չկրցան տունը սրահել զանի. կանուխ դուրս կ'ելնէր, փողոցներն ու հրապարակները խաղալով կ'անցնէր իր օրերն՝ իրմէ փոքր դատարկաշրջիկ աղայոց հետ:

Երբ Ալատոին արհեստ մը սորվելու տարեքը մտաւ, հայրն որ իր արհեստէն տարբեր արհեստ մ'անոր սորվեցնելու կարող չէր, իր խանութն առաւ և սկսաւ անորցոյց տալ թէ կ'նչ կերպով պէտք է դործածել ասեղն, բայց ոչ անուշութեամբ և ոչ որ և է պատժի սպառնալեօք կարելի եղաւ հօրն իր որդւոյն թուղցիկ միտքը զգատտութեան բերել. անկարող եղաւ աշխատութեան և դործի վարձեցնել զանի, ինչպէս որ կը փախաբէր: Այն ինչ Մուստաֆա գլուխը կը դարձնէր, որ Ալատոին փախուստ կտար և բոլոր օրը խանութը չէր հանդիպեր: Հայրը զանի կը սրտոժէր, բայց Ալատոին անուղղելի էր, և ՚ի վերջէ հայրը ստիպուեցաւ զանի իր զլխին թողուլ: Մակայն որդւոյն այս ընթացքն իրեն մեծ վիշտ պատճառեց, և զանի իր սպարտաորութեան յորդորելու ճարը չդանելուն զպայած արտմութենէ՝ ծանր հիւանդացաւ և քանի մ'ամէն մտաւ:

Ալատոինի մայրը՝ տեսնելով որ իր որդին հօրն արհեստը բանելու միտք չունի, կրպակը գոցեց ու բոլոր դերձակի գործիները ծախելով՝ ստակ ըրաւ, որպէս զի թէ ինքն և թէ որդին սպրուին բամբակ մանկելով:

Ալատոին՝ որ այնուհետև հօրը վախը չունէր և մայրն այնքան բանի տեղ չէր գնէր որ՝ եթէ թեթև յանդիմանաւ թիւն մ'անդամ՝ անորմէ լսէր, կը համարձակէր սպառնալու անոր դէմ, ինքզինքը բոլորովին անատակութեան տուաւ: Օրէ օր իր տարեկից աղոց հետ աւելի կը տեսնուէր և առաջուանէ աւելի եռանդով կը խաղար: Մինչև տասն հինգ տարեկան ըլլալն այս վարմունքը շարունակեց՝ առանց դործի մը մտնելու և առանց խորհելու թէ արդեօք օրին մէկն կ'նչ պիտի ըլլայ: Այս վիճակին մէջն էր երբ օր մը՝ դատարկաշրջիկ աղոց հետ՝ հրապարակի մը մէջ խաղալու ասեղնն՝ ըստ իր սովորութեան՝ օտարական մը անկից անցնելով՝ կանկ առաւ և սկսաւ անոր նայիլ:

Այս օտարականը նշանաւոր վճուկ մ'էր, որ Ափրիկեցի վճուկ կ'անուանի այս պատմութիւնը գրող հեղինակներուն կողմէն. մենք ալ այս անունը պիտի տանք անոր, մանաւանդ այն պատճառաւ որ իրօք բնիկ Ափրիկեցի և երկու օրէ վեր այն քաղաքը հասեր էր:

Սեպէ թէ Ափրիկեցի վճուկն՝ որ դիմադրութեան տեղեակ էր, Ալատոինի դէմքին վրայ տեսաւ ինչ որ պէտք էր իր ճամբորդութեան խորհուրդն ՚ի գործ դնելու համար, կամ սեպէ թէ ուրիշ պատճառ մը ունէր, վարպետութեամբ անոր ընտանիքին վրայ տեղեկութիւններ ինդրեց և հարցոց թէ կ'նչ բարուց և բնաւորութեան տէր աղայ մի է: Երբ իր փախաբած ծանօթութիւններն ստացաւ, երխտասարդին մօտեցաւ և անոր ընկերներէն մէկդի քաշելով զինքը՝ հարցոց:

«Որդեակ իմ, միթէ հայրդ գերձակ Մուստաֆա չ'իտչուիր: — Այն, սպարն, պատասխանեց Ալատոին, բայց շատ ատենէ վեր մտած է:»

Այս խօսքիս վրայ՝ Ափրիկեցի վճուկը Ալատոինի վրէն փաթթուեցաւ, զանի գրկից և քանի մ'անդամ զանի համբուրեց՝ արտասուաղին աչօք և հառաչներ արձակելով: Ալատոին՝ որ անոր թափած արտասուքը զիտեց, հարցոց թէ կ'նչ պատճառաւ կ'այ: «Մ՛՛՛, որդեակ իմ, դօշեց Ափրիկեցի վճուկն, ինչպէս կ'ուղեն որ չլամ: Ես քու հօրեղբայրդ եմ և քու հայրդ իմ բարի եղբայրս էր: Շատ տարիներէ վեր ճամբորդութիւն կ'ընեմ, և այն միջոցին որ զանի տեսնելու և հետը լնդակցելու յուսով կը դառնամ, անոր մահը կ'իմայնես ինձ: Հաւասար

տր եղիր որ շատ զգալի ցաւ մ'է ինձի համար՝ ակնկալած միսթարու-
թինէս զուրկ մնալս : Բայց այս միսթարանքն ունիմ . քիչ մը որ յիշողու-
թեանս զօրածին չափ կը դիտեմ որ հօրդ դէմքն ունիս և քեզի դիմե-
լով չեմ սխալած : »

Յետոյ՝ ձեռքը քսակին տանելով՝ հարցուց թէ ձեր կը բնակի իր
մայրն : Ալատաին անոր հարցման պատասխանեց, և Ափրիկեցի վճուկն
ափով մանր դբամ տուաւ անոր՝ ըսելով . « Արդեակ իմ, դնա մայրդ
դտիր, իմ բարեներս անոր տուր, և ըսէ անոր որ վաղը պիտի գամ
զինքը տեսնելու՝ եթէ ժամանակս ներէ, որպէս զի հօրդ ապրած և
մեռած տեղը տեսնելու միսթարութիւնը վայելմ' : »

Այն ինչ Ափրիկեցի վճուկն իր ստեղծած եղբորորդիէն հեռացաւ,
Ալատաին իր մօրը տունը վազեց, շատ ուրախանալով իր հօրեղբօրը
տուած ստակին համար : « Մայր իմ, ըսաւ անոր՝ տունը մաննելով, կ'ա-
ղաչեմ ըսես ինձ թէ արդեօք հօրեղբայր մ'ունիմ : — Աչ, որդեակ
իմ, պատասխանեց մայրը, հօրեղբայր չունիս բնաւ, և ոչ մօրեղբայր :
— Սակայն քիչ մ'առաջ մարդ մը տեսայ որ կ'ըսէր թէ իմ հօրեղբայրս
է, քանի որ հօրս եղբայրն է եղեր, ինչպէս որ ինքը կը հաստատէ,
մինչև անգամ լալ ու իս համբուրել սկսաւ երբ ըսի թէ հայրս մեռած
է : Եւ այս ըսածիս ճշմարտութեան 'ի նշան, յարեց նա ընդունած
դրամը ցոյց տալով, ահա ինձ տուած ստակը : Նոյնպէս ինդրեց որ իր
կողմէն քեզ բարեւեմ և ըսեմ որ վաղն, եթէ ժամանակ ունենայ, ինքն
անձամբ այցի պիտի գայ, որպէս զի հօրս ապրած և մեռած տեղը
տեսնէ : »

— Արդեակ իմ, պատասխանեց մայրն, իրաւ է որ հայրդ եղբայր
մ'ունէր, բայց շատոնց մեռած է, և երբէք չըսեցի իր բերնէն որ ու-
րիշ եղբայր մ'ունենայ : » Ափրիկեցի վճուկն վրայ ուրիշ լսօք չըրին :
Հետեւեալ օրն՝ Ափրիկեցի վճուկն Ալատաինի մօտեցաւ երկրորդ ան-
գամ, երբ ուրիշ տղոց հետ՝ քաղքին մէկ ուրիշ տեղը կը խաղար :
Ահուկը նորէն համբուրեց զանի, ինչպէս որ առջի օր համբուրեր էր,
և անոր ձեռքին մէջ երկու ոսկի դնելով՝ անոր ըսաւ . « Արդեակ իմ,
մօրդ տար այս ստակն, ըսէ անոր որ այս իրկուն պիտի գամ զինքը
տեսնելու, ընթրիքը միտսեղ պիտի ընենք . ուստի պէտք եղածը ծա-

խու առնու, բայց նախ ըսէ ինձ թէ ձեր տունն ուր է : » Ալատաին
տունը ցցաց և Ափրիկեցի վճուկն անորմէ հեռացաւ դնաց :

Ալատաին երկու ոսկին իր մօրը տարաւ, և երբ իր հօրեղբօրը
միտքն իմացուց՝ կինը գուրս ելաւ աղոր պաշար գնեց և դարձաւ, և
որովհետև սեզանի սպասք չունէր՝ գնաց դրայիններէն փոխ ուզեց : Ա-
լատաինի մայրը բոլոր օրն անցուց ընթրիքը պատրաստելու և՛ երբ իր-
կունը պատրաստ եղաւ՝ Ալատաինի ըսաւ . « Արդեակ իմ, կարելի է որ
հօրեղբայրդ չզրկէ թէ ձեր է մեր տունը, դնա զանի դաիր և հօս
բեր : »

Թէև Ալատաին Ափրիկեցի վճուկն տունը նշանակեր էր, սակայն
դուրս ելնելու կը պատրաստուէր, երբ դրան զարկին : Ալատաին դու-
ռը բացաւ, և Ափրիկեցի կախարդը ճանչեց, որ զինի շիշեր և տե-
սակ տեսակ պտուղներ հիսնս առած ներս մտաւ :

Ափրիկեցի վճուկը բերածները Ալատաինի ձեռքը յանձնեցին ետև՝
մօրը բարև տուաւ, և աղաչեց որ իրեն ցօց տայ բաղմոցին վրայ իր
եղբօրը Մուստաֆային սովորական տեղը : Աինը զայն ցցուց, և իսկայն
զլուխը ծուեց և քանի մ'անգամ այն տեղը պագաւ արտասուալի աչօք
և դոչեց .

« Ետեղճ եղբայր իմ, քանի տարաբաղդ եմ որ ժամանակին չհասայ
մահուանէդ առաջ անդամ մ'ալ քեզ համբուրեմ : » Թէև Ալատաինի
մայրն աղաչեց որ նստի, սակայն ամենևին յանձն չառաւ մի և նոյն
տեղը բազմելու : « Աչ, ըսաւ, քաւ լիցի որ այդպիսի բան մ'ընեմ,
բայց ներէ ինձ որ դիմացը նստիմ, որպէս զի եթէ զանի իրը ինձ սի-
րական ընտանիքի հայր մը անձամբ տեսնելու ուրախութիւնը չունիմ,
դոնէ իրրև ներկայ այն վայրը տեսնեմ : » Ալատաինի մայրն աւելի
չստիպեց և թողուց որ աղատօրէն ուզած տեղը նստի :

Երբ Ափրիկեցի վճուկն իր ընտրած տեղը նստաւ, սկսաւ Ալատաինի
նի մօրը հետ խօսակցիլ : « Քարեսիրտ քոյր իմ, կ'ըսէր անոր, մի դար-
մանար եթէ Մուստաֆա եղբօրս հետ ամուսնանալէդ վեր իս չտեսար
բնաւ . քառուսն տարիէ վեր այս երկրէս հեռացած եմ, որ մեր եր-
կուքին հայրենիքն է : Այն ատենէն վեր՝ Հնդկաստան, Պարսկաս-
տան, Արապիա, Ասորիք, Եգիպտոս ճամբորդելէն, և այս երկիրնե-

րուն ամենէն աղար քաղաքները բնակիչէն ետե՛ Ափրիկէ անցայ ուր աւելի երկար ժամանակ բնակեցայ : Ա՛րջապէ՛ս մարդուս բնական ըլլալով իր հայրենեաց յիշատակը չմոռնալ՝ որչափ որ հեռու գտնուի, նոյնպէս ոչ իր ծնողաց, այնչափ սաստիկ բաղձանք մ՛ունեցայ իմ բնիկ երկիրս տեսնելու և նորէն իմ սիրական եղբայրս դալ գրկելու, որ ճամբորդութեան պատրաստութիւնները տեսայ և ուղի ընկայ, քանի որ այժ ունէի այսպիսի երկար ուղևորութիւն մ՛ընելու :

«Մինչև այս քաղաքը գալու համար որչափ երկար ժամանակ անցուցի, ի՛նչ արդեւքներու հանդիպեցայ, ի՛նչ նեղութիւններ կրեցի չեմ ուզէր զրուցել : այսչափ միայն լսեմ որ ամենէն շատ իս ցաւ պատճառող բանն եղաւ եղբօրս մահտան լուրն, եղբայր մը զոր միշտ սիրեր եմ և արդարև ճշմարիտ եղբայրական սիրով կը սիրէի : իր դէմքին դժադրութիւնն որդւոյն վրայ տեսայ, և սակէ զինքը միւս բոլոր աղոց մէջ զանազանեցի : Անշուշտ ըսաւ քեզ թէ եղբօրս մահտան գոյժն ի՛նչ կերպով լսեցի, բայց պէտք չէ դանդաղել Աստուծոյ վճիռն երէն : Ար միթիթարութիւնք ջապէս որ եղբայրս կ՛սպրի իր որդւոջն որ լիովին անոր կերպարանն ունի :»

Ափրիկեցի վճուկը գիտելով որ Ալատտինի մօրն էրկանը յիշատակին վրայ ցար կը նորոգուի և սիրտը կ՛ենէ՛ խօսքն ուրիշ բանի դարձուց, և Ալատտինի կողմը գառնալով՝ անունը հարցուց : «Անունս Ալատտին է, ըսաւ անոր : — Ան ուրեմն, Ալատտին, պատասխանեց վճուկն, ի՛նչ բանի կ՛ըբաղիս, արհեստ մը գիտե՛ս :»

Այս հարցման վրայ Ալատտին շփոթեցաւ և աչքերը վար առաւ, բայց մայրը խօսիլ սկսելով՝ ըսաւ . «Ալատտին գատարկաշըջիկ մ՛է : Հայրը կենդանութեան ատեն ամէն ձեռքէն եկածն ըրաւ անոր արհեստ մը սորվեցնելու, բայց չկրցաւ յաջողիլ . իր մահտանէն վեր, որչափ որ ամէն օր անոր խրատ կտամ և անդադար կը յորդորեմ, գարձեալ իր վարմունքը կը շարունակէ, և ինչպէս որ տեսար՝ գատարկաւորը աղոց հետ խաղալով իր ժամանակը կ՛անցնէ, և չլիտեր որ ալ աղայ չէ . ուստի եթէ դու ալ երեսը վար չառնուս և օդուտ չքողէքու խրատներէդ, այն ատեն յոյս բոլորովին պիտի կորեմ որ օրին մէկը մարդ պիտի ըլլայ : Գիտէ որ հայրը ժառանգութիւն մը չձգեց,

և ինքն ալ կը տեսնէ որ բոլոր օրը բամբակ մանելով շատ զժուարաւ հայ գնելու չափ դրամ կը շահիմ : Իսկ ես միտքս դրեր եմ օրին մէկը դուռն երեսնն գոյնիլ և ճամբել որ երթայ ուրիշ տեղ հայ գտնէ :»

Ալատտինի մայրն արտասուալի աչօք այս խօսքերն լսելէն ետե՛ Ափրիկեցի վճուկն Ալատտինի ըսաւ . «Այդ ըրածդ դէշբան է, որդեակ . պէտք է որ քու գլխիդ ճարը նայիս և ապրուստդ հոգաս : Տեսակ տեսակ արհեստներ կան, նայէ քեզի յարմար երեցած գործ մ՛ընտրէ և աշխատէ : Արեւիլ է որ հօրդ արհեստը քեզի անհաճոյ կը թուի և ուրիշ մը կ՛ուզես ընտրել՝ բացէ՛ ի բաց կարծիքդ ըսէ, ես կը փախաքիմ միայն քեզի օգնել :»

Ափրիկեցին տեսնելով որ Ալատտին չպատասխաներ, «Եթէ արհեստ մը սորվելու կը զժկամակիս, ըսաւ անոր, և կ՛ուզես պարկեշտ մարդ մ՛ըլլալ, կրպակ մը կը բանամ քեզի համար և հարուստ կերպաններ և բարակ կտաններ կը գնեմ անոր մէջ . դու ալ կը նստիս զանոնք ծախելու . առած ստակովդ ուրիշ ապրանք կը գնես, և այսպէս պատուաւոր կերպով կ՛սպրիս : Հիմակ լաւ խորհէ և կարծիքդ ազատօրէն ինձի ըսէ, ես միշտ պատրաստ պիտի ըլլամ խոստումս պահելու :»

Այս առաջարկութիւնը շատ ակտրոթելի երեցաւ Ալատտինի, որուն ծանր կը թուէր ձեռքի աշխատութիւնը, մանաւանդ քաջ կը գիտէր որ այն տեսակ ապրանք ծախող խանութիւնները շատ մաքուր և բանուկ են և խանութպանները լաւ կը հաղուին և յարդի են : Ափրիկեցի վճուկին յայտնեց, զոր իր հօրեղբայրը կը համարէր, թէ ինքն աւելի յօժարութիւն տնէր վաճառական ըլլալու քան ուրիշ բան, և թէ ցմահ անոր շնորհապարտ պիտի մնայ ընելիք երախտեաց համար : «Քանի որ այդ վրձակը քեզի հաճելի է, վրայ բերաւ վճուկը, վաղը քեզ հետ պիտի տանիմ, մաքուր և ճոխ հաղուստներ պիտի հագուեցնեմ քեզ, քաղքիս նշանաւոր մէկ վաճառականին պէս, և վաղը չէ միւս օր իմ գլխացած կերպովս խանութն ալ կը բանամ :»

Ալատտինի մայրն՝ որ մինչև այն ատեն չէր հաւատած որ Ափրիկեցի վճուկն իր էրկանն եղբայրն է, իր որդւոյն ըրած խոստումները լսելէն ետե՛ ամէն կասկածները փարատեց : Աստի շնորհակալ եղաւ անոր բարի գլխաւորութեանց համար, և իր որդին յորդորելէն ետև որ հօր-

եղբորը Հնորհաց արժանի ըլլալու ջանադիր գանուի, կերակուրը սե-
ղանը դրին: Ճաշին ժամանակը խօսակցութիւնը նոյն նիւթին վրայ
զարձաւ մինչև որ վճուկը տեսնելով որ տեսնն ուշ է, մնաս բարև ը-
սաւ Արատինի և անոր մօրն ու ձգեց դնաց:

Հետեւեալ առտու Ափրիկեցի վճուկը փութաց Մուստաֆա դերձա-
կին այրին առնը դալու: Ինչպէս որ խոստացեր էր: Արատինն իր
հետն առաւ և նշանաւոր վաճառականի մը խանութը դնաց, որ պատ-
րաստ հազուամներ, պէտքէս կերպաններ կը ծախէր ամէն հասակի և
վիճակի մարդոց համար: Արատինն հասակին յարմար զգեստներ հա-
նել առաւ վճուկն, և հաւնածները մէկդի գնելէն ետև՝ Արատինի ը-
սաւ. «Եղբորդդիս, այս զգեստներուն մէջէն հաւնածդ ընտրէ:» Ա-
րատինն իր նոր հօրեղբօրն առատաձեռնութեան վրայ զմայլելով՝
հատ մ'ընտրեց. վճուկն այն հազուատը ծախու առաւ ամէն պէտք ե-
ղածներովն և ամէնն ալ գնեց առանց սակարկելու:

Երբոր Արատինն այսպէս ճոխարար հազուեցաւ ոտիցը լուխ՝ ամէն
կարելի եղած Հնորհակալութիւնները հօրեղբօրը յայտնեց, և վճուկը
խոստացաւ անոր քովէն չհեռանալ և միշտ հետը պահել: Արդարև
քաղքին ամէն բանուկ տեղերը տարաւ, մանաւանդ հարուստ վաճա-
ռականներ գանուած շուկաները պտըտցուց, իսկ երբոր հասաւ փողոց
մ'ուր խիստ ընտիր և բարակ կերպաններ և կտաւներ կային, Արատ-
ինի ըսաւ.

«Արովհետև դու ալ այս տեսած վաճառականներուդ պէս վաճառա-
կան պիտի ըլլաս, պէտք է որ անոնց կրպակները յաճախես և ծանօ-
թանաս:» Նոյնպէս աղւոր և մեծ մէկիթներն անոր ցցուց, խանրը
պտըտցուց, օտար վաճառականներու հետ տեսութիւն ընել առաւ և
սուլթանին պալատին շատ տեղերն, ուր աղատ էին մտնելու, ժուռ
եկաւ: Աերջապէս քաղքին ամենէն աղւոր տեղերը պտըտելէն ետև՝
վճուկին խանութ մը մէջ բռնած սենեակը հասան: Սին տեղ գտաւ քանի
մը վաճառականներ, որոց հետ ծանօթացեր էր զպէն վեր, և զանոնք
յասակապէս հրաւիրեր էր մեծարելու և իրեն եղբօրորդին ներկայացը-
նելու:

Երբ հացկերոյթն երեկոյեան գէմլմնցաւ, Արատին մնաս բարև ը-

սելով քաշուիլ երթալ ուղեց, բայց վճուկը չթողուց որ մինակ մնին և
ինքն անձամբ զանի անոր մօրը տունը տարաւ: Երբ մայրն այնպէս աղ-
ւոր հազուած տեսաւ իր որդին, ուրախութենէ յափշտակուեցաւ. ան-
զազար վճուկը կ'օրհնէր, որ իր որդւոյն համար այնպիսի մեծ ծախքէ
եղեր էր:

«Ահ հանձն աղցական, ըսաւ անոր, չլիտեմ ինչ կերպով Հնորհա-
կալ ըլլամ առատարտութեանդ համար. զիտեմ որ որդիս անարժան
է ըրած բարեացդ, և աւելի անարժան պիտի ըլլար եթէ քեզի երախ-
տադէտ չմտար և եթէ չպատասխանէր քու ընտիր զգայմանցդ որով ի-
րեն խանութ մը բանալու կը միտիս: Ես ալ մանաւորապէս իմ կողմէս
բոլոր հողում քեզ Հնորհակալութիւնս կը յայտնեմ և քեզի երկարատև
կեանք մը կը մաղթեմ որ իմ որդւոյս երախտագիտութեան ակնաստես
ըլլաս, և ինքն ալ քու բարի խրատուց համեմատ վարուելով միայն
կրնայ իր երախտագիտութիւնը քեզ յայտնել:

— Արատին, պատասխանեց Ափրիկեցի վճուկը, բարի տղայ մ'է,
խօսքս մտիկ կ'ընէ, և յուսամ որ վերջէն բարի զտակ մը պիտի ըլլայ
մինակ կը ցաւիմ որ իրեն տուած խոստումս վաղը չպիտի կարենամ կա-
տարել: Ապրի ուրբաթ է, խանութները գոց պիտի ըլլան, և կար-
ծեմ կարելի չէ հաս մը վարձու բռնել և շտկել, մինչդեռ վաճառա-
կաններն զբօսնելու ետևէ պիտի ըլլան: Սյապէս գործը շարաթ աւուր
կը թողունք, բայց զարձեալ պիտի գամ վաղը զինքն առնում և պար-
տէզները պիտի տանիմ ժուռ դամ, ուր աղուականները կը յաճախեն:
Արելի է որ այն տեղի զուարճութիւնները տեսած չէ: Մինչև ցայսօր
տղոց հետ տեսնուած է, պէտք է որ մարդիկ ալ տեսնէ:»

Ափրիկեցի վճուկն Արատինի և մօրը հրաժարական բարև տուաւ և
դնաց: Սակայն Արատինն որ արդէն այնչափ աղւոր հազուած ըլլա-
լուն շատ ուրախ էր, քաղքին պարտէզները պարտելու յուսով մեծ
հաճոյք կ'զգար: Արդարև բնաւ քաղքին դռներէն դուրս ելած չէր և
ըրջականներն որ շատ աղւոր և ախորժեի էին, տեսած չէր:

Հետեւեալ օրն՝ Արատին կանուխ արթնցաւ, և հազուեցաւ որ հօր-
եղբայրը գալուն պատրաստ գանուի: Երկար տուն սպասելէն ետքն,
ինչպէս որ ինքը կը կարծէր, անհամբերութենէ դուռը բացաւ և սև մին

վրայ կեցաւ հեռուէն տեսնելու համար: Երբ նշմարեց՝ իր մօրն իմաց առաւ, և մնաս բարև ըսելով՝ դուռը դոցեց և դէպ անոր վարկեց՝ դիմաւորելու համար:

Ափրիկեցի վճուկը զանի տեսնելուն շատ զգուեց: «Օհ երթանք, սիրելի որդեակ, բաւ անոր խնդում երճտով մը. այսօր քեզի աղւոր բաներ պիտի ցուցնեմ:» Բարձր ու աղւոր դռներու, կամ լաւ ևս փառաւոր պալատներու տանող դռնէ մ'անցուց զանի, որոցմէ ամէն մէկը խիստ աղւոր պարտէզներ ունէր և մուտքն աղատ էր: Քանի պալատի մ'առջևէն անցնէին, Ալատտինի կը հարցնէր թէ արդեօք կը հաւնի: Եւ Ալատտին՝ ուրիշ մը տեսնելուն հօրեղբօրն իմաց կտար և կ'ըսէր:

«Հօրեղբայր իմ, ահա ապիկ մինչև հիմա տեսածներէս աւելի դեղեցիկ պալատ մը:» Սակայն շարունակ կը յառաջանային դաշտերուն մէջ, և նենգամիտ վճուկն՝ որ աւելի հեռուն երթալ կ'ուզէր իր մօրի խորհուրդն ՚ի դորձ գնելու համար, առիթ գտաւ այս պարտէզներէն մէկուն մէջ մտնել: Մեծ աւազանի մը մօտ նստաւ, որուն մէջ առ իւր ձի մը բերնէն առաւ ջուր կը վաղէր, և սուտ յոգնած եմ ըսաւ՝ որպէս զի Ալատտինն ալ հանգչի: «Եղբօրորդիս, ըսաւ, դու ալ ինձի չափ յոգնած պիտի ըլլաս. այս տեղ քիչ մը հանգիստ բնէք այժմ առնելու. յետոյ մեր ճեմելիքը շարունակելու աւելի զբոտովն պիտի ունենանք:»

Երբոր նստան, Ափրիկեցի վճուկը գօտիէն ծրար մը հանեց, որուն մէջ կարկանդակներ և տեսակ տեսակ սրտոզներ կային և առաջանին եզրը գրաւ: Յետոյ կարկանդակ մ'առաւ և կէսն Ալատտինին տուաւ. իսկ սրտոզներուն դալով՝ թողուց որ իր հաւանածն ընտրէ: Այս կարծառաւ ճաշին ժամանակ իր կարծեցեալ եղբօրորդեոյն շատ խրատներ տուաւ, որով կը յորդորէր աղաց ընկերութենէ հեռի կենալ, իմաստուն և զգոն մարդոց հետ տեսնալիլ, անոնց խօսքը մտիկ ընել և խօսակցութենէ օգուտ քաղել: «Շատ չանցնիր, կ'ըսէր անոր, անոնց կարգը կը մտնես, և որչափ անոնց օրինակին հետեւելով լաւ բաներ խօսիս՝ այնչափ կը շահիս:»

Երբ այս պարզ ընթերցան աւարտեցին, ոտք ելան և պարտէզներուն մէջէն իրենց ճամբան շարունակեցին, որոնք իրարմէ սահմաններն որո-

շող փորձիկ փոսերով զատուած էին, բայց անոնց հաղորդակցութիւնը չէին արդիւնը: Մայրաքաղաքին բնակիչներն արժանահաւատ անձինք ըլլալով՝ բնաւ իրարմէ անփառ մնալու համար զգուշութիւններ չէին ընէր: Ափրիկեցի վճուկն անզոյաբար Ալատտինը պարտէզներէն բաւական հեռու տարաւ և դաշտ ու արտ անցնելով մինչև լեռներու մօտ հասաւ:

Ալատտին՝ որ իր կեանքին մէջ այնքան ճամբայ չէր քալած, շատ յոգնեցաւ և Ափրիկեցի վճուկին ըսաւ. «Հօրեղբայր իմ, նոյն կերթանք: Պարտէզներէն շատ հեռացանք, և մինակ լեռներ կը տեսնենք: Եթէ աւելի առաջ երթանք, չլիտեմ թէ մինչև քաղաքը նորէն դաւանալու ոյժս պիտի բաւէ: — Արիացիր, հօրեղբօրորդիս, բաւ անոր սուտ հօրեղբայրը. քեզի մինչև հիմակ տեսած պարտէզներէդ գերազոյս պարտէզ մը պիտի ցուցնեմ, ասկից հեռու չէ, ասկից քայլ մ'անդին է, և երբ այն տեղ հասնինք՝ դու պիտի գոհ ըլլաս որ այնչափ մօտ դալէն ետև՝ այն պարտէզն ալ տեսանք:» Ալատտին համազուտեցաւ, և Ափրիկեցին դեռ ևս աւելի հեռու տարաւ, զանազան զուարճալի պատմութիւններ պատմելով, որպէս զի ճամբան տալտկաւ լի և յոգնութիւնն աչքին չերևի:

Աերջապէս չափաւոր և գրեթէ հաւասար բարձրութեամբ երկու լեռան մէջ հասան, որ իրարմէ քիչ մը լայն ձորով մը զատուած էին: Ահա այս նշանաւոր տեղն ուղեր էր առաջնորդել Ալատտինն, որպէս զի Ափրիկեցի վճուկն իր խորհուրդը դորձադրէ, խորհուրդ մը որուն պատճառաւ Ափրիկի խորերէն Ձինաստան եկեր էր: «Ասկից աւելի հեռու չլիտի երթանք, ըսաւ Ալատտինի, այս տեղ ամէն մահկանաւոր ցուաց անյայտ և կարգէ գործ բաներ պիտի ցոյց տամ քեզի, և երբ զանոնք տեսնես՝ նորհաւալ պիտի ըլլաս այնքան հրաշալիեաց ականատես ըլլալուդ, զոր քեզնէ զատ՝ մարդ մը տեսած չէ, և չլիտի տեսնէ: Ես կայծահասն վառելու ատեն՝ սա մացառներուն ամենէն չորերը հաւաքէ, որպէս զի կրակ վառենք:»

Այնչափ շատ մացառներ կային որ Ալատտին պէտք եղածէն աւելի ժողովեց ու կոյտ մը շինեց, մինչդեռ վճուկը վատիկը կը վառէր: Արակ առաւ անոնց, և մինչդեռ մացառները կը բռնկէին, Ափրիկեցի վճուկն

իր քօնն ունեցած խոնկ մ'անոր մէջ նետեց : Թանձր մտի մ'ելաւ , և մտին ասդին անդին ցրուեց մոզական բառեր արտասանելով , որոցմէ Ալատսին բան մը չհասկցաւ :

Նոյն պահուն երկիրը դողաց քիչ մը և բացուեցաւ այն տեղը՝ վճռու կին և Ալատսինի առջև , և մէկ ու կէս քառակուսի ոտք լայն քար մը երևան ելաւ , որ մէկ ոտք խորունկութիւն ունէր և հորիզոնական դիրք քով կեցած էր . մէջտեղ պիտի օղակ մը մտաւած էր , որպէս զի անկէ բունելով վերցնեն : Ալատսին այս բաներէն ստիպուով կ'ուզէր վախճել , բայց իր ներկայութիւնն այս խորհրդին պէտք էր , և վճռու չթողուց որ երթայ , մանաւանդ զինքը սաստեց , և այնպիսի ուժովն ապտակ մը տուաւ՝ որ զանի գետնն նետեց , և քիչ մնաց որ առջևի ակուանները բերնին մէջ պիտի մտաւէին , ինչպէս որ վաղած արեւուն տեսնուեցաւ : Նեղձ Ալատսին դողողալով և արտասուալի աչօք դռեց .

« Հօրեղբայր իմ , ի՞նչ ըրի որ այդպէս սաստիկ զարկիր ինձ : — Պատճառ ունիմ այդպէս վարուելու , պատասխանեց վճռուին : Նս քու հօրեղբայրը եմ , և հօրդ տեղը կը բունեմ հիմակ , ուստի պէտք չէ որ ինձ պատասխանես : Բայց , որդեակ իմ , յարեց նա կակղելով , բանէ մը մի վախնար . ուրիշ բան չեմ պահանջեր՝ բայց միայն ինձի լիովին հնազանդիս , եթէ կ'ուզես քեզ ընել լիք մեծ երախտիքէս օգուտ քաղել և արժանի ըլլալ : » Ահուկին այս աղօթ խոստումներն Ալատսինի երկիւղն ու բարկութիւնը հանդարտեցուցին , և երբ վճռու տեսաւ որ Ալատսին բողբոջին իջաւ ,

« Տեսար , յարեց նա , թէ ինչեր ըրի իմ խոնկիս և արտասանած խօսքերուս ուժովը : Հիմակ քաջ դիպցիր որ սա տեսած քարիդ տակ՝ պահուած գանձ մը կայ , որ քեզի սահմանուած է , և որով՝ օրին մէկն՝ աշխարհիս ամենէն մեծ թագաւորներէն հարուստ պիտի ըլլաս : Այս ըսածս այնչափ իբրաւ է որ երկրիս վրայ միայն քեզի ներեալ է այս քարին դպչել և վերցնել ներս մանելու համար : Ինձի անգամ ներելի չէ անոր դպչելու և ոտքս գանձատան մէջ գնելու՝ երբոր բանաս : Աւստի պէտք է կէտ առ կէտ կատարես ըսածս անվրէժ . մեծ կարեւորութիւն ունի այս գործը թէ քեզի և թէ ինձի համար : »

Ալատսին՝ իր տեսած և Ափրիկիցի վճռուին ըսած բաներէն զարմա-

նալով թէ այն գանձն է որ միշտ զինքն երջանիկ պիտի բնէ , ամեն անցած դացածը մտցաւ : « Լառ ուրեմն , հօրեղբայր իմ , ըսաւ վճռուին ոտք երնելով , ի՞նչ կ'ուզես որ բնեմ . հրամայէ , պատրաստ եմ քեզ հնազանդելու : — Սաստիկ ուրախ եմ , որդեակ , ըսաւ անոր Ափրիկիցի վճռուի զանի գրկելով , որ միտքդ փոխելիր . եկուր , մօտեցիր ինձ , բունէ սա օղակն և քարը վերցուր : — Բայց , հօրեղբայր իմ , վրայ բերաւ Ալատսին , բառական ոյժ չունիմ զայն վերցնելու համար , պէտք է ուրեմն ինձ օգնել : — Աչ , պատասխանեց վճռուին , իմ օգնութիւնէս պէտք չունիս , և արդիւնք մը չե՛ր ստանար , եթէ քեզ օգնեմ . պէտք է որ դու մինակդ վերցնես : Մինակ հօրդ անունը տուր , նոյնպէս հաւիդ , օղակը բունելով և զայն վերցուր . պիտի տեսնես որ զիւրաւ քեզի պիտի դայ քարն : » Ալատսին վճռուին ապստրածն ըրաւ . շատ գիւրտութեամբ քարը վերցուց , և զայն մէկդի դրաւ :

Երբոր քարը վերցուց՝ երեք չորս ոտք խորունկ շտեմարան մը տեսնուեցաւ , փոքր դռով մը և վար իջնելու համար աստիճաններով : « Արդեակ իմ , ըսաւ այն ատեն Ափրիկիցի վճռուին Ալատսինի , ճշտիւ պահէ քեզի ըսելիքս : Սա նկուղն իջէր , երբ սա աստիճաններէն վար իջնես , բայց դուռ մը պիտի գտնես՝ որ կամարած և իրարու մէջ բաժնուած երեք մեծ սրահներու պիտի տանի քեզ : Խրաքանչիւրին մէջ՝ աջու ձախ դին՝ սաներուն նման մեծ չորս հատ աման պիտի տեսնես ոսկիով և արծաթով լեցուն , բայց նայէ որ անոնց չդպչես : Առաջին սրահը շմուած՝ դպչէ որ պատմութեանդ վերցնես և չորս դիդ պատես : Երբ այն սրահը մանեմ՝ առանց կանկ առնլու երկրորդին անցիր , և անկից ալ երրորդին , նոյնպէս առանց կենալու : Բայց մանաւորապէս՝ զգուշացիր պատերուն մօտենալ և ոչ իսկ պատմութեանդ դպչի , վասն զի եթէ դպչիս՝ իսկոյն պիտի մեռնիս . ահա ասոր համար բոյ որ լառ մը չորս կողմը պատես : Երբորդ սրահին ծայրը դուռ մը կայ , որմէ գեղեցիկ և պղտիկ ծառերով զարդարուած պարտէզ մը պիտի մտնես . շիտակ քալէ , այն պարտիզին մէջէն անցիր որ յիսուն աստիճանով անոգուդ մը պիտի տանի քեզ՝ պատշգամ մ'եղնելու համար : Երբ պատշգամին վրայ ելնես , առջևդ նիշ մը պիտի տեսնես , և խոր-

շին մէջ՝ վառած կանթեղ մը . կանթեղն առ , զայն մարէ , և երբ պատրոյդին ծայրը նետուս և ջուրը թափես՝ զայն ծոցդ դիր , և ինձի բեր : Մի վախնար , հաղուսադ չես աղտոտեր . ջուրն իւղ չէ , և կանթեղը պիտի չորնայ երբ մէջինը թափուի : Եթէ պարտիդին պտուղները սիրադ քաշեն՝ որչափ կ'ուզես քաղէ , այդ բանն արդիւեայ չէ քեզ :

Այս խօսքերն աւարտելով՝ Ափրիկեցի վճուկը մատեն մատնի մը հանեց , և Ալատտինի մասը դբաւ՝ ըսելով թէ ամէն փորձանքի դէմ՝ դարման մ'է այն , միշտ բոլոր տուած հրահանդները պահելու պոյմանաւ : « Էլիմակ ճամբայ ելիր , որդեակ , ըսաւ անոր , անվեհեր վար իջիր . երկու քնիս ալ մինչև մեր կենաց վերջը հարուստ պիտի ըլլանք : »

Ալատտին թեթև մը նկղին մէջ ցատկեց և սանդղին վարի աստիճանն իջաւ . Ափրիկեցի վճուկին նկարագրած երեք սրահները դտաւ : Այնքան զոռշուովեամբ անցաւ անոնց մէջէն՝ որչափ որ կը վախնար մեռնելու իրեն տրուած հրահանդին չհետեւելով՝ պարտիդէն անցաւ առանց կանկ առնելու , պատշլամին վրայ ելաւ , խորշին մէջէն վառած ճրագն առաւ , պատրոյդն ու ելը թափեց , և դիտելով որ չոր է՝ իր ծոցը դբաւ . սրաշղամէն վար իջաւ և պարտէզը կեցաւ պտուղները նկատելով , զոր առաջ վեր 'ի վերջ տեսեր էր : Այս պարտիդին ծառերն արտաքոյ կարգի պտուղներով բեռնաւորուած էին : Իւրաքանչիւր ծառ գոյնզգոյն պտուղներ ունէր , սպիտակ , շողշողուն և բիրեղի պէս թափանցիկ . նոյնպէս կարմիր , կանաչ , կապոյտ , մանիշակաւուցն , դեղինի զարնող և ուրիշ այլազան գոյններով : Սպիտակները մարդարիտ էին , շողշողուններն ու թափանցիկներն՝ անդամանդ , միմազոյն կարմիրները՝ սուտակներ , նուազ միմազոյնները՝ յարգազոյն կարկէհաններ , կանաչները՝ զմրութաներ , կապոյտները՝ դճազմներ , կապոյտները՝ մեղախիկներ , անոնք որ դեղինի կը զարնէին՝ շափիզաներ . և այս պտուղներն այնպէս խոշոր ու կատարուն էին որ աշխարհիս վրայ ասոնց նման բան մը տեսնուած չէր : Ալատտին՝ որ ոչ անոնց արժէքը կը ճանչէր և ոչ գինն , այս պտուղներուն տեսքէն չբարձուեցաւ , որոնք իր ճաշակին յարմար չէին , ինչպէս որ կրնային ըլլալ թուղերը , խողովք

ներն և ուրիշ ընտիր պտուղներ որ Չինաստանի մէջ կը բուսնին : Ասանդի անոնց դինը չէր կրնար զխանալ բաւական հասուն չըլլալուն . կարծեց թէ այս բոլոր պտուղները ներկուած ասպակիներ են և բան մը չեն արժեր : Սակայն այնպիսի այլազան գոյններն , իւրաքանչիւր պտուղին տարօրէն խոշորութիւնն ու գեղութիւնը դրդիւ տաին իրեն ամենէն ալ հաւաքելու : Եւ արդարև ամէն մէկ գոյնէն շատ մ'առաւ , իր երկու զբայաններն և երկու նոր քսակները լեցուց , զոր վճուկը ծախուտուեր էր՝ անոր պարզեւած զգեստովն , որպէս զի ամէն բան նոր երեւի . և որովհետև իր երկու քսակներն՝ արդէն լեցուած զբայաններուն մէջ չէր մտնէր , ամէն մէկ կողմէն կապեց իր զօտիին . մինչև անգամ զօտիին ծալքերուն մէջ այն պտուղներէն տեղաւորեց՝ որ լայն ու բոլորած մետաքսէ կերպատէ շինուած էր , և այնպէս մը շտկեց որ անոնք վար չէին թափեր . նոյնպէս իր ծոցը՝ սրաւուճանին և շապկին մէջ դնելու չմտցաւ :

Ալատտին՝ առանց զխանալու՝ այսքան հարստութեամբ բեռնաւորուած՝ շուտով երեք սրահներուն կողմը դիմեց , որպէս զի Ափրիկեցի վճուկը չսպասեցնէ , և առաջուան պէս զոռշուովեամբ անցնելէն ետև՝ իջած տեղէն վեր ելաւ և նկղին մուտքը հասաւ , ուր Ափրիկեցի վճուկն անհասկեր իրեն կ'սպասէր : Այն ինչ Ալատտին տեսաւ զանի , « Զօրեղօայր իմ , ըսաւ անոր , կ'ազաչեմ ձեռք տուր որ վեր ելնեմ : » Ափրիկեցի վճուկն անոր ըսաւ . « Արդեակ իմ , ամենէն սուաջ կանթեղը սուր ինձ , կարելի է քեզի նեղութիւն պատճառէ : — Կերէ ինձ , հօրեղօայր իմ , վրայ բերաւ Ալատտին , բնաւ նեղութիւն տուած չտնի ինձ . քեզ պիտի յանձնեմ զայն երբ վեր ելնեմ : » Սակայն Ափրիկեցի վճուկն սոք կոխեց որ նկղն ելնելէն առաջ Ալատտին կանթեղն իրեն տայ , և Ալատտին՝ որ կանթեղը բոլոր հաւաքած պտուղներովը փաթթած էր , բացէ 'ի բաց մերժեց յանձնելու , մինչև որ նկղն վեր չէնէ : Այն ատեն Ափրիկեցի վճուկն անհնարին կատարութեամբ բորբոքեցաւ . իր ունեցած հոտաւետ նիւթէն քովը պահած կրակին վրայ նետեց , և այն ինչ երկու մեղական բաւեր արտասանեց՝ որ նկուղը գոցող քարն ինքն իրեն տեղաւորուեցաւ , ինչպէս որ էր՝ երբ Ափրիկեցի վճուկն ու Ալատտին այն տեղ հասան :

Այս իրաւ է որ Ափրիկեցի վճուկը դերձակ Մուստաֆային եղբայրը
 չէր, ինչպէս որ կարծեր էր, և հետեւապէս Ալատախին ալ Տօրեղբայ-
 րը չէր: Իրօք բնիկ Ափրիկեցի էր, և որովհետեւ Ափրիկէ այնպիսի եր-
 կիր մ'է ուր մարդիկ աւելի կախարդութեամբ կ'ըրարէն քան թէ այլ-
 ուր, իր երիտասարդութեան ատենէն այս արհեստին տուեր էր ինք-
 զինքն. և զբեթէ քառտուն տարի կախարդութիւններ, զեանասար-
 ցութիւններ, ծխամեք ընելէն և կախարդութեան զիւրքեր կարողալէն
 ետե՛ վերջապէս յաջողեր էր հասկնալու որ աշխարհիս մէջ հրաշալի
 կանթեղ մը կայ, զոր ձեռք ձգելով տիեզեցայ ամէն թագաւորներէն զօ-
 բաւորը պիտի ըլլայ: Գեանասարցական վերջին փորձ մ'ընելով՝ հաս-
 կըցաւոր այն հրաշալի կանթեղը Չինաստանի մէջ տեղը վերստին մը մէջ
 կը գտնուի, ճիշտ այն տեղն և այն պարագաներով զոր քիչ մ'առաջ նկա-
 րագրեցինք: Այս գիտին ճշմարտութեան վրայ լիապէս համոզուելով
 Ափրիկէի ծագէն ելեր, ինչպէս որ արդէն ըսինք, և երկար ու տա-
 ժանելի ուղևորութենէ մ'ետքը, դանձին մօտ գտնուած քաղաքը հա-
 սեր էր. բայց թէ և կանթեղն իրօք իր գուշակած վայրը կը գտնուէր,
 սակայն իրեն ներելի չէր այն տեղ մտնել և առնուլ անձամբ: Հարկ էր
 որ ուրիշ մէկն այն նկրկն մէջ մտնէր, զայն երթար առնուր և անոր
 ձեռքը յանձնէր: Ահա այս պատճառաւ Ալատախին գիմեր էր, որ ի-
 րեն աննշան պատանի մը, և իր խորհուրդն 'ի գործ գնելու յարմար
 մէկն երևցեր էր. և միտքը գրեթէ կանթեղը ձեռք անցնելէն ետե՛
 վերջին ծխամեք ընել, այն երկու մոզական բառերն արտասանել, ո-
 րոնք մեր արդէն տեսած ազգեցութիւնը պիտի ունենային, և որով
 խեղճ Ալատախն իր աղահետութեան և անողտանութեան պիտի զոհէր,
 որպէս զի բնաւ ակնատես պիտի մը չմնայ: Ափրիկեցին Ալատախի
 աստակ մը տարով՝ ուղեր էր անոր աչքը վախցնել և իր հրամաննե-
 րուն ճշտի հնազանդելու վարժեցնել, որպէս զի երբ այն երևելի
 մոզական լազարերը պահանջէ՛ Ալատախն առանց բողբոլմութեան անոր
 յանձնէ. բայց Ալատախն Ափրիկեցիին ակնկալութեան բոլորովին հա-
 կառակ վարուեցաւ: Աւերջապէս այնչափ շատապա գործեց այն անի-
 բաւութիւնն՝ Ալատախն սպաննելու համար, վասն զի կը վախճար որ
 եթէ աւելի ևս Ալատախին հետ վիճարանի, մարդ մը վրայ չհասնի

մտիկ չընէ իրենց խօսքն, և ծածուկն երևան չհանէ:

Երբ Ափրիկեցի վճուկը տեսաւ որ իր մեծ և զեղեցիկ յոյսերն ան-
 դաւանալի կերպով սրարապ ելան, բոլոր հոգն եղաւ խիցն Ափրիկէ
 դաւնալ, ինչպէս որ իրօք նոյն օրն իսկ ձախայ ելաւ: Գաղան ու դո-
 զի ձամբաններէ զարկաւ որ քաղաքը չմտնէ, ուսկից Ալատախին հետ
 ելեր էր: Եւ արդարեւ կը վախճար որ այլ և այլ մարդիկներէ շտե-
 նուի, որոնք կասկածի կրնային երթալ առանց Ալատախին դատնալուն:

Ըստ երեւոյթին՝ պէտք էր լիովին մոռնալ Ալատախն. բայց այն որ
 ընդ միշտ անոր կորստեան կը փախաքէր, չէր մտածած որ անոր մասն
 այնպիսի մասնի մը գրեթէ որով կրնար ազատիլ: Եւ արդարեւ՝ նոյն
 մասնին Ալատախին փրկութեան պատճառ եղաւ, որուն յատկութիւնը
 չէր գիտեր. և զարմանալի է որ այս կորուստը կանթեղին հետ մէկ-
 տեղ վճուկը յուսահատութեան մէջ ձգած չըլլայ: Բայց վճուկները
 ձախորդութեանց, իրենց փախաբանաց հակառակ դէպքերու այնքան
 վարժ են, որ քանի ապրին՝ չեն դադրիր մուխով, անուրջով և ցնորքով
 անանելու:

Ալատախն՝ որ իր սուտ հօրեղբօրն այս անողտանութեան չէր յուսար,
 քանի որ առաջ այնքան բարիք և գոռանք վատներ էր իրեն, այնպիսի
 զարմանքով մը պաշարեցաւ զոր երևակայել աւելի զիւրին է քան թէ
 խօսքով բացատրել: Երբ այնպէս ողջողջ ինքզինքը թաղուած տեսաւ,
 հազար անգամ իր հօրեղբայրը կանչեց, բայց անողտան տեղ վ'աղաղա-
 կէր և կարելի չէր որ ձայնը լսուի. ուստի մթութեան և խառնի մէջ
 մնաց: Աւերջապէս իր արտասուաց քիչ մը դադար տալէն ետե՛ նկրկն
 յետին աստիճանն իջաւ, որպէս զի իր արդէն անցած պարտիզին մէջ
 ըլլա փնտուէ, բայց հմայութեամբ բացուած պատը դոցուեր և մրացեր
 էր: Այլ ու ձախ գին կը խաբխարէ կրկին և կրկին, և դուռ չգտնուէր.
 այն ատեն լայն ու ողբը կը աստեղացնէ, և նկրկն աստիճաններուն
 վրայ կը նստի, ըլլա տեսնելու յուսահատ, և լիովին ստոյգ ըլլալով
 այն խառարին բանտէն մօտալուս մահուան մ'անցնելու:

Ալատախն երկու օր առանց կերակուրի և ջուրի այն տեղ մնաց.
 վերջապէս երբորդ օրը՝ մահն անխուսելի կարծելով՝ ձեռները վեր
 վերցուց միացնելով և կասարեալ հրութեամբ Աստուծոյ կամաց, դո-

չից .

«Միայն յԱստուած կայ զօրութիւն և իշխանութիւն , գերազոյն ա- մենաօր Կակին վրայ :»

Չեւոներն իրարու միայնելու գործողութեան մէջ՝ առանց մտածե- լու՝ Ափրիկեցի վճռակին տուած մասնին , որուն զօրութիւնը չէր ճան- չեր , շփեց : Իսկոյն ճին մ՝ որ ահագին գէմք և զարհուրելի նայուածք մ՝ ունէր , գեանէն ելաւ և իր առջևն երեցաւ , մինչև որ զլիսովը կա- մարին դպաւ և այս խօսքերն ըսաւ Ալատաինի .

«Ի՞նչ կ'ուզէս , ահա պատրաստ եմ քեզ հնազանդելու՝ իբր քու գե- րիդ , և մասնին իրենց մասն ունեցողներուն գերիններուն պէս , ես և մասնիկն միւս գերինները :»

Ուրիշ ժամանակի և ուրիշ պարագայի մէջ՝ Ալատաին՝ որ այսպիսի տեսիլներու սովորած չէր , անշուշտ ահարեկ մնալով՝ արձանի պէս համր պիտի դառնար այն տարօրինակ գէմքին առջև , բայց մի միայն ներկայ վտանգին մտածելով՝ առանց վարանման պատասխանեց .

«Գու՛ն իմ որ ես , իս այս տեղէն դուրս հանէ , եթէ այս զօրութիւնն ունիս :» Այն ինչ այս խօսքերն արտասանեց որ երկիրը բացուեցաւ և նկղէն դուրս՝ ճիշտ Ափրիկեցիին բերած տեղը գտնուեցաւ :

Չարմանալի չպիտի թուի եթէ ըսեմ թէ Ալատաին՝ որ այնչափ ա- տեն ամենաթմանք խաւարի մէջ մնացեր էր , առջի անգամ արևուն լոյ- սը չկրցաւ տանիլ , քիչ քիչ իր աչերը վարժեցան , և իր չորս կողմը տեսնելուն շատ զարմացաւ որ այն բացուածքն , ուսկից ելեր էր , գեա- նին վրայ չկար . չկրցաւ ըմբռնել թէ ի՞նչ կերպով գեանին խորէն դուրս գտնուեցաւ . մինակ այն տեղէն՝ ուր մացառներ վառեր էին , գրեթէ հասկցաւ որ նկղին վայրն ուր է : Յետոյ՝ քաղքին կողմը դառնալով՝ տեսաւ զայն չորս կողմը պատած պարտեզներուն մէջ . ճանչեց այն ճամբան ուսկից Ափրիկեցի վճռակը զինքը բերեր էր , և այն ճամբան բռնեց , փառք տալով Աստուծոյ որ վերտաին աշխարհ դարձաւ , մինչ- դեռ յուսահատ էր նորէն արևուն լոյսը տեսնելու : Մինչև քաղաքը հասաւ և շատ գծուարութեամբ առնը գնաց : Իր մօրը առնը մանե- լուն՝ զանի տեսնելու ուրախութենէն և երեք օրէ վեր բան մը կերած չըլլալով՝ զգացած տխրութենէն մարեցաւ և այս մարմնովը բաւա-

կան ժամանակ տեսց : Իր մայրն՝ որդին կորսուած կամ մեռած կարծե- լով լացեր ողբայր էր , զանի այն վիճակին մէջ տեսնելուն՝ ամէն հոգ ու խնամք տարաւ որ ինչքը զլուխը բերէ : Աւերջապէս Ալատաին սթափեցաւ և իր արտասանած առաջին խօսքերն ասոնք եղան .

«Մայր իմ , ամէն բանէ առաջ՝ կ'աղաչեմ որ ինձի ուտելիք տաս , երեք օրէ վեր բերանս փշրուք մը դրած չեմ :» Մայրն ինչ որ ուէր բերաւ , և անոր առջև դնելով ,

«Որդեակ իմ , ըսաւ անոր , մի շտասիր , այդ բանը վտանգաւոր է , կամաց կամաց և հանդարտ կեր , և չտիպազանց մի լեցնէր ստամոքսդ : Չեմ ուզեր իսկ որ ինձի խօսիս . ժամանակ ունիս ինձ պատմելու քեզ պատահած բաներն՝ երբ բորբոյլին ոյժդ գտնես : Քեզ տեսնելով մտի- թարուեցայ . ուրբաթ օրուանէ վեր ինչ ըլլալդ իմանալու համար քա- շած ներութիւնս , և մութը կոխելէն ետև՝ վերադարձդ չտեսնելով ը- րած հոգս և տրտմութիւնս մտցայ :»

Ալատաին իր մօրը խրատը բռնեց . քիչ և կամաց կամաց կերաւ , նոյնպէս համեմատաբար ջուր խմեց : Երբ ճաշը լմնցուց , «Մայր իմ , ըսաւ , շատ գանգամներ ունիմ քեզի գէմ՝ որ առանց գծուարութեան իս այսպիսի մարդու մը ձեռքը յանձնեցիր որ իս ապանելու միտք ու- նէր , և այս միջոցին հաստատապէս կարծէ թէ մեռած եմ՝ կամ այսօր վազը պիտի մեռնիմ : Ե՛հ , և ի՞նչպէս կրնայինք կասկած մ՝ ունենալ այն մարդուն վրայ որ իս զգուանօք և պարզ կենելով կը լեցնէր և այն- քան շահաւէտ խոտառմներ կընէր . զիտցիր , մայր իմ , որ այն մարդը դաւաճան մը , չարագործ մը , խաբերայ մ'է : Ինձի այնքան բարիք և խոտառմներ ըրաւ որ իր միտքը դրած նպատակին համար , որ էր իս սատակել , ինչպէս որ արդէն ըսի , այնպէս որ ոչ գու և ոչ ես ասոր պատճառը կարենանք դուշակել : Իսկ միւս կողմէն՝ կրնամ հաւատաւոր քեզ որ այն վատ վարմունքին արժանի ըլլալու բան մը չըրի : Գու ինք- նին պիտի խոտովանիս այս բանս երբ քեզնէ պատուէս մինչև իր վնասարէր խորհրդին կատարումը մեր մէջ անցած դացած բաները հա- ռատարմօրէն քեզի պատմեմ :»

Ալատաին սկսաւ իր մօրը պատմել ինչ որ՝ քաղքէն դուրս պալատ- ներն ու պարտեզները պտտելու համար վճռակին հետ երթալով՝ ի-

ընդ պատահեր էր, ինչ որ ճամբան պատահեր էր մինչև այն երկու
 լեռանց ստորոտն ուր վճռակին մեծ հրաշքը պիտի կատարուէր : Ինչ
 պէս կրակին մէջ հոտաւէտ նիւթ մը նետելով և քանի մը մոպական
 խօսքեր արտասանելով՝ երկիրը բացուեր էր իսկոյն և նկղի մը մուտքն
 երևան ելեր էր ուսկից անդին դանձի մը կեբթուէր : Ահուկէն կերած
 ասպակը չմոցար և բաւ նաև թէ ինչ կերպով՝ փոքր ինչ կակղեւն
 ետև՝ մեծ մեծ խոտաւմներով յորդորեր էր զինքը նկղին մէջ իջնելու ,
 մտոր մանկին գնելով : Ամէն տեսած բաներէն և ոչ պարագայ մը
 զանց ըրաւ , երեք սրահներէն անցնելով և դառնալով , նոյնպէս պար-
 ախէն և պատշգամէն , ուսկից հրաշալի կանթեղն աւեր էր , զոր իր
 մօրը ցոյց տուաւ իր ծոցէն հանելով . նոյնպէս յիշեց քաղած թափան-
 ցիկ և դոյնզդոյն պառզններն , որոց հետ երկու լեցուն քամկներն ալ
 հանեց և իր մօրը տուաւ , թէ և մայրը զանոնք բանի օտզ չըրաւ : Սա-
 կայն այն պառզնները թանկաղին քարեր էին : Սենեկին մէջ վառած
 կանթեղին լոյսն անոնց վրայ զարնելով այնպիսի փայլ մը կ'արձակէին
 որմէ գիւրին էր հասկնալ որ ճշմարիտ անդին քարեր էին . բայց Ա-
 լատտինի մայրն իրեն պէս ասանկ բաներու յարզը չըլտէր : Միջին վի-
 ճակի մէջ մեծցեր էր , և իր էրիկն ալ բաւական հարուստ չէր այնպիսի
 դոհարներ անոր գնելու : Ասկից զատ՝ իր արղականներուն և գրացիներ-
 ըուն վրայ ալ այնպիսի քարեր տեսած չէր . ուստի պէտք չէ զարմա-
 նալ թէ Ալատտինի մայրը զանոնք զժգին բաներու տեղ զրաւ և շատ
 շատ իրենց այլազան գոյներով մարդուս աչքը սփոփելու յարմար բաներ
 տեսցոյ . անոր համար Ալատտին իր նստած բաղնիցին մէկ բարձին ե-
 տեր զրաւ զանոնք : Իր արկածին պատմութիւնն աւարտեց՝ ըսելով թէ
 երբ դարձաւ և նկղին դուռն եկաւ որ դուրս ենէ , հրաշալի կանթե-
 ղը վճռակին տալու մերժեց՝ վճռակը կրակին մէջ նետած հոտաւէտ
 նիւթին և արտասանած խօսքերուն ուժովն՝ իսկոյն նկղին բերանը դո-
 ցուեր էր : Բայց աւելի ևս չկրցաւ ըսել ասանց արատաւելով՝ երբ
 ինքզինքն այն գծնգակ նկղին մէջ ողջ ողջ փակուած տեսաւ , մինչև այն
 վայրկեանին որ անկից ելեր և կերպով մ'աշխարհ եկեր էր իր մատնին
 շօշափելովն , որուն յատկութիւնը տակաւին չէր գիտեր : Երբ այս
 պատմութիւնն աւարտեց ,

«Աւելորդ կը համարիմ՝ աւելի ևս շարունակել , մայր իմ , բոտ-
 նա , մտոցած մտքը քեզի յայտնի է : Ահա վերջապէս ինչէր իմ ար-
 կածս և քեզնէ հեռանալէս վեր ինչ վասնդէ անոյց :»

Ալատտինի մայրն ամենայն համբերութեամբ և սուսնոյ ընդմիջելու
 լսեց այս հրաշալի , հիանալի , և միանգամայն տրամուլի պատմութիւնը
 մօր մը սրտին համար , որ իր որդին կանթողին կը սիրէր՝ անոր յան-
 ցանքները չնայելով : Սակայն պատմութեան այն սրտաշարժ տեղերն ,
 որով վճռակին նենդամտութիւնը կը յայտնուէր , մայրն իր սրամտու-
 թեան և ատելութեան նշաններն Ափրիկեցիի գէմ կը յայտնէր . բայց
 երբ Ալատտին խօսքն աւարտեց՝ խորեբային գէմ հազար տեսակ ա-
 նէճք ու նախապիք ժայթքեց՝ դաւաճան , նենդաոր , բարբարոս ,
 մարգասպան , վճռակ , մարդկային ազգի թշնամի և կործանիչ անուանեց
 զանի :

«Այն , որդեակ իմ , յարեց նա , վճռակ մ'է նա , և վճռակները հա-
 սարակաց ժանտականներն են . սատանաներու հետ կը տեսնուին իրենց
 կախարդութեանին : Օրհնեալ է Աստուած որ չթողուց քեզ անոր ան-
 զգամն թեան զոհ ըլլալու : Այտը է շնորհակալ ըլլաւ անոր՝ քեզի ը-
 րած շնորհաց համար : Անխուսելի էր մահը քեզի համար , եթէ զանի
 չլիշէիր և անոր օգնութիւնը չնայրէիր :» Մայրն ուրիշ շատ բաներ
 ալ ըրաւ՝ վճռակին մատմութիւնն անիծելով . բայց խօսելու ատեն դի-
 տեց՝ որ Ալատտին՝ որ երեք օրէ վեր քուն եղած չէր , հանդստանալու
 պէտք ունի : Ռաստի զանի պատկեցուց , և քիչ մ'իտքն ինքն ալ քնա-
 ցաւ :

Ալատտին՝ որ բնաւ չէր քնացեր այն ստորերկրեայ վայրն ուր կամաւ
 թողուեր էր մտնելու համար , բոլոր գիշեր խորունկ քուն մը քնացաւ
 և հետեւեալ օրը շատ ուշ արթնացաւ : Երբ եկաւ , առաջին խնդրած
 բանն ուտելիք եղաւ և մօրն ըսաւ որ մեծ հաճութիւն պիտի պատճա-
 ուէ իրեն եթէ անմիջապէս նախաճաշիկը բերէ :

«Աւագ , որդեակ իմ , պատասխանեց մայրը , հայի կտոր մ'անդամ
 չունիմ՝ քեզի տալու . երէկ իրկուն տանս մէջ գանձուած քիչ մ'ուտելիքը
 հատոցուցիր . բայց քիչ մը համբերէ , երթում պիտի շուտով քեզի ու-
 տեսաւ բերեմ : Աշխատանքէս մտոցած քիչ մը բամբակէ գերձան ու»

նիմ, երթամ պիտի զայն ծախելու, որպէս զի հաց ու ճաշիդ համար քիչ մը բան գնեմ:»

— Մայր իմ, վրայ բերաւ Ալատտին, գերձանդ ուրիշ անդամուան պահէ և երէկ բերած կանթեղը բեր ինձի. պիտի երթամ զանի ծախելու և առած ստակովն կրնանք նախաճաշիկ և ճաշ, և կարելի է ընթրիք ալ ճարել:»

Ալատտինի մայրը գնաց կանթեղը դրած տեղէն առաւ և բերելով, «Ահա ասիկ, ըստ իր որդւոյն, կանթեղը, բայց շատ աղտոտ է, եթէ քիչ մը սրբեմ՝ կարծեմ թէ քիչ մ'աւելի կրնայ արծել:» Քիչ մը ջուր և բարակ աւազ առաւ զայն սրբելու, բայց այն ինչ շփելու սկսաւ այն կանթեղն որ յանկարծ՝ իր որդւոյն ներկայութեան, նողկալի և հսկայական մեծութեամբ ճին մ'երեցաւ անոր առջև և որոտալիւր ձայնով մ'անոր ըսաւ .

«Ի՞նչ կ'ուզես, ահա պատրաստ եմ հնազանդելու, իրբև քու դերիդ և անոնց որ կանթեղն ունին ձեռքերնին, ես և կանթեղին միւս գերիները:»

Ալատտինի մայրը պատասխանելու անկարող էր. չկրցեր էր ճինին քստմենքի և զարհուրելի գէմքը նայիլ, և այնչափ տարտախեր էր՝ աւոր արտասանած առջի խօսքերէն որ մարեր ընկեր էր:

Ալատտին՝ որ արդէն նկզին մէջ ասոր նման երևոյթ մը տեսեր էր, առանց ժամանակ և մտքը կորսնցնելու, կանթեղը ձեռք առաւ և իր մօրը տեղը բռնելով՝ անոր կողմէն հաստատ ձայնով մը պատասխանեց:

«Անօթի եմ, ըստ ճինին, կերակուր բեր ինձի:» Ճինն աներեւոյթ եղաւ և քիչ մ'եւքը դարձաւ գլխին վրայ բերելով արծաթէ կոնք մը, որուն մէջնայն մետաղէն տաններկու պնակներ կային, պատուական կերակուրներով, վեց խոշոր հացով որ ձինի պէս ճերմակ էին, երկու շիշ ընտիր գինի և ձեռքն ալ երկու արծաթէ բաժակ բռներ էր: Ամէնը մէկ բազմոյն վրայ դրաւ և շուտ մ'աներեւոյթ եղաւ:

Այս ամենն այնպիսի արագութեամբ կատարուեցաւ որ Ալատտինի մայրը տակալին սթամպած չէր երբ ճինն երկորով անդամ՝ աներեւոյթ եղաւ: Ալատտին՝ որ արդէն անոր երեսին ջուր թափելու սկսեր էր ՚ի զուր, նորէն սկսաւ աշխատիլ որ մայրն ինքզինքին բերէ, բայց սեպէ

թէ իր մտքն՝ որ քրտեր էր՝ նորէն եկաւ, սեպէ թէ ճինի բերած կերակուրներուն հոսն անոր վրայ ազդեցին, նոյն միջոցին ինքզինքը դտաւ: «Մայր իմ, ըստ անոր Ալատտին, այդ բան մը չէ. ելիք և եկուր կերակուր կեր. ասով այժմ վրայ կրնայ զալ, մանաւանդ թէ ես ալ ուտելու մեծ պէտք մը կ'զգամ: Այսպիսի ընտիր կերակուրներ չթողունք որ պողին և անմիջապէս ուտենք:»

Ալատտինի մայրը յետին ծայր դարմայաւ երբ տեսաւ մեծ կոնքը, տաններկու պնակները, վեց հացն, երկու շիշ գինին ու բաժակներն, և պնակներէն երած զմայլելի հոսն առաւ: «Որդեակ իմ, հարցոյց նա Ալատտինի, ուսկից հասաւ մեզ այս առատութիւնն, և այս առատաձեռնութիւնն որն պարտաւոր ենք արդեօք: Արդեօք սուրբանը մեր ազքատութենէ տեղեկութիւն ունի՞ և մեր վրայ կը գծայ: — Մայր իմ, վրայ բերաւ Ալատտին, սեղան նստինք և կերակուր ուտենք, դու ալ ինձի չափ պէտք ունիս անկից: Ճաշելէն ետքը հարցմունքիդ պատասխան պիտի տամ:» Ի վերջէ սեղան նստան, և այնչափ մեծ ակտրոմակով կերաւ, որչափ որ մայր ու որդի այսպիսի առատ սեղանի մը չէին գտնուած երբէք:

Ճաշի ատենն՝ Ալատտինի մայրը կոնքն ու պնակները նայելէ չէր կշտանար, թէ և որտեղի չէր կրնար գիտնալ եթէ արծաթէ են թէ ոչ ուրիշ նիւթէ մը, այնչափ ասոնց նման բաներ տեսնելու անտուր էին, և աւելի ճիշտ խօսելով՝ անոնց նորութիւնն իր զարմանքը կը պատճառէր քան թէ արծեքն որ իրեն անձանօթ էր, և իր որդին ալ իրեն չափ տղէտ էր այս մասին:

Ալատտին և մայրն՝ որ կարծէին թէ պարզ նախաճաշիկ մը պիտի ընեն, ճաշի ատենը գեռ սեղան նստեր էին. այնպիսի պատուական կերակուրներ իրենց ակտրոմակը բացեր էին, և մինչդեռ տաք էին, կարծեցին թէ լաւ կ'ընեն եթէ երկու ճաշ իրարու միայնեն և մէկ անգամ միայն ուտեն: Այս կրկնակի ճաշը լմնաւով՝ դարձեալ ընթրիքի համար պէտք եղած կերակուրը մնալէն ետև հեռակեալ օրն ալ երկու անգամ ճաշ ընելու գեռ կերակուր մնացեր էր:

Երբ Ալատտինի մայրը սեղանը վերցուց և մէկդի դրաւ այն միսերն որոց զպած չէր, դարձաւ ու բաղմոյն վրայ իր որդւոյն քովը

նստաւ : « Ալատախն , ըսաւ անոր , կ'սպասեմ որ իմ անհասկերբութիւնս
դո՛՛հ ընես խոտառցած պատմութիւնդ ըսելով : » Այն ատեն Ալատախն
ճշարիւ պատմեց ճինին հետ անցած դարձածը՝ մօրը մարած և մինչև
նորէն ու շարքած ժամանակը :

Ալատախին մայրն իր որդւոյն խօսքին և ճինին երևոյթին վրայ շատ
զարմացաւ : « Բայց , որդեակ իմ , վրայ բերաւ նա , ի՞նչ ըսել կ'ուզես
ճիներովդ . երբէք՝ աշխարհ եկած օրէս վեր՝ չեմ լսած ինձ ծանօթ
անձերէս որ ճին տեսած ըլլան : Ի՞նչ դիպուածով այն անշահ ճինն ին-
ձի երեցաւ . ինչո՞ւ համար ինձի ուղղեց խօսքը՝ փոխանակ քեզի խօսե-
լաւ , քանի որ դանձին նկզին մէջ քեզ արդէն ալ երևցեր է :

— Մայր իմ , պատասխանեց Ալատախն , քեզ երեցած ճինն ինձ ե-
րեցած ճինը չէ . կերպով մ'իրարու կը նմանին , իրենց հսկայական մե-
ծութեան կողմէն , բայց իրենց կերպարանքով և հագուստով լիովին
տարբեր են . հետևապէս երկուքն ալ տարբեր տէր ունին : Եթէ քաջ
կը յիշես՝ իմ տեսածս ինքզինքն ունեցած մասնիկս գերին կոչեց , և
քու տեսածդ ալ ձեռք բռնած կանթեղին գերին կոչեց ինքզինքը :
Բայց չեմ կարծեր որ անոր ըսածը լսած ըլլաս . և արդարև կ'երևի
ինձ որ մարեցար երբ սկսաւ խօսիլ նա :

— Ի՞նչ , գրչեց մայրն , ուրեմն քու կանթեղդ է սրանձառ որ այն
չար ուղին ինձ գիտնեց քան թէ քեզ : Ա՛հ , որդեակ իմ , զանի իմ աչ-
քիս առջևէն վերցուր և ուզած տեղդ գիր , ալ չեմ ուզեր անոր դպիլ .
աւելի արէկ ունիմ որ զայն նետես կամ ծախես , քան թէ երկիրդէ
մնունելու վտանգի մէջ լինալ : Եթէ խօսքիս հատաս մասնին ալ մեկ-
դի կը նետես : Պէտք չէ ճիներու հետ յարաբերութիւն ունենալ , ա-
նոնք սատանաներ են , ինչպէս որ մեր մարդարէն ըսաւ :

— Մայր իմ , քու հրամանագ . առ այժմ չարտի ծախեմ այն կան-
թեղը , պատասխանեց Ալատախն , ինչպէս որ քեզ մ'առաջ միտք ունէի
ծախելու , կանթեղ մ'որ թէ քեզի և թէ ինձի օգտակար պիտի ըլ-
լայ : Միթէ չես տեսներ թէ մեզի ինչէր պիտի բերէ , պէտք է որ
մեր ուսելիքը ճարելու շարունակէ : Գուալ այս մասին ինձի պէս պի-
տի մտածես՝ նկատելով թէ իմ սուտ և անողամ հօրեղբայրս որչափ
հոգին բերանս եկաւ և ի՞նչ տաժանելի և երկայն ուղեորութիւն մ'ը-

բառ այն կանթեղը ձեռք ձգելու , քան թէ ոսկին ու արծաթը զոր՝
ըսածին պէս՝ սրահներուն մէջ տեսայ : Քաջ գիտէր այս հրաշալի
կանթեղին գինն ու արժէքը , քանի որ այս ձիւս դանձէն զատ բան մը
չփնտեց : Քանի որ դիպուածով անոր յատկութիւնը հասկցանք , ան-
կից օդուտ քողեւու ջանանք՝ այնպիսի կերպով մ'որ աղմուկ չհասնենք
և մեր դրացիներուն նախանձը մեր վրայ չգրգռենք : Ար հաւանիմ աչ-
քիդ առջևէն վերցնել զայն և այնպիսի վայր մը դնել որ երբ պէտք ըլ-
լայ ես երթամ առնում , քանի որ ճինս բէն կը ստկաս : Իսկ մտանիկն
զալով՝ չեմ կրնար զայն ալ նետել . եթէ այս մասնին չըլլար՝ երբէք
չարտի տեսնէիր իս , և եթէ այս պահուս ապրէի , իմ կեանքս ալ շատ
քիչ պիտի տևէր : Աւտի ներքէ ինձ , մայր իմ , որ զայն պահեմ և մա-
տէս բնաւ չհաննեմ : Պ՛ գիտէ կարելի է ուրիշ անակնուհեղի վտանգ մի
ալ ինձ կը համի և ստով կրնամ ազատիլ :

Արուհեան Ալատախին խորհրդածութիւնը շատ իրաւայի կը
թուէր , մայրը չլրցաւ անոր պատասխան տալ : « Արդեակ իմ , ըսաւ
անոր , ինչպէս որ կ'ուզես այնպէս ըրէ . իսկ ես չեմ ուզեր ճիներու
հետ դործ ունենալ : Ահա այժմէն կը յայտնեմ որ ես իմ պարտքս կա-
տարեցի , և նորէն այս խնդրոյն վրայ չարտի խօսիմ քեզ : »

Հետևեալ իրկունն ընթրիքէն ետքը՝ ճինին բերած աղ որ ուտելի-
քէն բան մը չմնաց : Միւս օրն՝ Ալատախն անօթութենէ ներսիլ չուզե-
լով՝ պատմութեան տակ դրաւ արծաթէ սնակներէն մէկն և առտու
կանուխ գուրս ելլաւ զայն ծախելու համար : Ճամբան հրէի մը հան-
դիպեցաւ , զանի մեկուսի քաշեց , և սնակն անոր ցոյց տալով՝ հար-
ցուց թէ արդեօք ծախու առնուլ կ'ուզէ :

Հրէայն՝ որ խորամանկ էր և վարպետորդի մը , սնակը առաւ , և
այն ինչ տեսաւ որ լաւ արծաթ է , որ Ալատախին հարցուց թէ ի՞նչ
կարծէ : Ալատախն՝ որ անոր արժէքը չէր գիտեր և ասանկ ապրանք
մը տեսած չէր , բաւական համարեց ըսելով թէ ինքը քաջ գիտէ որ
այնպիսի սնակ մ'ի՞նչ կ'արժէ և թէ իր խղճմտանքին կը ձգէ զին մը
տալ :

Հրէայն Ալատախին ոչ իմ պատասխանին վրայ շփոթեցաւ , և չգիտ-
նալով թէ արդեօք Ալատախն սնակին նիւթն ու արժէքը կը ճանչէ ,

ուսի մը հանեց իր քսակէն, որ պնակին գնոյն եօթանասուն երկրորդ մասն էր, և անոր տուաւ : Ալատտին ոսկին առաւ շտապաւ, և այն ինչ ձեռք ձգեց որ արագօրէն հեռացաւ, այնպէս որ հրէայն՝ ըրած ահազին շահէն գոհ չըլլալով ցաւեցաւ շատ որ չէ հասկցեր թէ Ալատտին ծախած բանին արժէքը չէր գիտեր և թէ կրնար աւելի քիչ ստակ տալ : Երկուստարդին ետեւէն վազելու կը պատրաստուէր, որս պէս զի ոսկիէն քիչ մը բան ետ ուզէ, բայց Ալատտին կը վազէր, և արդէն այնքան հեռու էր որ դժուարաւ կրնար անոր ետեւէն հասնիլ :

Ալատտին մօրը տունը դառնալու միջոցին՝ հացագործի մը խանութը կեցաւ, իր մօրն ու իրեն համար հաց գնեց և իր ոսկիովը վճարեց՝ հացագործին փոխել տալով : Երբ տուն դարձաւ՝ մնացած ստակը մօրը տուաւ, և այն ալ շուկան իջաւ որպէս զի քանի մ'որ ապրելու համար պէտք եղած պաշար գնէ :

Այսպէս մայր ու որդի տունէն կ'ապրէին, այսինքն Ալատտին հետզհետէ մինչև երկուսասաներորդ պնակը հրէին ծախեց, ինչ կերպով որ առաջինը ծախեր էր, քանի որ տան մէջ ստակը կը պակսէր : Հրէայն որ առաջին պնակին ոսկի մը տուեր էր, միտնեցուն համար աւելի պակաս գին տալու չհամարձակեցաւ որպէս զի այսպիսի աղոր վաստակ մը ձեռքէ չհանէ. ուստի ամէն ալ նոյն գնով ծախու առաւ : Երբ վերջին պնակին դրամն ալ հասաւ, Ալատտին կունքն առաւ որ ամէն մէկ պնակէն տասն անգամ աւելի ծանր էր : Կր սովորական վաճառականին տանիլ ուզեց, բայց շատ ծանր ըլլալուն չկրցաւ : Առաջի ստիպուեցաւ հրէայն կանչելու, և իր տունը բերաւ, և հրէայն կոնքին ծանրութիւնը քննելէն ետեւ՝ անոյճապէս տասն ոսկի վճարեց, և Ալատտին անով գոհ եղաւ :

Արջափ որ տասն ոսկին աւելց' առ անին օրական ծախուց գործածեցին : Սախայն Ալատտին անգործ կ'անքի մը վարժած ըլլալով իր տարեկիցներուն հետ խաղալէն ետ կեցեր էր, Եփրեկեցի վճուակին հետ անցած արկածէն վեր. օրերը կ'անցնէր իրեն ծանօթ մարդոց հետ խօսելով և պարտելով : Երբեմն մեծ վաճառականներու խանութներուն առջևը կը կենար և աղնուական մարդոց խօսակցութեան ահանջ կը կոխէր, որոնք այն տեղ կը կենային կամ իբր ժամադրութեան

տեղ կը ժողովէին. քիչ քիչ այս խօսակցութիւններէն սկսաւ աշխարհ ճանչել :

Երբ Ալատտին տասն ոսկին հատոցոց, նորէն կանթեղին դիմաց, ձեռքն առաւ, իր մօրը դպած կողմը փնտտեց, և աւազին ըրած նշանէն ճանչելով՝ անոր պէս ինքն ալ զայն շփեց, և իսկոյն այն առջի ճինն երևան կ'աւ, բայց որովհետև Ալատտին իր մօրէն աւելի թեթեւ կերպով շփեր էր կանթեղը՝ ճինն ալ աւելի անոյճ ձայնով խօսեցաւ :

«Ի՞նչ կ'ուզես, ըսաւ առջի ոճովն, ահա պատրաստ եմ քեզ հնազանդելու՝ իբրև քու գերիիդ, և ամէն անոնց որ կանթեղն իրենց ձեռքն ունին, ես և կանթեղին միւս գերիները :»

Ալատտին ըսաւ անոր. «Անօթի եմ, ինձի ուտելիք բեր :» Ճինն աներևոյթ եղաւ, և քիչ մ'առնէն ետքը նորէն երևցաւ՝ հետը բերելով առջի անդամուն պէս բերած սեղանի սպաս մը. բազմոցին վրայ դրաւ և նորէն աներևոյթ եղաւ :

Ալատտինի մայրն՝ իր որդւոյն միտքն իմանալով՝ կամաւ գործի մը համար դուրս ելեր էր, որպէս զի ճինին երեցած ժամանակն ինքը տունը չդննուի : Քիչ մ'ետքը նորէն տուն կ'աւ, սեղանն ու մատանը լցուած դառաւ և առջի անդամուն պէս սպաշեցաւ մնաց կանթեղին հրաշալի ներդրածութեան վրայ : Ալատտին և մայրը սեղան նստան, և ճաշէն ետքը՝ դարձեալ իրենց երկու օրուան պաշար մնաց :

Երբ Ալատտին տեսաւ որ տան մէջ ոչ հաց կայ ոչ պաշար, և ոչ դրամ՝ գնելու համար, արծաթէ պնակ մ'առաւ և իրեն ծանօթ հրէայն դանելու գնաց՝ զայն ծախելու համար : Անոր երթալու առնն՝ ոսկերչի մը խանութէն անցաւ, ոսկերիչ մ'որ յարգելի էր իր ծերութեան համար, բարեկիր և արդարասէր մարդ մը : Ասկերիչը զանի տեսաւ, կանչեց և ըսաւ որ ներս մտնէ :

«Արդեակ իմ, ըսաւ անոր, այսօրուան պէս շատ անգամ տեսայ քեզ ասկից անցնելը, հրէայ մը զանելու կ'երթայիր և բեռը թողլէն ետև կը դառնայիր : Երևակայեցի որ բան մը կը ծախես անոր, բայց կարելի է չգիտես որ այն հրէայն խաբերայ մէկն է, և ամէն հրէաներուն մէջ աւելի խաբերայ, այնպէս որ ոչ որ անոր հետ գործ ընել

կուզէ : Սակայն այս կ'ըսեմ մի միայն քու օգտիդ համար . եթէ քովդ ունեցածդ ինձի ցոյց տալու հաճիս և ծախելու մտք ունիս , քեզի ճիշտ գինը պիտի տամ , եթէ քեզ կը յարմարի , թէ ոչ ուրիշ վաճառահանաց պիտի գրկեմ քեզ , որո՞ք քեզ չպիտի խաբեն : »

Ալատախն առեւ ի ստակ կտրելու յուսով սրտին իր պատմութեանին տակէն հանեց և ոսկերչին ցցուց : Երբ ունին խելոյն հասկցաւ որ սրտակը զուտ արծաթ է , հարցուց թէ ուրիշ անոր նման հրէին ծախեր էր և թէ ի՞նչ վճարեր էր : Ալատախն միամտաբար բտաւ թէ տասներկու հատ ծախեր է , և ամէն մէկին համար երբայեցիկէն լտի ոսկի մ'առեր էր :

«Ախ , դող առաջալը , դռնեց ոսկերչին : Որդեակ իմ , յարեց նա , եղածն եղած է , սէտք չէ խորհիլ այդ բանին վրայ . բայց եթէ ցոյց տամ քեզ թէ սրտակը ի՞նչ կ'արժէ , որ մեր գործածած արծաթնեղէն ընտրելազօյն է , այն ատեն պիտի իմանաս թէ հրէայն որչափ խաբեր է քեզ : »

Ոսկերչիչը կշիռն առաւ , սրտակը կշռեց , և արծաթի մտրկին ինչ ըլլալը , նոյնպէս անոր ստորաբաժիններուն ինչ արժէք ունենալն Ալատախին բացատրելէն ետեւ՝ անոր հասկցուց որ սրտակին ծանրութեան համեմատ եօթանասուն երկու ոսկի կ'արժէր , և այս դումարը անմիջապէս վճարեց : «Ահա այս է , բտաւ անոր , քու սրտակիդ ճիշտ գինն : Եթէ կ'երկրայիս՝ որ ոսկերչին որ կ'ուզես գիտէ , և եթէ ըսէ թէ տուածէս առեւ ի կ'արժէ՝ կը խոստանամ քեզ կրկնապատկիլ վճարելու : Մինակ մեր վատտակը շինողէքն է , և ահա այս բանս ամենէն արդարասէր հրէաները չեն ըներ : »

Ալատախն հարհալից կ'զու ոսկերչին տուած ընտիր խորհրդին համար , որմէ արդէն այնքան օգուտ կը քաղէր : Արջէն միշտ նոյն ոսկերչին կը գիտէր , միւս սրտակներն ու կոնքը ծախելու համար , և անոնց արժէքը ճշտիւ վճարուեցաւ : Թէ և Ալատախն և իր մայրն իրենց կանթեղին մէջ հարատու թեան անսպառելի ազրիւր մ'ունէին , ի հարկին ստանալու համար , սակայն դարձեալ առաջուան պէս ժուժկալութեամբ կ'ապրէին . միայն Ալատախն քիչ մը զբամ կը պահէր որ բտա արծառոյն իր ծախար հոգայ և իր անսկան պիտոյքը ձարէ : Միւս

կորուսն մայրն ալ իր հազուստին ծախար կը հոգար իր մանած բամբասկին շահէն : Այսպիսի սակաւապէտ ընթացքով՝ գիւրին է երևակայել թէ սրտակներն ու կոնքը ծախելէն ետեւ՝ Ալատախն և մայրն որչափ երկար ժամանակ ապրեցան : Այսպէս քանի մը տարի իրենց սպրտուտը հոգային՝ ատեն ատեն Ալատախն կանթեղին օգնութեան գիտելով :

Նոյն միջոցին Ալատախն ազնուական անձնբու հետ կը տեսնուէր շարունակ , երևելի վաճառականներու խանութները կը յաճախէր , որոնք ոսկեթել գիտակներ , մետաքսէ կերպաններ , բարակ կտաններ և գոհարներ կը ծախէին , և երբեմն անոնց խօսակցութեան մասնակից կ'ըլլար : Այս կերպով մարդու տեղ անցաւ և անց պայօրէն ընտիր ընկերութեան յատուկ ձևեր ունեցաւ : Մասնաորապէս ակնագործներուն հետ տեսնուելով իր դաղափարները շտկեց կանթեղն առնելու համար զացած պարտիզէն առած թափանցիկ ստուղներուն վրայ զոր գունաւոր սպակներ կը կարծէր : Անոնց կրպակներուն մէջ ամէն տեսակ գոհարեղէններ տեսնելով՝ այս տեսակ սպրանքներու գինն ու արժէքը սորմեցաւ , և որովհետեւ իրեն ունեցած գոհարներուն պէս՝ թէ գեղեցիկութեան և թէ խոշորութեան կողմէ չէր տեսներ , հասկցաւ որ փոխանակ չնչին սպակի կտորներու՝ անգին գանձ մ'ունէր : Խոհեմաբար մէկու մը չչայանեց այս բանս , և ոչ իսկ մօրն , և տարակոյս չկայ որ իր ընտրութեան պատճառաւ ձեռք ձգեց այն բարձր վիճակն ապագային մէջ , ինչպէս որ պիտի տեսնենք :

Օր մը քաղքին մէկ թաղին մէջ ստորտելու ատենն՝ Ալատախն սուր թանին մէկ հրամանը լսեց զոր բարձր ձայնով ամենուրէք կը հրատարակէին , այս էր թէ ամէն մարդ խանութ ու գուռ դրոյէ և իր տունը քաջուի մինչև որ Պատարուպուտուր իշխանուհին սուր թանին դուտըրը անցնելով բարձիք երթայ ու նորէն գառնայ :

Այս մտնեալին ձայնն Ալատախին հետաքրքրութիւնը շարժեց իշխանուհին երեսը բաց տեսնելու , բայց այս բանս մինակ ծանօթ առնի մը մէջէն կամ վանդակի մ'ետեւէն կրնար ընել . բայց ստով գոհ չէր կրնար ըլլալ , վասն զի իշխանուհին՝ ըստ սուրտութեան՝ բարձիք երթալու ատեն երեսին վրայ քօզ մը պիտի ունենար : Աստի իր փափաքը լեցնելու համար՝ հնար մը մտածեց և յաջողեցաւ . գնաց բազ

նիքին դրան ետևը կեցաւ , որ այնպէս մը դրուած էր որ անլրէպ իշխանուհին դէմ առ դէմ պիտի տեսնէր :

Ալատտին երկար ժամանակ չսպասեց . իշխանուհին երեցաւ , և տեսաւ զանի ճեղքուած քի մը մէջէն , այնպէս որ ինքն անդին կը մնար : Շատ մը կիներ և ներքինիներ անոր ընկերացած էին , որոյմէ ոմանք ետեւէն կ'երթային : Երբ բաղնիքին գունէն երեք չորս քայլ հեռի էր՝ քողը հանեց իր երեսին վրայէն , որով կը նեղանար , և Ալատտին շատ դիւրաւ տեսաւ անոր երեսը , վասն զի շիտակ իրեն կոպր :

Մինչև այն վայրկենին՝ Ալատտին իր մօրը դէմքէն զատ՝ ուրիշ կին մը բաց երեսով տեսած չունէր , և մայրն ալ տարւօք էր և բաւական զեղանի չէր որով երեւակայեր թէ աւելի զեղանիներ կրնան գտնուիլ : Թերևս Ալատտին լսած ըլլար որ հիանալի զեղեցիութեամբ կիներ կան , բայց կնիկան մ'արժէքը բարձրացնելու համար ինչ որ ըսուի այնչափ ապագորութիւն չընեն՝ որչափ կրնէ նոյն իսկ զեղեցիութիւնը :

Երբ Ալատտին Պատրուկուտուր իշխանուհին տեսաւ , մէկէն հասկցաւ որ ամէն կանայք իրեն մօրը չեն նմանիր . իր զլացումներուն մէջ մեծ տարբերութիւն գտաւ , և չկրցաւ իր սիրտը մերժել այն էակին որ իրեն այնչափ հրապուրելի երեցեր էր :

Եւ արդարև իշխանուհին ամենագեղանի թխերես աղջիկ մ'էր , աչքերը մեծ , վառվռուն ու փայլուն էին , ակնարկն՝ անոյշ և համեստ , քիթը՝ չափաւոր և անթերի , բերանը՝ փոքր , շուրթերը՝ կարմրուն և չքնաղ ակորժելի համեմատութեան կողմէ , մէկ խօսքով իր դէմքին բոլոր գծերը կատարուն կանոնաորութիւն մ'ունէին : Ուստի սէտք չէ զարմանալ թէ Ալատտին շլացաւ և զրթի ալ յայլմէ եղաւ այսպիսի հրաշագեղ դէմք մը տեսնելով որ իրեն անձանթ էր : Այս ընտիր ընտիր ձիրքերէն զատ՝ իշխանուհին պերճ հասակ , վեհմ քալուած ու դէմք մ'ունէր , որուն տեսքը միայն իրեն վայել պատկանանք կը գրուէր :

Երբ իշխանուհին բաղնիք մտաւ՝ Ալատտին քանի մը վայրկեան ապշած և զրթի հիացման մէջ մնաց՝ իր աչքին առջև բերելով , և աւելի ևս իր մաքին մէջ գրողմելով այն առարկային նկարն որով սիրտը թափ անցած և զմայլած էր : Աւերջապէս ինքզինքին եկաւ , և նկատե-

լով որ իշխանուհին անկից գացեր էր և սարսապ տեղ պիտի սպասէ անոր բաղնիքէն վերադարձը տեսնելու , քանի որ կունակը դարձած և երեսը գոյ պիտի անցնէր , որոշեց կեցած տեղէն ելնել երթալ :

Ալատտին իր տունը դառնալով չկրցաւ իր վրդովն ու անձկութիւնը ծածկել , այնպէս որ մայրը չտեսնէ : Ասան զի մայրը զանի այնքան տխուր և մտախոհ տեսնելով՝ իր սովորութեան հակառակ՝ հարցուց թէ արդեօք զլսին բան մ'եկած է և կամ անհանգիստ է : Բայց Ալատտին բնաւ պատասխան չտուաւ , այլ թոյլօրէն բազմեցին վրայ նստաւ , և երկայն ժամանակ նոյն վիճակին մէջ մնաց անդադար Պատրուկուտուր իշխանուհոյն նկարն իր աչքին առջև բերելով . իր մայրն՝ որ ընթրիքը կը սպասուէր , աւելի վրան չընկաւ անոր ցաւն խմանալու : Երբ կերակուրը սպասատու եղաւ , սեղանը բազմեցին մօտ դրաւ և ինքն ալ նստաւ , բայց գիտելով որ իր որդւոյն միայն ուրիշ տեղ է , յորդորեց որ ուտէ , և շատ դժուարութեամբ անոր մտատանջութիւնը ցրուեց : Ալատտին քիչ կերաւ , միշտ աչքերը վար խոնարհած , և այնպիսի խորին լուծիւն մը կը պահէր որ կարելի չեղաւ իր մօրն ըրած ամէն հարցումներուն պատասխան մ'առնուլ անոր բերնէն և այս տարօրինակ փոփոխութիւնն խմանալ :

Ընթրիքէն ետքն՝ իր որդւոյն մեկամղձութեան պատճառն խմանալու մտօք հարցումներ ընել ուղեց , բայց բան մը չկրցաւ քաղել , և Ալատտին աւելի լաւ սեպեց երթալ անկողին մանկ քան թէ իր մօրը հետաքրքրութիւնը կերպով մը գոհ ընել :

Աւելորդ կը համարինք քննել թէ Ալատտին Պատրուկուտուր իշխանուհոյն շնորհալի զեղեցիութենէ յախշաակուած՝ ինչպէս անցուց այն զիշերն , մինակ այսչափ կ'ըսենք որ հետեւեալ օրը՝ բազմեցին վրայ նստած ըլլալով իր մօրը գիմանց որ բամբակ կը մանէր , ըստ սովորաւ կանին , այս կերպով խօսեցաւ .

«Մայր իմ , ըսաւ , քաղքէն դառնալէս վեր պահած լուծեանս վերջ կտամ , որ քեզ վշտացուց , ինչպէս որ գիտեցի : Ինչպէս որ անսայ՝ կարծեցիր թէ հիւսնոք եմ , բայց հիւսնոք չէի և հիմակ ալ չեմ , բայց չեմ կարող ըսել թէ ինչ կ'զգայի , և մինչև ցայժմ զլացածս հիւսնոգութենէ աւելի յոռի է : Չգիտեմ թէ ինչ հիւսնոգութիւն է սա :

բայց տարակոյս չունիմ որ պատմելիք դէպքէս պիտի հասկնաս թէ
 ի՞նչ է : Այս թաղին մէջ ինչպէս ուրիշները , դու ալ խնայած չես ան-
 շուշու որ երէկ ճաշէն ետքը սուլթանին աղջիկը՝ Պատարուլուտուր
 իշխանուհին բաղնիք գնաց : Այս լուրը՝ քաղաքը պտրտելու ատենս ի-
 մացայ : Հրաման մ'ըլաւ որ ամէն մարդ խանութը գոցէ և իր տունն
 երթայ , որպէս զի իշխանուհւոյն վայել պատիւը տրուի , և իր անցած
 փողոցներէն անց ու դարձը վերնաց : Քաղնիքին մօտ դանտելով՝ իշ-
 խանուհին բաց երեսով տեսնելու հետաքրքրութենէս զայցի և բաղնի-
 քին դրան ետևը կեցայ , մտածելով որ կարելի է քողը վերցնէ ներս
 մտնելու ատեն : Երդէն դուռն ինչպէս շինուած է դիտես , և կրնաս
 դասել որ անարդել կրնայի իշխանուհւոյն գէմքը տեսնել , եթէ իմ
 դուշակածիս պէս երեսը բաց մտնէր : Եւ իրօք , ներս գալու ատեն քո-
 զը հասնեց և այս սիրուն իշխանուհին տեսնելու երջանկութիւնն ունե-
 ցայ ամենամեծ գոհունակութեամբ : Ահա այս է , մայր իմ , պատ-
 ճառն որ երէկ տուն գալուս լուռ ու մունջ մնացի մինչև այսօր : Իշ-
 խանուհին այսպիսի բուռն սիրով կը սիրեմ որ չեմ կարող բացատրել , և
 որովհետև վառվառն և հրատապ տափանքս հետզհետէ կ'աւելայ՝
 կ'զգամ որ մինակ սիրասուն Պատարուլուտուր իշխանուհին ստանալով
 պիտի հանգաւտի , և ահա այս պատճառաւ որոշեցի սուլթանէն
 խնդրել զանի կնութեան :»

Ալատալինի մայրն ուշագիւր մտիկ ըրեր էր իր որդւոյն պատմութեան
 մինչև վերջը , բայց երբ խնայաւ թէ միտք ունի զանի կնութեան
 խնդրել , քահ քահ խնդալով ակամայ անոր խօսքն ընդմիջեց : Ալատ-
 ալին նորէն շարայարել ուզեց , բայց մայրը նորէն խօսքը կտրելով ,
 « Ըստ ուրեմն , որդեակ իմ , ըստ անոր , միթէ կատակ կրնես . այդ-
 պիտի առաջարկութիւն մ'ընելու համար խելքդ թուոյցած պիտի ըլ-
 լաս :

— Մայր իմ , վրայ բերաւ Ալատալին , կրնամ հաւատարմութիւն քեզ որ
 խելքս թուոյցած չեմ , ըստ անոր իմ . արդէն դուշակեցի որ այլան-
 դակ խելացիոր մը պիտի անուանես իս և դեռ ևս ետքէն ալ ըսես ,
 բայց ես նորէն կը կրկնեմ որ հատուտ միտքս գրած եմ Պատարուլու-
 տուր իշխանուհին կնութեան խնդրել սուլթանէն :

— Յիրուի , որդեակ իմ , պատասխանեց մայրը ծանարար , կը
 հարկադրեմ ըսելու որ վիճակդ լիովին կը մտնաս , և եթէ այդ խոր-
 հուրդդ ՚ի գործ դնելու ալ եղես , չեմ կրնար հասկնալ թէ որն միջո-
 ցաւ այդպիսի առաջարկութիւն մը սուլթանին ընել :

— Գու միջոցաւ , պատասխանեց որդին առանց վարանելու : —
 Իմ միջոցաւ , դու չեց մայրը յետին աստիճան զարմանալով , և սուլթա-
 նին : Ահ , այսպիսի գործի մը ձեռնարկելու պիտի զոռշանամ : Եւ
 դու ո՞վ ես , որդեակ իմ , յարեց նա , որ սուլթանի մ'աղջիկան աչք
 սնկես : Միթէ մտոցոր որ դերձակի մ'որդին և քաղքէն յետին տրուսն
 ես , և այնպիսի մօր մը գուտկը որուն նախնիքն ալ աւելի բարձր չին :
 Միթէ զխոսն որ սուլթանները չեն զվանիք իրենց աղջիկները կար-
 դել այնպիսի սուլթաններու որդւոց հետ որ անոյցս են իրենց պէս օր
 մը թաղաւորելու :

— Մայր իմ , պատասխանեց Ալատալին , արդէն ըսի քեզ որ բոլոր
 ըսածներդ դուշակեր եմ , և նոյն պատասխանը պիտի տամ ակից կաքն
 ալ ըրած դիտողութիւններուդ . ոչ քու յորդորներդ և ոչ յանդիմանու-
 թիւններդ կարող են իմ միտքս փոխել : Եսի քեզ որ Պատարուլուտուր
 իշխանուհին քու ձեռօքդ կնութեան պիտի խնդրեմ . այս շնորհն ամե-
 նայն ակնածութեամբ քեզնէ պիտի հպարտեմ և կ'աղերսեմ որ խնդիրս
 չմերժես , եթէ չես ուզեր իմ մահս տեսնել , և երկրորդ անգամ ինձ
 կեանք չառլ :»

Ալատալինի մայրը շատ շփոթեցաւ երբ զիտեց թէ իր որդին ի՞նչ
 յամառութեամբ այս յիմար խորհրդին վրայ կը պնդէ : « Որդեակ իմ ,
 ըստ անոր նորէն , ես քու մայրդ եմ , և իրք քեզ ծնող մայր մը չիտ
 բանաւոր և գործարդելի բան մ'որ քու սիրոյդ համար չընեմ մտա-
 դիւր : Եթէ մեր վիճակին յարմար գրացի աղջիկներէն մէկն ուզելիք
 կին ընել , ամէն ձեռքէս եկածը կ'ընէի փափաքդ կատարելու համար .
 դարձեալ յաջողելու համար պէտք էր որ քեզ մը կալուած կամ եկա-
 մուտ ունենայիր , և կամ արհեստ մը գիտնայիր : Երբ մեզի պէս մար-
 դիկ կարգուելու կ'ընեն , իրենց մտածելիք առաջինն է ապրուստ :
 Սակայն դու առանց քու աստիճան վիճակդ , անարժանութիւնդ և չքա-
 ւորութիւնդ գիտելու՝ բարձրագոյն դուռ մը կը զարնես , և կ'ենես

քու թագաւորիդ ալջիկը կնտ թեան խնդրելու կը յանդգնիս, թագաւոր մ'որ խօսքով մը միայն կրնայ քեզ անդունդ գլորել և ճգնել: Չեմ ուզեր խօսիլ թէ ինչ անպատեհօտ թիւններ կան այս գործին մէջ քեզի համար, քեզ կ'ընայ պէտք եղած խորհրդածութիւններն ընել այս մասին եթէ քեզ մը խելք ունիս, մինակ ինձի վերաբերեալ բաներուն վրայ քանի մը բան բտել կ'ուզեմ: Ինչպէս այդպիսի տարօրինակ խորհուրդ մը միտքդ ընկաւ, այսինքն երթամ սուլթանին ըսեմ որ իր աղջիկը քեզի կնտ թեան տայ: Կնթաղրենք թէ, չեմ ըսեր յանդգնութիւն, այլ անեղետութիւն ունենամ Կորին վեհապառութեան առջև ներկայանալու այնպիսի արտաուց առաջարկութիւն մ'ընելու համար, կը հարցնեմ քեզ, որոն պէտք է զիմն սուլթանին առջևն ելնելու համար: Միթէ չիս կարծեր որ իս խենդի տեղ գնելով մինչև անգամ նախատանօք վունտն երբ իմ միտքս յայտնեմ: Գիցուք նաև որ թագաւորին ներկայելու դժուարութիւն մը չկայ, զիտեմ թէ դժուարութիւն չկայ երբ մարդ արդար դաս մ'ունի յայտնելու, և թէ յօժարակամ դատաստան կը կարէ արդարութեամբ, երբ իր հպատակներն իրեն ներկայանան: Գիտեմ նաև որ շնորհ մը խնդրելու համար իր առջևն ելնողներուն ոչ ինչ չըլանար, երբ կը տեսնէ թէ խնդրարկուներն արժանի են իր շնորհաց. բայց միթէ խնդիրդ նոյն տեսակէն է, և կարծես թէ քեզի համար առաջարկելիք խնդրոյս արժանի ըլլաս: Վերջապէս միթէ արժանիք ես: Քու թագաւորիդ և հայրենեացդ համար ի՞նչ ըրիր, ի՞նչ բանի մէջնշանաւոր հանդիսացար: Եթէ այսպիսի մեծ շնորհի մ'արժանի ըլլալու համար բան մը չըրիր, ի՞նչ երեսով երթամ զայն խնդրեմ. ի՞նչպէս համարձակիմ բերանս բանալ և սուլթանին խնդիրդ առաջարկել: Իր վեհապառ ներկայութիւնն ու արքունական շքեղութիւնն իմ բերանս պիտի կարկին խոլոյն, ես որ իմ հանդուցեալ էրկիս առջև գող կ'եղնէի երբ ամենէն աննշան բանն անպամ խնդրէի: Արի՛շ պատճառ մ'ալ, որդեակ, որուն չես մտածեր բնառ, այս է թէ մեր սուլթաններուն ոչ որ կրնայ ներկայանալ առանց ընծայի մը, երբ հարկ ըլլայ խնդիր մը յայտնել: Ընծաներն այս օգուտն ունին որ խնդրարկուին խնդիրը մտիկ կ'ըլլուի, եթէ զանազան պատճառներով զայն մերժելու ալ ըլլայ: Բայց դու ի՞նչ ընծայ կրնաս

տալ: Եւ եթէ ընծայ մ'ալ ունենաս որ նշանաւոր սուլթանի մ'ուշագրութեան արժանի ըլլայ, դարձեալ ի՞նչ համեմատութիւն կրնայ գտնուիլ քու և ըրած խնդրոյդ մէջ: Կնթաղրիդ կեուր, և մտածէ թէ այնպիսի բանի մը կը բաղձաս որ անկարելի է քեզ ձեռք ձգել:»

Ալատտին իր մօրը խօսքերը՝ զոր իր մտքէն դարձնելու համար կը զրուցէր, հանգարտ մտիկ բրաւ. և անոր յանդիմանութեան ամէն կէտերը կը ելէն ետև՝ բերանը բացաւ և անոր ըսաւ.

«Ար խոստովանիմ, մայր իմ, որ իմ կողմէս մեծ յանդգնութիւն մ'է այնչափ բարձր փափաքներ ունենալ, նոյնպէս մեծ անխոհեմութիւն մի է այսչափ եռանդաղին և շտապաւ խնդրելու քեզնէ որ երթաս սուլթանին իմ ամուսնական առաջարկութիւնս ընես, թէ և առաջուց չմտածեցի թէ ի՞նչ միջոցներ պէտք են սուլթանին առջև ելնելու և նպատաւոր ընդունելութիւն մ'ապահովելու: Աստի ներում կը խնդրեմ, բայց իմ բուռն սուփանքս նկատելով մի զարմանար եթէ ցանկալի երջանկութիւնս ձեռք ձգելու կերպը կանխաւ չմտածեցի: Քու երեւակայածէդ շատ աւելի կը սիրեմ Գատրուլպուտուր իշխանուհին, կամ լաւ ևս ըսեմ՝ զայն կը պաշտեմ, և միշտ զանի կին ընելու խորհուրդ կը տածեմ. այս բանս իմ մտքիս մէջ որոշած եմ հաստատապէս: Շնորհակալ եմ ըրած առաջարկութեանդ համար, և զայն իմ ըրջիս յաջող ելք մը տալու առաջին միջոցը կը սեպեմ: Կ'ըսես թէ առանց ընծայի սուլթանին առջև ելնել անսովոր բան է, և թէ անոր արժանի բան մը չունիմ: Ար հաւանիմ որ ընծայ մը պէտք է, և կը խոստովանիմ, այս կէտը չմտածեր էի: Բայց երբ կ'ըսես թէ ընծայելու վայել բան մը չունիմ, կը սխալիս. վասն զի միթէ կարծես թէ, մայր իմ, անխոսակի մասհէ մ'ազատած օրս, ինչպէս որ զիտես, հետս բերած բանս հաճելի ընծայ մը չըլլար սուլթանին:»

«Խօսքս երկու քսակով և գօտիս մէջ բերած բաներուս վրայ է. կարծեցինք թէ դուռնաւոր ասպիկներն են անոնք, բայց հիմակ այս սխալս կ'ուղղեմ, և ահա կը յայտնեմ քեզ, մայր իմ, որ անդին գոհարներ են անոնք, և մինակ թագաւորներու վայել: Անոնց արժեքը զիտոյց ակնադորձներու կրպակները յաճախելով, և կրնաս իմ խօսքիս հաւատ տալ: Ակնախաճառներուն մօտ տեսածներս՝ խոշորութեան և

գեղեցկութեան կողմէն՝ մերկաներէն շատ վար են, և սակայն չափէ դուրս զին կը պահանջեն: Իբրև է որ մեր անդամանդներուն զինն ի՛նչ է չզիտենք: Բայց, ինչ որ ըլլայ, ունեցած քիչ մը փորձառութեամբ կրնամ դատել, վստահ եմ որ մեր ընծան անհաճոյ չպիտի երևի մեր սուլթանին: Բաւական մեծ և մաքուր յարձապակէ աման մը ունիս զանոնք մէջ դնելու, զայն բեր, և նայինք թէ ի՛նչ տպաւորութիւն պիտի ընեն երբ իրենց տարրեր զոյներուն համեմատ ամանին մէջ տեղաւորենք:»

Ալատտինի մայրը ճննապակին բերաւ և որդին երկու քսակէն անդամանդները հանեց և անոր մէջ շարեց: Առսին այնպիսի տպաւորութիւն մ'ըրին՝ թէ զոյներու զանազանութենէն, թէ փափլուռ պայծառութենէն, որ մայր ու որդի հիացան մնացին. վասն զի երկու քնին ալ կանթեղին լուսովը միայն զանոնք զիտեր էին: Իբրև է որ Ալատտին զատ զատ ծառերուն վրայ տեսեր և այն հիանալի տեսարանէն արդէն սքանչացեր էր, բայց որովհետև զեռ տղայ էր, կարծեր էր թէ այս անդամանդները խաղալիկներ են, և այս նպատակաւ միայն քաղեր և հետը բերեր էր:

Վասն մ'այս պարզեկն աղոթութեան վրայ զմայրէնէն ետև՝ Ալատտին ըսաւ. «Մայր իմ, յուսամ որ ալ չիս դժկամակիր սուլթանին ներկայանալու՝ ընծայ չունենալդ պատրուակ բռնելով. ահա ապիկ քեզ ընծայ մ'որուն շնորհիւր շատ նպատաւոր ընդունելութիւն մը պիտի ստանաս, կարծեմ:»

Թէև Ալատտինի մայրն՝ ընծային գեղեցկութեան և փայլութեան չնայելով՝ չկարծեց թէ իր որդւոյն ըսածին չափ մեծազին բան մ'է, սակայն դարձեալ մտածեց որ սուլթանին հաճելի կրնայ ըլլալ և թէ այս մասին առարկութիւն մը չունէր ընելու. բայց այս պարզեկն շնորհիւր սուլթանին ընելիք խնդիրն իրեն հոգ կը պատճառէր, և անհանգստութիւնը կ'աւելցնէր:

«Որդեակ իմ, կ'ըսէր անոր, տարակոյս չունիմ որ պարզեզ ազդեցութիւն պիտի ունենայ և սուլթանն աղէկ աչքով ինձ պիտի նայի, բայց խնդիրդ անոր առաջարկելու կէտը քանի միտքս զայ, կ'զգամ որ պիտի թուլանամ և լուռ ու մունջ պիտի մնամ: Այսպէս ոչ միայն այս

ծանրութիւնս պարապ պիտի ելնէ, այլ պարզեզ ալ վրայ պիտի տամ և պիտի դամ շփոթելով յայտնելու քեզ որ յոյսդ 'ի գերև ելաւ: Արդէն քեզ ըսի, և պէտք է կանխաւ գիտնաս որ ըլլալիցն այս է: Բայց, յարեց մայրը, պէտք է որ կամքդ կատարելու համար ինքզինքս զսպեմ, և բոլոր ոյժս ժողվեմ փախաբաժ խնդիրդ առաջարկելու համար. անտարակոյս կամ սուլթանը վրաս պիտի խնդայ և իբր խենդ իր առջևէն իս պիտի վճռատէ, կամ ալդարացի բարկութեան մը պիտի բողի, որուն դժ պիտի կ'յնանք անշուշտ:»

Ալատտինի մայրն ուրիշ շատ պատճառներ ալ մէջ բերաւ որպէս զի որդւոյն միտքը փոխել տայ, սակայն Պատրուկուտուր իշխանուհոյն գեղեցկութիւնն այնպիսի տպաւորութիւն մ'ըրեր էին իր վրայ որ անկարելի էր անոր դիտաւորութենէ կասել տալ: Ալատտին նորէն պնդեց որ իր որոշումը կատարելու հոգ տանի, և մայրն 'ի սէր որդւոյն, նոյնպէս վախնալով որ ծայրայեղ և վտանգաւոր բան մը չընէ, իր դժկամակութեան յաղթեց և Ալատտինի կամքը կատարելու խօսք տուաւ:

Որովհետև շատ ուշ էր և նոյն օրը պալատն երթալու ատենն անցած էր, գործը միւս օրուան մնաց: Մայր ու որդի ուրիշ բանի վրայ չխօսեցան, և Ալատտին բոլոր ճիգը թափեց իր մտքին եկածը մօրը յայտնելու որ բոլորովին զանի համոզէ, թէ սուլթանին ներկայանալու գործն անտեղի բան մը չէ: Ալատտինի ամէն պատճառներուն անմտաղիք՝ մայրը չէր կրնար համոզուիլ որ այս գործին մէջ պիտի կարենայ յաջողիլ. և արդարև իբրև ունք ունէր կատկածելու:

«Որդեակ իմ, ըսաւ Ալատտինին, եթէ քու սիրոյդ համար փափաքածիս պէս սուլթանն իս ընդունի յօժարակամ, եթէ ուզած առաջարկութիւնդ հանդարտ մտիկ ընէ, բայց այս աղոթը ընդունելութենէ ետքն ինձ հարցնէ թէ ո՞ր են քու ստացուածքդ, քու հարստութիւններդ, քու երկիրներդ, վասն զի ամէն բանէ առաջ այս պարագաներուն տեղեկանալ պիտի ուզէ, քան թէ քու անձեզ, եթէ, կ'ըսեմ, այս հարցմունքն ընէ, ի՛նչ կ'ուզես որ պատասխանեմ:»

— Մայր իմ, պատասխանեց Ալատտին, հոգ չընենք բանի մը վրայ որ կարելի է ընաւ չպատահիր: Նախ նայինք թէ սուլթանը քեզ ի՛նչ

պէս պիտի ընդունի , և ի՛նչ պատասխան պիտի տայ : Եթէ ըսածներդ խնամալ ուզէ , այն ատեն կը մտածեմ թէ ի՛նչ պատասխան պէտք է տալ : Վստահ եմ որ այն կանթեղն՝ որուն միջոցաւ քանի մը սարիէ վեր կ'ապրինք , ՚ի հարկին մեղ պիտի օգնէ :»

Ալատտինի մայրը պատասխան տալու բան մը չգտաւ իր որդւոյն : Մտածեց միայն որ կանթեղն իրենց ապրուստը ճարեւէն զատ՝ կրնայ մեծազոյն սքանչելիքներ գործել : Ասով գոհ եղաւ , և իր որդւոյն ընելիք ծառայութեան մասին դուշակած գծաւարութիւնները վերցուած տեսաւ : Ալատտին իր մօրը միայն ըմբռնելով՝ ըսաւ .

«Մայր իմ , դո՛ւնէ ուշադիր եղի՛ր դադանիքը պահելու , այս գործէն մեր սպասած յաջողութիւնն անկից կախում ունի :» Ալատտին և մայրն իրարմէ բաժնուեցան որպէս զի քիչ մը հանգստանան , և իր բուն սէրն և անբաւ հարստութեան հասնելու խորհուրդներն , որով Ալատտինի միտքը լի էր , նոյն գիշերն ուղածին պէս հանդարտ չկրցաւ անջընել : Առտու կանուխ արթնցաւ , և դնաց շուտ մը մայրը վերցուց : Ինդրեց որ անմիջապէս հագուի , որպէս զի սուլթանին պալատին գուռն երթայ , և դուռը բացուելուն ներս մտնէ՝ այն միջոցին որ մեծ վէզիբը , նախարարներն ու տէրութեան պաշտօնեաներն ատենան կը մտնեն , և սուլթանը միշտ այս ատենին կը նախագահէ :

Ալատտինի մայրն իր որդւոյն ամէն ուղածը կատարեց : Անդամանդները պարտուակող ճենապակին առաւ , կրկին ճերմակ լաթի մէջ ամփոփեց , մին շատ բարակ էր և մաքուր , միւսը նուազ բարակ , չորս ծայրէն կապեց որպէս զի աւելի զխրատ տանի : Վերջապէս ճամբայ ելաւ , ՚ի մեծ գոհունակութիւն Ալատտինի , և սուլթանին սրաւորը զիմաց : Արդէն մեծ վէզիբը , նախարարներն և սրաւորակները ներս մտնելին , երբ պալատին գուռը հասաւ : Գործի համար եկող մարդիկ անհամար էին : Գուռը բացին , և Ալատտինի մայրն ալ անոնց հետ մինչև ատենանը յառաջացաւ : Խիստ գեղեցիկ , խորունկ և ընդարձակ սրահ մ'էր , և մուտքը մեծ ու փառաւոր : Աւելի յառաջ անցաւ և այնպէս մը կեցաւ որ սուլթանին , վէզիբին և մեծ իշխաններուն զիմացը դանուեցաւ որոնք թաղաւորին ալ ու ձախ զին կեցեր էին : Ամենուն առած աղերսագրոյն կարգին համեմատ դասի տէրերը կանչեցին :

և իրենց խնդիրները վէճի տակ ընկան , դատուեցան մինչև ատենին սովորական նստի ժամանակն : Այն ատեն սուլթանն ոտք ելաւ , խորհրդականները ճամբեց և իր սենեակը մտաւ , որուն ետեւէն մեծ վէզիբն ալ գնաց : Միւս վէզիբներն ու պաշտօնեաները քաշուեցան . մասնաւոր գործի համար եկողներն ալ նոյն բանն ըրին , ոմանք իրենց դէմ տրուած վճռոյն դժգոհ , և այլք ալ ուրիշ ատենին մը մէջ դատուելու յուսով :

Ալատտինի մայրն որ սուլթանին երևել քաշուելը տեսեր էր , գատեց որ նոյն օրը նորէն չպիտի տեսնուի , տեսնելով որ ամէն մարդ գուրս կ'ենէ , ուստի որոշեց իր տունը դառնալու : Ալատտին՝ տեսնելով որ մայրն ընծայուլեա կը դառնայ , չկրցաւ նախ հասկնալ թէ ի՛նչ վախճան ունեցաւ անոր ճամբորդութիւնը : Վախնալով որ չարագուշակ լուր մը բերած չըլլայ , բերանը բանալու կարողութիւն չունէր հարցընելու համար թէ արդեօք ի՛նչ լուր կը բերէ :

Բարի մայրն՝ որ սուլթանին սրաւորը բնաւ ոտք կոխած չէր , և այն տեղ անցած դարձած սովորական բաներուն վրայ անդեկութիւն չունէր , իր որդւոյն անձկութիւնը փարատեց՝ պարզմտութեամբ մ'անոր ըսելով .

«Որդեակ իմ , սուլթանը տեսայ , և վստահ եմ որ այն ալ իս տեսաւ : Անոր առջևը կեցեր էի , և ոչ ոք կը խափանէր անոր տեսքը , բայց աջ ու ձախ զիէն խօսողներուն հետ այնքան զբաղած էր , որ շատ կը ցատէի տեսնելով թէ ի՛նչ մեծ համբերութեամբ անոնց մտիկ կ'ընէր : Այնչափ երկար տեւեց այս բանս որ կարծեմ թէ վերջապէս ձանձրացաւ , վասն զի յանկարծ ոտք ելաւ , և իսկոյն ձգեց գնաց՝ առանց ուրիշ շատ մ'անձերու ակնմը կախելու , որոնք կ'սպասէին որ ըստ կարգի անոր խօսին : Սակայն ասով շատ գոհ եղայ : Իբրաիմ , համբերութիւնս կը հատնէր և ոտքի վրայ կենալէն սաստիկ յոգնեւ էի . բայց գործն աւրուած չէ , վաղը նորէն պիտի դառնամ , կարելի է որ սուլթանն այնչափ զբաղած չպիտի ըլլայ :»

Թէ և Ալատտին շատ սիրամիլ էր , ստիպուեցաւ այս պատճառը դոհացուցիչ սեպել և համբերութեամբ զինուիլ : Գոհ եղաւ որ մայրը դո՛ւնէ ամենէն ծանր քայլն առաւ , այս է սուլթանին առջև անշիփօթ մնալ ,

և յուսաց որ՝ ուրիշ աղերսարկուններուն պէս՝ մայրն ալ չպիտի վարանի իր յանձնարարութիւնը կատարելու, երբ խօսելու յարմար առիթը պատահի :

Առջի օրուան պէս՝ Ալատտինի մայրը կանուխ ելաւ և ճոխ պարզելով սուլթանին պալատը գնաց : Ատենին գուռը դոց գտաւ, և խնայաւ որ երկու օրն անդամ մը միայն նիստ կայ, և թէ հարկ էր որ հետևեալ օրը գայ : Այս լուրն իր որդւոյն հաղորդեց, որ ստիպուեցաւ նորէն համբերել : Մայրը վեց անգամ պալատը դիմեց՝ որոշեալ օրերը, միշտ սուլթանին առջևը կենալով, բաց միշտ անյաջող ետ կը դառնար. և կարելի է հարիւր անգամ ևս պալատը տեղ պիտի երթար դար, և թէ սուլթանն՝ որ ամէն նստին իր առջևը կեցած կը տեսներ զանի, ուշադրութիւն չընէր և անոր ջնայէր : Այս ալ շատ հաւանազան էր, որովհետև մինակ աղերնապիւր մատուցանողները կրնային սուլթանին մտանալ ըստ կարգի, որպէս զի իրենց դատը վարեն, և Ալատտինի մայրն ալ ոչ ինդրադիր ունէր և ոչ դատ :

Արջւպէս այն օրն՝ երբ ժողովը վերջացաւ՝ սուլթանը սենեակը մտնելով իր վէզիլին ըսաւ. «Քանի մ'ատենէ վեր կին մը կը տեսնեմ որ ամէն օր կանոնաւոր կերպով նիստի ժամանակ կողայ առջևս կը կենայ սկիզբէն մինչև վերջն, և իր ձեռքը լաթով փաթթուած բան մ'ունի. արդեօք դիտե՛ս թէ ի՞նչ կ'ուզէ այս կինը :»

Մեծ վէզիլին՝ որ սուլթանին պէս չգիտէր այս մասին, չուզեց ասիլի բերան կենալ, և պատասխանեց. «Տէր իմ, Ձեր վեհափառութիւնը քաջ գիտէ թէ կանայք ոչ ինչ բաներու վրայ ստեպ արտոնջներ կ'ընեն. կ'երևի թէ այս ալ եկեր է ձեզի խնայ տալու որ իրեն զէշալիսը ծախեր են, կամ թէ ասոր նման անհիմն դանդաղ մ'ունի :»

Սուլթանն այս պատասխանէն գոհ չեղաւ : «Յառաջիկայ ժողովին՝ եթէ նոյն կինը գայ, ըսաւ, անպատճառ զանի կանչէ, կ'ուզեմ գանդալ մտիկ ընել :» Աւէզիլը պատասխանեց իր ձեռքն համբուրելով և զայն դիտին տանելով յայտնելու համար որ եթէ սուլթանին հրամանը կատարելու դանդաղի՝ իր զլուխը կորուսելու պատրաստ է :

Ալատտինի մայրն արդէն թաղաւորին առջևն ենելու սովորած ըլլալուն՝ իր յոգնութիւնը բանի տեղ չէր դնէր, բաւական սեպելով որ իր որդին գիտնայ թէ բան մը զանց չընէր անոր հաճելի ըլլալու համար : Հետևապէս ժողովին օրը նորէն պալատը դիմեց, և ըստ սովորականին սուլթանին առջևը կանգուն կեցաւ :

Մեծ վէզիլը սակաւին խնդիր մ'առաջ չէր բերած՝ երբ սուլթանն Ալատտինի մայրը նշմարեց : Անոր երկար համբերութեան վրայ խղճաւով վէզիլին ըսաւ. «Որպէս զի չմոռնաս, ահա այն կինն որուն վրայ անպաճնեցս քեզի խօսեցայ. կանչէ զանի, և սկսինք անոր ըսածը մտիկ ընել և ամենէն առաջ անոր դործը տեսնել :» Անմիջապէս վէզիլը ներկայ կեցող բարասանին ցցոց այն կինն և հրամայեց որ զանի առնու և յառաջ բերէ :

Բարասանապետն Ալատտինի մօր քովը գնաց, և նշան մ'ընելուն կինը սուլթանին դահլին մօտեցաւ. յետոյ գնաց իր առջև տեղը կեցաւ՝ վէզիլին քովը :

Ալատտինի մայրը՝ սուլթանին մօտեցողներէն օրինակ առնելով՝ ճակատը դորդին քսեց և այսպէս դահլին ոտքը կեցաւ երկրպագու՝ մինչև որ սուլթանը հրամայեց որ ոտք ենէ : Ալատտինի մայրն ոտք ելաւ, և այն ատեն «Բարեմիտ կին, ըսաւ անոր սուլթանը, շատ ատենէ վեր կը գիտեմ որ այս ատենան կ'գաս և սկիզբէն մինչև վերջը գրան առջևը կը կենաս. այս տեղ ի՞նչ գործի համար կ'գաս :»

Ալատտինի մայրն երկրորդ անգամ մ'ալ երկիր պաղաւ այս խօսքերը ըսելէն ետև, և երբ ոտք ելաւ, «Աշխարհիս թագաւորաց թագաւորն» ըսաւ անոր, Ձեր վեհափառութեան բարձր դահլին առջև իս բերող կարգէ գուրս, և նոյն իսկ անհաւատալի սրամճառը յայտնելէն առաջ՝ կ'աղաչեմ ներել յանդգնութեանս՝ չըսեմ աներեսութեանս, որով իմ խնդիրս ձեզի պիտի առաջարկեմ. այնչափ անլուր բան մ'է որ կը գոհում և ամօթապարտ եմ իմ սուլթանիս յայտնելու զայն :»

Որպէս զի Ալատտինի մայրն աղատօրէն իր խնդիրը բացատրէ, սուլթանը հրամայեց որ ամէն մարդ տեսնէն գուրս ենին և զինքն իր վէզիլին հետ մինակ թողուն. յետոյ ըսաւ Ալատտինի մօրն որ կրնայ ըսել իքն անվախ յայտնել :

Ալատտինի մայրը սուլթանին բարեպաշտութիւնը բաւական չտեսնեց,

քանի որ համարձակ խօսելու համար ամէնքը դուրս հաներ էր, այլ կ'ուզէր նաև սուլթանին սրտմտութենէն զերծ մնալ եթէ երբէք իր ընտելիք առաջարկութեամբը գրգռի, և որուն բնաւ չէր սպասեր: «Տէր իմ, ըսաւ նորէն խօսելով, կը համարձակիմ Ձեր վեհափառութիւնն աղերսել որ եթէ իմ ընտելիք ինզիրս նախատական գտնէք կամ ծանր, կանխաւ ինձ շնորհէք ձեր ներողամտութիւնն: — Ինչ որ բլլայ, պատասխանեց սուլթանն, այժմէն ներում կը շնորհեմ, և քեզի բնաւ վնաս մը չհասնիր. համարձակ խօսէ:»

Երբ Ալատտինի մայրն իրբև խոհեմ կին այս դուռշուծիւններն առաւ, որպէս զի իր ընտելիք փափուկ առաջարկութենէ սուլթանը բարկանալուն իր գլխին փորձանք մը չլայ, հաւատարմաբար սրտով լի կ'ըլլար: Ալատտին որդին Պատրուղուտուր իշխանուհին տեսեր էր, ինչ դժոգակ սիրով վառուեր և իր մօրը յայտներ էր, թէ և իր ձեռքէն բոլոր եկածն ըրեր է որպէս զի «տրլին վեհափառութեան և իշխանուհւոյն նախատալի տափանքէն ետ կեցնէ:»

«Սակայն, ըսաւ Ալատտինի մայրն, իմ որդիս ոչ միայն օգուտ չքաղեց իմ խրատներէս և իր յանդգնութիւնը չճանչեց, այլ կամակորուծութեամբ պնդեց, և մինչև անդամ սպառնաց որ յուսահատական գործ մը պիտի ընէ եթէ Ձեր վեհափառութեան դալով իշխանուհին ամուսնով պիտի ընէ եթէ Ձեր վեհափառութեան զայլով իշխանուհին ամուսնութեան չինզրեմ. այս ընթացքը բռնելու համար ինքզինքս չափազանց բռնադատեցի. ուստի նորէն կ'աղաչեմ Ձեր վեհափառութիւնն որ ներողամիտ գտնուիք, ոչ միայն ինձ, այլև Ալատտին որդւոյս, քանի որ այսպիսի բարձր ինսամութեան մը փափաքելու յանդիմանեցաւ:»

Սուլթանը՝ բարեսրտութեամբ և անուշութեամբ մտիկ ըրաւ այս խօսքերն, առանց բարկութեան և սրտմտութեան նշան մը յայտնելու, և ոչ իսկ ինզիրը կատակի առնելու:

Բայց այս բարեմիտ կնիկան պատասխան տալէն առաջ՝ հարցուց թէ այն լսելով բերած բանն ինչ է: Այնն իսկոյն ձենապակիէ ամանն առաւ, զոր՝ երկրպագութիւն ընելէն առաջ՝ դահլին ոտքը գրեր էր, և զայն բանալով՝ սուլթանին ներկայացուց:

Անհնար է սուլթանին զարմանքն ու արմանքը յայտնել, նոյն ամանին մէջ զետեղուած տեսնելով այնչափ խոշոր, թանկագին, ընտիր և

փայլուն անդամանդներ, որոց նմանը բնաւ տեսած չէր: Պահ մ'այնպիսի հիացման մէջ մնաց որ անշարժ կեցաւ: Երբ ինքզինքը դատաւ, Ալատտինի մօրը ձեռքէն պարզէն առաւ՝ խանդալի ուրախութեամբ դոշելով:

«Վ՛հ, իրչափ աղուր են, իրչափ պերճ են այս գոհարներն: Իբարմէ ետև ամէն անդամանդները քննելէն, գնհատելէն ետև՝ իր մեծ վէզիւրին կողմը դարձաւ, և ամանն անոր ցոյց տալով՝ «Վայէ, ըսաւ, և խոստովանէ որ ասկից աւելի կատարեալ և մեծագին գոհարներ կարելի չէ գտնել աշխարհիս վրայ:» Աւելիբը հիացաւ: «Վաւ ուրեմն, շարունակեց սուլթանն, այս պարզ և ինքն իր բնուէս: Միթէ իմ իշխանուհի աղջկանս արժանի չէ, և միթէ այս պայմանաւ զանի կնութեան ինզրողին պէտք չէ որ տամ:»

Այս խօսքերը տարօրինակ այլայլութեան մէջ ձգեցին վէզիւրը: Քանի մ'ատեն առաջ սուլթանը կերպով մը հասկցուցեր էր որ իր աղջիկն անոր որդւոյն կնիակից ընելու միտք ունի: Աւստի իբրաւր կը վախնար որ սուլթանն՝ այս արտաքոյ կարգի և պերճ ընծայէն շլանալով իր գիտաւորութիւնը չփոխէ: Սուլթանին մօտեցաւ և անոր ականջին փսփսայով ըսաւ.

«Վեհափառ տէր իմ, կը խոստովանիմ որ այս պարզէն իշխանուհւոյն արժանի է, բայց կ'աղաչեմ Ձեր վեհափառութիւնն որ ինձ երեք ամիս պայմանաժամ շնորհէ իր միտքը գործադրելէն յառաջ. յուսամ որ այս ատենէն ետքն, որդիս՝ որուն վրայ աչք նետելը արդէն յայտնեցիք ինձ, պիտի յաջողի ձեզի անձանօթ Ալատտինի ըրած այս ընծայէն աւելի պատուականը նուիրել:» Թէև սուլթանը քաջ համոզուած էր որ կարելի չէ վէզիւրը բաւական դուսար մը ձարէ իր որդւոյն տալու իր աղջկան այնպիսի մեծագին պարզ և մ'ընելու համար, սակայն դարձաւ անոր խօսքին ականջ կախեց և այս շնորհն անոր ըրաւ: Աւստի Ալատտինի մօրը կողմը դառնալով՝ անոր ըսաւ.

«Գնա, բարեմիտ կին, տունդ դարձիր, և ըսէ որդւոյդ որ իր կողմէն ըրած առաջարկութիւնդ կ'ընդունիմ. բայց մինչև որ աղջկանս կահն ու զարդը չպատրաստեմ՝ չեմ կարող զանի կարողել, և այս բանս ալ երեք ամի կարօտ է:»

Ալատտինի մայրը չափէ դուրս ուրախութեամբ իր տունը դարձաւ ։ վաճառ զի իր վիճակին նայելով՝ կարծեք էր առաջ թէ սու լիժանին մտնանալն անդամ իրեն անկարելի է ։ և ասկից զատ՝ մինչդեռ սաստիկ յանդիմանութեան մը կ'սպասէր , նպատաւոր պատասխան մը ստացեր էր ։ Երբ Ալատտինի մայրը ներս մտաւ , որդին երկու բանէ զուշակեց որ աղւոր լուր մը կը բերէր ։ առաջինն այս էր որ սովորականէն կանուխ կը դառնար , երկրորդն այս էր որ ուրախ գուարթի դէմք մ'ուներ ։

«Այս ուրեմն , ըսէ մայր իմ , դուչեց նա , պէտք է որ յուսամ թէ ոչ , պէտք է որ յուսահատութենէ մտնելիմ ։» Երբ մայրը քողը հաննց և անոր հետ բազմոցին վրայ նստաւ ,

«Որդեակ իմ , ըսաւ անոր , քեզ երկար ատեն անստուգութեան մէջ չթողլու համար պիտի սկսիմ նախ ըսել թէ , ոչ միայն մտնելու պէտք չունիս , այլ գոհ ըլլալու մեծ պատճառ ունիս ։» Յետոյ խօսքը շարունակելով՝ մայրն ըսաւ թէ ինչպէս ամենէն առաջ սու լիժանին հետ խօսեք և ասոր համար կանուխիկի դարձեր էր , թէ ինչ գլուշութիւններ ձեռք առեր էր որ առանց բարեկայնելու սու լիժանին յայտնէ Պատրուր պուտուր իշխանուհւոյն հետ՝ առաջարկելիք ամուսնութիւնն , և թէ ինչպէս սու լիժանն իր բերնովը նպատաւոր պատասխան մը տուեր էր ։ Այնքան յարեց թէ՛ սու լիժանին ցոյց տուած նշաններէն դատեր էր որ պարզեւր մանաւանդ՝ անոր մաքին վրայ մեծ ազդեցութիւն մ'ունեցած պիտի ըլլայ որ այսպիսի նպատաւոր պատասխան մ'իրեն կը բերէ ։ «Այսպիսի պատասխանի մ'իրարունք ունէի չսպասելու , վաճառ զի սու լիժանը զայն չըրած՝ վէճերն անոր ականջին բան մը փոխապէս էր , և կը վախճայի որ իր բարի դիտարութենէ ետ չկիցնէ զանի ։»

Ալատտին այս լուրն առնելով՝ ինքզինքն ամենէն երջանիկ մարդը համարեց ։ Նախ շնորհակալ եղաւ մօրն որ այս գործին յաջողութեան համար այնչափ ծանրութիւն քաշեր էր , և իրեն հանդուստութեան այնչափ կարեւոր էր , և թէ և իր սիրոյ առարկան վայելելու անտարբերութեամբն երեք ամսուան պայմանաժամը շատ երկար կ'երեւէր աչքին , սակայն սու լիժանին խօսքին վտահելով՝ որոշեց համբերել , քանի որ անոր խօսքն անգաւառալի կը համարէր ։

Մինչդեռ Ալատտին ոչ միայն ծամերն , որերն ու վայրկեաններն , այլ նոյն իսկ բոլորները կը համբէր՝ մինչև որ պայմանաժամը լրանայ , արդէն երկու ամիս անցեր էր , երբ իրկուն մը մայրը կանթեղը վառել ուզելով՝ դիտեց որ տան մէջ իւզ չկայ ։ Աւտի դուրս ելաւ դնելու համար , և երբ քաղքին մէջ կը պարտէր , տեսաւ որ չորս կողմը հանդէս և տծնախմբութիւն կայ ։ Եւ արդարև խանութները բաց էին , զանոնք դափնիներով կը զարդարէին , և լուսաւորութիւն ընելու կը պատրաստուէին , ամէն մարդ իրարմէ շքեղութեամբ և փառաւորութեամբ անցնելու ճիւղ կը թափէր , որպէս զի իր եռանդը ցոյց տայ , մէկ խօսքով ամէնքն ուրախութեան և խրախճանութեան մասնակից կ'ըլլային ։ Փողոցները դեղաթամբ ձիերու վրայ հեծած պճնալարդ սպաներով լցուած էին , և անոնց չորս դին սպայիկներ կային որ ասդին անդին կ'երթային և կ'զային ։ Ալատտինի մայրը հարցոց այն վաճառականին որմէ իւզը կը դնէր , թէ ինչ կը նշանակէ այս հանդէսը ։

«Ուսկից կ'զայս , բարեմիտ տիկին , ըսաւ անոր , միթէ չլիտնս որ վէճերին սրդին այս իրկուն սու լիժանին Պատրուրուտուր աղջկան հետ կը կարգուի ։ Քիչ ատենէն պիտի բազմեան երնէ , և աս տեսած սպաները կը դուռնալին որպէս զի զանի մինչև սրաւար տանին , ուր աս մտնութեան արարողութիւնը պիտի կատարուի ։»

Ալատտինի մայրն առելի բան չհարցոց ։ Այնքան շուտով տունը դարձաւ որ երբ ներս մտաւ շունչը դրեթ սրբուեր էր ։ Հոն դտու էր որդին , որ ամենեւին այնպիսի դուժմանի մը չէր սրբուեր , և գոչեց ։ «Որդեակ իմ , ամէն բան կորաւ քեզի համար , սու լիժանին աղւոր խոտանան վրայ վտահ էի , ամենեւին մի հաւտար ։» Ալատտին այս խօսքերէն յուզուելով՝ «Մայր իմ , ըսաւ , ինչ կերպով սու լիժանն իր խօսքը չպիտի սլահէ ։ Գու. ուսկից խնայար այս բանս ։ — Այս իրկուն , պատասխանեց մայրը , մեծ վէճերին որդին Պատրուրուտուր իշխանուհւոյն հետ կը կարգուի սրաւար ։» Յետոյ սրասնց թէ ինչ սրաւարացաներով այս լուրն իմացեր էր , և կասկածի տեղի չկար ։

Այս լուրն առնելով՝ Ալատտին անշարժ մնաց , որպէս թէ շանթ մը զարնուեցաւ ։ Եթէ ուրիշ մ'ըլլար բոլորովին պիտի վհատէր . բայց զազանի նախանձէ մը դրդեալ՝ այս վիճակէն սթափեցաւ ։

Հուն՝ միշտ իրեն օգտակար եղող կանթեղը յիշեց, և սուլթանին կամ անոր պաշտօնէին որդւոյն դէմ ընդ վայր բարկանալու տեղ՝ այսչափ միայն ըսաւ. «Մայր իմ, կարելի է որ մեծ վէզիրին որդին կարծածին չափ այս իրկուն երջանիկ չպիտի ըլլայ: Ես սենեակս պահ մը քաշուելու ատենս, դուն ընթրիքը սրատրաստէ:»

Ալատտինի մայրն իսկոյն հասկցաւ որ որդին կանթեղը պիտի գործածէր, որպէս զի, եթէ կարելի է, մեծ վէզիրին որդւոյն և Պատուաւորաւոր իշխանուհւոյն ամուսնութիւնը չկատարուի, և չէր սխալըր: Վասն զի երբ Ալատտին իր խուցը մտաւ, հրաշալի կանթեղը ձեռք առաւ, ինչպէս որ իր մօրը վախ պատճառեալուն համար արդէն անոր աչքին առջևէն վերցուցեր էր, և քանի մ'անգամ արդէն շփած տեղէն դայն նորէն շփեց: Անմիջապէս ճինն իր առջևն երեցաւ:

«Ե՛նչ կ'ուզես, ըսաւ Ալատտինի, ահա պատրաստ եմ քու գերիիդ պէս քեզի հնազանդիլ, և ամէն անոնց որ կանթեղն իրենց ձեռքն ունին, ես և կանթեղին միս գերիները:

— Մտիկ ըրէ, ըսաւ անոր Ալատտին, մինչև հիմակ կերակրելու համար ամէն պէտք եղածն ինձ բերիր, բայց աւելի կարևոր գործ մը ունիմ՝ քեզ ապսպրելու: Սուլթանէն՝ իր Պատուաւորաւոր աղջիկը կնութեան խնդրեցի, խօսք տուաւ, և երեք ամիս սլայմանաժամ պահանջեց խոստումը կատարելու համար: Հիմակ՝ փոխանակ իր խոստումը կատարելու, սլայմանաժամը չլրացած՝ այս իրկուն իր աղջիկը վէզիրին որդւոյն հետ կը կարգէ. այս բանս հիմակ իմացայ և շատ ստոյգ է: Քեզնէ խնդրածս սա է. երբ նոր փեսան և հարսը պառկին, զանոնք իրենց անկողնով վերցնես և այս տեղ բերես:

— Տէր իմ, վրայ բերաւ ճինը, քեզ պիտի հնազանդիմ: Աւրիշ պատուէր մ'ունիմ տալու:

— Առ այժմ ուրիշ բան մը չունիմ՝ պատասխանեց Ալատտին, և նոյն պահուն ճինն աներեղթ եղաւ:

Ալատտին իր մօրը քովը գարձաւ, անոր հետ ընթրեց իր սովորաւ կան հանդարտութեամբն: Ընթրիքէն ետքն՝ անոր հետ քիչ մ'ատեն իշխանուհւոյն ամուսնութեան վրայ խօսեցաւ, իբր թէ այս մասին բնաւ հոգ չունի: Իր խուցը դարձաւ, և ազատ թողուց մայրն որ

ննջէ: Իսկ ինքը չբնացաւ, այլ ճինին վերադարձին սպասեց որ իր հրամանին կատարումը տեսնէ:

Նոյն պահուն՝ ամէն բան շքեղութեամբ պատրաստուելու էր սուլթանին պալատն իշխանուհւոյն հարսանեաց հանդիսին համար, և բոլոր զիշեր արարողութեամբ և շնծութեամբ անցաւ: Երբ ամէն բան լինցաւ, վէզիրին որդին՝ ներքինապետին ըրած նշանին վրայ՝ կամացուկ մը փախաւ, և այս պաշտօնատարը զանի հարսին խուցը մտցուց, և տարաւ այն տեղն ուր առապատը գրուած էր: Վէզիրին որդին առաջ պառկեցաւ: Քիչ մ'ետքը՝ սուլթանուհին իր և իշխանուհւոյն նաժիշաներով հանդերձ հարսը բերաւ: Հարսը շատ գիմաղբութիւն կ'ընէր, ինչպէս որ սովորաբար ամէն հարսերը կ'ընեն: Սուլթանուհին անոր օղնեց որ հանուի, և գրեթէ բունի զանի անկողին դրաւ. յետոյ զանի համբուրելով՝ բարե զիշեր ըսաւ, իր կանանց հետ քաշուեցաւ, և ամենէն վերջը դուրս ելնողը սենեկին դուռը գոցեց:

Այս ինչ սենեկին դուռը գոցուեցաւ, որ ճինը՝ կանթեղին հաւատարիմ գերին՝ և զոյն բռնողներուն հրամանը կատարելու մասին ճշգրիտ՝ ժամանակ չտալով փեսային որ նոր հարսին գոռանք մ'ընէ, անկողինը կը բառնայ՝ փեսային և հարսին հետ՝ անոնց անհնարին զարմանք սրատառեղով, և մէկ վայրկեանի մէջ Ալատտինի սենեակը կը փոխադրէ և կը տեղադրէ:

Ալատտին՝ որ անհամբեր այս ժամուն կ'սպասէր, չհանդուրժեց որ մեծ վէզիրին որդին իշխանուհւոյն հետ պառկի: «Առ այս փեսան, ըսաւ ճինին, փակէ զանի ճեմիշին մէջ, և վաղն առտու կանուխ ելուր:» Ճինը վէզիրին որդին անկողնէն հանեց և Ալատտինի ըսած անղը փոխադրեց, անոր երեսին փէլով հոտ մը զոր ոտիցցը լուխ զգաց և տեղէն շարժելու գինքն արգիլեց:

Արշափ որ Ալատտինի սէրը Պատուաւորաւոր իշխանուհւոյն համար ուժղին էր, դարձեալ անոր մօտենալով երկար բարակ չխօսեցաւ: «Պաշտելի իշխանուհի, բանէ մը մի վախնար, ըսաւ խոնդազին դէմքով մը, այս տեղ ապահով ես և անվտանգ, և թէ և քու շնորհալի գերեցելութեանդ համար բուռն սէր մը կ'ըզամ, բայց քեզի ունեցած յարգանացս սահմանէն դուրս չպիտի ելնիմ: Եթէ այս ծայրայեղ միջ-

Զայր դորձածելու պարտաւորեցայ՝ քեզ նախատելու մտօք չէր, այլ արդիւնելու համար որ անիրաւ ոսոխ մը քեզ չվայելէ, ՚ի նպաստ ինձ քու հօրդ սուլթանին տուած խոստման հակառակ:»

Իշխանուհին՝ որ այս պարագաներուն անտեղեակ էր, ուշադրութիւն չբրաւ Ալատտինի ըսածներուն: Պատասխան տալու ակործակ չունէր: Այսպիսի զարմանալի և անակնկալ արկածի մը վրայ այնքան զարհուրե՛ր և շուարե՛ր էր, որ Ալատտին անոր բերնէն խօսք մը չիրցաւ քաղել: Սակայն Ալատտին ասով զո՛հ չեղաւ, իսկոյն հագուստը հանեց և վէզիլի սրբուոյն տեղը պառկեցաւ՝ կանախ իշխանուհւոյն դարձնելով, և զուռուծեամբ իր և անոր մէջ տեղը սուր մը դնելով՝ որ պատժոյ արժանի պիտի ըլլայ եթէ անոր պատոյն դալ:

Ալատտին՝ այսպէս զո՛հ ըլլալով որ իր հակառակորդն այն գիշերուան յուսացած երջանկութենէ՛ զրկեց, բաւական հանդիստ քնոցաւ: Սակայն Պատրուպուտուր նոյն հանդիստը չվայելեց. երբէք կենացը մէջ այսպիսի վշտալի և անսխորձ գիշեր մ'անցուցած չէր, և եթէ յիշեմք թէ ճինս ինչ տեղ և ինչ վիճակի մէջ թողեր էր վէզիլին որդին, գիւրին պիտի ըլլայ երեւակայեղ որ նոր փեսան աւելի ցաւալի կերպով անցուց նոյն գիշերը:

Հետեւեալ օրն Ալատտին՝ ճինը կանչելու համար կանթեղը շփելու հարկ չտեսաւ: Արշեալ ժամուն հասաւ, այն միջոցին որ ինքն ալ հագուեղու վրայ էր:

«Ահաւասիկ եկայ, ըսաւ Ալատտինի. նոր բան մ'ունիս ապսպրելու:»

— Գնան մտ, ըսաւ Ալատտին, վէզիլին որդին ձգած տեղէ՛դ՝ այս անկողնին մէջ բեր գիր և սուլթանին պալատը տանելով՝ առած տեղք նորէն տեղաւորէ:» Ճինը գնաց նոր փեսան առաւ, և Ալատտին սուրը կ'առնուր երբ երեցաւ: Վէզիլին որդին իշխանուհւոյն քովը դրաւ, և մէկ վայրկեանի մէջ՝ հարսանեկան անկողինը սուլթանին պալատը տարաւ և առջի տեղը դրաւ:

Պէտք է գիտել որ այս դորձողութեան ատեն ոչ իշխանուհին և ոչ վէզիլին որդին ճինը տեսաւ: Իր նողկալի տեսքը կարող էր ահ ու մահ ազդել անոնց: Եւ ոչ իսկ Ալատտինի և անոր մէջ անցած խօսակ-

ցու թիւնը լսեցին, և մինակ անկողնին տարսումն ու տեղէ տեղ փոխադրուիլը զգացին, և ասով ալ բաւական տարափ զգացին:

Այն ինչ ճինն անկողինը տեղը գրե՛ր էր, և ահա սուլթանը հետաքրքրի ըլլալով խնամալու թէ ինչպէս իր աղջիկն իշխանուհին անցուցեր էր հարսանեաց առջի գիշերն, անոր խոցը մտաւ բարի լոյս ըսելու: Վէզիլի որդին՝ բոլոր գիշեր կրած ցրտէն սրտաբալ՝ գրան ձայնը լսելուն՝ անկողնէն վար իջաւ և մօտաւոր սենեակը մտաւ, ուր առջի իրկուն հանուե՛ր էր:

Սուլթանն իշխանուհւոյն անկողնին մօտեցաւ, անոր աչքերէն պահաւ, ըստ սովորութեան, բարի լոյս լսելով, և հարցուց ժպտելով մը թէ ինչպէս անցուց գիշերը: Բայց երբ գլուխը վերցուց և աւելի ուշադրութեամբ անոր նայեցաւ, չտիպեց զարմանք զգաց որ աղջիկը մերամաղձատ վիճակի մէջ էր, և ոչ երեսին կարծրութեամբն և ոչ որ և է նշանով մը պատասխան մը չէր տար իր հետաքրքրութեան: Մինակ իշխանուհին խիստ ակուր կերպով անոր նայեցաւ, այնպէս որ կերկեր թէ շատ մեծ վիշտ և գժոհհոտութիւն ունի: Սուլթանը նորէն քանի մը խօսք ուղղեց անոր, բայց տեսնելով որ աղջիկն ավ ՚ի բերան կը մնայ, կարծեց թէ ամօթէն չխօսիր, հետեւապէս ձգեց գնաց: Սակայն դարձեալ անոր լուծենէ կ'երեւակայէր որ արտաբոյ կարգի բան մ'անցած է. ուստի մէկէն սուլթանուհւոյն սենեակը գնաց և անոր պատմեց իշխանուհւոյն վիճակն և ըրած ընդունելութեան կերպը:

«Վեհափառ տէր, ըսաւ անոր սուլթանուհին, պէտք չէ որ այս բանին վրայ զարմանաս. ամէն նոր հարս հետեւեալ օրը մի և նոյն ամէկտուութիւնը կը դասէ: Երկու երեք օրէն կը փոխուի, և այն ատեն իր սուլթան հայրն ըստ արժանւոյն պիտի ընդունի: Թող ես երթամ նայիմ, յարեց նա, և զարմանալի բան մը չըլլար թէ որ իս ալ նոյնպէս պող ընդունի:»

Երբ սուլթանուհին հագուեցաւ, իր աղջկան սենեակը դիմեց, թէ և իշխանուհին դեռ անկողնէն ելած չէր. անոր անկողնին մօտեցաւ և համոյր տալով բարեւեց. բայց մեծ եղաւ իր արմանքն ու զարմանքն, ոչ միայն լուռ ու մունջ կենալուն, այլ նաև յետին ծայր վհատութեան մէջ գտնուելուն, որմէ գուշակեց թէ իրեն անձանթ բան մը պատու-

համ պիտի ըլլայ :

«Աղջիկս, ըսաւ անոր սուլթանուհին, ինչո՞ւ համար այսպէս պաղ կերպով կ'ընդունին քեզ ըրած դպուանքս : Միթէ մօրդ հետ այսպէս վարուիրդ կը վայլէ . և միթէ այսպիսի պարսպայի մէջ քեզի պատահածը չե՞մ կրնար իմանալ : Ա՛ռ զեմ հաւատալ որ այդ միտքը չունիս, ուստի գլխիդ բան մ'եկած պիտի ըլլայ, բացէ 'ի բացյայտնէ ինձ, և այս ծանր անհանդստութեան մէջ մի թողուր իս :»

Պատրուլուտուր իշխանուհին վերջապէս բերանը բացաւ, խորին հատաջ մը հանելով . «Մ՛հ, տիկին և պատուելի մայր իմ, ներէ ինձ եթէ ձեզի վայել յարգանք հետդ չվարուեցայ : Այս զիշեր հասած կարգէ դուրս բաներով այնչափ զբաղեր է միտքս որ դեռ զարմանքս ու վախս չանցան և հագլու թէ ինքզինքս գտած եմ :» Այն ատեն վառ-վառն դոյներով պատմեց թէ ինչպէս ինքն ու փեսան անկողին մանուշէն ետե՛՛ անկողինը շատ մը վերուցին և աղոտառ ու մութ սենեակ մը տարին, իւր որ իր էրիկէն զինքը զատեր էին, առանց դիտնալու թէ ուր տարեր ձգեր էին . մինակ երիտասարդ մը տեսեր է, որ իրեն քանի մը խօսք ըսելէն ետե՛՛ թէ պէտ վախէն չէ լսելու զանոնք, իր էրիկն տեղը պառկեր իրենց մէջ տեղը սուր մը գլխով, և թէ իր էրիկը նորէն գտեր և նոյն տեղ փոխադրեր է նոյնչափ սուղ ժամանակի մէջ :

«Այս ամէն բաները պատահեր էին, յարեց իշխանուհին, երբ իմ հայրս սուլթանը խուցս մտաւ, այնքան վրդոված էի, որ անոր բառ մ'ըսելու զօրութիւն չունէի . ուստի տարակոյս չունիմ որ ինձ ըրած պատիւն այնպէս ընդունելուս շատ սրգողած պիտի ըլլայ, բայց յուսամ որ ինձ պիտի ներէ, երբ իմ տխուր արկածս և այս սղբալի վիճակս իմանայ :»

Սուլթանուհին հանդարտօրէն մտիկ ըրաւ իշխանուհոյն բոլոր ըսածները, բայց չուզեց անոնց հաւատ ընծայել : Ուստի, «Աղջիկս, ըսաւ անոր, շատ աղէկ ըրիր որ հօրդ սուլթանին այդ բաները չպատմեցիր . նայէ որ ուրիշի ալ չըսես, վասն զի քեզ խնդի տեղ պիտի գնես :

— Տիկին, վրայ բերաւ իշխանուհին, կրնամ հաւատաւոր ճշմարտութիւնը քեզ կը խօսիմ, կրնաս էրկիս ալ հարցնել, նոյն բանը պիտի

ըսէ քեզ : — Պիտի հարցնեմ, պատասխանեց սուլթանուհին, բայց եթէ այն ալ քու ըսածդ ըսէ, դարձեալ չպիտի համոզուիմ : Սակայն անկողնէն ելիր և այդ անուրջը փարատէ . իբրաւ աղո՛ր բան կ'ըլլար որ այդ տեսիլքիդ պատճառաւ հարսանեաց համար հրամայուած հանդէսները վրդովես, որոնք պալատին և բոլոր տէրութեան մէջ շատ օրեր պիտի շարունակուին : Միթէ արդէն չէս լսել թմբուկներու, փողերու և դափերու ձայնն : Այս ամէն ցնծութիւնը քեզ խնդութիւն և հրձիւ պատճառել պէտք է, որպէս զի մտքի ցնորբը ցրուին :»

Նոյն պահուն սուլթանուհին իր աղջկան կ'ինները կանչեց, և երբ տեսաւ որ նա անկողնէն ելնելով դնաց հագուելու, ինքք սուլթանին սենեակը դնաց և ըսաւ անոր թէ իրօք իրենց աղջկան մտքէն անուրջ մ'անցեր է, բայց բան մը չէր : Յետոյ վէզիլին որդին կանչել ստաւ որպէս զի աղջկան ըսածներուն վրայ անոր ալ կարծիքը հարցնէ, բայց վէզիլին որդին՝ որ սուլթանին հետ ըրած ինամութեան համար ինքզինքը չափազանց երջանիկ կը համարէր, ամէն բան քողարկելու որոշեր էր : «Վսիս, ըսաւ անոր սուլթանուհին, ըսէ ինձ, միթէ դու ալ կնկանդ պէս կամակոր ես : — Տիկին, պատասխանեց վէզիլին որդին, արդեօք կրնամ հարցնել թէ ի՞նչ առթիւ այդ հարցումը կ'ընէք ինձ : — Այդ բաւական է, պատասխանեց սուլթանուհին, չեմ ուզեր աւելի բան իմանալ, դու անորմէ աւելի զգաստ ես :»

Պալատին մէջ բոլոր օրը խրախմանութիւնները շարունակեցան, և սուլթանուհին, որ իշխանուհոյն քովէն չհեռացաւ, ամէն ձիւց թափեց անոր ուրախութիւն ազդելու, և զանազան տեսարաններով անոր արուած զբօսանքին հաղորդ ընելու . բայց իշխանուհին՝ առջի դիշերուան պատահած բաներէն այնքան վրդոված էր որ կը տեսնուէր թէ միտքը անոնցմով զբաղած էր : Իսկ վէզիլին որդին ալ անցուցած խեղճ դիշերուան վրայ նոյնչափ ընկճած էր, բայց փառասիրութիւնն ամէն բան կը պարտըկէր, և տեսնուլը պիտի ըսէր թէ շատ երջանիկ ամուսին մ'է :

Ալատին՝ որ սլաւանն անցած դարձածին քաջ տեղեակ էր, անկասկած էր որ նոր փեսան ու հարսը նորէն միատեղ պիտի ննջին՝ առջի դիշերուան ձախորդ գէպին չնայելով : Ալատին միտքը գրեր էր

զանոնք հանդարտ չ[թողու]լ : Ուստի մն[թը կոխելուն՝ նորէն հրաշար ի կանթեղին դիմեց : Անմիջապէս ճինն երեցաւ . և Ալատտինին առջի անդամուան պէս բարե տալով հրամանին պատրաստ ըլլալը յայտնեց : «Մեծ վէզիբին որդին և Պատրուլպուտուր իշխանուհին, ըսաւ անոր Ալատտին, այս դիշեր նորէն միասին պիտի պառկին . գնա, և անոնց պառկիլը տեսնելուգ՝ անկողնէն առ և երէկուան պէս հոս բեր : »

Ճինն առջի օրուան պէս հաստատամտութեամբ և ճշտութեամբ ծառայեց Ալատտինի . վէզիբին որդին առաջին անգամուան պէս խիստ անախորժ դիշեր մ'անցուց, և իշխանուհին ալ դարձեալ զայրացաւ որ Ալատտին իրեն ընկեր ունեցաւ անկողնին մէջ, միշտ թուրն իր և անոր մէջ դրուած : Ճինն՝ Ալատտինի հրամանին համեմատ՝ հետեւեալ օրն երկաւ, փեսան հարսին քովը պառկեցուց, անոնց անկողինը վերցուց և նորէն պալատին սենեակը տարաւ ուսկից առեր բերեր էր :

Սուլթանը՝ Պատրուլպուտուր իշխանուհոյն ըրած առջի օրուան ընդունելութեան վրայ՝ անհամբեր ըլլալով հասկնալու թէ ինչպէս անցուցեր էր երկրորդ դիշերն, և թէ արդեօք առջի կերպով պիտի ընդունի, անոր խոյըր դնաց առտու կանուխ որպէս զի անձամբ իմանայ : Ալեզիբին որդին, առջինէն աւելի ամծթասպարտ և սրտմտած ըլլալով այնպիսի դիշեր մ'անցնելուն՝ այն ինչ սուլթանին դալուստն իմացաւ, որ արտօրնօք անկողնէն ելաւ և իր յատուկ սենեակը վաղեց :

Սուլթանը մինչև իշխանուհոյն անկողինը յառաջացաւ, բարի լոյս քսելով . և առջի օրուան պէս զանի գգուելէն ետե՛ . «Վառ ուրեմն, աղջիկս, ըսաւ անոր, միթէ երէկուան պէս այսօր ալ սրտնեղութիւն մ'ունի՞ս : Պիտի յայտնես ինձ արդեօք թէ ինչպէս անցուցիր այս դիշեր : »

Իշխանուհին նոյն լուծութիւնը պահեց, և սուլթանը զիտեց որ իր աղջիկն առջի անգամէն աւելի անհանգիստ և վշտահար կ'երևէր : Ուստի աներկմիտ էր որ արտաքոյ կարգի բան մ'անցած պիտի ըլլայ : Հետեւապէս՝ այս գաղտնեաց վրայ սրտմտելով՝ «Աղջիկս, ըսաւ անոր՝ ցատկապէս և սուրբ ձեռքը բռնած, կամ այդ գաղտնեիք ինձ պիտի յայտնես, և կամ անմիջապէս զլուխդ պիտի կտրեմ : »

Իշխանուհին՝ սուլթանին ձայնէն և սրտուշաղիքէն աւելի զարհու

րելով քան թէ ձեռքի սրէն, վերջապէս բերանը բացաւ, ու ըսաւ լարաղին .

«Միբելի հայր իմ, եթէ Ձեր վեհապետութիւնը նախատեսցի, ներում կը խնդրեմ : Ձեր բարեսրտութենէ և ներողամտութենէ կը յուսամ որ բարկութեան տեղ կարեկցութեամբ պիտի վարուիք հետս, երբ երկու դիշեր ունեցած ախուր և օղբալի վրձակիս նկարագիրը ձեզի մանրամասնաբար ընեմ : »

Այս յառաջարանէն ետքն՝ որով սուլթանը քիչ մը հանդարտեցաւ և սիրաբ կակղեցաւ, երկու դիշեր անցած ձախորդ արկածները մանր պատմեց, սակայն այնպիսի սրտաշարժ կերպով մ'որ սիրան ելաւ՝ անոր վրայ ունեցած սիրոյն և գորովոյն համար : Աերջապէս իշխանուհին սա խօսքերն ըսաւ . «Եթէ Ձեր վեհապետութիւնն ամենաթեթեւ կասկած մ'ունի բրած նկարագրիս մէջ՝ կրնաք ինձ տուած ամուսնոյդ հարց ու փորձ ընել : Հաւատարի եմ որ ճշմարտութեան պիտի վկայէ : »

Սուլթանը լիովին մամսակից եղաւ այս արկածէն իշխանուհոյն կրած վշտին, և անոր ըսաւ . «Աղջիկս, այս տարօրինակ խնդիրն երբեկուանէ ինձ չյայտնելուգ յանցաւոր ես : Քեզ դժբաղդ ընելու համար չկարողեցի, այլ ընդ հակառակն՝ երջանիկ և դո՛հ, և քեզ վայել երանութիւնը վայելել այն քեզ յարմար դատած ամուսինը տալով : Մարէդ ցրուէ այն աղէտալի գաղափարներն որով պաշարուած ես : Պէտք եղածը պիտի կարգադրեմ որպէս զի նորէն այնպիսի անախորժ և անտանելի դիշերներ չունենաս : »

Երբ սուլթանն իր սենեակը մտաւ, վէզիբը կանչել տալով՝ անոր ըսաւ . «Ալեզիբ, որդիդ տեսնոր, արդեօք քեզ բան մ'ըսաւ : » Որովհետեւ վէզիբն ըսաւ թէ զանի չէ տեսեր, սուլթանը Պատրուլպուտուր իշխանուհոյն ըսածներն անոր պատմեց : Խօսքն աւարտելով՝ «Տարակոյս չունիմ, ըսաւ, որ աղջիկս ճշմարտը պատմած է ինձ, սակայն եթէ որդիդ նոյնը հաստատէ՝ աւելի դո՛հ պիտի ըլլամ . ուստի դնա, և գործին տեղեկացիր : »

Մեծ վէզիբն խելոյն դնաց իր որդին գտնելու, սուլթանին ըսածն անոր յայտնեց, և ապապրեց որ ճշմարտութիւնը բացէ՛ ի բաց յայտնէ և ըսէ թէ արդեօք իմացածը ստոյգ է :

«Ճշմարտը պիտի ըսեմ քեզ, հայր իմ, պատասխանեց որդին, իշխանութեան քողոր պատմածները ստոյգ են, բայց անտարակոյս իմ քաջածներն չգիտէ որ պատմէ, ահա քեզի մի առ մի պատմում. իմ ամուսնութենէս վեր, կարելի չէ երեակայել թէ ինչ սոսկալի զիններն անցուցի. խօսքով կարող չեմ ճշտիւ յայտնել բոլոր կրած տառապանքս: Չեմ ըսեր թէ ինչ երկիւղ զղացի չորս անգամ անկողինսով մեր երեսջուս, թէ և չէի տեսներ որ անկողինս բառնալով ուրիշ տեղ մը կը փոխադրեն, և առանց ըմբռնելու թէ այս բանս ինչպէս կարելի էր ընել: Արնաս երեակայել թէ ինչ ցառալի վիճակի մէջ էի, երբ ըսեմ թէ երկու դիշեր ոտքի վրայ և շապիկով նեղ ճեմելի մը մէջ անցուցի՝ առանց շարժելու աղատութիւն ունենալու, թէ և առջևս արգելք մը չէի տեսներ իրօք որ և է շարժում մ'ընելու: Այս բանէն հետևաբար է մանր նկարագրել իմ բոլոր աղէտքս: Չեմ պահեր դարձեալ որ այս ամէն ձախորդ պարպաններն արգելք մը չեղան սիրոյ, յարգանաց և երախտազխտութեան զգացումներ տաճելու իմ կնկանս համար, քանի որ անոնց արժանի է. սակայն անկեղծօրէն կ'ըսեմ թէ՛ որչափ որ իմ վեհապետիս աղջկան հետ կարողուիլ մեծ պատիւ և պարծանք է ինձ, դարձեալ լաւագոյն ունիմ մեռնիլ քան թէ այսպիսի բարձր խնամութեան մէջ ապրիլ, եթէ նորէն կրած տառապանքս կրելու գառապարտուիմ: Աներկմիտ եմ որ իշխանութիւն ալ մի և նոյն զգացումներն ունի, և դիւրաւ պիտի խոստովանի որ մեր բաժանումը թէ իրեն և թէ իր հանդատութեան կարևոր է: Աստի, հայր իմ, կը պաղատիմ քեզ՝ յանուն հայրական գորովոյդ որով այսպիսի մեծ երջանկութեան մը իս հասցնելու հոգ տարիր, սուլթանին ըսել որ մեր ամուսնութիւնն անվաւեր հրատարակէ:»

Արշափ վէզերը կը պարծենար որ որդին սուլթանին փեսան է, առկայն տեսնելով որ որդին հաստատ միտքը դրած է զատուելու, յարմար չգտեսց առաջարկել որ քանի մ'օր ևս համբերէ, յուսալով որ թերևս այս ձախորդութիւնը կ'անցնի: Աստի իր որդին թողոց, սուլթանին եկաւ և ըսաւ թէ իրօք այն արկածները պատահեր են, ինչպէս որ նոյն ինքն որդին ալ կը խոստովանէր: Վէզերը չարասեց որ սուլթանն առաջարկէ ամուսնութիւնը քակելու, քանի որ տրամադիր կ'երևէր

այս բանին, այլ ինքն առաջ խնդրեց որ հրաման տայ որդւոյն իր տունը դառնալու, պատճառ բռնելով թէ անտեղի բան մ'էր որ իշխանութիւն իր որդւոյն սիրոյն համար այնպիսի սոսկալի հալածանք մը կրէ:

Վէզերը դժուարութիւն չունեցաւ իր փափաքածն ընդունելու. նոյն վայրկեանին սուլթանն՝ որ արդէն ինքնին այս որոշումն ըրեր էր, հրաման տաւ որ իր պալատին և բոլոր տէրութեան մէջ հանդէսները դադրեցնեն, առջի տուած պատուէրներուն ներհակ պատուէրներ դրկելով. և քիչ ժամանակի մէջ՝ բոլոր ուրախութեան նշանները բոլոր քաղքին և տէրութեան մէջ վերջ առին:

Այս յանկարծական և անակնկալ փոփոխութիւնը տեսակ տեսակ մեկնութիւններու առիթ եղաւ. ամէն մարդ իրարու կը հարցնէր թէ այս անպատեհութեան պատճառն ինչ է, և ամէնքը կ'ըսէին որ միևնաջ վէզերը տեսեր են որ իր որդւոյն հետ պալատէն դուրս ելեր և իր ապարանը գացեր է, և երկու քնին ալ տրտում տխուր էին: Մինակ Ալատտին գործին էութիւնը դիտէր և ինքնին կ'ուրախանար որ կանթեղին շնորհիւն այս յաջողութիւնը գտեր էր: Աստի, երբ իմացաւ որ իրօք իր ոտխը պալատէն ելեր և թէ անոր և իշխանութեան ամուսնութիւնը լուծուեր է, հարկ չտեսց նորէն կանթեղը շփելու, և ճինը կանչելու որպէս զի ամուսնութիւնն աւրէ: Այս է զարմանալին որ ոչ սուլթանն, ոչ վէզերն, որ Ալատտինի խնդիրն իրեն հետ մտցեր էին, բնաւ մտքէ չանցուցին որ այս ձախորդութեան մէջ անի մտտ ունենայ:

Սակայն Ալատտին համբերեց որ Պատրուլուտուրի և իր մէջ ըլլալիք ամուսնութեան եռամեայ պայմանաժամը լրանայ. մեծ ուշադրութեամբ օրերը կը համրէր և երբ երեք ամիսը լնացաւ, հետևեալ օրն իսկ իր մայրը դրկեց պալատն որպէս զի սուլթանին խոստումը յիշեցնէ:

Ալատտինի մայրը պալատը գնաց, ինչպէս որ որդին խնդրեր էր, և և ատենին զբան առջև կեցաւ՝ իր առաջուան տեղն: Այն ինչ սուլթանն անոր վրայ աչք նետեց որ զանի ճանչեց և անոր խնդիրն ու կատարման պայմանաժամը յիշեց: «Նոյն միջոցին վէզերը գործի մը տեղեկալիքը կը կարգար:

«Վէզիւր, ըսաւ անոր սուլթանը՝ խօսքը կտրեւիկով, քանի մ'ամիս

առաջ մեզի այն դեղեցիկ բնձան բնող կինը կը տեսնեմ, ըսէ որ ներս գայ, տեղեկացիրոք ետքէն կը շարունակես: Սէպիւն ատենին դրան կողմն դարձնելով աչքն՝ Ալատախին մայրը տեսաւ. անմիջապէս բարապանապետը կանչեց, և այն կինը ցոյց տալով՝ ասպարեց որ զանի կանչէ:

Ալատախին մայրը մինչև գահին ոտքը յառաջացաւ, ուր իր սուլորուծեան համեմատ՝ երկիր պագաւ: Երբ նորէն ոտք ելաւ, սուլծանն աւնոր հարցոց թէ ինչ կ'ուզէ: ՍԱԵՏԱՒԱՌ. տէր, պատասխանեց աւնոր, իմ որդոցս Ալատախին կողմէն կը ներկայիմ նորէն Ձեր վեհապառուծեան, որ ըբաժ ինգրոյս եռամսեայ պայմանաժամը լրացաւ, և եկայ աղաչելու ձեզ որ շնորհ ընէք զայն յիշելու: Ս

Սուլծանն՝ երեք ամիսուան պայման գնելով՝ այս բարի կնկան ինգրոյն պատասխան տալու համար՝ կարծեր էր թէ այս ամուսնուծեան խօսքը չպիտի լսէ, քանի որ իր աղջկան խիստ անյարմար կը գտնէր, և Ալատախին մայրը ստորին և գոհ-հի կարգէ անձ մը կ'երեւէր, ինչպէս որ հաղած ջնջին զգեստէն կը հասկցուէր: Սակայն սուլծանը շփոթեցաւ երբ այս կինն եկաւ յիշելու որ խոստումը կատարէ. պատշաճ չգտնեց խնայ պատասխան տալու, իր վեղիբին խորհուրդ հարցուց և կերպով մը հասկցուց որ իշխանուհին անձանօթ մարդու մը հետ կարգելու կը դժկամակի, թէև առաջ կարծեր էր թէ անոր հարստութիւնը միջին կարգի մարդու մը հարստութենէն աւելի պիտի ըլլար:

Ահպիրն այս մասին կարծիքը յայտնեց ըսելով. «Տէր իմ, կարծեմ թէ այսպիսի ամուսնութեան մ'առաջն աւնոր մէկ անգրեւ միջոց մը կայ՝ առանց Ալատախինը վիրաւորելու, եթէ Ձեր վեհապառուծեան խի ծանօթ ըլլայ. այս միջոցն է շատ սուղ ծախել իշխանուհին, այնպէս որ Ալատախին՝ ինչ հարստութեան տէր որ ըլլայ՝ չկարենայ պէտք եղածը հողալ: Այսպիսի ժպիրհ՝ չընեմ յանդուգն ձեռնարկութենէ ետ կեցնելու միակ միջոցն այս է, քանի որ կանխառ մտածած չպիտի ըլլայ այս բանիս: Ս

Սուլծանը մեծ վեղիբին խորհուրդին հաւանեցաւ. Ալատախին մօրը կողմը դարձաւ, և քանի մը վայրկեան խորհրդածելէն ետև՝ ճարե-

միս կին, ըսաւ անոր, պէտք է որ սուլծաններն իրենց խօսքը պահեն, ես իմն պահելու, և իմ աղջկանս հետ կարգելով որդիդ երջանիկ ընելու պատրաստ եմ. բայց որովհետև չեմ կրնար կարգել զանի առանց իմանալու կանխառ թէ ինչ օգուտ պիտի քաղէ, կ'ըսես որդոցդ որ իմ խոստումն պիտի կատարեմ, եթէ ինձ քառսուն միածոյլ ոսկի կանքեր դրկէ, որոնք՝ անոր կողմէ բերած բաներովդ լեցուն ըլլան, քառսուն սե գերիներ զանոնք կրնն, և ուրիշ քառսուն ալ ճերմակ դերիներ առջևէն դան, և ասոնք ալ նորատի, վայել չակազմ, դեղահասակ ու շատ փառաւոր կերպով հաղուած ըլլան: Ահա այս պայմաններով միայն կրնամ իմ աղջիկս անոր տալ: Գնա, բարեմիտ կին, և պիտի սպասեմ բերելիք պատասխանիդ: Ս

Ալատախին մայրը սուլծանին գահին առջև երկրպագութիւն ըրաւ և ապա ձգեց դնաց: Ճամբան՝ իր որդոյն յիմարական երեւախոյրութեան վրայ կը ծիծաղէր: Վարախ, հըր պիտի գտնէ այնքան ոսկի կոնքեր և գունաւոր ասպակներ զանոնք լեցնելու համար: Միթէ նորէն այն խոր վիրաւոր պիտի իջնէ որուն մուտքը դոց է, որպէս զի ծառերէն ժողվէ. իսկ սուլծանին ինդրած կերպով դերիներն ուսկից պիտի առնու: Ահա իր փախապնքը պարապի ելան, և կարծեմ թէ իմ պատգամաւորութենէս գոհ չպիտի ըլլայ: Ս Երբ Ալատախին մայրը սունը մտաւ միայն այս մտմտութեամբ աշարուած էր, և կարծէր թէ Ալատախին չէր կրնար այնուհետև յուսալ:

Որդեակ իմ, ըսաւ անոր, կը յորդորեմ քեզ որ այսուհետև Պատրուպուտուր իշխանուհոյն հետ ամուսնանալու փախաքէդ ես կենամ: Իբրև է որ սուլծանը սիրով ընդունեց իս, և կարծեմ թէ քեզի համար աղէկ խորհուրդներ ունի, բայց եթէ չեմ սխալիմ՝ վեղիբն աւնոր միտքը փոխեց, և ըսելիքին վրայ դու ալ կրնաս դատել: Երբ նորին վեհապառուծիւնն աղաչեցի որ երեք ամիսը լրացած է, և քու կողմէդ աղաչեցի որ իր խոստումը յիշէ, գիտեցի որ ցած ձայնով իր վեղիբին հետ պահ մը խօսելէն ետև՝ ինձ պատասխան տուաւ: Ս

Այն ատեն Ալատախին մայրը սուլծանին բոլոր ըսածներն և ինչ պայմաններով իր աղջիկն անոր տալու յանձն առնու ըն որդոյն մանր պատմեց: Խօսքն աւարտելով՝ Որդեակ իմ, ըսաւ անոր, սուլծանը

պատասխանիդ կ'սպասէ, բայց խօսքը մեր մէջ մնայ, յարեց նա ժպտե-
լով, կարծեմ թէ երկար ատեն պիտի սպասէ :

— Կարծածիդ չափ չպիտի սպասէ, մայր իմ, վրայ բերաւ Ալատ-
տին, և նոյն ինքն սուլթանը կը սխալի եթէ իր արտառոց պահան-
ջումներով կը կարծէ թէ Պատրուլպուտուր իշխանուհին կարող է
ձեռքէս ազատել : Ար յուսայի որ աւելի ծանր և անյաղթելի դժուար-
ութիւններ ստջես պիտի հանէ, և կամ իմ անմահ իշխանուհիս աւե-
լի բարձր պնտ մը ծախել ուզէ . բայց հիմակ դո՛հ եմ, և խնդրածը
խիստ քիչ բան մ'է իմ ունեցած կարողութեան նայելով : Կր խնդիրը
կատարելու համար զբարեւ լու ատենս, դու ալ դնս ճաշը պատրաստէ
և իս մինակ թող տուր :»

Այն ինչ Ալատտինի մայրը դուրս ելաւ պաշար փնտռելու, Ալատ-
տին կանթեղն առաւ ու շփեց . անմիջապէս ձինն իր առջեւ ելաւ . և
այն լեզուաւ որ արդէն յիշեցինք, հարցուց թէ ի՞նչ հրաման ունի, և
թէ կատարելու պատրաստ է : Ալատտին ըսաւ անոր, «Սուլթանն իր
աղջիկն ինձ կնուծեան կտայ, սակայն իղնէ քառսուն միաձոյլ ոսկի
կոնք կ'ուղէ, որ լեցուն ըլլան այն պտուղներով զոր կանթեղն առած
սեղէս քաղցի և որուն դերին ես : Նոյնպէս կը պահանջէ որ քառ-
սուն սև դերինը զանոնք կրեն, և քառսուն ալ ձերմակ, նորասի,
դեղանի, վայելչակաղմ և փառաւոր կերպով հագուած գերիններ առջե-
ւէն երթան : Գնա, և շուտով այս ընծաններն ինձ բեր, որպէս զի թա-
ղաւորն ատենանէն չելած անոր զրկեմ :»

Ձինն ըսաւ որ իր հրամանն իսկոյն պիտի կատարէ, և անբեղյժ ե-
ղաւ : Չատ չանցաւ ձինը դարձաւ՝ հետք բերելով քառսուն սև դերի-
ներ, որոց իւրաքանչիւրն ոսկի կոնք մը կը կրէր զլուխն, և մէկը մար-
դարիտ, անդամանդ, սուտակ, զմրուխտ կար, սուլթանին արդէն
ստածէն աւելի ընտիր թէ գեղեցկութեան և թէ խոշորութեան կող-
մէն . ամէն մէկ կոնք ոսկեծաղիկ արծաթեայ ծածկոյթ մ'ունէր : Բո-
լոր այս սև ու ձերմակ գերիններն իրենց ոսկեղէն բեռով բոլոր տունը
բռներ էին, որ առջեւէն պղտիկ դախիթ մ'ունէր և ետեի կողմը
պղտիկ պարտեղ մը : Ձինն հարցուց Ալատտինի թէ արդեօք դո՛հ է և
ուրիշ հրաման մ'ունի. Ալատտին ըսաւ որ ուրիշ բանէ պէտք չունի,

և ասոր վրայ ձինն անյայտ եղաւ :

Ալատտինի մայրը շուկայէն դարձաւ, և ներս մտնելուն հիացաւ
մնաց այնքան բազմութիւն և հարստութիւն տեսնելով : Երբ բերած
ուտեստը մէկդի դրաւ, ուղեց որ երեսին քողը վերջնէ, բայց Ալատ-
տին չթողուց : «Մայր իմ, ըսաւ անոր, պէտք չէ ատեն կորսնցնել,
սուլթանն ատենանէն ելնելէն առաջ, անհրաժեշտ է որ պալատը
դառնաս և իսկոյն Պատրուլպուտուր իշխանուհւոյն ընծան և օժիտը
տանիս՝ քանի որ խնդրեց, որպէս զի իմ հոգս և ճշտութիւնս դատե-
լով հասկնայ թէ իրչափ անկեղծ և վառվռուն է եռանդս անոր խնա-
մութեան պտուղն ունենալու :»

Ալատտին իր մօրը պատասխանին չսպասելով փողոցին վրայ դու-
ռը բացաւ, և բոլոր դերինները յառաջ անցուց, միշտ առջեւէն ձերմակ
և ետեւէն սև դերի մը գնելով՝ որ ոսկի կոնք մը կը կրէր զլուխը, մին-
չև յետինն : Երբ մայրը վերջին դերինն ետեւէն դուրս ելաւ, դուռը
դոցեց և իր սենեկին մէջ հանդարտ կեցաւ, այն յուսով որ սուլթանն
այս իր խնդրած պարզեւր տեսնելէն ետեւ՝ պիտի հաճի զինքն իր փե-
սան ընելու :

Ալատտինի տունէն առաջին ձերմակ գերին ելնելուն՝ բոլոր ան-
ցորդները կանկ առին, և գեռ ու թատն սև ու ձերմակ գերինները
դուրս չելած, փողոցն ամէն կողմէն վազող ժողովրդով լցաւ, այս
փառաւոր և տարօրինակ տեսարանին ականատես ըլլալու : Խրաքան-
չիւր գերիի հագուստն այնքան ձոխ էր և ականազարդ, որ ամենէն
վարպետ ճանչողներն ամէն մէկ զրեստը մէկ միլիոնի պէն կարելով
չսխալեցան : Ամենուն ալ հագուստը մաքուր, զարդարուն և շորհա-
լի . իրենց կերպարանը, հասակը վայելուչ և հաւասար, իրարմէ նոյն
հեռաւորութեամբ կը քայլէին . խիստ խոշոր անգամանդներով, որ ու-
կեհեռու գօտիներ կը զարդարէին համեմատութեամբ . նոյնպէս զգակ-
նուն ականակուռ նշաններ ունէին, որ մասնաւոր ճաշակով շինուած է-
ին, այս ամէն շքեղութիւնները բոլոր հանգիստականները հիացուցին,
այնպէս որ չէին կշտանար զանոնք զիտելէ և կարելի եղածին չափ
հեռու անոնց նայելէ : Բայց փողոցներն այնքան բազմութեամբ կը
վիտար, որ ամէն մարդ ստիպուած էր դառնուած տեղը կենալու :

ԱրովՏեաե պալատը հասնելու համար շատ փողոցներէ անցնիլ պէտք էր, քաղքին բնակիչներէն շատերն առիթ ունեցան այս հիւանալի թափօրը անանելու : Աւթսուն գերիններէն առաջինը պալատին առաջին դարիցը հասաւ, և դա՛նսպաններն որ կարդաւ շարուեր էին՝ այս հիւանալի հանդէսը հեռուէն զիտելով՝ կարծեցին թէ թագաւոր մ'է եկողն, այնքան փառաւոր և պերճօրէն հագուեր էր . անոր մտեցան պատմութեանին քղանցքը համբուրելու, բայց գերին՝ ճինին հրահանգին համեմատ՝ չթողուց, և անոր ծանրաբար ըսաւ . «Մենք գերիներ ենք, մեր տէրը սխալ գոյ ժամանակին ։»

Առաջին գերին՝ ետէն միւսները դալով՝ երկրորդ դաւթին անցաւ, որ շատ ընդարձակ էր, և ժողովին նիստին ժամանակ սուլթանին բոլոր սպասաւորներն այն տեղ կը կենային : Իւրաքանչիւր խմբին գլուխը կեցող սպաները շատ փառաւոր հագուեր էին, սակայն Ալատտինի պարզ և բերող ութսուն գերիններուն շքեղ հագուստէն նսեմացան : Սուլթանն այսպիսի փառաւոր և գեղեցիկ սպաներ չուէր, և բոլոր նախարարներուն շուքն ոչ ինչ էր՝ նոյն պահուն աչքին զարնող բաներուն բաղլատութեամբը :

ԱրովՏեաե սուլթանն արդէն իմացեր էր որ այս գերինները կը մտանան, հրաման տուեր էր որ ներս առնուն : Աւստի այն ինչ գրան առջև եկան՝ որ ժողովարանին դուռը բաց դսան և կարդաւ ներս մտան՝ մէկ մասն աջ գին, միւս մասը ձախ գին կենալով : Երբ այսպէս ներս գալով գահին առջև կիսաբողոքակի ձևով շարուեցան սև գերիներն ոսնագորդին վրայ գրին իրենց կրած կոնքերն : Ամէնքն երկիրը պողին՝ ճակատնին գետինը զարնելով, և ճերմակ գերիներն ալ մի և նոյն բանն ըրին նոյն պահուն : Ամէնքն ոտք ելան, և սև գերիները ճարպիլութեամբ մ'իրենց առջև կեցած կոնքերը բային, ամէնքը ձեռքերնին իրենց կոբճքն վրայ դրած և համաստութեամբ կանդուն մնային :

Սակայն Ալատտինի մայրն՝ որ մինչև գահին տոքը յառաջացեր էր, երկիրը սպառնելէն ետև՝ սուլթանին ըսաւ . «Ահ հափառ տէր, իմ Ալատտին որդիս քաջ գիտէ որ այս զրկած սպարդէր շատ չնչին է Պատարուպուտար իշխանուհւոյն համար . բայց կը յուսայ որ Ձեր վեհափառ

սուլթանը սիրով պիտի ընդունի, և իշխանուհին ալ պիտի յորդորէ ընդունելու՝ այն վատահոլութեամբ որով այն սրայմանն որդւոյս վրայ դնելու հաճեցար :»

Սուլթանն՝ Ալատտինի մօրը քաղաքավարութեան ուշադրութիւն ընելու կարող չէր : Այն ինչ աչք մը նետեց քառսուն ոսկի կոնքերուն վրայ, որոնք լեցուն էին խիստ փաթիլուն, պայծառ, անդին գոհարներով, նոյնպէս ութսուն գերիններուն վրայ, որ նոյնչափ թագաւորներ կերէին՝ թէ կերարարանով և թէ իրենց շքեղ հագուստին կողմէն, այնքան հիացեր ապշեր էր որ չէր կրնար իր սալուլթանը դադրեցնել : Ալատտինի մօրը քաղաքավարութեան սրտասխան տալու տեղ՝ վէզիւրին դարձաւ, որ նոյնպէս չէր կարող հասկնալ թէ այսչափ առատ ու ճոխ հարստութիւններ ուսկից կրնան դալ, և Աւա ուրեմն, վէզիւր, ըսաւ անոր հրասարակաւ . ի՞նչ կը մտածես այս անձին վրայ, ո՞վ որ է, որ ինձի այսպիսի պերճ և տարօրինակ սպարդէ մը կը դրկէ, և թէ ինձ և թէ քեզ անձանութ է : Միթէ կարծես թէ իմ Պատարուպուտար աղջկանս ամուսինն ըլլալու անարժան է :»

Արչափ որ վէզիւրը կը նախանձէր և կը ցուէր որ անձանութ մտող մը իր որդիէն նախապատիւ հասնարուելով՝ սուլթանին փեսան պիտի ըլլայ, սակայն չկրցաւ իր զգացումը ծածկել : Յայտնի է որ Ալատտին իր սպարդէովը մեծապէս արժանի էր թագաւորական խնամութեան : Աւստի՝ սուլթանին համամիտ դատուելով՝ պատասխանեց . «Տէր իմ, ոչ միայն կը նկատեմ որ Ձեր վեհափառութեան այսպիսի վայելուչ ընծայ մ'ընողն արժանի է ձեր ընկեր պատոյն, այլև կը համարձակիմ ըսելու որ աւելի մեծ բանի արժանի էր, եթէ համազում չըլլայի որ աշխարհին մէջ չկայ այնքան հարուստ գանձ մ'որ Ձեր վեհափառութեան աղջկան հետ համակշիւ ըլլայ : Պարտականներն՝ որ ներկայ էին նիստին, իրենց ծափահարութեամբը հասկցուցին որ համամիտ են վէզիւրին :

Սուլթանը վերջնական որոշումն ըրաւ . և ոչ իսկ մտածեց թէ արդեօք Ալատտին բնութեամբ կրնար յարմարիլ իր աղջկան թէ ոչ : Այսքան հարստութիւն, և այն հարստութիւնը ճարելու համար Ալատտինի հողատարութիւնը տեսնելով, որ անտրուանջ այն արտառոց սրայ-

մաններն ընդունել էր, սուլթանը շուտով համոզուեցաւ որ Ալատտին ընտիր հանգամանաց տէր մարդ մ'է, և իր ուղած փետան է: Ուստի Ալատտինի մայրը զոհ հարձնելու համար՝ անոր ըսաւ. «Քարեմիտ կլին, պնա որդւոյդ ըսէ թէ թուերս բաց անոր պալտեան կ'սպասեմ որ գրկեմ, և որչափ շուտովդայ իմ ձեռքէս աղջիկս ընդունելու՝ այնքան մեծ հաճոյք պիտի պատճառէ ինձ:»

Այն ինչ Ալատտինի մայրը ձգեց պնաց՝ ու բախանալով որ իրեն պէս ստորին կարգի կնկան մ'որդին անյուսալի կերպով այնչափ բարձրանայ պիտի, սուլթանը նիտոր վերջացուց այն օրն, և իր գահէն ելնելով՝ հրաման տուաւ որ իշխանուհիին սպասարողը ներքինիները պան կոնքերն առնուան և իրենց տիրուհւոյն սենեակը տանին: Ինքն ալ հոն պնաց որ աւելի ուշով զմտնք քննէ. այս հրամանն իսկոյն կատարուեցաւ ներքինսպետին խնամօքը:

Ութսուն ճերմակ ու սև գերկները չմոռցուեցան. սպալտին ներսի կողմը մնացուցին, և քիչ մ'ետքը, սուլթանն որ անոնց շքեղութեան վրայ իր աղջկան խօսեր էր արդէն, հրաման տուաւ որ Պատրուպուտուր իշխանուհւոյն սենեակին առջև բերին զանոնք, որպէս զի վանդակներուն ետեւէն զանոնք դիտէ և հասկնայ թէ իր ըրած նկարագիրն ոչ միայն չափազանց չէ, այլև բուն իսկ իրողութենէ վար է:

Սակայն Ալատտինի մայրն իր տունը հասաւ, այնպիսի գեմբով մ'որ կանխաւ կը յայտնուէր թէ աղւոր աւետիս ունի տալու:

«Արդեակ իմ, ըսաւ անոր, ուրախացիր. փափաքներդ կատարուեցան, թէև չէի յուսար, և արդէն գիտես թէ քեզի այս մտտին ինչեր ըսեր էի. վերջապէս կարճ կատելու համար յայտնեմ որ սուլթանն իր սպալտասկանաց ծափահարութեամբ իմացուց որ արժանի ես Պատրուպուտուր իշխանուհին կենակիցդ ընելու: Քեզ կ'սպասէ գրկելու և ամուսնութեան դաջն դնելու համար: Հիմակ քեզ կը մնայ այս տեսութեան համար պէտք եղած պատրաստութիւններն ընել, որպէս զի սուլթանին քու վրայ ունեցած բարձր գաղտփարն 'ի գերև չընէ. բայց քու ըրած սքանչելիքդ տեսնելէն ետև՝ հաւաստի եմ որ ամէն բան կատարեալ պիտի ըլլայ: Չմոռնամ ըսելու նորէն որ սուլթանը քեզ կ'սպասէ անհամբեր, ուստի անոր քովն երթալու ժամանակ մի

կորուսեր:»

Ալատտին այս աղւոր լուրն առնլուն շատ ուրախացաւ, իր մօրը քանի մը խօսք միայն զրուցեց և սենեակը քաշուեցաւ: Այն տեղ իր ամէն բաղձանայ հաւատարիմ սպասարիւր գտնուող կանթեղը ձեռք առնլով՝ շփեց, և իսկոյն ճինն երեցաւ հնազանդութեամբ և առանց սպասել տալու:

«Ճին, ըսաւ անոր Ալատտին, քեզ կանչեցի որ իս բաղնիք տանիս իսկոյն, և բաղնիքէն ելնելէն ետև՝ կ'ուզեմ որ ինձի այնպիսի փառաւոր ու պերճ հաղուստ մը բերես որ երբէք թագաւոր մ'անգամ հաղած չըլլայ:»

Այն ինչ այս խօսքերն ըսաւ, որ ճինն իրեն պէս զանի ալ անտեսանելի ընելով վերցուց և բաղնիք մը տարաւ, բաղնիք մ'որ մարմարաշէն էր և զոյնպոյն: Ալատտին՝ առանց տեսնելու թէ ով իրեն կ'սպասուորէր՝ հազուստը մերկացաւ ընդարձակ և մաքուր սրահի մը մէջ: Սրահէն բաղնիքը մնացուցին զինքն՝ որ չափաւոր տաքութիւն մ'ունէր. այն տեղ անսակ տեսակ անուշահոտ ջրերով շփեցին և լուացին մարմինն: Ամէն աստիճանի ջերմութենէ անցնելէն ետև՝ բաղնիքին տարբեր տարբեր սենեակներուն համեմատ՝ գուրս ելաւ, բայց ներս մտածէն բոլորովին տարբեր: Իր երեսն եղեր էր թարմ, սպիտակ, կարմրագոյն, և մարմինն աւելի թեթև և հանդիստ: Նորէն սրահը դարձաւ, բայց այն տեղ ձգած հազուստը չգտաւ. ճինը խնդրածն այն տեղ գնելու տարբեր էր: Ալատտին հիտցաւ տեսնելով իր նոր զգեստին շքեղութիւնը: Ճինին օգնութեամբը հաղուեցաւ, և քանի լաթ մը հաղուէր՝ կ'զմայլէր անոր վրայ, այնչափ իր երևակայածէն աւելի գեղանի էին և ընտիր: Երբ լնացաւ՝ ճինը զանի տունը տարաւ, և իր առջի խոցը ձգեց: Այն ասուն հարցուց թէ արդեօք ուրիշ հրաման մը ունի:

«Այն, պատասխանեց Ալատտին, կ'ուզեմ որ թագաւորին ունեցած ձիերէն աւելի սպառուական, մեծազին և ընտիր երկվար մը բերես ինձ. տապալակը, թամբն ու սանձը մէկտեղ մէկ միլիոն ավան: Նոյնպէս կը խնդրեմ որ ինձի քսան գերի բերեմ ընծան բերողներուն պէս հարուստ և փառաւոր հաղուստներ ունենան, որպէս զի իմ երկու

կողմէս և ետևէս քալին, նոյնպէս ուրիշ քսան հատ ալ կ'ուզեմ որ խմբովին իմ առջևէս երթան: Նոյնպէս իմ մօրս համար վեց աղախին բեր, և ասոնք ալ դէժ Պատրուլուտուր իշխանուհւոյն ունեցած աղախիններուն պէս հաղուած սգուած ըլլան, և ամէն մէկը սուլթանուհւոյն համար կատարեալ ու փառաւոր զյետս մ'ունենայ ձեռքն: Ասկից զատ՝ տաս հազար ոսկի՝ տաս քսակի մէջ զետեղուած կ'ուզեմ: Ահա այս է իմ խնդիրքս և հրամանս. դնա, և շուտով կատարէ: Ծ

Այն ինչ Ալատտին պէտք եղած հրամանները ճինին սուաւ, որ ճինն աներևոյթ եղաւ, և քիչ մ'եւաքն ամէն խնդրած բաները բերաւ՝ երիվարը, քառսուն գերի, որոյմէ տասը մէյմէկ քսակ ունէին ձեռքերնին, վեց աղախին, որոյ զլիսին վրայ Ալատտինի մօր համար տարբեր տարբեր հազուատներ կը կրէին, և ճինն ամէնը մէկէն Ալատտինին ներկայացուց:

Տասը քսակէն Ալատտին մինակ չորսն առաւ, զոր մօրը տալով՝ ըսաւ որ իր պիտոյից համար գործածէ: Իսկ միւս վեց քսակն իր գերիներուն ձեռքը թողուց, հրաման տալով որ ակն ՚ի ափ ժողովրդեան նետեն փողոցներէն անցնելու և դէպ ՚ի սուլթանին պալատն երթալու ատեն: Նոյնպէս պատուիրեց որ միւսներուն հետ իր առջևէն պիտի քալին՝ երեք ձախ և երեք հոգի աջ դիէն: Ի վերջէ վեց աղախիններն իր մօրը ներկայացուց՝ յայտնելով թէ իրենն են, թէ կրնայ ըստ հաճոյս զանոնք գործածել և թէ բերած հազուատնին իրեն համար էին:

Երբ Ալատտին այսպէս բոլոր գործերը կարգադրեց, ճինին ըսաւ, զանի ձամբելով, թէ զանի պիտի կանչէ երբ իր ծառայութենէ պէտք ունենայ, և ճինն իսկոյն աներևոյթ եղաւ: Այն ատեն Ալատտին սուլթանին փափաքը կատարելու մտածեց պալատն երթալով: Ուստի քառսուն գերիներէն մին զըկեց, պատուէր տալով որ երթայ սպայապետը դանէ և հարցնէ թէ երբ արգեօք կրնայ սուլթանին ուքն կ'յնալու դիմել: Գերին անմիջապէս իր պատուամաւորութիւնը կատարեց, և պատասխան բերաւ թէ սուլթանն իրեն կ'պատէր անհամբեր:

Ալատտին ժամանակ չանցնելով ձի հեծաւ և մեր արդէն ըսած կարգով ձամբայ ելաւ: Թէև երբէք երկվար հեծած չէր, սակայն դարձեալ այնպիսի շորհ ցցուց որ ամենէն փորձառու ձիավարժը համբակի

տեղ չէր կրնար դնել զանի: Անցած փողոցները՝ մէկ վայրկեանի մէջ անհամար բազում թեամբ լցան, որոնք խնդութեան ձայներով օդը կը հնչեցնէին, մանաւանդ ամէն անդամուն որ քսակները բռնող վեց գերիներն ափով ոսկի կը թափէին աջ ու ձախ դին: Սակայն այս ցնծութեան աղաղակները ձողոններն՝ իբար հըրելով ոսկին ժողովրու մարդոց կողմէն չէին դար, այլ այն անձերու կողմէն որ ժողովրդէն աւելի բարձր ըլլալով՝ յօժարակամ ամէն վայելուչ գովեստ կը վասնէին Ալատտինի առաջատարութեան համար: Այ միայն անոնք որ փողոցները տեսեր էին զանի իբր դատարկատար մ'որ բաւական տարւօք հասակին մէջ կը խաղար, չէին ճանչեր զինքն, այն քիչ մ'առաջ զանի տեսնողներն անգամ դիւրաւ չէին ճանչեր զինքն, այնքան փոխուեր էր կերպարանն: Ասոր պատճառը սա էր որ կանթիզը յատկութիւն մ'ունէր իր տիրոջ ատրիճանաբար վայելչութիւն և բարեմասնութիւններ տալ, երբ օրինաւոր կերպով զայն գործածէր: Այն ատեն Ալատտին անձն աւելի ուշադրութիւն կը դրաւ երբ քան թէ զինքը պատող շքեղութիւնը, քանի որ արդէն նոյնը տեսեր էին շատերը գերիներուն հանդիսին մէջ երբ սուլթանին ընծաները կը տանէին:

Սակայն բանիրուն մարդիկ ձիուն զեղեցկութեան վրայ զմայլեցան, առանց շլանալու զանի պատող անդամանդներէն և դոհարներէն: Որովհետև ամէն մարդ իմացեր էր որ սուլթանն իր Պատրուլուտուր աղջիկն Ալատտինի պիտի տար, ոչ ոք՝ անոր ստորին ծննդեան պատճառաւ՝ բազդին և մեծութեան աչք չանկեց քանի որ ասոնց արժանի էր:

Ալատտին պալատն եկաւ, ուր ամէն բան կարգադրուեր էր զանի ընդունելու: Երբ երկրորդ դրան հասաւ, ուզեց որ երկվարէն վար իջնէ, վէդիրին, յօրասպետներուն, կուսակախներուն հետևած սովորութեան համեմատ, բայց բարապանն՝ որ սուլթանին հրամանաւ այն տեղ կ'սպասէր, չթողուց որ իջնէ և մինչև խորհրդարանին դուռն առաջնորդեց զանի, և այն տեղ օգնեց անոր որ ձիէն իջնէ, թէև դեմ կեցաւ և չընդունեց, բայց սուլթանին հրամանն այս էր: Սակայն սպաները սրահին դրան առջևն երկու կողմն շարուեր էին: Սոլայապետն Ալատտինն իր աջ կողմն անցուց և մէջ տեղն անցնելէն ետև,

մինչև սուլթանին դա՛հը տարաւ :

Այն ինչ սուլթանը տեսաւ զԱլատտին , որ զարմացաւ մնաց ոչ միայն նա՛ իրմէ աւելի պէրձ ու փառաւոր կերպով հաղուած ըլլալուն , այլև աղբոր կերպարան մը , զեղեցիկ հասակ և իր մօրն երեցած ստորին կարգէ վեր մեծութեան և ազնուութեան հով մ՛ուհնհարուն : Սակայն իր զարմանքն ու արմանքը չարդիւնեցին զինքը շուտ մը քանի մ՛աստիճանն դա՛հէն վար իջնելու , որպէս զի Ալատտինը չթողաւ ոտքն իյնալու , և բարեկամական ցոյցերով զանի դրկելու համար : Այս քաղաքավարութենէ ետքն՝ Ալատտին նորէն սուլթանին ոտքն իյնալ ուղեց , բայց սուլթանն անոր ձեռքէն բռնեց արդիւնց և ստիպեց զինքն որ վեր ելնէ և իր ու վէզիլին մէջ տեղ նստի :

Այն ատեն Ալատտին խօսիլ սկսաւ և ըսաւ . « Ահ հափառ տէր , ձեր ըրած պատիւները կ'ընդունիմ , վասն զի հաճելի է ձեզ զանոնք ինձ շնորհել , բայց ներեցէք ինձ ըսելու որ չեմ մոռցած թէ իր դերին ծնած եմ , թէ ձեր զօրութեան մեծութիւնը կը ճանչեմ , և քաջ զիտեմ թէ ծրչափ ստորին եմ այն զեղապանծ և փառաշուք աստիճանէն որու դուք բարձրացած էք : Եթէ կայ պարագայ մ՛որով այսպիսի նպատաւոր ընդունելութեան մ՛արժանի ըրաւ իս , կը խոստովանիմ որ զիպուածի մը պարտաւոր եմ , որով իմ աչքս , իմ մտածութիւններս , իմ փափաքներս բարձրացուցի այն երկնային իշխանուհւոյն որ բողձանոցս միակ նպատակն է : Ձեր վեհափառութենէ ներում կը ինդրեմ այս յանդգնութեանս համար , սակայն չեմ կրնար նաև պահել որ սրտի ջուէս պիտի մեռնէի , եթէ անոնց կատարումը չտեսնէի :

— Արդեակ իմ , պատասխանեց սուլթանը նորէն դրկելով զանի , յանիրաւի իս կը մեղադրէիր եթէ իմ խօսքիս անկեղծութեան վրայ պահ մը կասկածէիր : Քու կեանքդ այնչափ անդին է այտահեան ինձ համար որ զայն պահպանել իմ պարտքս է , իմ ձեռքս եղած զարմանք տալով քեզ : Քեզ տեսնելու և մտիլ ընելու հաճոյքս իմ և քու դանձուրեզ վեր կը դասեմ : »

Այս խօսքերն աւարտելով սուլթանը նշան մ՛ըրաւ , և իսկոյն օդը թմբուկներու , փողայններու և տիկերու ձայնով հնչեց , և նոյն պահուն սուլթանն Ալատտինը փառաւոր սրահ մը տարաւ , ուր պատուական

ինչոյք մը պատրաստեցին : Սուլթանը մինակ Ալատտինի հետ սեղան նստաւ : Մեծ վէզիլը , նախարարներն՝ իրենց աստիճանին համեմատ՝ ճաշին ներկայ գտնուեցան : Սուլթանն՝ որ Ալատտինի վրայէն աչքը չէր հեռացներ , այնչափ հաճոյք կ'զգար զանի դիտելով , խօսքը զանազան անտարբեր ինդիւններու վրայ դարձուց : Ճաշի ատեն՝ իրենց խօսակցութեան մէջ ինչ ինդիլը որ սուլթանը բացաւ , Ալատտին այնպիսի հմուտ թեամբ և իմաստութեամբ իր դադափարները յայտնեց որ առջի բերան սուլթանին ունեցած լաւ կարծիքն անոր վրայ հաստատեց :

Երբ ինչոյքը լմնցաւ՝ սուլթանը մայրաքաղաքին առաջին դատարըրը կանչել տուաւ և ապապրեց որ անմիջապէս իր Պատուալուտուր աղջկան և Ալատտինի ամուսնութեան դաճնապրեքը գրի առնու : Նոյն պահուն՝ սուլթանն Ալատտինի հետ շատ մ՛աննշան իրերու վրայ խօսեցաւ իր վէզիլին և նախարարներուն առջև , որոնք անոր կորուստ մտութեան , դիւրախօսութեան և նրբամիտ ու փափուկ իմաստներուն վրայ զմայլեցան :

Երբ դատարըրը պէտք եղած ոճով դաճնադիրը լմնցուց , սուլթանը հարցուց Ալատտինի եթէ կ'ուզէ մնալ սրալաար մի և նոյն օրն ամուսնութեան հանդէսը լմնցնելու համար : « Տէր իմ , պատասխանեց Ալատտին , որչափ որ անհամբեր եմ Ձեր վեհափառութեան շնորհները լիսպէս վայելելու , կ'աղաչիմ որ քիչ մը ետ ձգէք արարողութիւնը մինչև որ իշխանուհւոյն արժանեաց և աստիճանին վայել պալատ մը շինեմ և զանի ընդունիմ : Աստի կ'աղերքեմ որ ձեր պալատին մէջ յարմար վայր մը ցոյց ապիր ինձ , որպէս զի իմ յարգանքս ձեզի մատուցանելու աւելի գիւրութիւն ունենամ : Եան մը չլլալի ինայեմ որպէս զի ըստ կարի շուտով սրալաար շինել տամ :

— Արդեակ իմ , լսաւ անոր սուլթանն , ուղածիդ չափ հողատ , և արդէն ես ալ մտածեք էի չէ՞ք մը շինել , բայց մի մոռնար որ քեզ աղջկանս հետ օր առաջ միացած տեսնելու փափաքս մեծ է , որպէս զի իմ ինդութիւնս տարապայման ըլլայ : » Այս ըսելով՝ նորէն Ալատտինը համբուրեց , և Ալատտին ալ որպէս թէ արդէն պալատն ապրեք և մեծցիր է , ընտիր քաղաքավարութեամբ մը սուլթանին մնաս

բարև ըսաւ ու գնաց :

Ալատտին ձին հեծաւ և տունը դարձաւ , եկած կերպովը , մի և նոյն ամբողջին մէջէն անցնելով և լսելով այն ցնծութեան աղաղակներն որով ժողովուրդն իրեն ամէն տեսակ բարօրութիւն և երջանկութիւն կը մտադրէր : Այն ինչ ներս մտաւ և ձիէն իջաւ , մասնաւոր սենեակը գնաց , կանթեղն առաւ և ձինը կանչեց , ըստ սովորութեան : Ճինը չուշացաւ դալու , իսկոյն երեւան եկաւ և անոր հրամանին սպասեց :

«Ճին , ըսաւ անոր Ալատտին , մինչև այսօր տուած հրամաններս կէտ առ կէտ 'ի դորձ գնելուդ շատ դո՛հ եմ քեզնէ : Հիմակ ուրիշ խնդիր մը կայ՝ որուն համար , կանթեղիդ սիրոյն , առաջուանէ աւելի արտօրութիւն և եռանդ ցուցնել պէտք ես : Ուստի կը խնդրեմ , որչափ որ կարելի է շուտով , սուլթանին պալատին դիմացը պալատ մը կառուցանես , իմ կողակիցս՝ Պատրուպետուր իշխանուհին ընդունելու արժանի պալատ մը : Քու ընտրութեանդ կը թողում նիւթերուն ընտրութիւնն , այսինքն պորփիւրի , յասպիսի , ակառի , լաճուարի և գոյնզգոյն ընտիր մարմարի գործածութիւնը շէնքին համար : Բայց կը պահանջեմ որ նոյն պալատին բարձրագոյն վայրը չորս հաւասար երեսով դմբեթաւոր սրահ մը շինես , որուն նիւթը լոկ ձուլածոյ ոսկի և արծաթ ըլլայ , ամէն մէկ երեսը վեց պատուհան ունենայ , և մէկէն զատ՝ իւրաքանչիւր պատուհանին վանդակներն արհեստով զուգահանմանտութեամբ յօրինուած ըլլայ անդամանդներով , սուտակներով , զմրուխտներով , այնպէս որ աշխարհիս մէջ նմանը չգտնուի : Կուզեմ նաև որ այս պալատին առջևը բակ մը գտնուի , և պարտեզ մը . բայց ամենէն առաջ՝ պէտք է որ ստակով լեցուն դաղանի գանձատուն մ'ըլլայ : Կուզեմ նաև որ այն պալատին մէջ խոհանոցներ , դրատուններ , մթերանոցներ , և պալատին համար կահ կարանօք լի շտեմարաններ գտնուին որ ամէն եղանակի գործածութիւն . նոյնպէս դեղեղիկ ձիերով լեցուն ախոռներ՝ իրենց ձիապաններով հանդերձ , չմոռնալով որսորդութեան կազմ մը : Պէտք է որ խոհանոցի սպայիկներ , աղակիներ ալ բերես իշխանուհւոյն ծառայութեան համար : Իմացար անշուշտ թէ ի՞նչ է իմ դիտաւորութիւնս . գնա՛ ուրեմն , և երբ ամէն բան լմբնեցայ՝ դարձիր : »

Արևը մարը մտեր էր երբ Ալատտին երևակացած պալատին շինութիւնը ճինին ապսպրեց : Հետեւեալ օրը կանախ՝ Ալատտին՝ որ իր նշանածին սէրէն հանդիստ չէր կարող ննջել , այն ինչ արթնցեր էր որ ճինն երեցաւ անոր և ըսաւ .

«Տէր իմ , պալատդ լմնցաւ . եկուր նայէ , դո՛հ սխալ ըլլեալ արդեօք : » Այն ինչ Ալատտին տեսնելու փափաքը յայտնեց որ ճինը զանի առաւ և իսկոյն նոր սպալատը փոխադրեց : Ալատտին՝ իր ակնկալութեանէն այնքան վեր գտաւ , որ անոր վրայ հիանալով կը հիանար : Ճինն ամէն տեղ առաջնորդեց զինքն , և ամենուրեք ճոխութիւն , մաքրութիւն , շքեղութիւն տեսաւ , նոյնպէս սպաներ , աղակիներ , որոնք իրենց աստիճանին և սպասարարութեան համեմատ հազուեր կապուեր էին : Իբրև կարևորագոյն բան մը՝ չմոռցաւ գանձատունը ցոյց աալու որուն դուռը գանձապետը բացաւ , և Ալատտին անոր մէջ զանազան մեծութեամբ գէզգզեղ քսակներ տեսաւ՝ իրենց պարունակած դումարին համեմատ , որոնք մինչև կամարը կը հասնէին և այնպիսի կարող մը շարուեր էին որ աչքի հաճոյք կը պատճառէր : Գուրս ելնելու առանձին ճինը վստահեցուց զինքը գանձապետին հաւատարմութեան վրայ : Յետոյ ախոռները աարաւ , և այն տեղ ամենազեղչիկ ձիեր ցուցուց անոր , նոյնպէս ձիապաններ որ զանոնք դարմանելու կը պարապէին : Ի վերջէ թէ ձիերուն զարդարանքին և թէ ուտելիքի համար պէտք եղած պաշարներով լի մթերանոցներ աչքէ անցուց :

Երբ Ալատտին պալատին ամէն կողմերը ստորոնցաւ , վերն ու վարն , և մասնաորայէս բանն չորս պատուհանով սրահն , և ամէն տեսակ ճոխութիւն և փառաւորութիւն տեսաւ՝ իր կարծածէն աւելի , ճինին ըսաւ , «Ճին , ասկից աւելի դո՛հ չեմ կրնար ըլլալ , և եթէ զանդատիմ՝ անիրաւ կ'ըլլամ : Քան մը միայն կը մնայ ընել և գեռ չըսի , վստն զի չմտածեր էի , ինդիրս սա է որ սուլթանին պալատին գունէն մինչև իշխանուհւոյն յասակացած սենեակն այս ապարանքիս մէջ՝ թափշէ գորդ մը տարածես , որպէս զի անոր վրայէն քալելով այս տեղ գայ : — Քիչ առնէն կը դառնամ » ըսաւ ճինն : Եւ որովհետև իսկոյն աներևոյթ եղաւ , Ալատտին զարմացաւ մնաց տեսնելով որ իր փափաքը կատարուեր է առանց հասկնալու թէ ի՞նչպէս եղեր է : Ճին-

եր նորէն երեցաւ և Ալատտինը տունը տարաւ, այն միջոցին որ սուլ-
թանին դուռը կը բանային:

Պալատին դռնապաններն՝ որ դուռը բացեր էին և Ալատտինի պա-
լատին բռնած տեղն առաջ միշտ բաց կը ածանդէին, զարմացան դիտե-
լով որ նոյն տեղը շէնք մը կայ, և թափշէ գորգ մ'որ այն կողմէն
երկննալով մինչև սուլթանին պալատը կը հասնէր: Առջի բերան լա-
մը չհասկցան թէ ինչ է, բայց իրենց զարմանքն աւելցաւ երբ որոշա-
կի տեսան Ալատտինի հոյակապ ապարանը: Քիչ ժամանակի մէջ այս-
պիսի հիանալի սքանչելիքի մը լուրը բոլոր պալատին մէջ տարածուե-
ցաւ: Մեծ վէզիին՝ որ պալատին դրան մօտ հասեր էր, միւսներուն
չափ զարմացաւ այս երևութիւն վրայ, և ամենէն առաջ ինքը թաղա-
ւորին յայտնեց բանը, բայց իբր կախարդութեան դործ մը հասկցնել
ուզէր:

«Աէզիր, ըսաւ անոր սուլթանն, ինչո՞ւ համար կ'ըսես թէ կախար-
դութիւն մ'է: Գու ալ ինձի չափ դիտես որ այս Ալատտինի շինել
տուած պալատն է, իմ տուած հրամանիս վրայ՝ իմ ազջկան համար:
Իր հարստութեանց մէկ քանի նշանները տեսնելէն ետև՝ կարելի է
մեզ զարմանալ որ այսչափ քիչ ժամանակի մէջ ոտն պալատը կառուցած
ըլլայ: Մեզ զարմացնել և հասկցնել ուզեց որ պատրաստ դրամով և
չծագած այս տեսակ հրաշքներ գործել հնարին է: Խոտովանէ ինձի
հետ որ քիչ մը նախանձէ շարժեալ կախարդութիւն է կ'ըսես:» Խոր-
հրդարանը մտնելու ժամը հասնելով աւելի չկրցաւ շարունակել այս
խօսակցութիւնը:

Երբ Ալատտին իր տունը դարձաւ և ճինը ճամբեց, տեսաւ որ
մայրն արթնցեր և բերուած փառաւոր հագուստներէն մէկը հագնե-
լու վրայ էր: Գրեթէ այն միջոցին որ սուլթանը խորհրդարանէն
դուրս կ'ենէր՝ Ալատտին խնդրեց որ մայրը պալատն երթալու պատ-
րաստուի ճինին բերած աղախիններուն հետ: Աղաջեց զինքն որ յայտ-
նէ սուլթանին, եթէ տեսնէ, թէ եկեր է իրիկուան դէմ իշխանուհին
դէպ'ի որդւոյն պալատն առաջնորդելու: Մայրը ճամբայ ելաւ, և
թէ և ինքն ու աղախինները սուլթանուհւոյն պէս հագուեր էին, սա-
կայն այնչափ շատ չէր բազմութիւնը, վասն զի կ'ինները վայելուչ վեր-

արկուով մը ծածկեր էին իրենց փառաւոր զգեստներն: Իսկ Ալատտին
ձի հեծաւ, և իր հայրական տունէն ելնելէն ետև՝ նորէն չգառնալու
մտօք, առանց հրաշալի կանթեղը մոռնալու, որ իրեն երջանկու-
թեան պատճառ եղեր էր, հրապարակաւ պալատը դնաց՝ առջի օ-
րուան փառաւորութեամբ:

Այն ինչ պալատին դռնապաններն Ալատտինի մայրը տեսան, սուլ-
թանին իմաց տուին: Իսկոյն պատշգամներու ներքև դանուած նուա-
զածուները՝ տրուած հրամանին համեմատ՝ սկսան փողերը, թմբուկնե-
րը, դափերը զարնել, և օզը հնչեց երած շառական ձայներով որ բոլոր
քաղքին հանդիսին սկզբնաւորութիւնն աւետեցին: Աւաճառականներն
աղւոր գորգերով իրենց կրպակները զարդարելու սկսան, բարձեր և
դափնիներ զնելով և գիշերուան լուսաւորութիւնը պատրաստել: Ար-
հեստաւորներն իրենց աշխատանքը թողուցին, և ժողովուրդը հրա-
պարակը թափեցան, որ նոյն պահուն սուլթանին և Ալատտինի պա-
լատին մէջ տեղը կը գտնուէր: Կախ Ալատտինի պալատն ամենուն
զարմանքը զրոգեց, ոչ այնչափ սուլթանին պալատը տեսնելու սովո-
բած ըլլալուն, որչափ որ Ալատտինին անհամեմատ գեղեցկութեան
պատճառաւ: Բայց իրենց զարմանքն աւելցող կէտը սա էր որ չէին
կարող ըմբռնել թէ ինչ անլուր հրաշքով բարձրացեր էր այն պալատն
այն տեղն ուր սուլթի օր ոչ հիմ կար և ոչ շէնքին նիւթերը:

Ալատտինի մայրը պատու ընդունուեցաւ պալատն և ներքինապե-
տին միջոցաւ Պատրու լուտուր իշխանուհւոյն սենեակը մտաւ: Այն
ինչ իշխանուհին զանի տեսաւ, գնաց զանի գրկելու և իր բազմոցին
վրայ նստեցուց, և մինչդեռ իր աղախինները զինքը հագուեցնելու,
և Ալատտինի ընծայած թանկաղին դահարներով կը զարդարէին, անոր
պատուական ընթրակ մը մեծարել տուաւ: Սուլթանն ալ, որ իր աղ-
ջիկն Ալատտինի պալատն երթալէն առաջ՝ որչափ կարելի է հետը
մնալու համար եկեր էր, մեծ պատիւ բրաւ անոր մօրն: Ալատտինի
մայրը շատ անգամ հրապարակաւ սուլթանին խօսեր էր, սակայն եր-
բէք զինքն առանց քօղի տեսած չէր, ինչպէս որ էր այն միջոցին:
Թէ և քիչ մը տարօք էր Ալատտինի մայրը, սակայն յայտնի կը տես-
նուէր որ իր երիտասարդութեան մէջ գեղեցիկներուն դասէն էր:

Սուլթանն որ զանի պարզօրէն՝ չըսեմ աղքատիկ հաղուած տեսեր էր, զարմացեր մնացեր էր զանի իր աղջկան չափ հարուստ և փառաւոր կերպով հաղուած տեսնելով: Ասոր վրայ խորհրդածութիւն ըրաւ որ Ալաափն խոհեմ, խեղօք և բանիրուն էր ամէն բանի մէջ:

Երբ դիշերը հասաւ, իշխանուհին իր հօրը հրածեշտ տուաւ: Իրենց բաժանումը սրտաշարժ և լալալիկ եղաւ, քանի մ'անդամ առանց բան մ'ըսելու՝ իրար գրկեցին, և վերջապէս իշխանուհին դուրս ելաւ իր սենեկէն և ճամբայ ելաւ, իր ձախ կողմն ունենալով Ալաափինն, և ետեէն՝ հիանալի կերպով հաղուած հարիւր հատ աղախիներ: Բոլոր նուազարաններն՝ որ Ալաափինի մօրը գալէն վեր անպարար կը խաղային, այս շուն նուագեցին. հարիւր շափուշ և նոյնչափ ներքիններ՝ երկու շարքով՝ ետեէն կ'երթային:

Սուլթանին չորս հարիւր սպայիկներն՝ երկու խումբ եղած՝ մէյմէկ ջահ ձեռք բերին բռներ էին, և այնպիսի լոյս մը կ'ընէին որ սուլթանին և Ալաափինի պալատին լուսաւորութեան միանալով՝ արեւուն տեղը կը բռնէին:

Այս կարգով՝ իշխանուհին՝ սուլթանին պալատէն մինչև Ալաափինի պալատը տարածուած օթոցին վրայէն քայլեց, և քանի յառաջանար՝ հանդիսին առջևէն դացող նուագածուներն, Ալաափինի պալատին պատշգամբին վրայ կեցող նուագածուներուն մօտենալով և անոնց միանալով՝ այնպիսի համերգ մը յօրինեցին, որ թէ և տարօրինակ էր և շիտթ, դարձեալ ոչ միայն բազմամբոխ հրապարակին, այլ նաև երկու պալատներուն և քաղքին ցնծութիւնը կ'աւելցնէր:

Վերջապէս իշխանուհին նոր պալատը հասաւ, և Ալաափին վաղեցի մեծ խնդութեամբ՝ այն սենեկին դուռն որ անոր յատկացած էր, և զանի ընդունեց: Ալաափինի մայրը կանխաւ իր որդին ցոյց տուեր էր իշխանուհւոյն զինքը շրջապատող պաշտօնատարաց մէջ, և իշխանուհին զանի տեսնելով՝ այնչափ աղոր գտաւ զանի որ հիացաւ:

«Պաշտելի իշխանուհիս, ըսաւ անոր Ալաափին՝ անոր մօտենալով և յարդանօք բարեւելով, եթէ իմ սուլթանիս աղջկան, սիրասուն իշխանուհւոյդ աչք անկելով յանդիմարար քեզ անհաճոյ երևէի, կը համարձակիմ ըսելու որ պէտք չէ իս մեղագրես, այլ քու գեղեցիկ ա-

չերդ և շէն շնորհքք:

— Իշխան, քեզ այսպէս անուանելու հիմակ իրաւունք ունիմ, պատասխանեց իշխանուհին, իմ սուլթան հօրս կամքին կը հնազանդիմ, և քեզ անանելովս կրնամ ըսել թէ առանց դժկամակութեան անոր կը հնազանդիմ:»

Ալաափին այսպիսի աստիճելի և դժհարցոյցի պատասխանէ մը դժըլլալով՝ չթողուց որ իշխանուհին ոտքի վրայ կենայ՝ այնչափ ճամբայ կարելէն ետև, քանի որ այս յոգնութեան վարժած չէ. անոր ձեռքը բռնեց, զոր խնդութեամբ համբուրեց, և մեծ սրահ մը տարաւ, որ անհամար մօմերով լուսաւորուեր էր, և ճինին հոյատարութեամբը պատուական սեղան մ'ալ պատրաստուած էր: Քնակները միաձոյլ սակիէ, և զմայլելի միտերով լեցուած էին: Անօթները, կոնքերն ու կահոյրներն՝ որով մառանը զարդարուած էր, նոյնպէս օսկեղէն էին և գեղաշէն: Սրահին միւս զարդերն ու պաճուճանքը լիովին սոյն ձուխութեան յարմար էին: Իշխանուհին այսչափ հարստութիւն դիզուած տեսնելով մի և նոյն տերը՝ Ալաափինի ըսաւ, «Իշխան, կարծէի թէ իմ հօրս պալատին պէս չկայ աշխարհիս վրայ, բայց այս սրահը միայն տեսնելով կը դիտեմ որ սխալ եմ: — Իշխանուհիս, պատասխանեց Ալաափին՝ զանի սեղան նստեցնելով յատուկ տեղն, այդ մարդավարութիւնն ինչպէս որ պէտք է կ'ընդունիմ, բայց դիտեմ ինչ պէտք է մտածել:»

Պատրուպուտուր, Ալաափին և իր մայրը սեղան նստան, և իսկոյն նուաղարանաց դասը ներդաշնակութեամբ նուաղել սկսան և գեղեցիկ կիներ ձայնակցեցան և համերգը մինչև ճաշին վերջն անընդհատ շարունակեցին: Իշխանուհին անչափ զմայլեցաւ և ըսաւ թէ այսպիսի երած շտութիւն մ'երբէք իր հօրը պալատը չէ լսած: Բայց չդիտէր որ այս երած իշխանը ճինին ձեռօք ընտրուած հաւերժահարսեր էին:

Երբ ընթրիքը լմացաւ և սեղանն իսկոյն վերուցին, պարողներու և պարուհիներու խումբ մ'երած իշխաներուն յաջորդեցին: Քաղքին սովորութեան համաձայն՝ այլ և այլ պարեր խաղային, և վերջապէս պարող ու սրարուհի մը մինակ սկսան խաղալ, այնպիսի հիանալի թեթևութեամբ մ'որ իրենց բոլոր ճարպիկութիւնն ու շէն շնորհք ցոյց

տուն : Գրեթէ կէս դիշեր էր՝ երբ Չինաստանի սովորութեան համեմատ՝ Ալատտին ուրք ելաւ և Պատրուկուտուր իշխանուհւոյն ձեռքը կարկառեց՝ միասին սրաբելու, և այսպէս հարսանեաց արարողութիւնը վերջացնելու : Այսպէս սիրուն կերպով պարեցին որ բոլոր ընկերութեան հիացում տուն : Պարը լմնցնելով՝ Ալատտին իշխանուհւոյն ձեռքը չթողուց և միասին պատրաստուած առագաստի սենեակը դացին : Իշխանուհւոյն կինն ըր հարսը հանուեցուցին և անկողինը դրին, և Ալատտինի պապատորներն ալ նոյնպէս զինքը հանուեցուցին և քաշուեցան գացին : Այսպէս վերջացան Ալատտինի և Պատրուկուտուր իշխանուհւոյն հարսանեաց արարողութիւնները :

Հետեւեալ օրն՝ երբ Ալատտին արթնցաւ, իր սենեկապանները ներկայացան զանի հաղուեցնելու : Հարսանեաց օրուան հաղուսակն տարբեր, բայց նոյնչափ պերճ և փառաւոր զգեստ մը հաղցուցին : Յետոյ իրեն յատկացած երիվարներէն հատ մը բերել տուաւ, հեծաւ և սուլթանին պալատը գնաց՝ շատ մը գերիններու մէջ քայլելով, որոնք չորս կողմէն շրջապատեր էին զինքը : Սուլթանը զինքն առջի անդամուան պէս բնդուեց, զանի համբուրեց, և իր քովը դահլին վրայ նստեցուց, և հրամայեց որ նախաճաշիկը պատրաստեն :

«Վեհափառ տէր, ըսաւ անոր Ալատտին, կ'աղաչեմ որ այս պատիւն այսօր զանց ընէք, և շնորհ ընէք զալու ձեր նախարարներուն հետ իշխանուհւոյն պալատը ճաշ ընելու :» Սուլթանը հաւանեցաւ սիրով, նոյն միջոցին ելաւ, և որովհետա ճամբան երկար էր՝ ուղեց ուրքով երթալ : Այսպէս Ալատտինն ալ կողմէն, ձախ դիէն մեծ վեզիրն, ու հտնէն նախարարները ձգելով ճամբայ ելաւ, և սուլեէն ալ շափուղներ և պաշտօնատարներ կ'երթային :

Քանի որ սուլթանն Ալատտինի պալատին կը մտնէր, անոր գեղեցիկութեան վրայ կը հիանար : Սակայն երբ ներս մտաւ՝ իր բացաղանջութիւններն աւելցան, ամէն անդամուն որ տարիս անդին կը նայէր : Բայց երբ քսան չորս պատուհանով սրահը մտաւ, ուր Ալատտին հրաւիրեւ էր զինքն, երբ զարդերը տեսաւ, և մանաւանդ տկանակուռ վանդակներուն վրայ աչք նետեց, որոնք սուտակով, և համեմատաբար գոհարներով զարդարուած էին, և միանգամայն Ալատտին

զիտել տուաւ որ մի և նոյն ճոխութիւնն ունէր և սրահն՝ այնչափ հիացաւ սուլթանն որ անշարժ կեցաւ : Ատեն մը նոյն վիճակին մէջ մնալէն հտնէ :

«Վեզիր, ըսաւ այս պաշտօնէին որ իր քովն էր, ինչպէս կարելի է որ իմ թագաւորութեանս մէջ՝ և իմ պալատիս մօտ այսպիսի հոյակապ սրահ մը գտնուի, և մինչև ցայսօր ես չգիտնամ : — Ձեր վեհափառութիւնը, վրայ բերաւ վեզիրը, կը յիշէ անշուշտ որ առջի օր Ալատտինի հրաման տուիք ձերինին զիմացը պալատ մը շինելու, զինքն իրը փեսայ ճանչելով, այն օրն՝ արեւը մարը մտնելուն պալատ չկար նոյն տեղն, և երէկ պատիւ ունեցայ իմաց տալու ձեզ որ պալատը շինուած լմնցած է :

— Արշիշեմ, պատասխանեց սուլթանը, բայց երբէք չէի կրնար երևակայել որ այս պալատն աշխարհիս հրաշալիքներէն մին պիտի ըլլայ : Տիեզերաց ո՞ր կողմը կը գտնուի պալատ մ'որուն նիւթն ոսկի ու արծաթ ըլլայ՝ փոխանակ քարի և մարմարի, որուն պատուհաններն անդամանդով, սուտակով և զմրուխտով զարդարուած ըլլան : Ամենեկն աշխարհիս մէջ այսպիսի շէնքի մը յիշատակութիւնն եղած չէ :»

Սուլթանն ուղեց տեսնել և սքանչանալ քսան ու չորս վանդակներու գեղեցիկութեան վրայ : Չանոնք համբերով մինակ քսան երեք հատ գտաւ որ մի և նոյն շքեղութիւնն ունէին, և չափազանց զարմացաւ որ քսան ու չորրորդն անկատար մնացեր էր : «Վեզիր, ըսաւ, (վասն զի վեզիրը սրահ կը համարէր իր քովէն չհեռանալու) կը զարմանամ որ այսպիսի փառաւոր սրահ մ'այս կողմէն կ'սկսուար ձգուած ըլլայ : — Տէր իմ, վրայ բերաւ մեծ վեզիրը, կ'երևի թէ Ալատտին նեղի ընկած է և չէ կրցած այս պատուհանն ալ միաններուն պէս զարդարել. բայց հաւանական է որ պէտք եղած անդամանդներն ունի և ՚ի հարկին այս պատուհանն ալ պիտի շինել տայ :»

Ալատտին՝ որ քանի մը հրամաններ տալու համար սուլթանին քովէն հեռուցեր էր, նոյն միջոցին վրայ հասաւ : «Որդեակ իմ, ըսաւ անոր սուլթանն, աշխարհիս մէջ այս պալատդ միակ է և սքանչելի : Բան մը միայն իմ զարմանքս կը պատճառէ, այսինքն կը զիտեմ որ սա վանդակն անկատար մնացեր է : Միայն թէ մոռցար, յարեց նա, կամ

անհոգութիւն ըրիր, կամ թէ գործաւորները ժամանակ չունեցան այսպիսի ճարտար դործը միւրջանել:

— Տէր իմ, պատասխանեց Ալատսին, Ձեր վեհափառութեան մէջ բերած պատճառներէն և ոչ մէկուն համար է որ այս վանդակն արդի վիճակին մէջ կը տեսնէք: Կամառ կիսկատար ձեռքով է այն, և իմ հրամանաւս է որ գործաւորները չգպան, ուզեցի որ Ձեր վեհափառութեան դայ այն սրահն ու պալատն աւարտելու պարծանքը: Կաշերեմ որ իմ այս բարեմիա խորհուրդս ընդունիք, որպէս զի ձեզմէ ընդունած չորհրդս միշտ յիշեմ: — Եթէ այդ գիտմամբ գործը կիսկատար թողիր, վրայ բերաւ սուլթանը, կը հաւանիմ, հիմակ խօսոյն պիտի երթամ վանդակին շինութեան համար պէտք եղած հրամանները տալու:» Եւ արդարեւ հրաման տուաւ որ իր մայրաքաղաքին ամենէն հարուստ ակնավաճառներն ու ոսկերիչները կանչեն:

Սակայն սուլթանը սրահէն վար իջաւ, և Ալատսին՝ հարսանեաց օրն իշխանուհոյն տուած խնջոյքին սրահը տարաւ: Իշխանուհին ալ պահ մ'ետքն եկաւ, և սուլթան հայրն այնպիսի երեսով մ'ընդունեց որ կ'իմացուէր թէ շատ գոհ էր ամուսնութեան վրայ: Երկու սեղան դրուեցան, որոյ վրայ համադամներով լի ոսկի պնակներ շարեր էին: Սուլթանն առաջնոցն նստաւ և իր աղջկան, Ալատսինի և մեծ վէզիրին հետ ճաշեց: Երկրորդ սեղանին նստան բոլոր նախարարներն, և այս սեղանը շատ երկայն էր: Սուլթանը շատ հաւնեցաւ կերակուրներն, և խոստովանեցաւ որ երբէք այնպիսի համեղ կերակուրներ կերած չէր: Եղին ըստ նաև գինիին համար, որ իրօք զմայլելի էր: Սակայն աւելի ևս սքանչացաւ չորս մեծ դարաններու վրայ՝ որ առատ առատ սրուակներով, կոնքերով և բաժակներով ծածկուած էին և առ մէնն ալ անդամանդներով զարդարուած: Եղինպէս զմայլեցաւ երաժշտական խումբերուն վրայ որոնք սրահին մէջ կարդաւ շարուեր էին, մինչդեռ փողերն ու թմբուկները, դափերն ու սրինդներն՝ ակործելի գալու համար՝ բաւական հեռուէն կը հնչէին:

Այն միջոցին որ սուլթանը սեղանէն կ'ենէր՝ իմաց տուին իրեն որ կանչել տուած ակնավաճառներն ու ոսկերիչներն եկեր էին: Իսկոյն քսան չորս պատուհան ունեցող սրահն ելաւ, և իր ետեւէն դայող ակ-

նակավաճառներուն և ոսկերիչներուն կիսկատար վանդակը ցոյց ապրով, «Ձեզ կանչել առի, ըսաւ, որպէս զի սոյն պատուհանը շտկէք և միւսներուն յարմարցնէք, զանոնք քննեցէք, և առանց ժամանակ անցընելու նմանը շինեցէք:»

Ակնավաճառներն ու ոսկերիչները միւս քսան երեք վանդակներն ալ ուղով քննեցին, և միասին խորհրդակցելէն և ամէն մէկն իր կողմէն տալիք գոհարն որոշելէն ետեւ՝ եկան սուլթանին ներկայացան, և պալատին սուրբական ոսկերիչը բերանը բանալով՝ անոր ըսաւ, «Վեհափառ տէր, ամէնքնիս ալ պատրաստ ենք Ձեր վեհափառութեան հնազանդելու համար մեր բոլոր խնամքն ու ճարտարութիւնը գործածել, բայց մենք ամէնքնիս բաւական թանկացինք քարեր չունինք այսպիսի մեծ շէնք մ'աւարտելու համար: — Ես ունիմ, ըսաւ սուլթանն, և պէտք եղածէն աւելի ունիմ, եկէք իմ պալատս, պէտք եղածը ձեր առջևը կը գնեմ և դուք ընտրեցէք:»

Երբ սուլթանն իր պալատը դարձաւ, իր բոլոր անդամանդները բերել տուաւ, և ոսկերիչները շատ մ'առին, մանաւանդ Ալատսինի ընծայած գոհարներէն ընտրեցին: Բոլորն ալ գործածեցին, թէ և գործը շիջեցան վնջնել: Արեւն ուրիշ անգամանդներ առելու դարձան քանի մը անգամ, և մէկ ամիսուան մէջ գեւ ևս գործին կէտը դուրս հանած չէին: Սուլթանին ունեցած գոհարները գործածելէն ետեւ՝ վէզիրին տուածներն ալ բանեցան, և շատ շատ պատուհանին կէտը մնաց ՚ի կատար հանել կարող եղան:

Ալատսին քաջ կ'ստնայալ որ սուլթանն ընդ վայր կ'աշխատէր վանդակը միւսներուն պէս շինել տալ, և թէ իրբէք չսկսի գլուխ եխէ, ոսկերիչ և ակնավաճառ կանչել տուաւ և ապսպրեց անոնց որ ոչ միայն իրենց գործը գաղբեցնեն, այլև շինածնին տրեն և սուլթանէն ու վէզիրէն տուած անդամանդին իրենց տեղը դարձնեն:

Գործաւորներուն վնջ շարաթմուան մէջ շինած գործը քանի մը ժամու մէջ քակուեցաւ: Ամենքը ձգեցին գացին և Ալատսինն առանձին թողին սրահն: Այս ալ կանթեղը քաշեց իր ծոցէն և զայն շփեց խակոյն ձինն երեցաւ: «Շին, ըստ անոր Ալատսին, սպսպրեր էի քեզ որ այս սրահին քսան և չորս պատուհաններէն մէկն անկատար

Թողուս, և դու ալ այս պատուէրս կատարեր էիր. այժմ՝ քեզ կանչել տուի ըսելու որ այն պատուհանն ալ միւսներուն պէս աւարտես : Ճինն աներեւոյթ եղաւ, և Ալատաին սրահէն վար իջաւ : Շատ չանցաւ, նորէն վեր ելնելուն՝ պատուհանն իր փափաքածին պէս միւսներուն պէս դուռա :

Սակայն ակնավաճառներն ու ոսկերիչները պալատը հասան և սուլթանին առջև ներկայացան : Առաջին ակնավաճառն իր հետը բերած գոհարեղէնները տալով՝ սուլթանին ըսաւ միւսներուն կողմէն. «Ա.ե. հափառ տէր, քաջ դիտէք թէ քանի՛ ատենէ վեր կ'աշխատինք ամէն հնարաղիտութիւն գործածելով որպէս զի ձեր յանձնած գործը բլնցընենք : Արդէն գործը բաւական առաջ տարեր էինք երբ Ալատաին մեզ ստիպեց ոչ միայն դադրելու, այլև մեր շինածը քակելու և ձեր ու վէզիբին տուած գոհարներն ետ բերելու :» Սուլթանը հարցոյ թէ Ալատաին արդեօք ասոր պատճառը յայտնէր է, և երբ ըսին թէ իրենց բան մը չէ ըսած, հրաման տուաւ անմիջապէս որ իրեն ձի մը բերեն : Երբ ձին բերին, կը հեծնէ և լոկ քանի մը հետևակներով Ալատաինի պալատը կը քշէ : Հասնելուն վրայ կ'իջնէ և շիտակ բարձր սրահին սանդղէն անձայն վեր կ'իջնէ : Բայց Ալատաին պատահիլ այն տեղ դանուելով՝ կրցաւ պարտ ու պատշաճ յարգանք սուլթանն ընդունիլ գրան առջև :

Սուլթանը՝ գանդառելու ժամանակ չտալով Ալատաինի առանց աղգարարութեան այցի գալովը՝ պէտք եղած մարդավարութեամբ չկրնար ընդունելուն, անոր ըսաւ. «Որդեակ իմ, ես անձամբ եկայ հարցնելու թէ ի՞նչ պատճառաւ անկատար կը թողուս պալատիդ ամենէն փառաւոր և շքեղ սրահը :»

Ալատաին բուն պատճառը պահեց, որ էր թէ՛ սուլթանը բաւական անդամանդ չունէր այնչափ ծախուց հասնելու. բայց որպէս զի հասկըցնէ թէ իր պալատը ներկայ վիճակին մէջ՝ նրչափ դերագանաց էր ոչ միայն անոր, այլ աշխարհին ամէն պալատներէն, քանի որ ամենապղտիկ մէկ մասն ալ չկրցեր էր շինել տալ, անոր պատասխանեց. «Ա.ե. հափառ տէր, իբրա է որ Ձեր վեհափառութիւնն այս սրահը կ'իսկատար գտաւ, բայց կ'աղաչեմ որ հիմակ քննէ նայէ թէ արդեօք

բան մը կը պակսի՞ :»

Սուլթանը շիտակ պատուհանը գնաց՝ որուն վանդակին անկատար գրեր էր, և երբ նկատեց որ միւսներուն նման էր՝ կարծեց թէ սխալեցաւ : Ոչ միայն երկու կողմը գտնուած պատուհանները քննեց, այլև մի առ մի ամէն՝ ալ աչքէ անցուց, և երբ համոզուեցաւ որ քիչ ժամանակի մէջ շինուեր աւարտեր էր այն վանդակին որուն համար այնքան մարդ և անդամանդ գործածեր էր, Ալատաինը դրկեց և անոր ձակտէն պագաւ :

«Որդեակ իմ, ըսաւ անոր զարմանօք, դու ի՞նչ մարդ ես, դու որ այսպիսի հիանալի բաներ կը գործես ակնթարթի մը մէջ : Աշխարհիս մէջ նմանդ չունիս. և քեզ որչափ ձանչեմ, այնքան զարմանալի կը գտնեմ :»

Ալատաին մեծ համեստութեամբ ընդունեց սուլթանին գովեստներն, և անոր սա կերպով պատասխան տուաւ. «Ա.ե. հափառ տէր, մեծ պարծանք է ինձի համար ձեր բարետրտութեան արժանի ըլլալս. սակայն կը հաւաստեմ ձեզ, որ ոչ ինչ չպիտի խնայեմ հեռզհետէ երկու քին ալ առելի արժանի ըլլալու :»

Սուլթանն եկած կերպով իր պալատը դարձաւ, չթողլով որ Ալատաին իրեն ընկերանայ : Երբ հասաւ՝ մեծ վէզիբը գտաւ հոն որ իրեն կ'սպասէր : Սուլթանն՝ որ դեռ ևս հիացմամբ լի էր տեսած հրաշալիքին վրայ, այնպիսի կերպով մ'իր տպաւորութիւնը պատմեց այս բարձր պաշտօնէին որ վէզիբն ալ իրողութեան վրայ տարակոյս մը չունեցաւ, սակայն նորէն սա կարծիքին մէջ հաստատուեցաւ որ Ալատաինի պալատը կախարդութեան գործ մ'էր, և այս կարծիքը սուլթանին յայտնեց էր ճիշտ այն միջոցին որ պալատն երևան ելեր էր : Ա.ե.զիբը նոյն բանը կրկնել ուզեց : «Ա.ե.զիբ, ըսաւ սուլթանն անոր խօսքը կարելով, արդէն մի և նոյն բանն ըսիր ինձ, բայց կը դիտեմ որ դեռ չմոյցար իմ աղջկանս ամուսնութիւնը քու որդւոյդ հետ :»

Մեծ վէզիբն ակն յայտնի տեսաւ որ սուլթանը պաշարուեր էր. ուստի այս մասին հետը վիճարանիլ չուզեց, և թողուց որ նոյն կարծիքը պահէ : Սուլթանն ալ ամէն օր անկողնէն ելնելուն՝ անխախտ յա-

տուև սենեակ մը կ'երթար և անկից Ալատտինի պալատը կը նկատէր , նոյնպէս օրուան մէջ քանի մ'անգամ կ'երթար անոր վրայ սքանչանալու համար :

Ալատտին իր պալատին մէջ փակուած չէր նստեր . ամէն շաբաթ ինքզինքը ժողովրդին կը ցուցնէր , թէ մելիթն աղօթքի երթալուն՝ թէ աստն աստն վէզիւրին պոյն ելնելուն՝ որուն իր յարգանքը մատուցանելու երես կը բռնէր , կանոնաւոր կերպով , թէ զլիտաւոր նախարարաց՝ զոր ստէպ իր պալատը խնջոյքի կը հրաւիրէ՝ տեսութեան երթալու աստն : Ամէն անգամուն որ դուրս ելնէր իր ձիուն քովէն դացող երկու սպասաւորներու ձեռօք լիաձեռն ոսկի թափել կտար անցած փողոցներէն , և ժողովուրդն ալ խմբովին իրեն կը հետեւէր :

Ասիէ գառ՝ ինչ աղքատ որ Ալատտինի սպարանը ներկայանար՝ ունայնաձեռն ետ չէր դառնար և անոր հրամանաւ ատաւ պարգևներ կ'ստանար :

Որովհետև Ալատտին այնպէս մը կարգադրեր էր իր ժամանակն որ շաբաթը ղէթ անգամ մ'որսի կ'երթար երբեմն քաղքին շրջականներն՝ երբեմն աւելի հեռու տեղուանք , թէ ճամբան և թէ զիւղերը մի և նոյն առատաձեռնութիւնը կը ցուցնէր : Այս առատասիրտ ուղոյն պատճառաւ ժողովուրդն անպարզ զինքը կ'օրհնէր , և սովորաբար անոր զլիտոյն վրայ երգում կ'ընէին : Աւերջապէս՝ առանց սուլթանին ինթըր գրգռելու՝ որուն կանոնաւոր կերպով իր յարգանքը կը մատուցանէր , Ալատտին իր սիրայ իր և վեհանքն կերպերովը ժողովրդեան սէրը զբաւեր և ընդհանրապէս սուլթանէն աւելի սիրելի էր ամենուն : Այս գեղեցիկ հանգամանաց հետ ունէր նաև տէրութեան բարօրութեան համար մեծ եռանդ և արիւթիւն : Այս արիւթեան նշանները ցոյց տուաւ թագաւորութեան սահմանները ծագած արտատնտեսութեան մ'առ թիւ : Այն ինչ ինչպա որ սուլթանը մեծ բանակ մը կը պատրաստէր թշնամիները զստելու համար , որ անոր հրամանատարութիւնն իրեն տալու աղաչեց : Երբ զօրաց զլուին անցաւ՝ արտատնտեսութեան վրայ քալեց , և այս արշաւանաց աստն այնպիսի արագութիւն մը ցրց տուաւ որ սուլթանն անոր բռնակը հասնին ու արտատնտեսայ յաղթութիւնը կամ ցրտիւր մեկտեղ ինչպա :

Այս արիւթեան գործով բոլոր տէրութեան մէջ երևելի հանդիսացաւ , թէ և իր սիրայ չփոխեց : Յաղթական դարձաւ , բայց միշտ բարեսիրտ՝ ինչպէս որ միշտ եղեր էր :

Շատ տարիներէ վեր՝ մեր ըսածին պէս՝ Ալատտին կեանք կը վարէր , երբ կախարհն որ՝ առանց ուղեւու՝ իրեն բարձրանալուն պատճառ եղեր էր , զանի յիշեց յԱփրիկէ , ուր վերադարձեր էր : Թէև միշտ կաւծեր էր թէ Ալատտին խեղճութեամբ ձգած զբին մէջ մեներ էր , սակայն յանկարծ ուղեց հասկնալ թէ իրօք ինչ փախճան ունեցած է : Որովհետև անուանի գեանահարց էր , պահարանէ մը շտրքիւտ սի մը հանեց՝ որ փակ արկի մը ձեն ունէր , որով իր գեանահարցական գործողութիւնները կը կատարէր : Իր բազմոյցին վրայ կը նստի , քառակուսի տուփն իր առջևը կը դնէ , կը բանայ , և աւագը պատրաստելէն և հաստարկելէն ետև՝ հասկնալու մասօք թէ արգիւօք Ալատտին ստորե ըկրեայ վայրը մեռած է , կէտերը կը նետէ , պատկիւներ կը քաշէ և անուլ իր ժամագէտը կը շինէ : Ժամադէտը քննելով վճիտ տալու մասօք , փոխանակ Ալատտինը մեռած գտնելու , կը նայի որ անկից ելեր և երկրիս վրայ մեծ փառաօրութեան , հարստութեան պատուց մէջ կը դանախ և իշխանու հոյ մը հետ կարգուեր է :

Ափրիկեցի կախարհն այն ինչ իր գիւական արհեստին միջոցաւ խնայաւ որ Ալատտին այն բարձր վիճակին մէջ կը դանախ կրակ կտրեցաւ : Աստղութեան ինչն իրեն ըսաւ . «Այն գերձակին թափառական որդին կանթեզին յատկութիւնն ու զաղանկէն երևան հաներ է . կարծէի թէ անարտաճառ մեռած է , և ահա հիսուկ իր աշխատութեանց և ճգանց սրտուղը կը վայելէ : Պատի արդիւմ՝ որ աւելի երկար աստն վայելէ այն մեծութիւնը , կամ պիտի կորսուիմ » :

Իր ողջումը շատ մ'ըրաւ : Առատ կանուխ նոյնք մը հեծաւ և ճամբայ ելաւ : Իր նոյնը շրջաններէն չափ դաւար առնով միայն քաղքէ քաղք և գաւաէ գաւաւ անցաւ և Չինաստան հասաւ . ասկից ալ սուլթանին մայրաքաղաքն , ուր Ալատտին Աստղութաւոր իշխանուհին իրեն կին բրեր էր : Կան մ'իջա , և խոց մը վարձու բռնեց : Բոլոր օրն ու զիշերն այն անգանց ուրպէս զի իր ուղեորութեան խոնջէրն առնու :

Հեռանալ օրը՝ կախարհն ամէն բանէ առաջ՝ ուղեց գիտնալ թէ ի՞նչ կը խօսին Արատիին վրայ : Քաղաքը պարտելու ասեն նշանաւոր անձերու ամենէն շատ յաճախած տեղ մը մտաւ , ուր շատերը կ'այնին տեսակ մը տաք բմպելի (թէյ) խմել , որ իրեն ծանօթ էր առաջին ճամբորդութեան ժամանակէն : Այն ինչ ներս մտաւ և նստաւ որ նոյն բմպելիէն թաս մը լեցուցին և իրեն բերին տուին : Կախարհը զայն առնելով մինչդեռ ասդին անդին ականջ կը կախէր , լսեց որ Արատիին պալատին վրայ կը խօսին : Երբ թէյը խմեց՝ խօսողներուն մէկուն քովը գնաց , և յարմար առիթ մը գտնելով՝ հարցոց անոր ՚ի մասնաւորի թէ ի՞նչ էր այն պալատը զոր այնչափ կը դուլեն :

«Ահա կից կ'ասս , ըսաւ խօսակիցը . կ'երևի թէ նոր եկած ես , քանի որ չես տեսեր Արատին իշխանին պալատը , կամ թէ բեմ , եթէ անոր խօսքը լսած չես :» Պատրուպուտուր իշխանուհւոյն հետ կարգուելէն վեր Արատիին իշխան կ'անուանէին : «Զեմ՝ ըսեր , շարունակեց այս մարդն , որ աշխարհիս հրաշալիքներէն մէկն է , այլ կը սխալեմ թէ աշխարհիս միակ հրաշալիքն է : Երբէք անոր նման մեծ , շքեղ , գեղապանծ բան մը տեսնուած չէ : Արևի թէ շատ հեռուէն կ'ասս , քանի որ դեռ նոր անոր անունը կը լսես : Եւ արդարեւ պէտք է զանի ամենուրեք հռչակել՝ շինուելէն վեր : Գնանայէ անդամ՝ մը , և ինքնին պիտի գտնես թէ ճշմարտութեան հակառակ չեմ խօսած : — Ներէ իմ տղիտութեանս , վրայ բերաւ Ափրիկեցի վհուկը . դեռ երեկ հասայ , և իրօք շատ հեռաւոր աշխարհէ մը կ'կամ , այսինքն Ափրիկէի ծայրէն , այնպէս որ պալատին համբար տակաւին այն տեղ հասած չէր երբ մեկնեցայ : Եւ որովհետեւ զործս ստիպողական էր՝ միակ հոգս էր շուտով հագնիլ՝ առանց կայ առնլու և հարց ու փորձ ընելու , հետեւապէս տուած տեղեկութիւնները չցիտէի : Բայց պիտի երթամ անպատճառ զայն տեսնելու , այնչափ մեծ է անհամբերութիւնս որ հետաքրքրութիւնս այժմէն զո՛հ ընելու պատրաստ եմ , եթէ շնորհ ընէք ինձ նոր պալատին ճամբան ցոյց տալու :»

Վհուկին խօսակիցը յօժարակամ ցոյց տուաւ Արատիին պալատը տանող ճամբան , և վհուկն ալ իսկոյն ելաւ գնաց : Երբ հասաւ և պալատը մտնէն և չորս կողմէն մանր քննեց , տարակոյս չունեցաւ որ Ա-

լատին կանթեղին օգնութեամբը շինած է զայն : Աչ միայն Արատիին այսպիսի պալատ մը կառուցանել տալու անկարող էր , այլև այնպիսի հրաշքներ մինակ կանթեղին սպասաւորող գերիները կրնային ընել : Արատիին մեծութեան և երջանկութեան վրայ նախանձելով , որ սուլթանէն վար չէր մնար , իջեանած խանը դարձաւ :

Հարկ է հասկնալ թէ կանթեղն ո՞ւր էր , արդեօք Արատին իր քնվը կը պահէր թէ մասնաւոր տեղ մը կը գնէր . այս բանս գիտնալու համար գեանահարցական զործողութիւն մը պէտք էր : Աստի երբ իր բնակարանը հասաւ , իր քառակուսի տուփն ու առաջն առաւ , զոր իր հետը կը կրէր միշտ : Գործողութիւնն աւարտելէն ետեւ՝ հասկցաւ որ կանթեղն Արատիին պալատն էր , և այնքան ուրախացաւ այս գիտին վրայ , որ ինքզինքէն ելաւ : «Այն կանթեղը պիտի ձեռք ձգեմ , ըսաւ , և եթէ Արատին կարող է թող ելնէ նայիմ՝ արդիլէ իս և չթողու որ իր ստորին վիճակը նորէն գիտնեմ զինքը :»

Արատին իր սե բաղդէն որսի գացիր էր ութ օրուան համար և արդէն երեք օր անցիր էր , և ահա սա կերպով Ափրիկեցի վհուկն իմացաւ այս բանս : Երբ իրեն ուրախութիւն պատճառող զործողութիւնը լմնցոյ՝ գնաց խանին գոնապանը տեսնելու , անոր հետ խօսակցելու պատրուակաւ . և պատրաստ պատրուակ մ'ունէր իր ձեռքին տակ : Ըսաւ անոր թէ Արատիին պալատը նոր տեսեր է , և ամէն տեսածները չափէն աւելի դուլելէն ետեւ՝ յարեց . «Իմ հետաքրքրութիւնս ասով չբաւականանար , չպիտի հանդարտիմ մինչև որ այնպիսի հրաշալի պալատի մը տէրը չտեսնեմ : — Գժուարին չէ զանի տեսնել , պատասխանեց գոնապանն , երբ քաղաքն ըլլայ ամէն մարդ առիթ կ'ունենայ զանի տեսնելու , բայց երեք օրէ վեր որսի ելեր է և այս օրսն ութ օր պիտի տևէ :»

Ափրիկեցի կախարհն աւելի բան չհարցոց , գոնապանին քովէն հեռացաւ , և քաշուելու ասեն՝ «Ահա , ըսաւ ինքն իրեն , զործելու ժամանակը , պէտք չէ որ ձեռքէ փախցնեմ :» Կանթեղագործի մը խանութը : «Վարպետ , ըսաւ , տասն երկու հաս պղնձէ կանթեղի պէտք ունիմ , միթէ ունիս :» Կանթեղագործն ըսաւ անոր որ մէկ քանի հատ կը պակսի , բայց եթէ մինչև հետեւեալ օրուան սպասէ , ու-

դամ ժամուն կարող է պատրաստել և յանձնել : Կախարդը յանձն առաւ , և ապապրեց որ շատ մաքուր և ողորկ ըլլան . յետոյ խօսք տուաւ որ աւերօք պիտի վճարէ , և իր խանր քաշուեցաւ :

Հետեւեալ օրը տասն երկու կանթեղներն Վփրիկեցի վճուակին յանձնուեցան , որ խնդրուած դիմը տուաւ առանց ստակ մը կտրելու : Իր հետք յատկապէս բերած սագասի մը մէջ գրաւ զանոնք , և զայն թեւ լին անցնելով՝ Ալատախնի պալատին կողմը դնաց , և երբ մօտեցաւ սկսաւ սրտալ :

« Ո՞վ կ'ուզէ հին կանթեղներ նորերու հետ փոխել : »

Քանի մօտեցաւ և փողոցը խաղացող փոքրիկ տղաքն անոր ձայնը լսեցին՝ դէպ անոր վաղեցին և անոր բոլորտիքն առին , նախատական ազդեղանքն արձակեցին , և զանի խնդրի տեղ դրին : Անցորդներն անգամ անոր յիմարտ թիւնը ծաղր կ'ընէին , կարծելով թէ իրօք ծաղրելի է : « Անշուշտ , կ'ըսէին , փախուցած է , քանի որ հին կանթեղներ նորերու հետ փոխել կ'ուզէ : »

Վփրիկեցի վճուակն ոչ տղոց աղաղակները բանի տեղ գրաւ և ոչ անցնող դարձողներուն խօսքերն , և իր ապրանքը ծախելու համար , շարունակեց պրտալու :

« Ո՞վ կ'ուզէ հին կանթեղներ նորերու հետ փոխել : »

Այնչափ տեղւոյ մի և նոյն բանը կրկնեց՝ մի և նոյն տեղն երթալով գալով պալատին առջևն ու բոլորտիքն , որ Պատրուլուտուր իշխանուհին՝ որ նոյն միջոցին քսան չորս պատահան ունեցող սրահն էր , մարդու մը ձայն լսեց . բայց որովհետեւ չէր կրնար հասկնալ թէ ի՞նչ կը պրտայ այն մարդը՝ տղոց աղաղակներուն պատճառաւ որ անոր եւ տեւէն՝ կ'երթային , և որոց թիւր ժամէ ժամ կ'աւելնար , իր աղախնանքէն մէկը դրկեց , որ իրեն աւելի կը մօտենար հասկնալու համար թէ ի՞նչ էր այս ազմուկը :

Ազմուկնը շատ չանցաւ վեր ելաւ , և քահ քահ խնդալով ներս մտաւ : Այնպէս սրտանց կը խնդար որ իշխանուհին ալ անոր նայելով ախմայ ծիծաղիլ սկսաւ :

« Ան ուրեմն , փախուկ , ըսաւ իշխանուհին , չպիտի լսես թէ ինչ պատճառաւ կը ծիծաղիս : — Իշխանուհիս , պատասխանեց աղախինը

միշտ խնդալով , միթէ կարելի է չխնդալ տեսնելով մարդ մ'որ նոր կանթեղներով լեցան սապատ մը թեւն անցուցեր , կը պրտայ չէ թէ ծախելու այլ հին կանթեղներու հետ փոխելու համար : Իսկ շատ մը տղաքներ անոր չորս դին առեր են , և չեն թողուր որ յառաջանայ և այս ազմուկը կը հանեն զանի ծաղրելով :

Այս նկարագրին վրայ՝ ուրիշ աղախին մը սկսաւ խօսիլ . « Հին կանթեղի խօսք բացուելով միտքս եկաւ խորշին մէջ կեցած կանթեղն , արդեօք իշխանուհին տեսած է զայն . այն կանթեղին տէրը չպիտի բարկանայ անշուշտ եթէ հինի տեղ նոր մը դնան : Եթէ իշխանուհին հրաման տայ՝ մեծ հաճոյք պիտի զգայ անշուշտ փորձելով թէ արդեօք այս մարդն իրօք այնչափ խենդ է որ հին կանթեղի մը տեղ նոր մը տայ , առանց փոխարէնը խնդրելու : »

Ալատախին յիշած կանթեղը հրաշալի կանթեղն էր , որուն միջոցաւ Ալատախն այն իր բարձր վիճակին հասեր էր . ինքն իր ձեռօքը պատին խորշին մէջ դրեր էր որսի երթալէն առաջ՝ վախճալով որ կը կորստի , և ամէն անդամուն որ երթար այս զգուշութիւնը կ'առնուր : Բայց մինչև այն ատեն ոչ աղախիններն , ոչ ներքինիներն և ոչ իսկ իշխանուհին այն կանթեղը չէին դիտեր՝ Ալատախին բացակայութեան ժամանակ . իսկ որսէն դառնալուն՝ կանթեղը միշտ իր վրան կը կրէր : Ալատախին զգուշութիւնը լաւ էր , բայց դռնէ հարկ էր կանթեղը բալլիքի տակ դնել : Այս իրաւ է , բայց մարդս ամէն ատեն այսպիսի սխալմունքներ կ'ընէ :

Պատրուլուտուր իշխանուհին՝ որ չգիտեր թէ կանթեղն այնքան թանկագին բան մ'էր , և թէ Ալատախն կը փափաքէր որ անոր չգուչին և աղէկ պահեն , կատակ ընել ուղեց , և հրամայեց ներքինի մը որ զայն առնու և տանի նորին հետ փոխէ : Ներքինին այս պատուէրը կատարեց : Սրահէն վար իջաւ , և այն ինչ պալատին դռնէն դուրս ելաւ որ Վփրիկեցի վճուակը տեսաւ , կանչեց , և երբ սա իրեն եկաւ՝ հին կանթեղը ցցուց և անոր ըսաւ . « Ասոր տեղ ինձի նոր կանթեղ մը տուր : »

Վփրիկեցի վճուակն աներկմիտ էր որ իր վնասած կանթեղն է այն , և Ալատախին պալատին մէջ անորմէ՛ զատ կանթեղ մը չէր կրնար

դանուիլ, քանի որ ամէն անօթնեան արծթէ և ոսկիէ էին. իսկոյն ներքինին ձեռքէն առաւ, և ծոցը դնելէն ետև՝ իր սապատը ներկայացուց և ըսաւ անոր որ հաւանածն ընտրէ: Ներքինին ընտրեց, և վճուկը թողլէն ետև, նոր կանթեղը Պատրուլուտուր իշխանուհւոյն տարաւ. սակայն հազիւ թէ այս փոխանակութիւնն եղիւր էր որ աղաք սկսան աւելի բարձր աղաղակներ արձակել, վճուկին խենդութեանը վրայ՝ իրենց կարծեօքը ծաղրելով:

Վերիկեցի վճուկը թողուց որ ուզածուն չափ պոռպոտան, և Ալատոխին պալատին կողմերը մնալ չուզելով՝ կամացուկ և անձայն անկից հեռացաւ, այսինքն նորէն չարոաց չկանչեց թէ կ'ուզէ նոր կանթեղները հիներու հետ փոփոխել. վասն զի իր փնտածը դտեր էր և անով գոհ էր. ուստի լուծեանը պատճառաւ աղաքը հեռացան և թողուցին որ իր ճամբան շարունակէ:

Երբ այն կողմերէն հեռացաւ՝ անբանուկ ճամբաներէ գնաց, և որովհետև ոչ ուրիշ կանթեղի և ոչ սապատի պէտք ունէր, նոյն սապատը կանթեղներով փողոցի մը մէջ տեղ դրաւ ուր մարդ մը չկար: Այն ատեն նոր փողոց մը մտնելուն՝ սկսաւ շտապաւ քաշել մինչև որ քաղքին մէկ գուռը հասաւ: Արուարձանին կողմէն՝ որ շատ երկար էր, իր ճամբան շարունակելով՝ քիչ մը պաշար գնեց գուռս ելնելէն առաջ: Երբ դաշտերն ելաւ, ծածուկ տեղ մը՝ արահետէն հեռու՝ քաշուեցաւ, և այն տեղ սպասեց մինչև որ իր խորհուրդն ի գործ գնելու պատեհ ժամը գտնէ: Իր իջած օթեանն երիվարը ձգելուն հոգ չըրաւ, վասն զի ստացած գանձն ամէն բան կը փոխարինէր:

Վերիկեցի վճուկը մինչև իրկուն հոն մնաց և երբ բոլորովին մոթը կոխեց՝ ծոցէն կանթեղը հանեց և զայն շփեց: Այս կաշման ճինն երևցաւ:

«Ի՞նչ կ'ուզես, հարցուց անոր ճինն, ահա պատրաստ եմ քեզ հնազանդելու, իբր քու գերիգ և կանթեղին բոլոր տեսաց գերին, ես և իմ մրս գերիներս:

— Ար պահանջեմ, վրայ բերաւ վճուկն, որ անմիջապէս կանթեղին մրս գերիներուն կամ քու շինած պալատի այս քաղքէն վերցնես, ներկայ վիճակին մէջ՝ բոլոր մարդերովը և զայն ինձի հետ փոխադրես

Վերիկի այն ինչ կողմն: Առանց պատասխան տալու՝ ճինն՝ ուրիշ ճինեղու հետ՝ որ նոյնպէս կանթեղին գերինն էին, զանի և բոլոր պալատը քիչ ատենի մէջ վճուկին ապստամբ կողմը փոխադրեց: Վերիկեցի վճուկը՝ պալատին և Պատրուլուտուր իշխանուհւոյն հետ՝ Վերիկե պիտի թողուր՝ սուլթանին զարմացման վրայ խօսելու համար:

Այն ինչ սուլթանն ելաւ՝ իր սովորութեան համեմատ՝ իր բաց դահլիճը գնաց՝ Ալատոխին պալատը նկատելու և անոր վրայ զմայլելու համար: Աչքը պալատին կողմը նետեց, և մինակ պարսպ տեղ մը տեսաւ, ինչպէս որ պալատը չէինուած կը գտնուէր: Կարծեց թէ կը սխալի, աչքերը շփեց, բայց առաջուան սէս բան մը չտեսաւ, թէ և օդը պայծառ էր, երկինքը յստակ, և արշաղոյնն որ նոր ելնելու վրայ էր՝ ամէն առարկաներն ակն յայտնի կը ցույցնէր: Երկու պատուհաններէն աջ ու ահետէ նայեցաւ և սովորաբար տեսած բաները նորէն տեսաւ: Իր զարմանքն այնքան մեծ եղաւ որ նոյն տեղն երկար ատեն մնաց, աչքը պալատին կողմը դարձած որ նոյն միջոցին աներեւոյթ եղեր էր, և չկրնալով հասկնալ թէ ինչպէս Ալատոխին պալատին սէս մեծ և ակներև պալատ մը, պալատ մը զոր իր հրամանաւը շինուած օրէն ամէն օր կը տեսնէր և գեռ առջի օրն ալ տեսեր էր, լիովին աներեւոյթ ըլլայ և անոր հետքն անգամ չտեսնուի: «Չեմ տեսլիր, կ'ըսէր սուլթանն առանձին, ահա սա տեղն էր պալատն, եթէ փլած ըլլար՝ անոր նիւթերը պիտի տեսնուէին կոյտ կոյտ, և եթէ գետնին տակն ալ անցած ըլլար՝ անտարակոյս անոր մէկ նշանը կը մնար:»

Սուլթանը թէ և սպահով էր որ պալատն իր տեղը չէ, սակայն դարձեալ քիչ մը սպասեց պիտելու համար թէ իրօք պատրանք մը չըլլայ: Ի վերջէ՝ քաշուեցաւ, և հեռանալէն առաջ անգամ մը նայեցին ետև՝ իր սենեակը դարձաւ և հրամայեց որ անմիջապէս իր մեծ վէպիւրը կանչեն, և նոյն միջոցին նստելով՝ այլ և այլ մտնաուքի մէջ յուզեալ մնաց և չզիտէր թէ ինչ ընէ:

Մեծ վէպիւրը շուտով եկաւ, և այնպէս արտորաց, որ ոչ ինքն և ոչ իր մարդիկը չզիտեցին անցնելու ատեն որ Ալատոխին պալատն իր տեղը չէր. նոյն իսկ դռնապանները պալատին գուռը բանալու ատեն ուշադրութիւն չըրին:

Սուլթանին մտանալով՝ «Վեհափառ տէր, ըստ անոր վէզիրն, այնչափ շտապու իս կանչել տուիք որ մտածեցի թէ արտաքոյ կարգի բան մը պատահած պիտի ըլլայ, վասն զի քաջզիտեք որ այսօր ժողովի օր է և ես ալ որոշեալ ժաման իմ պարտքս կատարելու մտադիր էի: — Արդարև պատահածն արտաքոյ կարգի բան մ'է, ինպէս որ կ'ըսես, և զու ալ պիտի խոստովանիս: Ըսէ ինձ թէ ուր է Ալատտինի պալատն: — Ալատտինի պալատը մի, տէր իմ, պատասխանեց մեծ վէզիրը զարմանօք, հիմակ անոր առջևէն անցայ, և կարծեմ թէ իր տեղն էր, անոր պէս հաստատուն շէնքեր գիւրառ տեղ չեն փոփոխ: — Գնա, դահլճէս գիտէ, պատասխանեց սուլթանն, և սպա եկուր ըսէ ինձ եթէ նոյն տեղն է:»

Մեծ վէզիրը պատշգամն հրաւ, և սուլթանին զոյցած ու տեսածն իրեն ալ պատահեցաւ: Երբ լիովին համոզուեցաւ որ Ալատտինի պալատն իր առջի տեղը չէ և անոր հետքն անգամ չտեսնուի, դարձաւ և սուլթանին ներկայացաւ:

«Լնու ուրեմն, միթէ Ալատտինի պալատը տեսնոր, հարցոյց անոր սուլթանը: — Տէր իմ, պատասխանեց մեծ վէզիրը, Ձեր վեհափառ ու թիւնը կը յիշէ անշուշտ որ պիտի ունեցայ անգամ մ'ըսելու որ այն պալատն իր անբառ դանձերով կախարդութեան և կախարդի մը գործ է, սակայն Ձեր վեհափառութիւնն այն ատեն ականջ չիսիսեց խօսքիս:»

Սուլթանը վէզիրին ըսածը հաստատելով՝ այնչափ սատիկ բարկացաւ որչափ որ իր գիւրահաւանութիւնն ակնհայտ էր: «Քէր է, ըսաւ, այն խաբերան, այն անողամն, որ գլուխը կարել աամ: — Տէր իմ, վրայ բերաւ մեծ վէզիրը, քանի մ'օր առաջ եկաւ Ձեր վեհափառութեան հրաման ուղեց գուրս երթալու, պէտք է մարդ զրկել անոր և հարցնել թէ ուր է իր պալատն, անշուշտ պիտի գիտնայ:»

— Այդ կերպով մեծ ներօտախոսութիւն ցոյց տուած կ'ըլլամ անոր, պատասխանեց սուլթանը, գնա հրաման տուր իմ երեսուն գերկներուս որ շղթայակալ իմ առջև բերեն զանի:» Մեծ վէզիրը գնաց սուլթանին հրամանը յայտնեց գործակատարներուն, և հասկցոյց անոնց մեծին թէ ինչ լնթացք բռնել պէտք է, որպէս զի ձեռքէն չփակցնէ

Ալատտինն: Աստի ճամբայ ելան, և քաղքէն հինգ վեց մըն հեռու Ալատտինի հանդիսիցան, որ որսորդութենէ կը դառնար նոյն միջոցին: Գլխաւոր պաշտօնատարն ըսաւ անոր մտանալով՝ որ սուլթանը զերեք տեսնելու անհամբեր ըլլալով՝ զիրենք զրկեր էր որ կանչեն զինքն և մէկտեղ քաղաք դառնան:

Ալատտին ըսաւ կտակած մը չառաւ թէ սուլթանն այն պաշտօնատարներն ինչո՞ւ համար զրկեր էր. որսորդութիւն ընելով ճամբան շարունակեց գէպ 'ի քաղաքը, բայց երբ քաղքին կէս մըն մնալով մտեցաւ, այն պահապան զօրքերը զինքը պաշարեցին և զլխաւորն Ալատտինի ըսաւ. «Ալատտին իշխան, ցաւօք սրտի քեզի կը յայտնեք սուլթանին հրամանն որ է քեզ ձերբակալ ընել և իրր տէրութեան յանցաւոր տանել, կը պաղատինք քեզ որ գժարդ չլայ եթէ կը պարտաւորինք սուլթանին հրամանը կատարելու և մեզ ներելու:»

Այս յայտարարութեան վրայ Ալատտին չափազանց զարմացաւ, քանի որ անմեղ էր. հարցոյց սպային թէ արդեօք գիտէ ինչ յանցանք ունի: Կնքն ու մարդիկը պատասխան տուին թէ չեն գիտեր:

Ալատտին տեսնելով որ իր մարդիկն եկած գնդէն աւելի քիչոր են, նա մանաւանդ իր քովէն կը հեռանան կերթան, ձիէն վար իջաւ: «Վհա անձնատուր կ'ըլլամ, ձեր հրամանը կատարեցէք: Սակայն կը սնդեմ որ յանցանք մը չունիմ ոչ սուլթանին և ոչ տէրութեան առջև:» Անմիջապէս Ալատտինի վզէն խոշոր ու երկայն շղթայ մ'անցուցին, և անով մէջքը կապեցին այնպէս որ թևերն ալ կապուած մնայ: Երբ պաշտօնակալն իր գնդին գլուխն անցաւ, զօրական մը շղթային ծայրը բռնեց, և Ալատտինն առաջնորդեց. այս ալ ստիպուեցաւ հետիոտն անոր հետեւելու մինչև քաղաքը:

Երբ ձիաւորներն աւանդ մտան, զանի ամենէն առաջ տեսնողներն աներկբայ էին որ տէրութեան գէմ յանցանք գործած է և գլուխը կտրելու կը տանին: Արովհետև սիրելի էր Ալատտին առ հասարակ բոլոր ժողովրդեան՝ ոմանք սուր և ուրիշ զէնքեր, ոմանք քարեր առին և զորակամներուն ետևէն գացին: Ոմանք ալ՝ որ ետևէն կ'այլին, պաշտ մ'ըլլին այնպէս որ ամբողջը բռնել կ'ուզէն, սակայն ետքէն այնքան շտապան, որ ձիաւորներն այս բազմութիւնը չտեսնելու զարկին, և

գորհ պիտի ըլլային եթէ սուլթանին պալատը հասնէին՝ Ալտոտինն իրենց ձեռքէն ազատելէն առաջ: Այս նպատակաւ՝ ամէն անգամուն որ լայն կամ նեղ փողոց մը կը մտնէին՝ բոլոր փողոցը կը բռնէին, մերթ տարածուելով և մերթ քովէ քով գալով, և այսպէս պալատին առջևի հրասպարակը հասան, և ամէնքը նոյն դժին վրայ կեցան, զխուռած ժողովրդեան ձակատ բռնելով՝ մինչև որ պաշտօնակալն Ալտոտինի հետ պալատը մտաւ, և գոնապահները գոները գոցեցին որ խուժանը ներս չմտնէ:

ՉԱլտոտին սուլթանին առջևը տարին՝ որ անոր կ'սպասէր պատշգամին վրայ վէզիբին հետ. այն ինչ Ալտոտինը տեսաւ, հրամայեց այն տեղ իր հրամանաւր դանուող դահձին՝ որ անոր գլուխը կտրէ, առանց խօսք մտիկ ընելու կամ բացատրութիւն մը խնդրելու:

Երբ դահձին Ալտոտինը բռնեց, վզէն և մարմնոյն վրայէն շղթան հանեց, և հողին վրայ կաշի մը դնելէն ետեւ՝ զոր շատ մը յանցաւորներու արիւնովներկեր էր՝ զանի ծնկի վրայ բերաւ և աչքերը կապեց: Այն ատեն թուրը քաշեց, նշան առաւ հարուածը տալու համար, նստելով և երեք անգամ դէնքն օղին մէջ շողացնելով, և սպասեց որ սուլթանը հրաման տայ Ալտոտինի գլուխը կտրելու:

Նոյն պահուն՝ մեծ վէզիբը տեսաւ որ խուժանը՝ զօրքերը վանելով՝ պալատին պատերը մտցրիւ էր ամէն կողմէն և խրամատ մը բանալու համար կը փլէր: Սուլթանն իր հրամանը տալէն առաջ՝ վէզիբն ահոր ըսաւ. «Վեհափառ տէր, կ'աղաչեմ որ կանխաւ մտածէք ձեր ընելիք գործին վրայ, վտանդ կայ որ պալատը կոխեն, և եթէ այսպիսի դէպք մը պատահի, կրնայ ազէտալի հետեանքներ ունենալ: — Իմ պաշտօս մի կոխեն, վրայ բերաւ սուլթանն, ով կրնայ այսպիսի յանդգնութիւն մ'ունենալ: — Վեհափառ տէր, պատասխանեց մեծ վէզիբը, շնորհ ըրէք անգամ մը ձեր աչքը պալատին և հրասպարակին վրայ նետել, և այն ատեն պիտի վրայէք ըսած իս ճշմարտութեան:»

Սուլթանն այնչափ սաբասի զոսց երբ այն զայրացած ապստամբները տեսաւ, որ իսկոյն հրամայեց դահձին որ թուրը պատեանը դնէ, Ալտոտինի կապերը քակէ և ազատ թողու: Նոյնպէս շաբաթին պատուիրեց որ երթայ ամէն կողմը հրատարակէ թէ սուլթանն անոր նե-

րում կը շնորհէ և թէ ամէն մարդ կրնայ իր տեղը քաշուիլ:

Այն ատեն պալատին պառեբուն վրայ եհնողներն՝ անցած զացածին ականատես ըլլալով՝ իրենց խորհրդէն ետ կեցան: Քիչ ատենուան մէջ իջան, և չափազանց ուրախ ըլլալով որ իրենց սրտաղին սիրած մէկ մարդուն կեանքն ազատեցին, այս լուրն ամէնուն իմացուցին. նոյն ձայնը պալատին մայտանը կեցող խուժանին ականջն ալ հասաւ. նոյնպէս շաբաթներուան աղաղակներն ալ՝ որ մի և նոյն բանը պատշգամներէն կը հռչակէին՝ բոլորովին հասարակութեան սիրտը հանգարտեցուցին: Ալտոտինի հետ այսպէս արդարութեամբ վարուելուն և ներելուն՝ ժողովուրդը զէնքը մ կղի ձգեց, և անզգայօրէն ամէն մարդ իր տունը քաշուեցաւ:

Երբ Ալտոտին ինքզինքն ազատ դատաւ գլուխը գէպ 'ի պատշգամը դարձուց և սուլթանը տեսնելով՝ «Վեհափառ տէր, ըսաւ անոր՝ սրտաշարժ կերպով՝ ձայնը բարձրացնելով, կ'աղաչեմ Ձեր վեհափառութիւնն որ ինձ արդէն ըրած շնորհին նոր շնորհ մ'ալ աւելցնէք, այսինքն յայտնէք ինձ թէ ի՞նչ է իմ յանցանքս:

— Ի՞նչ է յանցանքդ, պատասխանեց սուլթանն. և միթէ չե՞ս զիտներ: Վեր ելիք, յարեց նա, հիմակ քեզի պիտի յայտնեմ: Ալտոտին վեր ելաւ, և երբ սուլթանին մօտ եկաւ, «Հիմակ ետեւս եկուր՝ ըստ անոր սուլթանն՝ անոր առջևէն քալելով առանց երեսը նայելու: Բարձր դահձիքը տարաւ զանի, և երբ գրան մօտ հասաւ, «Ներս մտիք, ըսաւ անոր սուլթանը, պէտք է զիտնաս թէ պալատդ ո՞ր է. չորս կողմը նայէ, զիտե և ըսէ ինձ թէ ի՞նչ է եղաւ այն պալատդ:»

Ալտոտին կը նայի և բան մը չտեսներ, իր պալատին բռնած բոլոր վայրը կը տեսնէ իրաւ, բայց որովհետեւ չէր կարող դուռակել թէ ինչ պէս անհետ եղեր է, այս տարօրինակ և զարմանալի դէպքն այնպէս շփոթութեամբ և հիացմամբ պաշարեցին իր միտքն որ բաւ մ'անգամ սուլթանին ըսելու անկարող եղաւ:

Սուլթանն անհամբեր՝ նօրէն կրկնեց. «Ըսէ ինձ ուրեմն, Ալտոտին, ո՞ր է պալատդ, ո՞ր է աղջիկս:» Այն ատեն Ալտոտին լուռութիւնը խղեց: «Տէր իմ, ըսաւ, կը դիտեմ որ իրօք շինել տուած պալատս իր տեղը չէ. կը նայիմ որ աներևոյթ եղեր է, և չեմ կրնար

Չեր վեհասիտութեան բնել թէ ուր է . բայց կը հաստատեմ որ այս գէպքին ես բնաւ մասնակից չեմ եղած :

— Բնաւ փոյթս չէ թէ պալատդ կ'նչ եղած է , վրայ բերաւ սուլ թանն . իմ աղջիկս միշինն անգամ աւելի կ'արժէ աչքին : Կը պահանջեմ որ զանի գանես , թէ ոչ գլուխդ պիտի կարել տամ , և բան մը չկրնար արդելք ըլլալ այս վրէժս առնելու :

— Տէր իմ , պատասխանեց Ալատտին , Չեր վեհասիտութենէ կը խնդրեմ որ ինձ քառսուն օր չնորհէք պէտք եղած խողարկութիւններն ընելու համար , և եթէ այս միջոցիս , չյաջողիմ , խօսք կտամ որ գլուխս ձեր գահին առջև պիտի բերեմ զնեմ և այն ատեն ինչ որ կուզէք ըրէք :

— Խնդրած քառսուն օրդ կը չնորհեմ , ըսաւ անոր սուլթանը . բայց նայէ որ ըրած չնորհն շարաշար չյործածես՝ իմ վրէժխնդրութենէս խոյս տալու փորձելով . աշխարհիս որ կողմն ալ երթամ՝ քեզ գարձեալ կրնամ գտնել :

Ալատտին սուլթանին առջևէն հեռացաւ դնաց յետին նուաստութեան և ողորմելի վիճակի մը մէջ . պալատին բակերէն դիտելուր անցաւ դնաց շփոթութեամբ , և պալատի դիտար պաշտօնատարներն՝ որոնք իր աղէկութիւնը տեսեր էին , փոխանակ Ալատտինի մօտենալու և մոխթարելով հիւրընկալելու , կոնակնին դարձուցին որ չտեսնեն զանի և ինքն ալ գիրենք չտեսնէ : Բայց եթէ Ալատտինի անդամ մօտենալով անոր քանի մը մոխթարական խօսքեր ալ ըսէին զինքը չսիրտի ճանչէին , վասն զի ինքզինքէն ելեր և մտքի աղատութիւնը կորուսեր էր : Այս մտքի ցնորքը յայտնեց երբ պալատէն դուրս ելաւ , վասն զի իր ըրածին միտ գնելով՝ գունձ գուռ կը հարցնէր իր հանդիպած մարդոց թէ արդեօք պալատը տեսեր են և անոր վրայ կրնան լուր մը տալ :

Այս հարցումներէն ամէն մարդ կարծեր թէ Ալատտին խելքը թռուցեր է . տեսնք սկսան ծիծաղիլ , բայց խելացի մալիկը , մանաւանդ անուր որ Ալատտինի հետ բարեկամութեամբ կամ առեւտրական գործով կապուեր էին , կարեկցութեամբ անոր նայեցան : Երեք օր քաղաքը մնաց ատրիս անդին գեղերելով , և ողորմաւէր մարդոց

տուածով կ'սպրէր առանց որոշում մ'ընելու :

Աերջասկէ՛ն չկրնարով այն դժբաղդ վիճակին մէջ աւելի ևս մնալ , քաղաքէ մ'ուր պանծալի եղեր էր , դուրս ելաւ և գէպ ՚ի գաշաերը զարկաւ : Մեծ ճամբաներէ խոյս տարով շատ մը գեղերէ անցնելէ ետեւ՝ անհնարին մաստանջութեան մէջ՝ երեկոյեան գէմ գեալ մ'եղերքը հասաւ : Այն տեղ յուսահատութեան գործ մ'ընել ուզեց :

«Աւր երթամ պիտի պալատս վնասելու , ըսաւ ինքն իրեն . աշխարհիս ո՞ր երկիրն , ո՞ր գաւառը պիտի կարենամ գտնել զայն իմ իշխանութիւս ալ մեկտեղ : Երբէք չսիրտի յաջողիմ՝ ուստի այս ցտեղէն և կսկիծալի վիշտերէս աղաւել պէտք եմ , քանի որ յոյս մը չունիմ :» Երբն պահուն գետը պիտի նետուէր՝ ըրած որոշման վրայ , բայց՝ իբր բարի մահ մտական՝ արժան գատեց նախ աղօթքն ընել և սպասելով : Այս գործիս պատրաստուելու և ձեռքերն ու երեսը լուսաւ համար դետին մօտեցաւ՝ քաղքին սուրբութեան համեմատ . բայց որովհետեւ դետին այն կողմը քիչ մը դառ ՚ի վայր էր և ջրէն թրջած , սահեցաւ , և անտարակոյս գետը պիտի իջար եթէ ջրէն երկու ուրով վեր յցուած ժայռի մը չլլուէր : Բարեբաղդ օրէն Ափրիկեցի վճուղին տուած մասնին դեռ մասն էր , և որով գացեր էր ստորերկրեայ վայրէն հրաշալի կանթեղն առնուլ , և այս ալ հիմնով յափշտակեր էին : Այս մասնին ուժգին շփուելով ժայռին երբ զայն բռնել աղեց , իսկոյն գուրին մէջ երեցած ձինը հասաւ և անոր ըսաւ .

«Ի՞նչ կ'ուզես : Ահա պատրաստ եմ քեզի հնազանդելու , իբր քու և այդ մասնին ունեցաւն բուն գերին , ես և մասնին միւս գերինները :»

Ալատտին ստատիկ ասոր թելով այս անակակալ երեւոյթէն այնպիսի ժամանակ մ'որ յուսահատութենէ պաշարուեր էր , պատասխանեց . «Ճին , նորէն կեանքս աղատէ , և յայտնէ ինձ թէ ուր է շինել տուած պալատս , և կամ այնպէս բրէ որ նուէն առջի տեղը գրուի : — Խնդրածդ իմ կարողութենէս վեր է , պատասխանեց ձինն , ես միայն մասնին գերին եմ . կանթեղին գերին դիմէ : — Եթէ այդպէս է , վրայ բերաւ Ալատտին , մասնին զօրութեամբ կը խնդրեմ՝ քեզնէ որ պալատիս գտնուած տեղն , աշխարհիս ո՞ր կողմն ալ ըլլայ , իս տանիս ,

և Պատրուլյուտուր իշխանուհւոյն պատուհաններուն տակը ձգես :
Այն ինչ խօսքն աւարակց որ ճիւղը դիմքն Ափրիկէ փոխադրեց . մար-
դազեանի մը մէջ տեղ ուր պաշտօրը կը գտնուէր , մեծ քողքէ մը հե-
ռու , և Պատրուլյուտուր իշխանուհւոյն պատուհաններուն տակ ձգե-
լով ձգեց դնաց : Այս ամէնը մէկ վայրկեանի մէջ կատարուեցաւ :

Թէև գիշերը շատ մութ էր , Ալատտին իր պաշտանու Պատրուլ-
պուտուր իշխանուհւոյն սենեակը քաջ ճանշեց , բայց որովհետև առեկն
ուշ էր և ամէն բան հանդարտ էր պաշտանի մէջ , քիչ մը հեռացաւ և
ծառի մ'ոտքը նստաւ : Այս տեղ յուսով լցուած՝ իր երջանկութեան
վրայ կը խորհէր , զոր դիպումածի մը պարտաւոր էր , և ձերբակալ ե-
ղած օրէն աւելի հանդիստ վիճակի մէջ ինքզինքը կը գտնէր : Այս
մտմտութեամբ ժամեր անցուց , բայց վերջապէս՝ հինգ վեց օրէ վեր
քնացած չըլլալուն՝ քունը կոխեց և այն ծառին ոտքը մը քափեց :

Հետեւեալ օրն՝ արշալոյսն երևելուն՝ Ալատտին թռչուց երգերէն
արթնցաւ , որոնք գիշերն իր ծառին վրայ անցուցեր , և շատեր ալ իր
պարտիզին թփերուն վրայ դադարեւր էին : Նախ իր աչքն այն սքանչե-
լի շէնքին վրայ նետեց , և այն առեկն անպատում ուրախութիւն զգաց
որ անոր փրանալու կէտը հասած է , և նոյն պահուն իր սիրական
Պատրուլյուտուր իշխանուհւոյն ստանալու : Քիչ մ'առեկն պատուհան-
ներուն տակը պարտեցաւ , սպասելով որ արևն ելնելուն գինըր տեսնէ :
Այս յուսով ինքն ինքնին կը վնտուէր թէ հոսից այս գժբաղդութիւնը
պատահած է իրեն . շատ մը խորհերէն ետև՝ անկասկած եղաւ որ բո-
լոր իր ձախողութեան պատճառը կանթեղէն հեռանալն եղած է : Իր
անհողութիւնը գորովեց և ցուեցաւ որ սրահ մը նոյն կանթեղը ձգեր
է : Ամենէն աւելի գինըր շփոթողն այս էր որ չէր կրնար երևակայել
թէ իր երջանկութեան նախանձօղն նալ էր : Ենտարախոյս սխալ կարե-
նար գտնել , եթէ գիտնար որ ինքն ու պաշտան Ափրիկէ կը գտնուին ,
սակայն մասնիկն զերկն ճինն այս մասին անոր բան մ'ըսած չէր , ինքն
ալ հարց ու փորձ չէր ըրած : Մի միայն Ափրիկէի անունը կարող էր
անոր մտքը բերել Ափրիկեցի վճակն , իր անհաշտ թշնամին :

Պատրուլյուտուր իշխանուհւոյն իր ստորակամին աւելի կանուխ
կ'արթնար , հնարապէտ վճու կին միջոցաւ Ափրիկէ փոխադրուէին

վեր , և ամէն օր մի անդամ զանի տեսնելու կը հանդուրժէր , որովհե-
տև պաշտանի տէրն այն էր : Բայց ամէն անդամուն այնքան խտիւ վա-
րուեր էր հետն , որ նոյն պաշտանի մէջ բնակելու համար ձակութիւն
չէր առած : Երբ հարուեցաւ , իր կիսերէն մէկը վանդակէ մը նայելով
Ալատտինը կը տեսնէ : Անմիջապէս կ'երթայ իր սիրուհւոյն բանը կ'ի-
մայնէ : Իշխանուհւոյն՝ որ այս լուքն իր ստոյգ չէր կրնար ընդունիլ ,
խեղցն պատահանը կը վաղէ , և Ալատտինը կը տեսնէ : Անդակը կը
բանայ : Իշխանուհւոյն վանդակը բանալու առեկն՝ Ալատտին անոր հա-
նած ձայնէն զլուխը վեր կը վերցնէ , զանի կը ճանչէ , և այնպիսի
գեղքով մը զանի կը բարևէ որմէ կ'իմացուի թէ չափազանց ուրախ է :
«Առանց ժամանակ անցնելու , ըսաւ անոր իշխանուհւոյն , դադարի դու-
սը դացին բանալու , ներս մտիք և վեր ելիք :» Եւ ապա վանդակը գո-
ցեց :

Գաղտնի գոռը Պատրուլյուտուր իշխանուհւոյն սենեկին վրան էր .
խեղցն բացուեցաւ և Ալատտին իշխանուհւոյն սենեակը մտաւ : Կարելի
չէ բացատրել թէ ինչ ուրախութիւն զգացին էրիկ կիսիկ երբ իրար
տեսան , մինչդեռ կարծէին թէ ՚ի սպառ թաժնուած սխալ մասն :
Ստեպ իրար գրկեցին և միտք ու գործըր ամէն երևակայելի նշաններ
ցոյց տուին , այնպիսի ախտը և անակնկալ բաժնումէ ետքը :

Այսպէս ուրախութեան արաստ քներ թափելով իրարու փարբէն
ետև՝ երկու քնին ալ նստան . և Ալատտին խօսիլ սկսելով , «Իշխանու-
հւոյն , ըսաւ , ամէն բանէ առաջ՝ յանուն Աստուծոյ , թէ քու , թէ սուր-
թանին և թէ իմ սիրոյս կ'աղերսեմբէ իր ինձ թէ ինչ եղաւ՝ քատուն
հինգ պատուհանով սրահին մէկ խորշին մէջ դրած հին կանթեղ մը ,
որսի երթալէս առաջ :

— Ահ , սիրական էրիկս , պատասխանեց իշխանուհւոյն , արդէն
կասկածի դպցի որ մեր գժբաղդութեան պատճառն այս կանթեղն է ,
և իս ամենէն շատ վշտացող բանը սա է որ ես անդիտարար այս ձիւ-
նը մեր գլխին բերի : — Իշխանուհւոյն , վրայ բերաւ Ալատտին , պատ-
ճառ ինքզինքը մը բռնեւր , յանցաւորն ես եմ , և ես պարտաւոր էի
զանի պահել , ամէն ճիւղ թափելը այս կարուստը դարմանելու , ուստի
չուրհ ըրէ՝ պատասխալ ինձ թէ ինչպէս անցաւ դործն և որն ձեռքն

ընկաւ : »

Այն ատեն Պատրուլու տուր իշխանութիւն Ալատախի պատմեց թէ ինչպէս Տին կանթեղը նորին հետ փոխեր է, զոր բերել տուաւ որ Ալատախն տեսնէ, և հետեւեալ զիշերուան պէս՝ պալատին փոխադրութիւնը տեսնելէն ետե՛ առտու՝ այն դանուած անձանօթ աշխարհն եկեր էր, և այս երկիրն ալ Ափրիկէ էր. այս սրբազան ալ նոյն իսկ դաւաճանին բերնէն իմացեր էր, որ իր մեղական արհեստով սոյն փոխադրութիւնը կատարեր էր :

«Իշխանութիւն, ըսաւ Ալատախն անոր խօսքն ընդմիջելով, դաւաճանն նո՛ւ է իմացայ, իմանալով : քեզնէ թէ Ափրիկէ կը գտնուինք : Ամենանեղատուր մարդ մ՛է այն : Բայց ոչ ժամանակն և ոչ տեղն է անոր անօրէնութեանց նկարագիրն ընել քեզ : Մինակ կ'աղաչեմ քեզ ըսել թէ ինչ ըրաւ կանթեղը կամ նո՛ր գրաւ : — Իր ծոցը կը սրահէ զայն՝ աղէկ մը փաթթելով, վրայ բերաւ իշխանութիւն, և կրնամ այս մասին վրայ յել, որովհետեւ իր ծոցէն հանեց զայն իմ առջևս և յողթմանակաւ մը ինձ ցցուց :

— Իշխանութիւն, ըսաւ այն ատեն Ալատախն, մի նեղամար եթէ այսչափ հարցումներ կ'ուղղեմ քեզ, թէ ինձի և թէ քեզի համար կարեւոր են, հիմակ ինձ վերաբերող մէկ բան մը հասկնալու համար, կը պաղտախմբէ ինձ, թէ ինչպէս կը վարուիս այնպիսի անօրէն և նենդատուր մարդու մը հետ : — Այս տեղ գալէս վեր, վրայ բերաւ իշխանութիւն, մինակ օրը մէկ անգամ կը ներկայանայ ինձ, և հաւատի եմ որ իր այցելութիւններէն շատ գոհ չըլլալուս ստէպ չյաճախեր այս կողմին : Ամէն օր կ'աշխատի իր խօսքերով համոզել իս որ քեզնէ զատուիմ և իրեն հետ ամուսնանամ, և կերպով մը կը հասկնցեր թէ նորէն քեզ տեսնելիք չունիմ, թէ մնում ես և թէ հայրս սուլթանը զլուխդ կտրեր է : Յետոյ կը յաւելուր թէ դու ապերախա մ'ես, թէ քու հարստութեանդ պատճառն ինքն է, և ասոր պէս շատ մը բաներ կ'ըսէր : Իւ որովհետեւ ամէն անգամուն իմ կողմէս միայն վշտաղին դանդաճներ և արտաքներ կ'ընդունի, եկածին պէս դժգոհ ետ կը դառնայ : Սակայն վտաս հեմ որ շատ շնորհեր իս այն յուսով որ օրին մէկն իմ ցաւերս պիտի դադրին և սիրտս պիտի փոխեմ, թէ ոչ բունու-

թիւն պիտի բանեցնէ վերջապէս եթէ յամառիմ : Բայց, սիրական է՝ ընկա, քու ներկայութիւնդ արդէն երկիրդ ու կտակածներս փարատեց :

— Իշխանութիւն, ընդմիջեց Ալատախն, յուսամ որ անտեղի չէ վտաս հոս թիւնդ, և թէ քեզ քու և իմ թշնամիէս աղատելու հնարը գտած եմ : Բայց ասոր համար պէտք է որ քաղաքն երթամ, կէսօրին մօտ պիտի դառնամ, և այն ատեն պիտի հաղորդեմ քեզ իմ խորհուրդս և թէ ինչ պէտք է որ դու ալ քու կողմէդ ընես անոր յաջողութեան համար : Բայց որպէս զի կանխաւ գործին տեղեակ ըլլաս, սա միայն կ'ըսեմ որ 'ի դարձին ուրիշ հաղուստով իս տեսնելով մի զարմանար, և հրաման տուր որ զաղանի գբան առջևն իս չսպասեցնեն երբ առաջին անգամ զարնեմ : »

Իշխանութիւն խոստացաւ դրան ետին մէկը գնել որ զարնելուն անմիջապէս բանայ :

Երբ Ալատախն իշխանութեան աննեկէն վար իջաւ և մի և նոյն դռնէն դուրս ելաւ, աղիս անգին նայեցաւ, և գեղացի մը տեսաւ որ դէպ 'ի գեղը կ'երթար :

Որովհետեւ գեղացին պալատէն անդին անցեր և քիչ մը հեռացեր էր՝ Ալատախն աւելի արտաբայ, և երբ անոր մօտեցաւ, առաջարկեց անոր որ հաղուստը փոխէ և այնքան ըրաւ որ գեղացին հաւանեցաւ : Այս փոխանակութիւնը թփի մ'ետեւ ըրին, և երբ իրարմէ զատուցան՝ Ալատախն քաղքին ճամբան բռնեց : Երբ քաղաքը մտաւ՝ բանուկ ճամբաներէ անցաւ, և այնպիսի տեղ մը հատաւ ուր ամէն տեսակ վաճառական և արհեստատուր իր յատուկ փողոցն ունէր. գեղավաճառներուն կողմը զարկաւ, և ամենէն մեծ և ճոխ խանութը գիւմբով հարցուց գեղավաճառին թէ արդեօք իր ուղած փողին ունի :

Վաճառականն՝ որ կարծեց թէ Ալատախն աղքատ էր՝ իր հաղուստին նայելով և բաւական ստակ չունէր վճարելու, ըսաւ թէ ինդրածն ունի բայց սող է : Ալատախն վաճառականին միտքն իմացաւ, քառիք հանեց և ոսկի մը ցոյց տալով՝ նոյն փողին կէս տրամ ուղեց : Վաճառականը զայն կըսեց, փաթթեց և Ալատախին ներկայելով ոսկի մը սրահանջեց : Ալատախն ոսկին անոր տուաւ, և մինակ քիչ մը կերակուր ուտելու չափ ժամանակ քաղաքը մնալէն ետե՛ իր պալատ-

ար դարձաւ : Պաղտնի գրան առջև չկեցաւ , խորշն բացուեցաւ և Պատրուլպուտուր իշխանուհւոյն սենեակին ելաւ :

Յիշխանուհի , ըստ անոր , արդէն ըսիր թէ մեծ ատելութիւն ունիս բռնակալիդ դէմ , այդ ատելութիւնդ թերեւ իմ խորհրդիս հետեւեալ քեզ արդիւնէ : Քայց ներքէ ինձ ըսելու որ սէտք է կեղծել , մանաւանդ ինքզինքդ զսպել , եթէ կ'ուզես անոր լծէն ազատիլ և Տօրք քեզ տեսնելու դուարձութիւն պատճառել : Աստի եթէ կ'ուզես իմ խորհրդիս հետեւիլ , շարունակեց Ալատաին , անովջապէս կ'սկսիս ամենէն պատուական զգեստդ հագնիլ . և երբ Ափրիկեցի վճուելը գայ՝ նայէ որ սիրալիր ընդունելութիւն մը ցոյց տաս անոր , առանց կեղծիքի և նեղանալու . անկեղծ դէմք մը դասէ , սակայն այնպէս որ եթէ արամութեան ամզ մ'անոր վրայ երևի կարծէ թէ ժամանակաւ այն ալ պիտի ցրուի : Խօսակցելու ասանդ՝ կերպով մը հասկցուր որ բոլոր ճիգդ կը թափես իս մտնապու , և որպէս զի բոլորովին համոզուի անկեղծութեանդ վրայ , զինքը հրաւրէ որ քեզի հետ ճաշ ընէ և ըսէ թէ մեծ փախաք ունիս իր քաղքին ընտիր գինիէն ճաշակելու . անտարակոյս ինդրած գինիդ բերելու համար պիտի դուրս ելնէ : Այն ատեն՝ մինչև վերադարձն՝ երբ դարանը դուրի , քու խնամ բաժակիդ նման բաժակի մը մէջ սա վռշին թափէ . նոյն բաժակը զատ զիր , և քեզի գինի մեծարող կնիկան ըսէ որ գինի լեցնէ քեզէ՝ երբ անոր նշմայր մ'ընես , և աղէկ նայէ որ չսխալիս : Երբ վճուելը վերադառնայ և սեղան նստի , յարմար դադարիդ չսի ուտելէն և գինի խմելէն ետեւ՝ փռշին պարուհանող բաժակը բերել տուր , և քուկդ անոր բաժակին հետ փոխէ . այդ շնորհն այնքան մեծ պիտի համարի որ չպիտի մերժէ . մանաւանդ բաժակին մինչև յետին կաթիլը սկսի քամէ , և պարպելէն ետեւ՝ իսկայն գետնի պիտի դրոշմի : Եթէ իր բաժակէն խմելու սիրտդ չքաշէ , այնպէս ցցուր որ կը խմես , ինչպէս որ գիւրին է ընել : Փռշին ազդեցութիւնն այնքան արագ պիտի ըլլայ , որ ժամանակ չպիտի ունենայ տեսնելու թէ արդեօք դու ալ իր բաժակէն կը խմես թէ ոչ :

Երբ Ալատաին խօսքը ըմպուց , Յիշխանուհին , որ մեծ ընդգնմութիւն մը կ'ըզամքու կարեւոր դատած առաջարկութիւնդ վճուելին ընել , բայց այսպիսի անդու թ ճնամի մը

դէմ մարդ ինչեր չընէր : Ալեմն պատուէրդ պիտի կատարեմ , քանի որ թէ քու և թէ իմ հանդատութիւնս անկից կախում ունի : Այս կարգադրութիւնն ընելէն ետեւ՝ Ալատաին անոր մնաս բարե ըստ և մնացած օրուան ժամերը պալատին շրջականերն անցնելու գնաց , որպէս զի մտքը կ'իտելուն նորէն գաղտնի գուռը գայ ու ներս մտնէ :

Պատրուլպուտուր իշխանուհին ոչ միայն Ալատաինէն՝ զոր շարունակ նոյն սիրով կը սիրէր , չէ թէ իրը պարագայ կը իր սիրական ամուսինն , այլև իր սուլթան հօրան բաժնուած ըլլալուն , որուն սիրելի էր և ինքն ալ կը սիրէր զանի , միշտ իր վրան զլսին հոգ չէր տաներ այն վշտալի բաժանումն վեր : Արեւոյ մ'իր սեռին վայել մաքրութիւնն ալ մէկդի ձգեր էր , մանաւանդ երբ իր կանանց միջոցաւ իմացաւ թէ այն Ափրիկեցի վճուելն էր որ հին կանթեղն առեր էր՝ նորը սալով և այս խորհուրթեամբ՝ իրեն ստիպում կը պատճառէր : Քայց վրէժը լուծելու առիթն , ինչպէս որ անոր արժանի էր , թէ և այնչափ շուտով չէր յուսար , Ալատաինը դո՛ւ ընելու յորդորեց զինքն : Այսպէս՝ երբ Ալատաին գնաց՝ Պատրուլպուտուր իշխանուհին իր կանանց ձեռօք՝ հայլիին առջև անցնելով՝ հաղուեցաւ սպուեցաւ խիտ շնորհալի կերպով , և իր խորհրդին յարմար խիտ հարուստ զգեստ մը գրաւ : Մէջքը կապած զօտին մինակ ոսկի և անդամանդ էր՝ խիտ ընտիր և խոշոր տեսակէն . նոյնպէս լոկ մարդարտէ մանեակ մը դրաւ , և ամէն մէկ կողմ տեսնուած վեցնական մարդարտաներն այնպիսի համեմատութիւն մ'ունէին մէջ տեղի մարդարտին հետ՝ որ ամենէն անգինն ու խոշորն էր , որ ամենէն մեծ սուլթանութիւնն երջանիկ պիտի սեպէին ինքզինքնին և թէ լոկ երկու փոքրագոյն մարդարտաներէ մանեակ մ'ունենային : Ապարանջաններն՝ որ անգամանդով և սուտակով զարդարուած էին՝ սքանչելի կերպով կը յարմարէին զօտին և մանեկին ճոխութեան հետ :

Երբ Պատրուլպուտուր իշխանուհին լիովին հաղուեցաւ՝ կրկին հայլին նայեցաւ , և իր նաժիշաներուն կարծիքը ինդրեց հաղուստին վերայ . և երբ տեսաւ որ Ափրիկեցի վճուելին սէրը դրդուելու ամէն հրապոյրներով զլինուած է , իր բաղմոցին վրայ նստաւ , և սպասեց որ գայ :

Վփրիկեցի վճուհը սովորական ժամուն եկաւ անլքեպ : Երբ իշխանուհին իր քսան չորս պատուհան ունեցող սրահն անոր մանկըր անաւա , իր բարդ դեղեցիկ և հրատարելի զարդերով տաք ելաւ , և ձեռքովը ցցոց պատուար որ տեղ մը նստելու համար և ինքն ալ նստաւ . այսպիսի նշանաւոր քաղաքախորտ թիւն մը տակաւին անոր բրած չէր :

Վփրիկեցի վճուհն իշխանուհւոյն գեղեցիկ աչաց փայլութենէն աւելի շխմաւով քան թէ անպամանդեհ բուն փայլէն՝ շատ զարմացաւ : Իր վեհախառ և երայարանն և այն ճարհատի գեղեցիկ որով զինքը կ'ընդունէր և մինչև այն օրը ցոյց տուած չէր բնաւ , շտարեցոյցն զինքը : Կախ բազմեցին եղբը նստիլ ուղեց , բայց տեսնելով որ իշխանուհին իր բազմեցին վրայ չուզէր նստիլ մինչև որ ինքը չբազմի , հնադանդելու սախառեցաւ :

Երբ Վփրիկեցի վճուհը նստաւ , իշխանուհին անոր շփոթութիւնը փարատելու համար սխառ խօսիլ այնպիսի կերպով մ'որ կ'ուզէր բնել թէ ալ իրեն տեսիլ չէ նա առնջուան պէս , և անոր ըսաւ .

«Մտաբարկոյս պիտի զարմանաս որ իս բարբոթին փոխուած կը գտնես , բայց զարմանալք պիտի գողրի եթէ բնեմ որ իմ բնութիւնս այնքան հակառակ է տրամութեան , մեղամոլոտութեան և մտատանջութեան , որ որչափ կարելի է շուտով գտնուի փարատելու միջոց կը փնտռեմ , երբ կը տեսնեմ որ պատճառն անցած է : Ալատախի վիճակին վրայ ըսածներդ յիշեցի , և քաջ ճանչելով հօրս բնաւորութիւնն , ես ալ քեզի պէս համարուեցայ որ անոր բարկութեան տակալի ճանդէն աղտաւած չպիտի ըլլայ : Այսպէս կամակորութեամբ անոր վրայ ցմահ լլու մտադիւր էի , տեսայ որ իմ արտաքս անոր կենդանութիւն չպիտի տան : Աւստի մինչև գերեզման իջնելէն ետե՛ւ իմ սիրոյս պահանջած պարտաւորութիւնները կատարելէն ետե՛ւ ինձ այնպէս երեցաւ որ միթարուելու միջոցներ փնտռել պէտք է : Ահա այս է վրաս տեսած փոխախտման պատճառներն : Աւստի ամէն տրամութեան շարժառիթ հեռացնելու համար , միւքս գրի սիրովիլ յուսարով որ ինձի կօղնես , և հրամայեցի որ մեզ բնութիւր պատրաստես : Բայց որովհետև Չինաստանի գինի միայն ունիմ , և հիմա Վփրիկէ կը գտնուիմ , փախաքս եկաւ այս տեղի գինին ճաշակել , եթէ կաւ , և

անշուշտ լուսողոյնը դու կը ճանչես :

Վփրիկեցի վճուհն որ անկարելի կը կարծէր Պատրուլուտուր իշխանուհւոյն ճորհաց այսչափ շուտով և զիւրաւ արժանի ըլլալ , յայտնեց թէ խօսքով չէ կարող բացատրել թէ որչափ երախտադէտ է այս բարեաց . և իրօք , շուտ մ'այս խօսակցութիւնն աւարտելու համար , քանի որ՝ եթէ շարունակէր , ինչպէս շարժիլը չլիտէր , Վփրիկէի գինիի վրայ դարձոյց խօսքն , և անոր իշխանուհւոյն թէ՛ սոյն երկրին բնտիր բերեբուսն մէջ՝ գինին բնութեազոյնն է , մանաւանդ իրենց բնական գեղին գինին , թէ եօթն տարուան գինի ունի որուն դպած չէ , և թէ՛ առանց չափազանցելու՝ աշխարհիս ամէն գինին բէն լուսազոյնն է :

«Եթէ իմ իշխանուհիս , յարեց նա , ներէ , երթամ երկու շիշբերեմ , և անմիջապէս կը դառնամ : — Այս նեղութիւնը քեզի տարուս կը ցաւիմ , եթէ հնարը կայ մէկը շրկէիք որ բերէ : — Պէտք է որ ես անձամբ երթամ , պատասխանեց Վփրիկեցի վճուհն , ոչ որ գիտէ թէ շտեմարանին բանալին ուր է , և ոչ որ գիտէ նաև թէ կ'նշուի բանալ պէտք է : — Եթէ ըսածդ ճիշտ է , ըսաւ իշխանուհին , գնա ուրեմն և շուտով եկուր : Արչափ ժամանակ անցնուս՝ այնչափ սիրտս պիտի հասցնես , և մտածէ որ սեղանը պատրաստ է և դարուդ պէս պիտի նստինք :»

Վփրիկեցի վճուհն իր կարծեցեալ երջանկութեան յուսով լցուած , իր եօթ տարուան գինին բերելու չցնայ , այլ թուաւ , և անմիջապէս դարձաւ : Իշխանուհին՝ որ արդէն գուշակէր էր որ վճուհը շուտով պիտի դառնայ , Ալատախի բերած փողին ձեռօքը կահոյրի մը մէջ նստեր և զատ գրեր էր՝ սեղանը պատրաստել տարով : Իրարու գիմաց նստան , այնպէս որ վճուհն իր կուսակը դարանին դարձոյցէր էր : Իշխանուհին անոր բնութեազոյն պատասխանը մեծարելով ըսաւ . «Եթէ կը հաճիմ նուազարաններն ու գուսանները թող նուազեն , բայց որովհետև առանձին ենք , կարծեմ թէ աւելի կրնանք դուարձանալ խօսակցելով :» Աճուհն իշխանուհւոյն այս ընտրութիւնն իբր նոր ճորհ բնգունեց :

Քանի մը կտոր բան ուտելէն ետե՛ւ իշխանուհին ըմպելիք ուղեց , և

վհուկին կենացը խմեց . և երբ սարեց, «Իրաւունք ունէիր, ըստ 4
 գինիդ գովելու, երբէք այսպիսի զնայլելի գինի մը խմած չէի : —
 Չքնաղ իշխանուհի, սպասասխանեց նա իրեն տրուած թակոյիը ձեռքը
 բռնելով, իմ գինին քու գովելտուովդ նոր աղորու թիւն մը կ'ստանայ :
 — Իմ կենդանութեանս խմէ, վրայ բերաւ իշխանուհին, գուն ինքնին
 պիտի տեսնես որ խակ չեմ :» Ահուկին իշխանուհւոյն կենաց խմեց, և
 թակոյիը յանձնելով, «Իշխանուհի, ըստ, երջանիկ կը համարիմ ինք-
 գինքս այս գինին ստանկ աղոր պարագայի մը համար պահելուս, ես
 ալ կը խոստովանիմ որ երբէք ասոր պէս սպասուական գինի չեմ ըմ-
 պած :»

Երբ երեք բաժակ ևս պարսեցին կերակուր ուտելով իշխանուհին,
 որ Ափրիկեցի վհուկը թողնէր էր արդէն իր շորհագեղ և բարեսէր
 կերպերովը, վերջապէս պայմանեալ նշանն ըրաւ գինի մեծարող կնիւն,
 ըսելով նոյն միջոցին որ թակոյիը գինի լեցնեն բերեն, նոյնպէս Ափրի-
 կեցի վհուկինն ալ գինիով ներկայացնէ : Երբ ամէն մէկն իր թակոյիը
 ձեռք առաւ, իշխանուհին անոր ըսաւ .

«Չգիտեմ թէ ձեր քաղքին ստորոտ թիւնն ինչ է, երբ մեզի պէս
 երկու հոգի իրար կը սիրեն և գինի կը խմեն : Մենք Չինաստանի մէջ
 սովորութիւն ունինք որ սիրահար և սիրուհի փոխադարձարար թակոյի
 կը փոխեն, և այսպէս լրարու կենաց համար գինի կը խմեն :» Նոյն
 պահուն իր ձեռքի թակոյին անոր ներկայեց, միւս ձեռքով անոր
 ձեռքինն առնելով : Ափրիկեցի վհուկն այս փոխանակութիւնն ընելու
 փութաց, այնքան փորձանօք որչափ որ այս շորհն իշխանուհւոյն
 սիրաը գրաւելուն մէկ նշանը կը համարէր, և այսպէս իր երջանկու-
 թեան կատարը հասած եղաւ : Բաժակը բերնին տանելէն առաջ՝ «Իշ-
 խանուհիս, ըսաւ անոր, սէրն այսպիսի գողարիկ քաղաքախարութեամբ
 համեմտու գործին մէջ մենք Ափրիկեցիք Չինացոցմէ շատ հեռու ենք,
 և այս չդիտեցած գասս արվելով, կ'իմանամ նաև թէ որչափ երախտա-
 պարտ պէտք է ըլլամ այդ շորհն համար : Երբէք չպիտի մոռնամ,
 սիրասուն իշխանուհիս, այս շորհն, ես քու թակոյիդ խմելով գի-
 նին, կեանք մը պիտի գանեմ, որմէ յոյսս պիտի կտրէի եթէ անդ թու-
 թիւնդ շարունակէիր :»

Պատուը տուր իշխանուհին որ Ափրիկեցի վհուկին երկդ թիւ խոս-
 քերէն կը տաղալանար, կարճ կատեց ու ըսաւ . «Նախ խմելիքն, և
 ապա խօսելիքդ շարունակէ :» Նոյն պահուն թակոյիը բերնին տարաւ
 և մինակ շրթերով անոր դպաւ, մինչդեռ Ափրիկեցի վհուկն անորմէ
 առաջ խմելու շատելով՝ բոլոր գաւաթը պարսեց առանց կաթիլ մը
 թողլու : Երբ պարսելու վրայ էր, ճիշտ այն միջոցին որ գլուխը դէպ
 եանը դարձուցիր էր իր եռանդը յայտնելու համար, նոյն դիւրբին մէջ
 քիչ մ'ասան մնաց, մինչև որ իշխանուհին, որ իր թակոյիը դեռ բե-
 լանն էր, գիտեց որ Ափրիկեցիին աչքերը դարձան, և անշունչ կուռակի
 վրայ ընկաւ :

Իշխանուհին պէտք չունեցաւ պատուիրելու որ երթան գաղանի
 գուռը բանան Ալատալինին, իր կնիւնն որ արդէն գործին տեղեակ է-
 լին, կարգաւ կիցեր էին սրահէն մինչև սանդղին ոտքն, այնպէս որ
 Ափրիկեցի վհուկը դեռանը գլորելուն՝ գաղանի գուռն անմիջապէս բա-
 ցուեցաւ :

Ալատալին վեր ելաւ, և սրահը մտաւ : Այն ինչ Ափրիկեցի վհուկը
 բազմոյցին վրայ կ'ընցած սեսաւ, որ իշխանուհին կեցնելով՝ քանի որ
 ելեր էր զինքը զիմաւորելու և ուրախութեամբ անոր փարելու, «Իշ-
 խանուհիս, ըսաւ, տակալին ժամանակը չէ . ինչդեմ առայժմ սննեակդ
 քաշուէ, և սպասուիրէ որ զիս մերակ թողուն, որ նոյն միջոցին աշ-
 խատիմ՝ քեզ Չինաստան դարձնելու այնչափ արագութեամբ որ այս
 տեղ փոխադրեցար :»

Եւ արդարեւ՝ երբ իշխանուհին իր նաժիշաներով և ներքինիներով
 սրահէն գուռս ելաւ, Ալատալին գուռը գոցեց, և Ափրիկեցի վհուկին
 դիակին մօտենալով, որ անկենդան մնացեր էր, անոր բաժնինը բացաւ
 և կանթիղը քաշեց առաւ, որ իշխանուհւոյն ըսած կերպովը՝ փաթ-
 թուած էր : Իսկոյն կանթիղը շփեց և ձինն իր սովորական քաղաքա-
 վարութեամբ ներկայացաւ :

«Ճին, ըսաւ անոր Ալատալին, քեզ կանչեցի որ կանթիղին կողմն
 տպսպրեմ որ անմիջապէս այս պալատն իր առջի տեղը Չինաստան
 փոխադրես :» Ճինը՝ գլուխը թեթև մը ծռելով հասկցուց որ պիտի
 հնազանդի և աներևոյթ եղաւ : Յիբաւի այս փոխադրութիւնը կատա-

բուեցաւ, և մինակ երկու թեթև ցնցումներէ խնցուեցաւ, առաջին ցնցումն Ափրիկէէն վերնալուն՝ միւսը Զինաստանի առջի տեղը գրուելուն պատահեցաւ :

Ալատտին իշխանուհւոյն սենեակն իջաւ, և այն ատեն զանի գրկելով՝ «Իշխանուհիս, ըսաւ անոր, կը հաւատամ քեզ որ քու և իմ ուրախութիւնս վաղը կատարեալ պիտի ըլլայ :» Արովհետեւ իշխանուհին էր ընթրիքն աւարտած չէր և Ալատտին ալ անօթի էր, Իշխանուհին վերի սրահէն մեծարուած կերակուրները վար բերել տուաւ, որոց դեռ չղայեր էին : Իշխանուհին և Ալատտին միասին կերան և Ափրիկէի հին գինիէն անկեցին : յետոյ՝ իրենց խօսակցութիւնն որ շատ գոհացուցիչ էր՝ աւարտելով՝ իրենց սենեակը քաշուեցան :

Ալատտինի պալատին աներևոյթ ըլլալէն վեր՝ Պատրուլպուտուր իշխանուհւոյն հայրն անմխիթար էր զանի կորուսելուն համար, ինչպէս որ ինքն ալ երեւակայէր էր : Գիշեր ցորեկ գրեթէ չէր քնանար, և փոխանակ իր վիշտը փարատելու միջոցներ փնտռելու, աւելի ևս զայն զրոգեւելու կը ջանար : Ննչպէս, մինչդեռ առաջ առտու միայն իր պատշգամբ կենէր, Ալատտինի պալատին շքեղ տեսքը վայելելու, հիմակ օրը քանի մ'անդամ կը յաճախէր, յորդ արտաք կը թափէր, իր ցուերը կը սաստկացնէր այն ակնահամար պալատը չտեսնելուն և մանաւանդ աշխարհիս մէջ ունեցած ամենէն սիրական աղջիկը կորուսելուն :

Այն ինչ արշալոյսն երևիլ սկսեր էր՝ երբ սուլթանը նոյն դահլիճն եկաւ, Զիշտ այն առաւօտ որ Ալատտինի պալատն իր տեղը փոխադրուեր էր : Կերս մտնելու ատեն՝ այնքան ինքն իր մէջ ամփոփուեր և ցառովը համակուեր էր որ տխուր ակնարկ մը նետեց այն տեղն ուր կարծեր թէ մինակ օդ պիտի տեսնէ առանց պալատը նշմարելու : Բայց երբ գիտեց որ այն պարսպ վայրը լեցուեր է, նախ կարծեց թէ մշուշն է պատճառ : Աւելի ուշագործեամբ կը նայի, և առանց տարակուսելու կը նկատէ որ իրօք Ալատտինի պալատն է : Այն ատեն ուրախութիւնն ու սրտի ինդոլթիւնն իր ցուերուն և տրամութեան յաջորդեցին : Իր սենեակը կը դառնայ շտապաւ և հրաման կտայ որ ձի մը պատրաստեն բերն : Երբ ձին բերին՝ վրան կը հեծնէ, ճամբայ

կենէ, և ամէն ճիգ կը թափէ որ կարելի եղածին չափ շուտով հասնի Ալատտինի պալատը :

Ալատտին որ պատահելիքը դուշակեր էր, առտու կանուխ արթնացեր, և փառաօք զգեստ մը հագնելէն ետեւ՝ քառսուն հինգ պատահան ունեցող սրահն ելեր, և անկից սուլթանին դալը տեսեր էր : Ուստի վար իջաւ և փութաց ընդունելու սուլթանը սանդղին ոտքն և ձիէն վար իջնելու օդնէլ : «Ալատտին, ըսաւ անոր սուլթանը, չեմ կրնար քեզի խօսիլ աղջիկս չտեսած և չգրկած :»

Ալատտին՝ սուլթանը Պատրուլպուտուր իշխանուհւոյն սենեակը տարաւ, և իշխանուհին ալ նոր հագուեր սգուեր էր, որովհետեւ Ալատտին արթնալուն խնայ տուեր էր անոր քր Ափրիկէ չղանուիր, այլ Զինաստան և իր հօրը սուլթանին մեղրաբաղաբը : Սուլթանը քանի մը անդամ համբուրեց զանի ուրախութենէ արտաք թափելով, և իշխանուհին ալ իր կողմէն չափազանց ուրախութեան նշաններն անոր յայտնեց :

Սուլթանը քիչ մ'ատեն անխօս մնաց, վասն զի սիրտը սաստիկ ելած էր իր սիրական աղջիկը գտնելուն վրայ՝ զանի իրօք կորսուած սեպեղէն ետեւ, և իշխանուհին ալ իր կողմէն՝ բոլորովին լալային էր իր հայրը տեսնելու ուրախութենէն :

Աերջապէս սուլթանը սկսաւ խօսիլ, «Իմ աղջիկս, ըսաւ, կարծեմ թէ իս տեսնելու ուրախութենէդ է որ ինձի բնաւ փոխուած և փորձանքի մը հասած չես երևիր : Սակայն աներկրայ եմ որ շատ տառապել ես : Յանկարծ պալատովդ ուրիշ տեղ փոխադրուիլը զիւրին բան չէ, և անտարակոյս սաստիկ ահ ու դողի մէջ ընկած ես : Կ'ուզեմ որ ամէն բան ինձ պատմես և իղնէ բան մը չարհեսս :»

Իշխանուհին իր հօրը ինդիլքը յօժարակամ կատարեց : «Տէր իմ, պատասխանեց իշխանուհին, եթէ քեզ փոխուած կ'երևիմ, կ'աղաչեմ որ նկատես երէկ առտու կանուխ սկսայ շունչ առնուլ Ալատտինի ներկայութեամբ, իմ սիրական ամուսինս ու ազապիս, զոր ինձի համար մեռած կարծէի և կ'ողբայի, և զինքը նորէն տեսնելու ուրախութենէս առաջին վիճակս գտայ : Իմ բոլոր ցաւս իրօք Ձեր վեհափառութենէ և սիրական էրիկէս բաժնուիլս եղաւ, ոչ միայն զանի սիրելուս,

այլ նաև անոր համար որ կը վախճայի թէ ձեր բարկութեան դո՛հ չըլլայ, թէ և անպարտ էր: Զիս արևանդող անխառն երեսն այնքան սառստանք չքաշեցի, միայն անախորժ խօսքեր կ'ընէր ինձ: Այն խօսքերուն վերջ տուի անոր վրայ ունեցած աղցեցութեամբս: Ասկէ զամ ազատ էի, ինչպէս որ հիմա: Իսկ իմ արևանդալ գէպքին զարով՝ Ալատոսին բնաւ մատ չունի անոր մէջ, ես եմ միայն պատճառը, բայց անդ խաղար:»

Սուլթանը համոզելու համար որ ըսածը ճշմարիտ է, իշխանուհին Ափրիկեցի վհուկին կանթեղալաւաւսի պէս ծպտուիլը պատմեց, նոյնպէս ըսաւ թէ ինչպէս հին կանթեղներու տեղ նորեր սաղուն համար զուարճացիք և Ալատոսին կանթեղն՝ որուն կարևորութիւնը չէր դիտարկուել, թէ ինչպէս այս փոխանակութենէ ետքն Ափրիկէ փոխադրուել էր Ափրիկեցիին հետ, զոր իր երկու կիներն և ներքինին ճանչցիք էին, և որ աստիճանով իր ասջին և հետուն աստիճաններ էր յանդիմանար որ իրեն հետ կարգուի: Ահրջապէս ըսաւ թէ որչափ նեղութիւն քաշեր էր մինչև Ալատոսին գալուստն, և թէ ինչ միջոցներ բանեցուցիք էր Ալատոսին խորհրդով անոր գրաւած կանթեղը ձեռք ձգելու համար, ընթրիքի հրա իրելով վհուկին և զեղաւոր զինի խմբիներով: «Իսկ մնացած մասը, յարեց նա, Ալատոսին կը թողում որ ձեզի պատմէ:»

Ալատոսին ըսելիքը կարճ էր: «Երբ, ըսաւ, զաղանի դուր բացին, վեր ելայ և բազմոցին վրայ երկնցած անտայ այն անօրէնը, ինդրեցի որ իշխանուհին իր կիներովն ու ներքինիներովը վար լջնէ՝ անոր ներկայութիւնն անյարմար գտանելով, և ես մինակ մնացի, ապա կանթեղը վհուկին ծոցէն հանելով իր գործածած զաղանիքը դործածեցի սպարազ փոխադրելու համար այս տեղ. և այսպէս դո՛հ եմ որ իշխանուհին ձեզի բերի՝ ինչպէս որ հրամայեք էիք: Չեր վեհափառութեան ճշման բնան ըսի, և եթէ կը հաճիք վերի սրահն ելնել՝ պիտի տեսնէք որ վհուկին արժանի կերպով պատժուած է:»

Սուլթանը լիովին համոզուելու համար ելաւ վեր գնաց, և երբ վհուկը մտած տեսաւ, որուն գէպքը կատարուցին եղբւր էր թոյնէն, Ալատոսինը գորովալին գրկեց և անոր ըսաւ. «Որդեակ իմ, քեզի

դէմ բռնած ընթացքին համար իս մի մեղադրեք. հայրական սէրը բռնադատեց իս և վայել է որ այն բռնութեանս ներքեւ: — Տէր իմ, վրայ բերաւ Ալատոսին, Չեր վեհափառութեան վարմունքին զէմբնադանդաւ չունիմ, դուք պէտք եղածն ըրիք: Այս վհուկին, այս ապիւրանն, այս վատազգին միայն իմ դժբաղդութեանս պատճառ եղաւ: Երբ ժամանակ ունենաք՝ անոր մէկ ուրիշ անօրէնութիւնը պիտի պատմեմ քեզ, որ ասորմէ աւելի ծանր է և որմէ Ատաւոսի շնորհիւր միայն ազատեցայ: — Ժամանակ կը գտնենք խօսելու, պատասխանեց սուլթանը, քիչ ատենէն: Բայց հիմակ զուարճանալու նայինք, և սա նողկալի դիակը վերցնել տուր:»

Ալատոսին Ափրիկեցի վհուկին դիակը վերցնել տուաւ, և հրամայեց որ ճամբուն վրայ նեանն՝ անասուններուն և թռչուններուն ճարակ ըլլալու համար: Սակայն սուլթանը հրաման հանեց որ թմբուկները, գափերն ու փողերը զարնեն, և ամէն տեղ հոչակել տուաւ որ Պատուրուտուտուր իշխանուհույն և Ալատոսինի վերադարձին ի նշան տանն օր հասարակային հանդէսներ կատարուին:

Այսպէս Ալատոսին երկրորդ անգամ գրեթէ անխուսելի մահուանէ ազատեցաւ, բայց այս վերջինը չէր. երրորդ վտանգ մ'ալ անցուց, որուն սպարազանները պիտի պատմենք:

Ափրիկեցի վհուկը կրտսեր եղբայր մ'ունէր որ մոզական արհեստին մէջ իրեն չափ յաջողակ էր. կրնանք ըսել իսկ որ չարակամութեան և վնասարեւ խորամանկութեան կողմէն անորմէ շատ վեր էր: Որովհետև միշտ միայն կամ մի և նոյն քաղաքը չէին բնակեր, և շատ անգամ մինչդեռ մէկն արեւելքի կողմը կը գտնուէր՝ միւսն արեւմուտք կը ըլլար, գեանահաբայութեամբ ամէն տարի իրարու կը հարցնէին թէ աշխարհիս նր կողմը կը գտնուին, թէ ինչ վիճակի մէջ են և թէ արդեօք իբրոքմէ պէտք ունին թէ ոչ:

Ալատոսինի երջանկութեան զէմ ըրած չարահայտ փորձն ի գերև ելնելէն քիչ մ'ետքն իր կրտսեր եղբայրն, որ տարիէ մ'ի վեր անոր վրայ լուր աստջ չէր, և չէ թէ Ափրիկէ այլ հեռաւոր երկիր մը կը գտնուէր, ուրից իմանալ թէ եղբայրն աշխարհիս նր կողմը կը գտնուի, ինչ վիճակի մէջ է և ինչ կ'ընէ: Ուր որ երթար իրեն հետ կը տանէր

դեանահասարական քառակուսին, իր եղբորը պէս : Աստի սոյն քառա-
կուսին կ'առնու, առաջը կը տեղադրէ, կէտերը կը նետէ, նկարները
կը քաշէ, և վերջապէս ժամագէտը կը շինէ : Ամէն մէկ նկար աչքէ
անցնելով, կը նայի որ իր եղբայրը թունաւորուած մեռած է յանկար-
ծակի, և թէ այս բանս Չինաստանի մէջ պատահեր է այս ինչ մայրա-
քաղաքի մէջ, և թէ վերջապէս զինքը թունաւորողը ստորին կարգի
մարդ մ'է, և սուլթանի մ'աղջիկը :

Երբ վճուկն այսպէս խնայու իր եղբորը տխուր վիճակն իր ժամա-
նակն սղբալով չանցուց, քանի որ անողուտ բան էր, այլ խոկոյն իր եղ-
բորը վրէժն առնուաւ որոշեց, ձի հեծաւ և ճամբայ ելաւ Չինաստանի
կողմը զիմելով : Գաշա, գետ, լեռ, անապատ անցաւ, և երկայն ուղե-
ւորութեան ետքն՝ առանց տեղ մը կենալու, անհաստատ ի նեղութիւն
քաշելով՝ վերջապէս Չինաստան հասաւ, և քիչ մ'ատեն ետքն ալ գետ-
նահարցութեամբ երևան հանած մայրաքաղաքն : Ապահով ըլլալով որ
չէ սխալած՝ նոյն քաղաքը կ'իջնէ և այն տեղ զթեան մը կը բռնէ :

Հետեւեալ օրը վճուկը գուրս կ'իջնէ, և քաղաքը պարտելու ատեն՝
չէ թէ անոր գեղեցկութիւնները զիտելու որոց ա՛ տարրեր էր, այլ իր
չար խորհորդն ՚ի գործ դնելու միջոցներ ձեռք առնելու համար, ամե-
նէն բանուկ կողմերը յաճախեց և ամէն խօսքերու ականջ դրաւ : Չբո-
սարան մը մտաւ ուր աննոք տեսակ տեսակ խաղեր կը խաղային, ոմանք
ժամանակին լուրերուն և սննդական գործոց վրայ կը խօսակցէին, և
լսեց որ Ֆատիմէ անունով աշխարհէս քաշուած կնիկն մը բարեպաշ-
տութիւնն, առաքինութիւնն և նոյն խակ ըրած հրաշքները գովէին :
Մտածելով որ այս կինը կրնայ իրեն օգտակար ըլլալ ընկերութեան
մէջն մէկն առանձին կանչեց և աղաչեց որ իրեն հասկցնէ թէ ով էր
այն սուրբ կինն և ինչ տեսակ հրաշքներ կը գործէ :

«Ի՞նչ, ըսաւ անոր այս մարդը, միթէ գեռ չտեսնար այն կինն և ա-
նոր խօսքը չլսեր ես : Կը ծովապահութեամբը, խտտակրօնութեամբը
բոլոր քաղաքին զարմանք կը պատճառէ : Բայ ՚ի երկու շարժի և ուր-
բաթ օրերէն իր փոքրիկ մեծասանէն գուրս չեխնէր, և քաղաքն երե-
ցած օրերն անբաւ բարիք կ'ընէ, և շատ դիւրութեամբ զլիկ ցառով
տառապող մարդիկը կը բժշկէ լոկ ձեռքերն անոր վրայ դնելով :»

Վճուկն այս մասին աւելի բան չհարցուց, մինակ հարց ու փորձ
ըրաւ թէ այս սուրբ կինը քաղաքին ո՞ր կողմը կը բնակի : Նոյն մարդն ի-
մացուց անոր, հետեւապէս մեր խօսելիք զգուելի խորհորդն երկնէն
ետե՛ նոյն կնիկն գուրս ելած օրն անոր ընթացքը զխտեց մինչև իր-
կուն, և մեծաստանը գացած ատեն անոր ետեւէն գնաց : Երբ տեսաւ
անոր բնակութեան տեղը՝ մեր արդէն յիշած տեղը քաշուեցաւ, ուր
տեսակ մը ջերմ ընկելի կը խմէին և ուղողը կրնար, մանաւանդ տաք
օրեր՝ նոյն տեղը պատկիլ խտիրի վրայ քան թէ անկողնի մէջ :

Վճուկը՝ տեղւոյն տէրը գոհ ընելէն ետե՛ ըրած ծախար վճարելով՝
կէս զիշերին գուրս ելաւ, և Ֆատիմէն բնակարանը գնաց : Շատ դիւ-
րաւ անոր գուրը բացաւ, վասն զի լոկ դռնափակով մը գոցուած էր :
Գուրը գոցեց նորէն առանց ձայն հանելու, և լուսնին լուսովը Ֆա-
տիմէն տեսաւ բայց օգին և անսխտան խտիրով ծածկուած բազմոցի մը
վրայ պատկած : Անոր մօտեցաւ, և մէջքէն կախած դաշոյնը քաշե-
լով զանի արթնացուց :

Աչքերը բանալով՝ խեղճ Ֆատիմէն շատ զարմացաւ տեսնելով այն
մարդն որ զինքը սպաննելու համար զլիկն վրայ կեցեր էր : Կախարդը
գաշոյնը սրտին կաթնելով՝ այնպէս որ գայն պիտի մղէր, ըսաւ . «Ե-
թէ ձայն հանես, եթէ շշուկ մը հանես՝ քեզ կ'սպաննեմ, բայց ոտք
եկիւր և ըսելիքս կատարէ :»

Ֆատիմէ որ հագուստովը քնացեր էր, ոտք ելաւ դողողալով առ-
ահի : «Մի վախնար, ըսաւ անոր վճուկն, ես միայն զգեստդ կը պա-
հանջեմ, տուր նայիմ և խն առ :» Այսպէս հագուստնին փոխեցին,
և երբ վճուկը Ֆատիմէն զգեստները հագաւ, անոր ըսաւ . «Հիմակ
երեսս քու երեսիդ պէս ներկէ այնպէս որ քեզի նմանիմ և դոյնը չփո-
խուի :» Բայց տեսնելով որ խեղճ կինը սակաւին կը գողգողար, անոր
վախը փարատելու և իր կամքը կատարել տարու համար, անոր ըսաւ .
«Նորէն կ'ըսեմ, մի վախնար բնաւ, յանուն Աստուծոյ կ'երգնում, որ
կեանքդ քեզ կը բաշխեմ :» Ֆատիմէ զանի իր խցիկը մտցուց, իր կան-
թեղը վառեց, և վրձին մ'ամանի մը հեղուկի մէջ թաթիլելով՝ անոր
երեսը քսեց և ապահովեց որ դոյնը չպիտի փոխուի և ճիշտ իր երեսին
գոյնին նման էր : Յետոյ իր գլխանոցն անոր գլուխը գրաւ քօղով մը,

և սորվեցուց անոր թէ ինչպէս պէտք է երեսը ծածկել քաղաքն իջնելու ատեն : Ա երջապէս վրէժն կախելով համբիշ մ'որ մինչև մեջքը կ'իջնէր, իր գործածած գառաղանն անոր ձեռքը տուաւ, և հայլի մըցոց տալով՝ ըսաւ. « Եայէ, պիտի տեսնես որ բոլորովին ինձի կը նմանիս : » Ա հուկն ուզածին պէս դտաւ կերպարանը, բայց բարեմիտ ֆատիմէին ըրած երգումը չպահեց, վասն զի փոխանակ դաշոյնովը զարնելու զանի խեղդեց որ արիւնը չտեսնեն, և երբ տեսաւ որ հողին փչեր է, անոր դիակը քաշեց ոտքէն մինչև ջրամբարն և մեջը նետեց :

Ա հուկն այսպէս ֆատիմէին պէս հաղուած՝ գիշերը մենաստանն անցուց, այն ստակալի մարդաստանութիւնն ընէլէն ետև : Հետևեալ օրը կանուխ դուրս ելաւ, թէև այնպիսի օր մ'էր որ խեղճ կինը դուրս եխելու սովորութիւն չունէր, սակայն վհուկը փոյթ չըրաւ՝ համոզուած ըլլալով որ այս մտան իրեն հարց ու փորձ չեն ընել, և եթէ ընեն անգամ պատասխան տալու համար պատրաստ խօսք ունէր : Արովհետև իր առաջին գործն եղած էր երթալ Ալատալինի պալատը տեսնել, և այն տեղ պիտի խաղար իր դերը, հետևապէս այն կողմը գարկաւ :

Այն ինչ սուրբ կինը տեսան ինչպէս որ կարծէին՝ անթիւ բազմութիւն մը չորս կողմն առին : Ոմանք անոր աղօթից միջնորդութիւնը կը հայցէին, ոմանք ձեռքը կը համբուրէին, ոմանք՝ քաշուելով՝ մինակ զդետտին քղանցքը կը պաղնէին, և ուրիշներն ալ՝ սեպէ թէ գլխիցս՝ կամ թէ անկից ապագային մեջ զերծ մնալու դիտաւորութիւն ունէին՝ անոր աջև կը ծռէին, որպէս զի ձեռքերն իրենց գլխին վրայ դնէ, և վհուկն ալ իրօք ձեռքերը կ'երկնայնէր աղօթքի ձեռով քանի մը խօսք մըմտալով, և այնչափ սուրբ կնիկն նմանելու կերպեր կը բանեցնէր, որ ամէն մարդ կարծէր թէ նոյն ինքն էր : Այսպէս իր ձեռքը գնելու համար ատեն ատեն կանկ առնելէն ետև՝ թէև խլիսիցս ունեցողները չէին բժշկուեր, վեժպալէս Ալատալինի պալատին հրտապարհը հասաւ. այն տեղ մեծ ըլլալով ամբոյն՝ նոյնչափ մեծ եռանդով անոր մօտենալու ճիղ կ'ընէր ամէն մարդ : Ամենէն ուժով և եռանդոտ մարդիկ կը բազմութիւնը կը ճեղքէին ճամբոյ բանալու համար, և ասոր վրայ կուխներ կը ծաղէին՝ որոց աղմուկը մինչև պալատին վերնասրահը կը

հասնէր, ուր Պատրուարուտուր իշխանուհին կը դանուէր :

Իշխանուհին հարցուց թէ ուսկից կ'այ այն աղմուկն, և որովհետև մէկը չկրցաւ անոր պատճառը յայտնել, հրաման տուաւ որ երթան տեղեկանան և զան իրեն իմացնեն : Իր կիներէն մէկը՝ սրահէն չեխելով՝ վանդակէն նայեցաւ, և եկաւ ըսելու որ սուրբ կինը պաշարող ամբոյնէն կ'այ աղմուկը, վասն զի ամէն մարդ իր բժշկութիւնը կ'ուզէր գաննել անոր ձեռնադրութեամբը :

Իշխանուհին, որ՝ շատ ատենէ վեր՝ այս սուրբ կնիկն գովեալը լսեր էր, բայց ասկալին տեսած չէր զանի, հետաքրքիր եղաւ զանի տեսնելու և անոր հետ խօսակցելու : Եւ որովհետև այս փափաքը յայտնեց՝ ներկայ գանուող ներքինապետն անոր ըսաւ որ եթէ կը բաղձայ՝ գիւրին էր զանի ներս բերելու, բաւական էր որ հրաման տայ : Իշխանուհին հաւանութիւն տուաւ, և անմիջապէս ներքինապետը չորս ներքինիներ զըրկեց պառտ իրելով որ շինովի սուրբ կինն առնուն բերեն :

Այն ինչ ներքինիները դուրս ելան Ալատալինի պալատին դռնէն և գէպ ՚ի ծպտեալ վհուկին կողմը գիմեցին՝ բազմութիւնը ցրտեցաւ. երբ մինակ մնաց վհուկն, և տեսաւ որ ներքինիները գէպ իրեն կ'ան ինքն ալ յառաջանցաւ, այնչափ ուրախութեամբ որչափ որ կը գիտէր որ իր խարէութիւնը յաջող ելք մը պիտի ունենայ : Ներքինիին մէկն անոր ըսաւ. « Սուրբ կին, իշխանուհին քեզ տեսնել կ'ուզէ, եկուր, մեզի հետեւ : — Իշխանուհին հրաւերը մեծ պատիւ է ինձ, վրայ բերու սուտ ֆատիմէն, պատրաստ եմ անոր հնազանդելու : » Եւ նոյն պահուն ներքինիներուն ետևէն գնաց, որոնք արդէն պալատին ճամբան բռնելու էին :

Երբ վհուկն՝ որ բարեպաշտ կերպարանին ներքև սողայելական հողի մը պահէր, քան չորս պատուհանով սրահը մտաւ և իշխանուհին տեսաւ, աղօթք մ'սկսաւ արտասանել որ անոր առողջութեան, երջանկութեան և բոլոր բաղձանաց կատարման համար երկար բարակ մաղթանք կը պարունակէր : Յետոյ իր խարէական և կեղծ ու պատիւը ճարտասանութիւնը թափեց իշխանուհին սիրտը զբաւելու համար՝ միշտ բարեպաշտական գէմք մըցոյց տալով, և այս գործին մեջ այնչափ գիւրաւ յաջողեցաւ, որչափ որ իշխանուհին բնականապէս բարեսիրտ

ըլլալուն՝ ստոյդ էր որ ամէն մարդ իրեն պէս բարի է, մանաւանդ այն մարդիկ և կիներն որ Աստուծոյ ծառայելու ուխտած են առանձնութեան մէջ:

Երբ սուտ Ֆատիմէն իր երկար յորդորը լնցուց, «Բարի մայր իմ, պատասխանեց իշխանուհին, շնորհակալ եմ ընտիր արօթիցդ համար. վտառհ եմ անոնց վրայ և կը յուսամ որ Աստուծոյ լսելի կ'ըլլան, մօտեցիր և իմ քովս նստիր:» Սուտ Ֆատիմէն կեղծ համեստութեամբ մը անոր մօտ նստաւ, և այն ատեն նորէն խօսիլ սկսաւ իշխանուհին այսպէս. «Իմ բարի մայր, բան մը պիտի հարցնեմ քեզ և պէտք է որ շնորհես, կ'աղաչեմ մի մերժեր. կ'ուզեմ որ ինձի հետ բնակիս, որպէս զի քու կենացդ պատմութիւնն ինձ պատմես և քու օրինակովդ սորվեցընես ինձ թէ ի՞նչպէս պէտք է որ Աստուծոյ ծառայեմ:

— Իշխանուհի, ըսաւ այն ատեն կեղծ Ֆատիմէն, կ'աղաչեմ մի պահանջեր ինձ այնպիսի բան մ'որուն եթէ հաւանիմ արօթքէս և բարեպաշտական պարտաւորութիւնէս ետ պիտի մնամ: — Այդ մասին անհոգ եղիր, վրայ բերաւ իշխանուհին, շատ պարտաւ սենեակներ ունիմ, ուղածդ կրնաս ընտրել և աղատօրէն քու մենարանիդ պէս աղօթքդ ընել:

Ահա ինչ որուն միակ նպատակն էր Արտաթինի պալատը մուտ ունենալ՝ ուր իրեն աւելի գիւրին պիտի ըլլար խորհած անդգամութիւնը գլուխ հանել, իշխանուհոյն պաշտպանութեան ներքե մնալով՝ քանի որ դժուարին պիտի ըլլար իրեն եթէ մենարանէն պալատն երթար դար, իշխանուհոյն առաջարկութիւնն ընդունելու դժուարութիւն չցոյցուց, և անոր ըսաւ. «Իշխանուհիս, որչափ որ ինձի պէս աղքատիկ և թշուառ մ'աշխարհէս և անոր շքեղութիւններէ քաշուելու ուխտ ըրած ըլլայ, չեմ համարձակիր քեզի պէս բարեպաշտիկ և ողորմակէր իշխանուհոյ մը կամքին և հրամանին դէմ գնել:

Ահա ինչ այս պատասխանին վրայ՝ իշխանուհին ոտք ելնելով՝ անոր ըսաւ. «Ոտք ելիր և ինձի հետ եկուր, որ ունեցած պարտաւ խոցերս քեզի ցոյցնեմ որ հաւանածդ ընտրես:» Ահա կը Պատրուլպուտաւր իշխանուհոյն ետեւէն գնայ, և անոր ցոյց տուած ամէն սենեակներէն, որոնք շատ մաքուր էին և զարդարուած, գնաց ամենէն աղտոտն ընա-

րեց, կեղծաւորութեամբ ըսելով թէ իրեն համար շատ յարմար էր և մինակ իշխանուհոյն հաճելի ըլլալու մտօք կ'ընդունէր:

Իշխանուհին վերնադոցն սրահը տանիլ ու վրայ այն անօրէն խաբերան որպէս զի հետը ճաշ ընէ, բայց որովհետեւ կերակուր ուտելու համար հարկ էր որ երեսը բանայ, զոր մինչև այն միջոցին դոց պահէր էր, և վախնալով որ իշխանուհին զինքը կը ճանչէ և սուտ Ֆատիմէն ըլլալը կը հասկնայ, այնչափ թախանձանօք աղաչեց որ զանց ընէ ճաշն, ըսելով թէ մինակ հաց և չոր պտուղ կ'ուտէ, և թէ իր խոցը պիտի ընէ իր ճաշն, որ իշխանուհին հաճութիւն տուաւ: «Իմ բարի մայրս, ըսաւ անոր, աղատ ես, բռնէ թէ մենարանդ կը գտնուիս, երթամ կերակուրդ զրկեմ, բայց նայէ որ ճաշդ ընելէդ ետե քովս գաս, վասն զի քեզ պիտի սպասեմ:»

Իշխանուհին ճաշեց և սուտ Ֆատիմէն շուտ մը դարձաւ անոր քովէ երբ ներքինի մը ձեռօք իմացաւ որ սեղանէն ելեր էր: «Իմ բարեմիտ մայրս, ըսաւ անոր իշխանուհին, քեզի պէս սուրբ կին մ'իմ քովս ունենալուս չափազանց ուրախ եմ, վասն զի պալատս քեզմով պիտի օրհնուի: Իսկ այս պալատս ի՞նչպէս կը գտնես, սակայն քեզի ամէն կողմերը ցոյց տալէս ետե, ըսէ թէ ի՞նչպէս կը գտնես այս սրահս:»

Այս հարցման վրայ՝ սուտ Ֆատիմէն՝ որ իր գերն աւելի լաւ խաղաղութեամբ մինչև այն ատեն դուրս վար բռներ էր, առանց սաղիս անդին նայելու, վերջապէս աչքերը վերցուց սրահին չորս կողմը լաւ մը դիտեց, և ապա ըսաւ. «Իշխանուհի, այս սրահն իրօք սքանչելի է և շքեղ: Սակայն որչափ որ ասանկ բաներու անտեղեակ առանձնուհի մը կրնայ դատել, կարծեմ թէ բան մը կը պակտի: — Կ'ընչ բան, իմ բարի մայրս, վրայ բերաւ Պատրուլպուտաւր իշխանուհին, կ'աղաչեմ ըսէ ինձ: Իսկ ես կարծէի թէ, ինչպէս որ շատերն ալ կ'ըսէին, բան մը պակաս չէ, եթէ պակաս բան մը կայ՝ դարմանը կրնամ գտնել:

— Իշխանուհիս, վրայ բերաւ սուտ Ֆատիմէն անհանարին կեղծաւորութեամբ մը, ներէ իմ համարձակութեանս, իմ կարծեք՝ եթէ կրնայ կարեւոր երևիլ աչքիդ, ըսեմ, եթէ սա գտնելիս վրան ու միջտեղը պատկուծի մը հաւկիթը կախուած ըլլար՝ այս սրահն աշխարհիս մէջ նմանը չէր ունենար և արեւելոց հրաշալիքը կ'ըլլար:

— Բարի մայր, հարցուց իշխանուհին, ի՞նչ թռչուն է պատկուճն, և նուկից կարելի է դանել անոր հառկիթն: — Իշխանուհի, պատասխանեց սուտ ֆատիմէն, անհնարին մեծութեամբ թռչուն մ'է, և Կովկասու բարձրագոյն կողմը կը բնակի. պալատիդ ճարտարապետը կրնայ քեզի համար հատ մը դանել:»

Սուտ ֆատիմէն շնորհակալ ըլլալէն ետև իշխանուհին, որ կարծէր թէ սուտ խորհուրդն ընտիր խորհուրդ մ'է, սկսաւ ուրիշ ինդիքներու վրայ խօսիլ անոր հետ, բայց պատկուճի ձուն մտքէն չելաւ, վասն զի Ալատալինի պիտի յայտնէր որսէն դառնալուն: Ալատալին վեց օրէ վեր որսի գացիր էր, և վճուկն որ այս բանս գիտէր, ուղեր էր անոր բացակայութենէ օդուս քաղել: Ալատալին նոյն օրը դարձաւ երեկոյեան դէմ, ճիշտ այն միջոցին որ սուտ ֆատիմէն իշխանուհւոյն մնաս բարև ըսելով իր սենեակը քաշուեր էր: Ալատալին բարևելով զանի գրկեց, բայց էրեն այնպէս երեցաւ որ զինքը քիչ մը ցուրտ կ'ընդունի:

«Իշխանուհիս, ըսաւ անոր, ես չեմ դանել քեզ ըստ սովորականին ուրախ. միթէ բացակայութեանս ատեն բան մը պատահեցաւ, և արդեօք դժգոհութեանս պատճառ մ'ունիս. յանուն Աստուծոյ մի պահեր այդ կէտն ինչէ, ձեռքես եկածը պիտի ընեմ ցաւք ցրուելու համար: — Բան մը չէ, պատասխանեց իշխանուհին, և այս մասին այնչտի անփոյթ եմ որ չէի կարծեր թէ երեսիս վրայ անոր նշմայրը տեսնելովդ անհանդիստ ըլլաս: Բայց որովհետև իմ ակնկալութեանս հակառակ փոփոխութիւն մը կը տեսնես անոր վրայ, անոր պատճառը քեզնէ չպիտի պահեմ, որ կարևորութիւն մը չունի: Կարծեր էի, շարունակեց Պատրուարտուտը իշխանուհին, որ մեր պալատն աշխարհիս ամենէն հոյակապ, շքեղ ու փառաւոր պալատն է: Սակայն պիտի ըսեմ քեզ թէ ինչ փչեց խելքիս վերնասրահը քննելէս ետև: Միթէ դու ալ չես կարծեր որ այս սրահը կատարեալ կ'ըլլայ եթէ դմբեթին մէջ անդէն պատկուճի ձու մը կախուի: — Իշխանուհի, պատասխանեց Ալատալին, բաւական է դու ըսես որ պատկուճի մը ձուն պակաս է, որ ես ալ նոյն պակասութիւնը դանեմ: Այիտի տեսնես թէ քու սիրոյդ համար ամէն բան իսկոյն կատարելու պատրաստ եմ:»

Նոյն պահուն Ալատալին Պատրուարտուտը իշխանուհին թողուց,

վերնասրահն ելաւ, և այն տեղ կանթեղը ծոցէն հանելէն ետև, զոր այն վտանդէն վեր միշտ իր քովը կը պահէր, զայն շփեց: Իսկոյն ձիւնը ներկայացաւ անոր առջև: «Ճին, ըսաւ անոր Ալատալին, այս դմբեթիս պատկուճի մը ձուն պակաս է, կը խնդրեմ, յանուն կանթեղին, որ զայն դանես բերես և կախես:»

Այն ինչ Ալատալին այս խօսքերն արտասանեց որ ճինն այնպիսի աղմկալի և ահոնելի ազդակ մ'արձակեց որ սրահը դողեցաւ, և քիչ մնաց որ Ալատալին թաւալոր պիտի դար: «Նոյն ըսիր, թշուառական, դոչեց ճինն այնպիսի ձայնով մ'որ ամենէն անվահեր մարդը կրնար դող հանել, միթէ բաւական չէր որ ես և իմ ընկերներս քու սիրոյդ համար ամէն բան ըրինք, և հիմակ կ'ենես անմահն ասեղախտութեամբ կը սրահանջես որ իմ աէրս քեզի բերեմ և դմբեթին մէջ անդէն կախեմ: Այս դաւաճանութեանս պատճառաւ արժանի էիր որ քեզ, կինդ և պալատդ միտիր դարձնեմ: Բայց բարեբաղդարար այդ հարցումդ քու կողմէ չէ, անոր հեղինակն ո՞վ է հիմակ քեզի պիտի ըսեմ. Ափրիկեցի վճուկին եղբայրն է՝ քու թշնամիդ, զոր ըստ արժանոյնս զանի ջնջեցիր: Այն անձը քու պալատիդ մէջ ֆատիմէ անուն սուրբ կնիկան հաղուտով ծաղեալ, և այն կինը տպանած է. ահա այս սուտ ֆատիմէն գրկեց կինդ որ այդ վնասակար ինդիքն առաջարկես ինձ: Իր գիտատորութիւնն է քեզ սպաննել, ուստի զպոչ կ'իջեցիր:» Այս ըսելով ճինն աներևոյթ եղաւ:

Ալատալին ճինին վերջին խօսքերը միտքը պահեց, արդէն սուրբ ֆատիմէի անունը լսեր էր, և քաջ գիտէր թէ ինչ կերպով կը բժշկէր զըլիցաւերն, ինչպէս որ կ'ըսէին: Իշխանուհւոյն սենեակը դարձաւ և սուտնց պատահածն իմացնելու նստաւ, ըսելով թէ զըլիի ցաւով մը յանկարծ կը տառապի, և ձեռքը ձակալին տարաւ: Իշխանուհին անմիջապէս հրամայեց որ բարեպաշտ ֆատիմէն կանչեն, և երբ զանի կանչելու դացին՝ պատմեց Ալատալինի թէ ինչ առթիւ իրենց պալատը կը դանտէր այն կինն, որուն սենեակ մը տուեր էր:

Սուրբ ֆատիմէն հասաւ և երբ ներս մտաւ, «Ելուր, իմ բարի մայրս, ըսաւ անոր Ալատալին, ուրախ եմ քեզ տեսնելուս, և բարեբաղդ որ այս տեղ կը դանտիս: Գլուխս սաստիկ կը ցաւի, խնդրեմ օգ-

նէ ինձ, և քու արժեքդ վրայ մեծ վստահութիւն ունենալուս, յուսամ որ ինձի պէս ստաւապոյներուն ըրած գարմանդ իզնէ չես զլասնար :»

Այս խօսքերն աւարտելով՝ զլուխը ծռելով նստաւ, և սուտ ֆատիւմէն իր կողմէն առաջ անցաւ, բայց ձեռքը դաշոյնի մը տանելով՝ զոր պատմութեանն տակ գօտիէն կախեր էր : Ալատին որ անոր շարժումը կը զիտէր, անոր ձեռքը բռնեց դաշոյնը չհանած, և իր դաշոյնովն անոր սիրար ծակելով՝ դետինը շնչասպառ նետեց :

«Իմ սիրելի էրիկ», ինչ ըրիւր, զոչեց իշխանուհին զարմանքով ինչն համար այս սուրբ կինը սպաննեցիր : — Աչ, իշխանուհիս, պատասխանեց Ալատին առանց այլայլելու, ես ֆատիւմէն չսպաննեցի, այլ անզգամ մ'որ իս պիտի սպաննէր թէ որ առաջը չաւուրի : Ահա այս անզգամ մարդն է, ըսաւ նա՝ անոր քողը վերցնելով, որ սրբաւիրօն ֆատիւմէն սպաննեց, և անոր հաղուստով ծոյտեալ այս տեղեկի էր, և որպէս զի բոլորովին համոզուիս, ահա ըսեմ որ քեզ արեւանդող Ափրիկեցի վհուկին եղբայրն էր :» Յետոյ Ալատին յայտնեց անոր թէ ինչ միջոցաւ այս տեղեկութիւնները ստացած է, և այնուհետեւ դիակը վերցնել տուաւ :

Ահա այսպէս Ալատին երկու կախարդ եղբարց հալածանքէն ազատեցաւ : Քանի մը տարիէն սուլթանը խորին ծերութեան մէջ մեռաւ : Արովհետեւ արու զաւակ չունէր՝ Պատրուլլուտուր իշխանուհին՝ իբր օրինաւոր ժառանգուհի, անոր յաջորդեց և տէրութեան իշխանութիւնն Ալատինի յանձնեց : Երկար տարիներ միտին սպրեցան և բազմաթիւ յաջորդներ թողուցին :

«Ահա ֆատուտէր, ըսաւ Շէհերազատ սուլթանուհին՝ հրաշալի կանթեղին առ թիւ պատահած դէպքերուն պատմութիւնն աւարտելով, Չեր վեհափառութիւնն անշուշտ նկատած է որ Ափրիկեցի վհուկն ուրիշ բան չէ բաց եթէ գատապարտելի միջոցներով դանձեր զիղելու հետամուտ մարդու մը պատկերն, որ թէև կը յաջողի անբաւ հարստութիւններ ձեռք ձգելու, բայց չվայելի՛ր՝ վասն զի անարժան էր : Իսկ Ալատին կը ներկայէ ստորին կարգի մարդ մ'որ մինչև արքայական տախճանը կը հասնի՝ մի և նոյն դանձերը զործածելով՝ զորս

առանց փնտաւելու կ'ստանայ քանի որ պէտք կ'ունենայ և անով որոշեալ նպատակին կը հասնի . իսկ սուլթանը կը ներկայէ բարեսիրտ, արդարատէր թագաւոր մ'որ մեծ վստահներու մէջ կ'իյնայ և մինչև անգամ գահը կորուսելու վիճակին մէջ կը գտնուի, երբ անհնարին անիրաւութեամբ մը կը համարձակի՝ արդարութեան օրինաց հակառակ՝ անմեղ մը գատապարտելու, առանց անոր արդարացումը մտիկ ընելու : Աւերջապէս պիտի գարշի երկու ասիրատ մարդոց անզգամութենէն, որոց մին իր կեանքը կը զոհէ դանձեր ձեռք ձգելու, և միւսը թէ իր կեանքն և թէ իր կրօնն իրեն պէս անօրինի մը վրէժխնդրութեան կը զոհէ, և անոր պէս իր անզգամութեան պատիժը կը կրէ :»

Հնդկաստանի սուլթանը Շէհերազատ սուլթանուհոյն ըսաւ թէ շատ զոհ է հրաշալի կանթեղին սքանչելեաց պատմութենէն, և թէ ամէն իրիւր ըսած զրոյցներն իրեն մեծ հաճութիւն կը պատճառեն : Եւ արդարեւ ակտորժելի և ընտիր բարոյականով մը համեմատ էին : Սուլթանը քաջ կը տեսնէր որ հետզհետէ նոր նոր պատմութիւններ կը պատմէր, և զոհ էր որ այս կերպով ըրած երդումը թէ մինակ զիշեր մը պիտի պահէ կին մը, կախ կը ձգէր : Աւրիշ նպատակ չունէր բաց միայն տեսնել թէ երբ պիտի լմնայ այս վէպերուն աղբիւրը :

Այս նպատակաւ Ալատինի և Պատրուլլուտուր իշխանուհոյն պատմութիւնը լսելէն ետե՛ որ մինչև այն օրը պատմածներէն շատ տարբեր էր, երբ արթնցաւ Տինարզատին ձայն տուաւ և զանի ալ արթնցուց, սուլթանուհոյն հարցնելով թէ արդեօք վէպերը լմնցան :

«Վէպերս լմնցան մի, տէր իմ, պատասխանեց սուլթանուհին այս հարցման վրայ զարմանալով, շատ վէպեր ունիմ տակաւին պատմելու, և այնքան շատ են որ չեմ կարող յայտնել անոնց թիւը : Մինակ կը վախնամ որ Չեր վեհափառութիւնը չձանձրանայ և իս մտիկ ընելէն չտաղովանայ քանի որ ըսելիքս պակաս չէ :

— Այդ վախդ փարատէ, վրայ բերաւ սուլթանն, և նայիմ ուրիշ ինչ ունիս ինձի ըսելու :»

Շէհերազատ սուլթանուհին՝ Հնդկաց սուլթանին այս խօսքերէն սիրա առնելով՝ սա կերպով անոր նոր պատմութիւն մը պատմելու սկսաւ :

ՀԱՐՈՒՆ - ԱԼ - ԲԱՇԻՏ ԱՄԻՐԱՊԵՏԻՆ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Ահհափառ տէր , քանի մ'անդամ պատմեցի քեզ երևելի Հարուն-ալ-Տաշիա ամիրապետին արկածներն . ուրիշ շատ արկածներ ալ հասած են անոր , և որոցմէ հետևեալը ձեր հետաքրքրութեան արժանի է :

Երբեմն , ինչպէս որ Ձեր վեհափառութիւնը փորձով պիտի գիտնայ , այնպիսի արաքոյ կարգի ուրախութեան մէջ կը գտնուի մարդ որ նոյնն ամենէն առաջ մեզի մտակողներուն կը հաղորդենք , կամ թէ անոնց ուրախութեան մասնակից կ'ըլլանք : Երբեմն ալ այնպիսի մեղաւմաղձոտութեան մէջ կը գտնուինք , որ մենք մեզի անտանելի ենք , և ոչ միայն ասոր պատճառը չենք կրնար յայտնել , այլև եթէ վնասենք անդամ չենք կրնար գտնել :

Օրին մէկն ամիրապետն այս արամաղբութեան մէջ էր՝ երբ Ճեաֆէր , իր սիրական և հաւատարիմ վէզիւրն անոր առջեւ ելաւ : Այս պաշտօնեայն զանի առանձին գտաւ , թէև շատ քիչ անդամ մինակ կը նստէր , և յառաջ գալու առեն՝ գիտելով որ միջին տիրութեան մէջ կը գտնուէր , և ոչ իսկ աչքերը կը վերցնէր իրեն նայելու , կանկ առաւ սպասելով որ բարեհաճի իրեն դառնալու :

Աւերջապէս ամիրապետն աչքը Ճեաֆէրին դարձուց և անոր նայեցաւ , բայց շատ մ'անդին դարձաւ առաջուան պէս անշարժ վիճակի մէջ կենալով :

Մեծ վէզիւրը նկատելով որ դաժան երևոյթ մը չունէր ամիրապետին նայուածքն իրեն դէմ , սկսաւ խօսիլ այսպէս . « Իշխանդ հաւատացեալոց , Ձեր վեհափառութիւնն արդեօք կը բարեհաճի՞ ըսել ինձ թէ ինչու համար այդչափ մեղամաղձոտ էք , թէև քիչ կը ստատահի ձեզ այդպիսի բան մը :

— Երաւ է , վէզիւր , պատասխանեց ամիրապետը՝ դիւրքը փոխելով , որ քիչ կը ստատահի ինձ այսպիսի բան մը , և եթէ ազը չունէիր չպիտի զրայի այս վիճակս որմէ աղատիլ կ'ուզեմ : Եթէ յառուկ բանի մը

համար եկած չես , մեծ հաճոյք պիտի պատահուես ինձ բան մը հնարել այս մեղամաղձոտութիւնս փարատելու համար :

— Իշխանդ հաւատացեալոց , վրայ բերաւ մեծ վէզիւրը , սարաքս միայն ստիպեց իս այս տեղ գալու , և կը համարձակի յիշել ձեզ որ հարկ կը սեպէք անձամբ քննել թէ արդեօք ձեր ուզածին պէս մայրաքաղքիդ և շրջակայ երկիրներուն տեսչութիւնը կը կատարուի թէ ոչ : Ահա այսօրուան համար որոշեցիք այս ծանրութիւնն առնելու , և յարմար առիթ մ'է ձեր սովորական զուարթութիւնը սրաշարղ ամպերը փարատելու համար :

— Մտցեր էի , պատասխանեց ամիրապետն , և շատ պատեհաւթիւ կը յիշէցնես այդ բանն ինձի . ուրեմն զնա զգեստդ փոխէ , ինչպէս որ ես ալ պիտի փոխեմ : »

Ամէն մէկն օտարական վաճառականի հաղուստ հաղաւ , և այս ծպտեալ հաղուստով պաշտօնի պարտիզին մէկ ծածուկ դռնէն միտին գուրս գաշտեցնելու : Գրեհն քաղքին շրջանն ըրին՝ մինչև Եփրատայ ամառնքը՝ քաղքին դռնէն բաւական հեռու , և ամէն բան բարեկարգութեան մէջ գտան : Յետոյ նաւակով մ'այս դեպէն անցան , և քաղքին միւս կողմն ալ ստրտեղէն ետև՝ կամրջին ճամբան բռնեցին , որ քաղաքը կը տանէր :

Այս կամրջէն անցան՝ որուն ծայրը բաւական տարօք կոյր մը տեսան , որ ողորմութիւն կ'ուզէր : Ամիրապետը դարձաւ և անոր տուառակի մը :

Այդին իսկոյն անոր ձեռքը բռնեց և կեցուց :

« Ողորմաւոր մարդ , ըսաւ նա , ով որ ես , դու որ Աստուծոյ գրգմամբն անշուշտ ինձ այս ողորմութիւնը կ'ընես , շնորհ բրէ ինձ նաև ապտակ մը տալու , արժանի եմ ասկէ աւելի մեծ պատժոյ մը : »

Այս խօսքերն աւարտելով՝ ամիրապետին ձեռքը թողուց որ ապտակ կը տալու աղատութիւն ունենայ . բայց որպէս զի ապտակը չտալով չանցնի , անոր հաղուստէն բռնեց :

Ամիրապետը կոյրին խնդրոյն և դորձին վրայ զարմանալով՝ « Եարի մարդ , ըսաւ անոր , չեմ կարող խնդրող կատարել , և առաժ ողորմութեանս արժէքը կորուսել քեզի հետ այնպէս խտրուելով : » Եւ

այս խօսքերն աւարտելով ճիգ մ'ըրաւ որ կոյրին ձեռքէն խալըսի :

Այդն որ անկասկած էր իր բարեբարին ընդդիմութեանն , արդէն այս մասին ունեցած փորձառութեան համար , զանի կիցնելու աւելի ճիգ մ'ըրաւ :

«Տէր իմ , վրայ բերաւ նա , իմ համարձակութեանս և տուած նեղութեանս ներէ , կ'աղաչեմ ապտակ մը տուր ինձ , ապա թէ ոչ ըրած որորմութիւնդ ետ առ . այս պայմանաւ միայն կ'ընդունիմ դայն , որպէս զի Աստուծոյ առջև ըրած մէկ հանդիսաւոր երգմանս զէմ' չգործեմ , և եթէ ասոր պատճառը զիմնայի՛ր՝ դու ալ պիտի վիայէիր ինձի հետ որ այս պատիժը թեթեւ է :»

Ամիրապետն որ աւելի երկար կենալու տտեն չունէր , կոյրին թախանձանաց զիջաւ և բաւական թեթեւ ապտակ մը տուաւ : Այդն իսկոյն ձեռքը թողուց՝ անոր շնորհակալ ըլլալով և օրհնութիւն տալով : Ամիրապետն իր մեծ վէզիւրին հետ ճամբան շարունակեց , բայց քանի մը քայլ անդին՝ վէզիւրին ըսաւ . «Արեւի թէ իրեն որորմութիւնս տուող մարդոց հետ այսպէս վարուելու զօրաւոր պատճառ մը պիտի ունենայ այս կոյրը . կը փափարէր այս պատճառն իմանալ , ուստի դարձիր , ըսէ անոր թէ ո՞վ եմ , ապապրէ որ վաղը պալատը գտնուի , կէսօրուան աղօթքէն ետքը , կ'ուզեմ անոր հետ խօսիլ :»

Մեծ վէզիւրն ետ գարձաւ , կոյրին որորմութիւն տուաւ , և ապտակն ալ փակցնելէն ետև՝ պէտք եղածը պատուիրեց և ապա դարձաւ և ամիրապետին քովն եկաւ :

Միասին քաղաքը մտան , և հրապարակէ մ'անցնելու ատեն՝ անթիւ բազմութիւն մը տեսան հանդիսականներու , որ նորահասակ և վայելուչ հազուած պատանի մը կը նայէին՝ մտտակ ձլու մը վրայ հեծած , սանձարձակ կը քշէր հրապարակին բոլորտիքը , խարաղանով և մտրաւիով կը զարնէր անպաղտար , այնպէս որ ձին կը փրփրար և արխաթաթաւ էր :

Ամիրապետը՝ պատանիին անդթութեան վրայ զարմանալով՝ կանկաւ առաւ հարցնելու համար թէ արդեօք զիտե՛ն ինչ պատճառաւ իր հեծանելին կը ծեծէ . ամէնքն ըսին թէ անտեղեակ են , բայց քանի մը ատենէ վեր՝ ամէն օր՝ նոյն ժամուն դալով այս տաժանելի կրթութիւնը

կ'ընէ եղեր :

Ամիրապետն ու վէզիւրն իրենց ճամբան շարունակեցին , և ամիրապետն ըսաւ վէզիւրին որ լաւ դիտէ այն հրապարակն և անպատճառ վաղը մի և նոյն ժամուն այն երիտասարդը կոյրին հետ պալատը բերէ :

Ամիրապետը պալատը չհասած՝ շատոնց չանցած փողոցի մը մէջ շէնք մը տեսաւ զոր նոր կառուցեր էին , և կարծեց թէ պալատական իշխանի մ'առարանն էր : Աւելիւրին հարցուց թէ արդեօք զիտե՛ ուրուն է այն տունը : Մեծ վէզիւրը պատասխան տուաւ որ չլիտեր , բայց կրնայ տեղեկանալ :

Եւ դնաց գրացիի մը հարցուց . գրացին ալ պատասխանեց որ այն տունը Հօճա Հասան՝ Ալհասպաշ մականուանեալ մարդունն է , և այսպէս կը լրջուի չունամանս ըլլալուն , և թէ ինքը նոյն արհեստը բանիլը տեսեր է յետին աղքատութեան մէջ , թէ չլիտէին որ ի՞նչ բաղդով այնչափ մեծ հարստութիւն շահեր և շքեղութեամբ ու պատուով նոյն շէնքին ծախար վճարեր է :

Մեծ վէզիւրը դնաց ամիրապետին միացաւ և իմացածն անոր յայտնեց : Ամիրապետն անոր ըսաւ . «Այր փափարքիմ տեսնել այն Հօճա Հասան Ալհասպաշը . դնա ըսէ որ վաղը պալատս գտնուի՛ միւսներուն գտնուած ժամանակը :» Մեծ վէզիւրն ամիրապետին հրամաններն անմիջապէս կատարեց :

Հետեւեալ օրը՝ կէսօրուան աղօթքէն ետքն՝ ամիրապետն իր սենեակը մտաւ , և մեծ վէզիւրն իսկոյն երեք անձերը ներս մտցուց և ամիրապետին ներկայացուց :

Երեքնին ալ սուլթանին աթուին առջև խոնարհեցան , և երբ ոտք ելան՝ ամիրապետը հարցուց կոյրին թէ ի՞նչ է անունը :

«Իմ անունս Պատպա Աստալլահ է , պատասխանեց կոյրը :

— Պատպա Աստալլահ , վրայ բերաւ ամիրապետը , քու որորմութիւն ուղեղու կերպը այնքան այլանդակ երեցաւ ինձ , որ եթէ պատճառ չունենայի՛ր բնաւ քու կամքդ չէի կատարեր , և չէի թողուր որ հասարակութեան այն գայթակղութիւնը տայիր : Աստի կանչել տուի քեզ իմանալու համար թէ ի՞նչ անխոհեմութեամբ այնպիսի այլանդակ

երդում ըրեր ես, և ըսելիքիդ վրայ պիտի դատեմ թէ արդեօք աղէկ ըրիր և թէ պիտի ներեմ քեզ այնպիսի դէշ օրինակ տուող ողորմութիւնը շարունակելու: Արեմն առանց բան մը պահելու ըսէ ինձ, քեզի այն այլանդակ դաղափայն նմ տուաւ. բան մը մի պահեր իղնէ, վասն զի կ'ուզեմ անպատճառ հասկնալ գործը:»

Պապա Ապտալլահ՝ այս յանդիմանութենէ վախնալով՝ երկրորդ անգամ երկիր պագա՝ ճակատը դեպինը քսելով ամբարակտին դահին առջև, և նորէն ոտք ելնելէն ետե՛ Վիշնանդ հաւատացելոց, ըստ անմիջապէս, խոնարհաբար ներում կը ինդրեմ Ձեր վեհափառութեանէն համարձակութեանս համար, որով պահանջեցի, մինչև անգամ ստիպեցի որ ինձի այնպիսի բան մ'ընէք, որ՝ արդարեւ՝ անյարմար կերբի: Իմ յանցանքս կը ճանչեմ, բայց որովհետև այն ատեն չէի ճանչեր Ձեր վեհափառութիւնը, ձեր ներողամտութիւնը կը հայցեմ և յուսամ որ իմ ազխտութեանս հաշտ աչօք կը նայիք: Իսկ ձեր այլանդակ գործ անուանածն իրօք այլանդակ է, և այս իմ գործս ամենուն առջև այսպէս պիտի երևի, իսկ Աստուծոյ առջև՝ ահազին յանցանքի մը խիստ թեթև ազդաշարանք մ'է, վասն զի այս յանցանքս դարձեալ չպիտի քուեմ եթէ ամէն մարդիկ զիս ապտակելով կ'օրին: Ձեր վեհափառութիւնն ինքնին ըսածին դատաւոր պիտի կանդնի, երբ պատմութիւնս լսելէն ետե՛ ինչպէս որ կը հրամայէք որ պատմեմ, հասկըցնեմ ձեզ թէ ինչ է իմ այն մեծ յանցանքս:



Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Պ Ա Պ Ա Ա Պ Տ Ա Լ Լ Ա Ա Վ Ո Յ Ր Ի Ն

Իշխանդ հաւատացելոց, շարունակեց Պապա Ապտալլահ, Պաղատաւ ծնած եմ, քիչ մը ինչք ունէի զոր ժառանգեցի հօրէս և մօրէս, որոնք իրարմէ քիչ մ'նոտքը մեռան: Թէև նորահասակ էի, բայց դարձեալ անօգուտ ծախսեր չէի ընէր և և շատ մ'երիտասարդներու պէս

ստակս անաւակութեան մէջ չէի վստաներ: Ընդ հակառակն՝ բան մը չմտցայ իմ ճարտարութեամբս, ջանքովս նոյն ժառանգութիւնս աւելցնելու: Վերջապէս բաւական հարուստ եղայ և իմ ստակովս ութսուն ուղտ դնեցի, և կարաւաններու վաճառականաց վարձու տուի, և բաւական ստակ կ'ստնուի ամէն անգամուն որ Ձեր վեհափառութեան տէրութեան մէջ ուղևորութիւն ընէի նոյն կարաւաններու հետ:

Այս երջանկութեանս մէջ և տեղի հարուստ գառնալու անողոսկ փափաքով՝ օր մը՝ Պասարայէն անբեռ ուղտերովս դալու ատեն՝ ճիշտ այն միջոցին որ ձդեր էի մարդպետնի վրայ արածուին, տէրվիշ մը հետիտն՝ որ Պասրա կ'երթար, իմ քովս եկաւ նստաւ հանդէշու համար: Հարցուցի անոր թէ նոսկից կ'ար և ն.ր կ'երթար: Կոքն ալ ինձի նոյն հարցումներն ըրաւ և իրարու հետաքրքրութիւնը գոհ ընելէն ետե՛ մեր ուտելիքը միացուցինք և մէկտեղ կերակուր կերանք:

Մեր ճաշն ընելէն և այլ և այլ անտարբեր բաներու վրայ խօսելէն ետե՛ տէրվիշն ըսաւ ինձ թէ՛ մեր գանուած աեղէն քիչ մը հեռու տեղ մը գիտէր անբաւ դանձերով լեցուն, այնպէս որ եթէ իմ ութսուն ուղտերս այն տեղի ոսկիներով և անգամանդներով բեռնաւորին, դարձեալ պիտի կարծուի թէ ոչ ինչ չէ առնուած:

Այս աղբոր լուրն իս դարմացուց և միանգամայն դմայլեցուց: Արախտութեանէս մնորեր էի, և չէի կարծեր որ տէրվիշը սուտ մը նետել ուզած ըլլայ, ուստի անոր վիզէն պլլուեցայ ըսելով.

Բարի տէրվիշ, կը նայիմ որ աշխարհիս հարստութեանց աչք չունիս, ուստի ինչ օգուտ ունի թէ որ այն գանձին տեղը գիտես. դու որ չոր գլուխ մարդ մ'ես, և շատ քիչ բան կրնաս հետդ տանիլ: Յուցուր ինձ այն գանձին տեղն որ ութսուն ուղտերս անով բեռնաւորեմ, և անմայմէ մէկը քեզի ընծայ տամ՝ ինձ ըրած բարեացդ ի նշան երախտագիտութեան և ինքութեանս:»

Իրաւ է որ քիչ բան կ'ընծայէի, բայց շատ էր ըստ իս, քանի որ յանկարծ սիրտս չափազանց ազահութիւն մը տիրեց՝ այն լուրը տալէն վեր, և ինձ մնալիք եօթանասուն ինն բեռն ոչ ինչ կ'երևէր ինձ անոր աալիք մէկ բեռիս հետ, որմէ պիտի գրկուէի:

Տէրվիշն որ իմ տենչս հարստութեանց համար տեսաւ, ընաւ չղոյն

Թակրեցաւ իրեն ըրած անխորհուրդ առաջարկութենէս : «Եղբայր իմ, ըսաւ առանց այլայելելու, դու ալ քաջ կը տեսնես որ առաջարկածդ ինչէ խնդրած բարեգործութեանդ քով բան մը չէ : Արնայի գազանի պահել գանձին տեղը, բայց քանի որ յայտնեցի՝ ասկից կրնայիր մտաբերել որ միաբն բարի էր և թէ տակաւին, քեզ արէկութիւն ընելով՝ ուղեցի որ իս միշտ յիշես և բարդդ շինես : Աւտի աւելի արդար առաջարկութիւն մ'ունիմ՝ քեզի ընելու, և նայէ՛ արդեօք քեզի կը յարմարի : Ա՛րսես թէ, յարեց տէրվիշն, ու թատն ուղտ ունիս, զանանք միասին կը բեռնաւորենք որչափ որ ոսկի և անդամանդ վերցնեն, սա պայմանաւ որ բեռնաւորելէն ետե՛ կէսն իրենց բեռով ինձի տաս և միս կէսը դու առնուս : Եետոյ իրարմէ կը բաժնուինք, և մեր ուղած տեղը զանտը պիտի տանինք՝ դու քու կողմէ դ և ես իմ կողմէս երթալով : Ար նային որ այս բաժանումը շատ իրաւացի է, և եթէ քառասուն ուղտդ ինձ կ'ընծայես, իմ միջոցաւ ալ դու այնչափ ստակ պիտի ստանաս որով կարող պիտի ըլլաս հազարաւոր ուղտեր գնել : »

Չէի կրնար ուրանալ որ տէրվիշին առաջարկած պայմանը շատ արդարացի էր : Սակայն չմտածելով թէ՛ իրչափ պիտի հարստանամ եթէ ըսածն ընդունիմ, մեծ կորուստ համարեցի իմ ուղտերուս կէսը տալս, մանաւանդ երբ կը նկատէի որ տէրվիշն ինձի շատ հարուստ պիտի ընէր : Ա՛ երջապէս ապերախտութեամբ կը վճարէի արդէն պարզ բարեգործութիւն մը, զոր տակաւին տէրվիշէն չէի ընդունած : սակայն վարանելու ատեն չէր, պէտք էր այն պայմանն ընդունիլ կամ բոլոր կենացս մէջ զոջալ՝ իմ սխալմունքովս բարդս մերժելուս :

Նոյն միջոցին իսկ ուղտերս գումարեցի և միասին մեկնեցանք : Քիչ մ'ատեն քալելէն ետե՛ բաւական ընդարձակ հովիտ մը հասանք, որուն մուտքը շատ նեղ էր : Իմ ուղտերս մէկիկ մէկիկ անկից անցան, բայց որովհետեւ ճամբան երթալով կը լայնար, ամէնքը մէկ քալելու միջոց դտան : Այն երկու լեռներն որ այս հովիտը կը յօրինէին՝ կիսաշրջան մ'ընելով ծայրն՝ այնքան բարձր էին, սեպածե և անկարելի, որ վախ չկար թէ մարդ մը մեզ տեսնէ :

Երբ այս երկու լեռներու մէջ տեղը հասանք, «Աւելի յառաջ չերթանք, ըսաւ ինձ տէրվիշն, ուղտերդ կեցուր և սա միջոցին մէջ ուղ-

տերդ նստեցուր, որովէս զի բեռնաւորելու դժուարութիւն չքաշենք, և երբ այս ըսածս ընես՝ դանձր բանալու պիտի սկսիմ : »

Տէրվիշին պատուէրը կատարեցի և գացի շտա մ'անոր միանալու : Տեսայ որ կայծքար մը ձեռքը կեցեր էր և չոր փայտ մը կը վնասուէր վառելու համար : Այն ինչ կրակը վառեց որ անոր մէջ քիչ մը խունկ նետեց, քանի մը խօտք արտասանելով որոց իմաստը լաւ չէի հասկընար, և անմիջապէս թանձր բոխ մը դէպ ՚ի օդն ելաւ : Այս մտեր զատեց, և նոյն միջոցին թէ և երկու լեռներու մէջ գտնուած ժայռը շատ բարձր էր և ուղղահայեայ և բնառ ճեղք մը չունէր, երկու թեւով դրան պէս ճեղք մը բացուեցաւ նոյն ժայռին մէջ՝ հիանալի արհեստով մը :

Այս ճեղքը մեր աչքին պարզեց ժայռին մէջ խրուած փառաւոր պալատ մ'որ անտարակոյս ճինելու գործ էր քան թէ մարդու, վասն զի չէր երևեր բնառ որ մարդիկ պատկնի յանդուզն ու հիանալի գործի մը ձեռնարկելու կարող ըլլան :

Բայց, իշխանը հաւատացելոց, այս դիտողութիւնը նոյն միջոցին չըլի այլ ետքն, ամէն կողմէ տեսնուած անբաւ հարստութեանց վրայ չընդունցայ իսկ, ժամանակ չանցուցի այն դանձրութիւն կարգադրութիւնը դիտելու, այլ ինչպէս որ արժին իր որսին վրայ կ'ընէ՝ ես ալ առջևս ելած ոսկեկոյտերուն վրայ նետուեցայ, և սկսայ հետս բերած պարկս կարելի եղածին չափ լեցնել : Պարկերը մեծ էին, և ամէնքն ալ յօժարակամ կը լեցնէի բայց հարկ էր ուղտերուս ուժին նայելով բեռնաւորել զանանք :

Տէրվիշն ալ իմ ըրածս ըրաւ, բայց դիտեցի որ նա աւելի անդամանդ կը ժողվէ քան թէ ոսկի, և որովհետեւ ասոր պատճառը յայտնեց, ես ալ անոր օրինակին հետեւեցայ և ամէն տեսակ անդին քարեր վերցոցինք քան թէ՛ դրամ : Ա՛ երջապէս մեր բոլոր պարկերը լեցուցինք և մեր ուղտերը բեռնաւորեցինք : Ար մնար միայն դանձր զօցել և մեկնել :

Բայց մեկնելէն առաջ տէրվիշը զանձատուներ մտաւ, և որովհետեւ շատ տեսակ ոսկեղէն և ուրիշ թանկագին մետաղէ ամաններ կային անոր մէջ՝ դիտեցի որ ամանի մը մէջէն ինձի անձանիօթ փայտէ տուփ մը

առաւ, իր ծոցը դրաւ՝ ցոյց տալով ինձ, որուն մէջ տեսակ մը եղ կար :

Տէրվիշը դանձր-բանալու համար ինչ արարողութիւն որ բրաւ՝ գոյնիւ համար ալ նոյնն բրաւ, և քանի մը խօսք արտասանելէն ետե՛ գանձին գուռը զոցուեցաւ և ժայռն առաջուան պէս ամբողջ երեցաւ մեր աչքին :

Այն ատեն մեր ուղտերը բաժնեցինք, և ոտք հանեցինք իրենց բեռերով : Ինձ ընկած քառսուն ուղտին զլուխն ընկայ, տէրվիշն ալ իրեն տուած ուղտերուս զլուխն անցաւ և հովտին մուտքէն գուրս ելանք մինչև մեծ ճամբան ուր իրարմէ պիտի զատուէինք, նա դէպ ՚ի Պարսա երթալու, ևս ալ դէպ ՚ի Պաղտատ : Այս մեծ բարեգործութեան համար իմ շնորհակալութիւնս յայտնեցի ջերմազին, քանի որ ուրիշի տեղ իս մասնակից կ'ընէր այնքան հարստութեան : Աւրախութեամբ զիրար գրկեցինք և մնաս բարև ըսելէն ետե՛ բաժնուեցանք :

Այն ինչ քանի մը քայլ առեր էի ուղտերուս միանալու, որոնք արդէն գրած ճամբաս կը շարունակէին, որ ասերախտութեան և նախանձու սատանան սիրտս զբաւեց : Իմ քառսուն ուղտերուս կորստան վրայ կը ցաւէի, և նամանաւանդ այն գանձերուն վրայ որով բեռնաւորուեր էին : «Տէրվիշն այս հարստութենէ պէտք չունի, կ'ըսէի ինքնովին, գանձերուն տէրն է և որչափ ուղէ կ'ընայ առնուլ :» Այսպէս ստեղծի ասերախտութիւն մը պաշարեց իս և միտքս զրի անոր ուղտերը բեռերուն հետ ձեռք ձգել :

Այս խորհուրդս ՚ի գործ գնելու համար՝ նախ ուղտերս կեցուցի, յետոյ տէրվիշին ետե՛ն վաղեցի, զոր բոլոր ուժովս կոչեցի, և ըսի որ կարևոր բան մ'ունիմ իրեն յայտնելու, և նշան ըրի որ ինքն ալ ուղտերը կեցնէ և ինձի սպասէ : Չայնս լսեց և կանկ առաւ :

Երբ անոր միացայ, «Եղբայր իմ, ըսի անոր, այն ինչ քեզնէ հեռացայ որ բան մը գիտեցի որուն առաջուց բնաւ չէի մտածեր և թերևս դու ալ մտածած չես : Գու բարի տէրվիշ մ'ես, հանդարտ կ'աւրբնա՝ աշխարհային բաներէ հեռի և միմակ Աստուծոյ ծառայելու հոգն ունիս : Արեւիլ է չլիտես թէ ինչ մեծ փորձանքի պիտի հանդիպիս այնչափ ուղտերու հոգը վրայ՝ առնելովք : Եթէ խօսքս մտիլ ընես,

միմակ երսուն հաս հետք կ'առնուս կը տանիս, և կարծեմ թէ այնչափն ալ վարելու բաւական նեղութիւն պիտի քաշես : Իմ խօսքիս հաւան, որովհետև փորձառութեամբ կը խօսիմ :

— Կարծեմ թէ իրաւունք ունիս, վրայ բերաւ տէրվիշն, որ ինչնէ բան մը չէր կրնար զլանալ, և կը խոստովանիմ որ այդ բանը չմտածեցի : Արդէն ըսածիդ վրայ սկսեր էի անհանդիստ ըլլալ : Աւտի հաւնած տաս ուղտը ընտրէ, առ տար և Աստուած հետք ըլլայ :»

Տաս հաս ուղտ զատեցի և միաներուն ճամբուն վրայ գրի որ երթան անոնց ետևը կենան : Չէի յուսար որ տէրվիշն այնչափ շատով պիտի համոզուի : Այս բանս իմ ընչախորութիւնս զբոլեց, և կարծեցի թէ ուրիշ տաս ուղտ ալ անորմէ կորցելու դժուարութիւն չպիտի քաշեմ :

Աւտի՛ փոխանակ բրած ճոխ պարզելին համար շնորհակալ ըլլալու, «Եղբայր իմ, ըսի անոր նորէն, քու հանդատութիւնդ մտածելով՝ չեմ կրնար քեզնէ հեռանալ առանց աղաչելու քեզ որ նորէն նկատես թէ որչափ դժուարին է երսուն բեռնաւորեալ ուղտին առաջնորդել, քեզի պէս մարդ մը մանաւանդ, որ ասանկ աշխատանքի մը վարժ չէ : Աւելի կը թիթեմնաս թէ որ արդէն բրած ընծայիդ պէս նոր ընծայ մ'ալ ընես ինձ : Այս բսածս ոչ այնչափ իմ օգտիս համար է, որչափ որ քեզ ծանրութենէ աղատելու համար : Աւտի ուղտերէդ տաս հաս մ'ալ իմ գլխիս կ'ապէ, քանի որ ինձի պէս մարդու համար մէկ կամ հարիւր ուղտ նայիլ մի և նոյն բանն է :»

Իմ խօսքս փափաքած ազգեցութիւնս ըրին, և տէրվիշն առանց ընդգիւմութեան տուաւ ինձ տաս ուղտ ևս, այնպէս որ իրեն միմակ քսան հաս մնաց, և ես վաթսուն ուղտի տէր եղայ, որոց բեռերը շատ մը վնհատեաներու գանձերէն աւելի մեծ արժէք ունէին : Այնուհետև հարկաւ գո՛՛՛ սէտք էի ըլլալ :

Բայց, իշխանդ հաւատացելոց, ջրգողի մը պէս որ որչափ ջուր խմէ այնչափ կը սպառակի, առաջուանէ աւելի եռանդ և փափաք ունեցայ միւս քսանն ալ ձեռք ձգելու : Աւտի աղաչանքս աւելցուցի, թախանձեցի տէրվիշն որ ունեցած քսան ուղտէն տաս հասն ինձ տայ, և յաջողեցայ : Տէրվիշը խնդիրս կատարեց, իսկ մնացած տաս ուղտին

Համար ալ այնչափ գրկեցի, համբուրեցի զինքն որ ինձ տայ, ըսելով որ իր բարեաց չափը լեցուցած պիտի ըլլայ և իրեն յախտան երախտազէտ պիտի մնամ, որ սիրաս խնդու թեամբ լցուց յայանելով որ աղաչանքս կ'ընդունի:

«Աս դործածէ այդ հարստութիւններդ, եղբայր իմ, յարեց նա, և միշտ յիշէ որ ինչպէս Աստուած կտայ նոյնպէս մեր ձեռքէն կրնայ կորցել, եթէ աղքատաց օգնութեան չհասնինք, դոր խեղճութեան մէջ կանուս կը թողու որպէս զի հարստաներուն առիթ տայ իրենց ողորմութեամբը մեծազոյն վարձք մը ստանալու հանդերձեալ կենաց մէջ:»

Իմ կորու թիւնս այնքան մեծ էր որ այն օգտուէտ խրատէն օգուտ չկրցայ քաղել: Բառական չհամարեցի իմ ու թսուս ուղտերս որ անգին գանձով բեռնաւորեալ էին և որով աշխարհէն ամենէն երջանիկ մարդը պիտի լինէի: Միտքս եկաւ որ տէրվիշին առած տուփ մ'եղը՝ զոր ինձ ցոյց տուեր էր, կրնար առելի մեծ արժէք ունենալ քան բոլոր ունեցած հարստութիւններս:

Աստի ինքնավին կ'ըսէի. «Քանի որ տէրվիշը նոյն տուփը գաղտնի տեղէ մ'առաւ և ուշի ուշով պահեց, անսարակոյս խորհրդաւոր բան մը պիտի սրբունակէ:»

Ասոր վրայ միտքս դրի զայն ձեռք ձղել: Անոր մնաս բարև ըսելով նոր գրկեր էի երբ յանկարծ դառնալով՝ անոր ըսի. «Բարեկամ, ինչ պիտի ընես այն եղի տուփն: Այնպիսի ջնջին բան մը կ'երևի ինձ որ պահելը չարժէր. խնդրեմ՝ ընծայ ըրէ զայն ինձի: Վասն զի քեզի պէս տէրվիշ մ'որ աշխարհէն բաներէն հրժարած է, եղի պէտք չունի:»

Երանի թէ այն տուփը տալու մերժէր նա, բայց եթէ մերժէր անգամ չպիտի թողուի. անարմէ առելի ուժով և բռնի ձեռքէն կորզելու սրշեր էի որպէս զի չըսուի թէ նոյն գանձէն բան մ'առած տարած է, թէ և իրեն չափազանց երախտազէտ ըլլամ:

Տէրվիշն ոչ միայն չմերժեց ինդիրս, այլ տուփը ծոյնէն հանելով՝ խնամ շնորհալի կերպով ինձի ներկայացուց և ըսաւ. «Ահա առ, եղբայր իմ, եթէ ասով միայն գոհ կրնաս ըլլալ: Եթէ ուրիշ խնդիր մը

ալ ունիս, պատրաստ եմ կատարելու:»

Երբ տուփը ձեռքս առի՝ զայն բացի, և եղբ քննելով, «Քանի որ այդչափ կամակատար ես, ըսի, և կը փափաքես ինձի բարեք ընել, կ'աղաչեմ շնորհ ընելիք ինձ ըսելու թէ այս եղև ինչ բանի կը գործածուի:»

— Ասոր դործածութիւնը հիանալի և հրաշալի է, պատասխանեց տէրվիշն: Եթէ այս եղև քիչ մը ձախ աչքիդ և արտեանուհիդ վրայ քսես՝ երկրիս ծոցը սահմանած ամեն գանձերն աչքիդ առջևը պիտի երևնէ, բայց եթէ աջ աչքիդ վրայ քսես՝ պիտի կտրանաս:»

Անձամբ կ'ուզէի փորձել այս հրաշալի եղին ներգործութիւնս, ուստի տէրվիշին տալով տուփն ըսի. «Առ սա տուփն և ձախ աչքիս քու ձեռքովդ քսէ սա եղևն, դու ինչե առելի աղէկ դիտես ընել: Անհամբեր եմ իմանալու ինձ անհաւատարի երեցած բանին արդիւնքը:»

Տէրվիշը յօժարակամ յանձն առաւ և աջաչքս դոյնել տալով եղբ քսեց անոր վրայ: Երբ լմնցուց, աչքս բացի և գիտեցի որ ճշմարտ էր ըսածն: Կրօք անհամար գանձեր տեսայ, որոնք հրաշալի և կերպ կերպ թանկագին բաներով լցուած էին, և անկարելի է ինձ նկարագրել: Բայց որովհետև աջ աչքս ձեռքս դոյց պահելու սրբաւոր էի և ասով կը յոյնէի, աղաչեցի տէրվիշն որ նոյն աչքիս վրայ ալ այն եղևն քսէ:

«Պատրաստ եմ ըսածդ ընելու, պատասխանեց տէրվիշը, բայց պէտք է յիշես ինչ որ արդէն յայանեցի քեզ որ՝ եթէ աջ աչքիդ վրայ այս եղևն քսես՝ խնդրոյն կոյր պիտի դառնաս: Այս է այն եղևն յատկութիւնը, պէտք է որ կանխաւ դիտնաս այս բանս և ըստ այնմ շարժիս:»

Ոչ միայն չհամոզուեցայ որ տէրվիշն ինձ ճշմարտութիւն կ'ըսէ, այլև կարծեցի թէ գաղտնի խորհուրդ մը կայ բանին մէջ և կ'ուզէ ինչե զլանալ:

«Եղբայր իմ, վրայ բերի ժպտելով, կը նայիմ որ դործը տարբեր կերպով կ'ուզես ներկայացնել ինձ, բնական չէ որ այս եղև երկու իրաւու հակառակ ներգործութիւն ունենայ:»

— Յակոբյն իմ ըսածս բուն իսկ ճշմարտութիւն է, վրայ բերտ. տէրվիշն Աստուծոյ անունը վկայութեան բերելով, և պէտք է որ խօսքիս հաւատ ընծայես, վասն զի ես բնաւ սուս չեմ խօսիր:»

Չուզեցի տէրվիշին խօսքին վստահել, թէ և իր պատուոյն վրայ երգում կ'ընէր. աշխարհիս ամէն գանձերը նկատելու անդուսդ իղձս, և թերեւս ամէն անգամ որ կամիմ զանոնք վայելելու փափաքս չներեցին որ տէրվիշին յորդորը մտիկ ընեմ, թէ և ըսածը ճշմարիտ էր, ինչպէս որ իմ սև բազդէս փորձով զոյացի:

Այս նախապաշարմանս մէջ՝ կ'երեակայէի որ եթէ այն եղբ' ձախ աչքիս քսուելով երկրիս բոլոր գանձերն իմ աջիս պարզելու յատկութիւնն ունէր, կարելի է աջ աչքիս ալ քսուելով իս անոնց կը տիրացընէր: Այս մտածութեամբ տէրվիշը ստիպեցի որ աջ աչքիս ալ քսէ այն եղէն, բայց նա միշտ դէմ կը դնէր կամակորութեամբ և չէր ուզեր ինդրիս կատարել:

«Քեզի այսչափ բարիք ընելէն ետև, եղբայր իմ, ըսաւ ինձ, չեմ կրնար յանձնառու ըլլալ այսպիսի մեծ չարիք մը քեզ ընելու. դու ինքնին մտածէ թէ ի՞նչ մեծ դժբաղդութիւն է կոյր ըլլալն, և մի բռնադատեր իս այնպիսի աղէտալի գործ մ'ընելու որու վրայ բոլոր կեանացդ մէջ սխաի ողբաս:»

Իսկ ես իմ կամակորութիւնս յետին աստիճան հասուցի: «Եղբայր իմ, ըսի անոր, ինդրեմ այդ ամէն դժուարութիւնները մէկդի թող. վեհանձնօրէն մինչև ցարդ ինդրածներս կատարեցիր, կ'ուզէս որ քեզնէ դժգոհ բաժնուիմ այսպիսի չնչին բանի մը համար: Յանուն Աստուծոյ, այս վերջին շնորհն ալ ըրէ ինձ: Ինչ որ պատահի՛ յանցանքն իմ վրայ պիտի առնում և ես պատասխանատու պիտի մնամ:»

Տէրվիշն ամէն կարելի եղած ընդդիմութիւնն ըրաւ, բայց տեսնելով որ բուն միջոցներու պիտի գիմեմ, «Քանի որ այս է փափաքդ, ըսաւ նա, քեզ գոհ պիտի ընեմ:»

Աստի այն դժնդակ եղէն քիչ մ'առաւ և աջ աչքիս վրայ քսեց, մինչդեռ գոցեր էի. բայց առաջ, երբ զայն բացի, լոկ թանձր խաւար տեսայ իմ երկու աչօքս, և կոյր եղայ ինչպէս որ կը տեսնես:

«Ա՛հ, անօրէն տէրվիշ, գոչեցի նոյն պահուն, դու շախմդ շատ

իբաւ է եղեր: Աղէտաշի հետաքրքրութիւն, հարստութեանց անկուշտ փափաք, ինչ անգուցի մէջ նետեցիք իս: Կ'զգամ որ ես իմ ձեռօքս այս փորձանքը բերի վրիսիս, բայց դու սիրելի եղբայր, գոչեցի նորէն տէրվիշին դառնալով, դու որ այսչափ ողորմասէր ես և բարեզործ, դու որ այնչափ հրաշալի դաղանեաց տէր ես, արդեօք դաղանիք մը չունիս իմ աչքս բանալու:

— Թշուառական, պատասխանեց ինձ այն ատեն տէրվիշն, ես ձեռքէս եկածն ըրի որ այս դժբաղդութենէ ազատ պահեմ քեզ, բայց արժանի պատիժդ դատար, և սրաիդ կուրու թիւնն է որ մարմնոյդ կուրութիւնը պատճառեց: Իբաւ է որ դաղանիքներ ունիմ, քիչ ժամանակի մէջ հասկցար այս բանս, բայց աչքդ բանալու համար դարման մը չունիմ: Աստուծոյ ապաւինէ եթէ կը հաւատաս որ Աստուած մը կայ, մինակ նա կարող է աչքդ բանալ: Քեզի հարստութիւններ պարզեց որոյ անարժան էիր, զանոնք ձեռքէդ առաւ, և հիմակ իմ ձեռօքս քեզնէ աւելի երախտագէտ մարդոց պիտի տայ:»

Տէրվիշն աւելի խօսք չըսաւ, և պատասխան մը չէի կրնար տալ. իս մինակ թողուց բոլորովին շփոթած և այնպիսի ծանր վիշտերու մէջ ընկղմած զոր հնարին չէ բացատրել. յետոյ իմութուն ուղտերս ժողվեց, և իր ճամբան շարունակեց մինչև Պասրա:

Աղաչեցի զինքն որ այս դժբաղդ վիճակին մէջ իս չթողու և գոնէ մինչև առաջին օթեանն իս առաջնորդէ, բայց իմ աղաչանքիս և աղաղակներուս անզոյ մնաց: Այսպէս տեսութենէ և բոլոր ունեցած ինչքէս զուրկ՝ անտարակոյս ցաւէս և անօթութենէս պիտի մեռնէի, եթէ հետեեալ օրը Պասրայէն դարձող կարաւան մ'իս բարեխրաբար չառնուր և Պաղտատ չլրերէր:

Եթէ ոչ զօրութեամբ, դէթ հարստութեան և ճոխութեան կողմէ իշխանի մը վիճակէ ստիպուեցայ մուրացկանութեան մէջ ինալ, հարկ էր ողորմութիւն ինդրել և մինչև ջայտօր այսպէս կ'ապրիմ, բայց առ Աստուած իմ յանցանքս քաւելու համար, կամաւ որոշեցի որ իմ թշուառութեանս զթացող ողորմասէր անձերէն պատիժ մ'ընդունիմ և այս պատիժս է ահա արտակ մը:

Ահա, իշխանդ հաւատացելոյ, իմ սարօրինակ վարմունքիս շարժա-

«ի՞նչ սրով քու սրտմտութիւնդ դրդուեցի . նորէն ներում կը խնդրեմ», իբր քու գերիդ, և պատրաստ եմ տալիք պատիժդ կրելու : Եթէ շնորհ ընես ապաշխարանք մը գնիլ իմ վրայ՝ հաւատարի եմ որ այդ ապաշխարանքդ իմ յանցանքին քով շատ թեթեւ պիտի ըլլայ :

Երբ կոյրն իր պատմութիւնն աւարտեց, ամիրապետն անոր ըստ . «Պապա Ապտալլահ, յանցանքդ մեծ է . բայց օրհնեմք ըլլայ Աստուած որ անոր ծանրութիւնը ճանչեր և ինքնին վրայ պատիժ մը դրեր ես որ բաւական է, այսուհետեւ պէտք է որ առանձին ապաշխարես, Աստուծոյ անդադար աղօթքն որ քեզ ներէ և ամէն օր կրօնական պարտքդ կատարես, և որպէս զի առուր պարենդ հայցելու համար այս պարտաւորութենէդ ետ չկենաս, քեզի իբր ողորմութիւն, մինչև կենացդ վերջը, չորս արծաթ դահեկան կը սահմանեմ իմ գանձէս, և մեծ վէճերիս ձեռք զայն պիտի ստանաս : Աստի մի գաւնար, և սպասէ որ հրամանս կատարէ :»

Այս խօսքիս վրայ՝ Պապա Ապտալլահ ամիրապետին գահին առջև երկիր պագաւ, և ոտք երնելով իր շնորհակալութիւնը յայտնեց՝ անոր ամէն տեսակ երջանակութիւն և բարօրութիւն մաղթելով :

Հարուն-ալ-Բաշխա ամիրապետը՝ Պապա Ապտալլահի և աւերվելին պատմութենէ գոհ ըլլալով՝ իր մտտակ ձին չարչարող երիտասարդին գարձաւ, անոր անունը հարցոց, ինչպէս որ կոյրինն ալ հարցոցեր էր : Երկուստարողը պատասխանեց որ իր անունն է Սիտի Նուաման :

«Սիտի Նուաման, ըստ այն ատեն ամիրապետը, շատ անգամ տեսած եմ թէ ձիւն ինչպէս կը մարդին, և ստեղծ ես ալ մարդեր եմ, բայց երբէք երէկուան պէս բարբարոսաբար մտտակ ձիդ չարչարելը տեսած չեմ՝ հրապարակի մէջ՝ ՚ի գայթակղութիւն հանդիսականաց, որոնք բարձրաձայն կը արննջին : Ես ալ անոնց պէս զայբացայ, և քիչ մնաց որ ինքզինքս պիտի յայտնեմ իմ նպատակիս հակառակ՝ որպէս զի այն անկարողութեանդ վերջ տամ : Սակայն կերպարանքդ չցոյցներ որ դու բարբարոս և անդաժմ մարդ մ'ըլլաս, յաւամք որ պատճառ մը ունիս այդպէս վարուելու : Արովհետեւ գիտեմ թէ առաջին անգամի չէ, այլ շատ ատենէ վեր՝ ամէն օր նոյն ասանկանք կը քաշէ ձիդ, կը փափաքիմ պատճառն իմանալ, և կամաւ այս տեղ բերելուտի քեզ որ

ինձի յայտնես : Մասնաւորապէս կ'ուզեմ՝ որ ճշմարտութիւնը բացէ 'ի բաց ինձի բնս :»

Սիտի Նուաման իսկոյն բնութեց ամիրապետին միտքը : Ծանր էր իրեն ամէն բան ըսել, բանի մ'անդամ երեսին գոյնը փոխեց և հասկըցոյց թէ ինչ մեծ շփոթութեան մէջ կը գտնուի : Սակայն հարկ էր ամիրապետին կամքը կատարել : Աստի նախ անոր գահին առջև երկիր պագաւ, և ոտք երնելէն ետեւ՝ փորձեց սխելու, բայց ափ 'ի բերան մնաց, ոչ այնքան ամիրապետին վեհափառութենէ, որ չափ պատմելը գործէն շուարելով :

Թեև ամիրապետն անհամբեր կ'սպասէր որ իր կամքը կատարուի, սակայն Սիտի Նուամանի լուր թեան վրայ խտուութիւն մը չցցօց . տեսաւ որ իր առջև համարձակութիւն չունէր, կամ թէ խօսած կերպէն զարհուրեւ է, և կամ վերջապէս, ըսելիք բաներուն մէջ գողտնի պահելու պարագաներ կային :

«Սիտի Նուաման, ըստ անոր ամիրապետն որպէս զի միտքը հանդարտեցնէ, խելքդ դուրսդ բեր և նիթողութ թէ ոչ ինձ այլ բարեկամի մը պիտի ընես այդ պատմութիւնն : Եթէ այդ պատմութեանդ մէջ քեզ վշտացող բան մը կայ և կը կարծես թէ կրնամ անով վիրաւորուիլ, փոյթ չէ, կանխաւ կը ներեմ քեզ : Աստի անհանգստութիւնդ փարատէ, բայց սրտով խօսէ ինձ և ոչ ինչ մի պահեր, ինչպէս որ չես պահեր ամենէն ընտիր բարեկամիդ :»

Սիտի Նուաման՝ ամիրապետին այս վերջին խօսքերէն ապահովելով, «Իշխանդ հաւատացելոց, ըստ նա, թէ և ամէն մարդ Ձեր վեհափառութեան առջև զաւուր կամ ձեր գահին մօտենալուն ահա ուղղկըզգայ, սակայն բաւական արի եմ և այս անհամարան երկիրը չկրնար պրկել իմ լեզուս՝ որ մինչև անգամ ձեզի ունեցած հնալանդութեանս դէմ մեղանչեմ, և ձեր ինքզինքն տարբեր բաներ պատմելու յանդգնեմ . չեմ համարձակիր ըսելու որ կտտարեալ եմ մարդոց մէջ, այնչափ անզգամ չեմ՝ որ օրինաց դէմ գործած կամ գործելու կամք ունեցած ըլլամ որ անոնց խտուութենէ երկնչեմ : Սակայն, որչափ բարի ըլլայ իմ միտքս, կը հաւանիմ որ անդիտաբար մեղանչելէն զերծ չեմ, և ահա այսպիսի բան մը հասած է ինձ :

«Արեմն չեմ ըսեր թէ Ձեր վեհափառութեան շնորհած ներումին վրայ վստահութիւն ունիմ առանց իս մտիկ ընելու, այլ եթէ հարկ է, կը հպատակիմ ձեր արդարութեան և տալիք պատահալին: Ար խոստովանիմ որ քանի մ'առնէ վեր' ինչպէս որ Ձեր վեհափառութիւնն ալ տեսաւ, այլանդակ կերպով կը շարձարեմ մատակ ձիս և զէշ օրինակ կտամ, սակայն յուսամ որ իրաւացի պիտի դռնէք իմ պատճառս և պիտի տեսնէք որ կարելիցու թեան աւելի արժանի եմ քան թէ պատժոյ: Սակայն պէտք չէ ձանձրացնել քեզ այսպիսի տաղտկալի յառաջաբանով մը: Ահաւասիկ ինձ հասած զէպքը:»



Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ս Ի Տ Ի Ն Ո Ւ Մ Ա Ն Ի

Հրամանատարդ հատապետը, շարունակեց Միտի նու.ման, չեմ ուզեր իմ ծննդեանս վրայ խօսիլ Ձեր վեհափառութեան, այնքան մեծ փայլ չունի որ ուշադրութեանդ արժանի ըլլայ: Բողոքին շնորհաց հարստութեանց մասին, իմ նախնիքս պարկեշտ մարդու մը պէս ապրելու չափ ստակ թողին ինձ իրենց խնայութեամբն, այնպէս որ փառասիրութիւն չունէի և ուրիշին ալ բեռ չէի ըլլար:

Այս առաւելութիւններով իմ երջանկութիւնս կատարեալ ընելու համար բան մը կը պակսէր ինձ, այս է սիրուն կին մը գտնել, որ լիովին սիրոս դբաւէ և ճշմարտապէս իս սիրելովն իմ երջանկութեանս մասնակից գտնուի. բայց Աստուած չուզեց ինձ այսպիսի կին մը շնորհել, ընդ հակառակն՝ այնպիսի կին մը առաւ որ մեր հարսնիքէն անմիջապէս ետքն՝ իմ համբերութիւնս հատցուց, այնպէս որ մինակ այս վիճակին մէջ եզրը մարդիկ կրնան անոր վրայ գաղափար մ'ունենալ:

Արովհետեւ սովորութիւն է մեր մէջ առանց հարմացու ու փեսացու իրար անանելու կարգուիլ, Ձեր վեհափառութիւնը գիտէ որ էրիկ մը չկրնար գանգատիլ եթէ իրեն բաժին ընկած կինը ստսկում պատճառե-

լու չափ տգեղ չէ, աձև չէ և թէ իր բարի վարքն, ուղիղ միտքը թերեւս ունեցած մարմնոյ պակասութիւնները կրնան ծածկել:

Առաջին անգամ որ կնիկան երեսը բայ տեսայ՝ սովորական արարողութեամբ ինձ բերուելէն ետև՝ ուրախ եղայ որ չէին խաբեր իս անոր գեղեցկութեան վրայ ինձ տրուած տեղեկութեամբ, իմ ճաշակիս յարմար գտայ և հաւնեցայ:

Հարսանեաց հետեւալ օրը տեսակ տեսակ կերակուրներով ճաշ մը պատրաստեցին մեզի համար. սեղանը դրուած տեղը գացի, և կինս չտեսնելուս այն տեղ, կանչել տուի: Երկար ատեն սպասել տալէն ետև՝ վերջապէս եկաւ: Իմ անհամբերութիւնս ծածկեցի և սեղան նստանք:

Նախ փիլաւ կերայ և զրգալով մ'առի՝ ըստ սովորականին: Ընդ հակառակն՝ կինս՝ ամենուն պէս զրգալ գործածելու տեղ՝ իր զրպանէն տուփ մը հանեց, անոր մէջէն տեսակ մ'ականջի մաքրիչ քաշեց և ահով հատիկ հատիկ փիլաւէն առնելով բերանը տարաւ, վասն զի մէյմէկ բրինձէ աւելի չէր կրնար պարունակել:

Այս կերպ կերակուր ուտելուն վրայ զարմնալով, «Եմինէ, ըսի անոր, վասն զի այսպէս կը կոչուէր, միթէ քու տունդ փիլաւն այսպէս կը ընես, թէ ոչ բրինձի հատիկները համբել կ'ուզես որպէս զի առջինէն աւելի չուտես: Եթէ այդպէս կը վարուիս խնայութեան ոգուով և ինձ անտեսութիւն սորվեցնելու համար, վստահ եղի որ դատդ աւելորդ է, և զիտցի որ այդ կողմէն չենք փլիւր: Փառք Աստուծոյ պէտք եղածն ունինք հանդիստ ապրելու: Աստի մի քաշուիր, սիրական Կմինէ, և դու ալ ինձի պէս կեր:»

Այս յորդորս սիրալիւր կերպով մ'ընելուս կը յուսայի որ փոխաբէն անոց պատասխան մը կ'ընդունիմ, բայց Կմինէ, առանց բառ մ'ըսելու, մի և նոյն կերպով ուտելը շարունակեց, և որպէս զի սիրոս աւելի նեղացնէ, ատեն ատեն սկսաւ բրինձ ուտել. խօս ինձի պէս միւս կերակուրներէն չկերաւ, այլ ատեն ատեն հացի փշուրք բերանը կը տանէր, զրեթէ այնչափ որչափ որ ճնձըուկ մը կրնայ ուտել:

Կմինէի կամակորտ թիւնս իս նեղացոյց: Սակայն զանի արգարացնե-

բու համար՝ կարծեցի թէ մարդոց հետ կերակուր ուտելու վարժած չէ, մանաւանդ էրկան մը հետ, որուն առջև համեստութիւն պահելու սորվեցուցեր էին անշուշտ, սակայն այս համեստութիւնը յետին ծայրը կը տանէր: Կարծեցի նաև որ նախաձաշիկ ըրած պիտի ըլլայ, կամ՝ եթէ չէր նախաձաշած՝ անօթի կը կհնար որ հարէն առանձին ուտէ: Այս նկատմամբ անոր բան մը չըսի որպէս զի չարգողի և իմ գժգոհութիւնս սքողցի: Ճաշէն ետքը՝ մի և նոյն կերպարանքով քովէն հետ պայտ, որպէս զի իր արտաուց կերպերովն իս գժգոհ ըրած չըլլար, և զինքը մինակ թողուցի:

Երեկոյին՝ ընթրիքի ասուն նոյն վարմունքը բռնեց, հետեւեալ օրն, և ամէն անդամուն որ միասին սեղան կը նստէինք՝ մի և նոյն կերպով կը վարուէր: Գիտեցի որ անկարելի է կնկան մ'այնքան քիչ սնունդով ապրիլ, և թէ այս բանիս մէջ ինձ անձանօթ գաղտնիք մը կար: Հետեւապէս միտքս զրի կեղծել: Այնպէս ձևացուցի որ իր գործոց ուշադրութիւն չեմ ընեմ, յուսալով որ ժամանակաւ պիտի վարժի ուզած իս պէս ինձի հետ վարուելու. բայց սրբապատեղը կը յուսայի և ասոր վրայ շատ ջանցաւ համոզուեցայ:

Գիշեր մ'Էմինէ իս խորունկ քնացած կարծելով՝ կամայուկ մ'ելաւ, և գիտեցի որ մեծ զգուշութեամբ կը հաղուէր որպէս զի ազմուկ մը չհանէ և իս չարթնայնէ: Չգիտէի թէ ի՞նչ նպատակաւ այսպէս հանգստութիւնը կ'աւրէր, և հետաքրքիր ըլլալով իմանալու թէ ի՞նչ պիտի ընէ վերջը՝ սուս քուն եղայ: Հաղուեցաւ լնացաւ, և պահ մ'ետաքր սենեկէն դուրս ելաւ և ոչ իսկ թեթեւ շուկ մը հանեց:

Երբ գուրս ելաւ, ևս աչ անկողնէս ցատկեցի և պատմութեան վրաս նետեցի, ժամանակ ունեցայ զխտելու՝ բակին վրայ նայող սրտուհանէ մը՝ փողոցին դուռը բանալն ու դուրս ելնելը:

Իսկոյն ևս աչ դուռը վազեցի, զոր կէս մը բայ թողեր էր, և լուսնկային նշմարեցի որ մեր ասան մօտ գերեզմանատուն մը մտաւ. ևս աչ գերեզմանատան պատին մօտեցայ շտեմուելու համար պէտք եղած զլուշութիւնս ընելով, և Էմինէն տեսայ փերիով մը:

Չեր վեհափառութիւնը պիտի գիտնայ որ թէ էդ և թէ արու փերիներն արտերը թափառող սասանաներ են: Սովորաբար փրատակներ-

բու վրայ կը բնակին, ուսկից յանկարծ անցորդներու վրայ կը յարձակին, կ'սպաննեն և անոնց միտք կ'ուտեն: Եթէ անցորդ չգտնեն՝ գիշերայն գերեզմանատունները կ'երթան և մուռնները հանելով կը ճարակին:

Մեծ ատրասի զգացի երբ կինս այն փերիին հետ տեսայ: Նոյն օրը թաղուած դիակ մը հանեցին, փերին զայն կտոր կտոր ջարդեց, և յետոյ փոսին ելլըը նստելով միասին կերան: Հանդարտիկ իրարու հետ կը խօսակցէին, այսպիսի անդու թ և սոսկալի ճաշ մ'ընելով, բայց շատ հեռու էի, և չկրցայ անոնց խօսակցութենէ բան մը լսել, և անշուշտ իրենց խօսակցութիւնն ալ իրենց ընթրիքին պէս սոլանդակ պիտի ըլլար, և անոր յիշատակը դեռ ևս իս գող կը հանէ:

Երբ այս քառմունքի ընթրիքը լնացուցին, դիակին մնացորդները փոսին մէջ նետեցին, և նորէն հողով ծածկեցին: Թողուցի զիրենք իրենց գործին և շուտով մեր սունը դարձայ: Ներս մանելու ատեն դուռը կ'սրբայ թողուցի, ինչպէս որ դաւեր էի, և սենեակս մանեկէն ետե՝ նորէն պառկեցայ և սուս քուն եղայ:

Էմինէ՝ առանց ազմուկ հանելու՝ ներս մտաւ քիչէն, հագուստը հանեց և նորէն պառկեցաւ, ուրախանալով անշուշտ՝ ինչպէս որ կ'երեւակայէի, այնչափ լաւ յաջողութուն որ ևս չիմացայ:

Միտքս այսպիսի բարբարոսական և վարշելի գործով մը լցուած՝ որուն սկանաստես եղեր էի, զայն գործողին մօտ պառկած ըլլալէս զըրեւելով՝ երկար ժամանակ աչքս չկրցայ գոցել, բայց վերջապէս քնացայ, սակայն այնչափ թեթեւ էր քունս որ առաւօտեան դէմ երբ ազօթքի համար իմամբ կանչեց՝ արթնացայ. իսկոյն հաղուեցայ և մղիթը գացի:

Աղօթքէն ետքը քաղքէն դուրս ելայ և առաւ պարտեզները պարտակով անցուցի և մտածեցի թէ ի՞նչ միջոց բանեցնել պէտք է արդեօք կնկանս ընթացքը փոխել տալու համար: Բուռն միջոցները մեկզի ձղեցի և որոշեցի անուշութեան ճամբան բռնել որպէս զի անոր նողկալի սովորութենէ ետ կիցնեմ: Այս մտմտութեամբ մինչև տունս հասայ, և ճիշտ ճաշի ժամանակ ներս մտայ:

Այն ինչ Էմինէն տեսաւ իս՝ կերակուր բերել տուաւ և սեղան

նատանք . երբ տեսայ որ դարձեալ փիլաէն հասիկ հասիկ կ'ուտէր ,
 «Էմինէ , ըսի անոր ամէն կարելի հանդարտութեամբ , զիտես թէ որ-
 չափ զարմանքս տարաւ երբ մեր հարսանեայ հետեալ օրը զիտեցի որ
 այնչափ քիչ բընձ կ'ուտես որ եթէ իմ տեղս ուրիշն ըլլար շատ պիտի
 առնուէր , զիտես նաև որ բաւական սեպեցի ըսելով քեզ որ այդ բանին
 վրայ սաստիկ կը վշտանամ , աղաչելով քեզ որ միւս կերակուրներէն
 ալ ճաշակես , որ սեղանին վրայ էին և տարբեր տարբեր կերպով պատ-
 բաստեր էին որպէս զի ճաշակից յարմարցնեն : Այն ատենէ վեր տե-
 սար որ մեր սեղանը մի և նոյն կերպով կը պատրաստէին , մինակ քանի
 մը կերակուրներ փոփոխեցին , որպէս զի միշտ մի և նոյն բաները չե-
 փեն : Սակայն իմ յորդորներս անպսելի եղան , և մինչև այսօր ընթացքդ
 չփոխեցիր և մի և նոյն ցան ինձ պատճառեցիր : Ես ալ լուծիւն պա-
 հեցի , վասն զի չուզեցի քեզ բռնադատուել , և պիտի ցախմ եթէ հի-
 մակ ալ ըսածս սիրտդ վշտացնէ . բայց , Էմինէ , ըսէ ինձ , կ'աղաչեմ ,
 մեր սեղանի միտերն աւելի լաւ չե՞ն քան թէ մեռեցներու միտը : »

Այն ինչ այս վերջին խօսքերս արտասանեցի որ Էմինէ , հասկնալով
 որ առջի զիշեր անոր ընթացքը զիտեր եմ , այնպէս կատրեցաւ որ կա-
 րելի չէ երևակայել , երեսը կրակ դարձաւ , աչքերը սնկուեցան , և
 մտեցնութենէ սկսաւ փրփրիլ :

Անոր այս սոսկալի վիճակը նշմարելով ահ ու սարսափ զգացի , զրե-
 թէ անշարժ մնացի և չկրցայ արգիլել այն ահուելի անօրէնութիւնը
 զոր ինձի գէմ կը պատրաստէր և որմէ Ձեր վեհափառութիւնը սաս-
 տիկ պիտի զարմանայ : Իր զայրոյթը սաստիկ բռնած ատեն՝ ձեռքն
 տակ գտնուած բաժակ մը ջուր առաւ , մատերն անոր մէջ թափեց ,
 քանի մ'անխմանալի բառեր արտասանելով , և այս ջրէն երեսիս
 սրակելով կատաղի ձայնով մ'ինձ ըսաւ .

«Թշուառական , ընդունէ քու հետաքրքրութեանդ պատիժն ու
 շուն եղիլը : »

Այն ինչ Էմինէն՝ զոր չէի կարծեր թէ վհուկ մ'է , այս զիւական
 խօսքերն արտասանեց որ յանկարծ շունի կերպարանք առի : Այս յան-
 կարծական փոփոխութիւնն այնպիսի զարմանք պատճառեց ինձ որ նախ
 չկրցայ խոյս տալ , և հետեալէս դաւաղան մ'առաւ և իս ծեծեց : Ի-

բախ այնպիսի բուռն հարուածներ իջեցուց որ չզխտեմ թէ ինչպէս
 այն անդ չստոկեցայ : Անոր կատաղութենէ պրծիլ կարծեցի փախչե-
 լով գաւիթը , սակայն մի և նոյն կատաղութեամբ ետեւս վազեց , և
 որչափ որ ճարպիկութիւն բանեցուցի սողիս անդին դառնալով կարող
 չեղայ ազատիլ անոր ձեռքէն և ստիպուեցայ աւելի ծեծ ուտել : Աեր-
 ջապէս ծեծուէն և վաղելէն ձանձրանալով , և ինչպէս որ կը փա-
 փաքէր՝ իս սպաննելու չյաջողելուն վրայ աւելի զայրանալով՝ նոր
 հնար մը մտածեց նպատակին հասնելու համար . փողոցին դուռը բա-
 ցաւ որպէս զի անկէ անցնելու ատենս իս ճգմէ : Արչափ որ շուն էի՝
 անոր չարահնար խորհուրդը հասկցայ , և որովհետև ներկայ վտանգ
 մը հնարագէտ կ'ընէ արարած մը՝ այնչափ աղէկ ընտրեցի ժամանակս՝
 անոր դէմքն և շարժումները զիտելով որ իր հսկողութիւնն 'ի գերեւ
 հանեցի և այնչափ շուտով սպողեցայ անցայ որ անոր չարամտութենէ
 կեանքս ազատեցի , մինակ պոչիս ծայրը քիչ մը ձգմուկելով պրծայ :

Սակայն սաստիկ ցաւ զգալուս փողոցը վաղելով սկսայ հաջել , և ա-
 սոր վրայ քանի մը շուներ ելան և իս խածին : Անոնց սկուայէն աղա-
 տելու համար ոչխարի գլուխ , սոք և լեզու ծախողի մը խանութը նե-
 տուեցայ և ազատեցի :

Իմ հիւրատէրս նախ իմ կողմն բռնեց կարեկցութեամբ՝ ետեւս վա-
 զող շուները վախեցնելով , որոնք տունը մտնել կ'ուզէին : Իսկ ես փու-
 թացի անկիւն մը խօթուիլ անոնց տեսքէն ազատ մնալու համար : Սա-
 կայն հոն ալ անխլարած սպաստանարանս ու պաշտպանութիւնս չգտայ :
 Այնպիսի աւելորդապաշտ մարդ մ'էր խանութպանն որ կարծելով թէ
 շուները պիղծ կենդանիներ են՝ անբաւ սաստն և ջուր կը վասնեն ի-
 րենց զգեստը լուալու երբ շուն մ'անոր դպի : Երբ իս հալածող շունե-
 րը քաշուեցան , ամէն միջոց բանեցուց որ առջի օրէն իր խանութէն
 իս վանէ , բայց պահուած և անոր հարուածներէն ազատ էի : Այս-
 պէս՝ անոր կանայ հակառակ՝ զիշերը խանութն անցուցի , և այս հան-
 դիստն ընելու պէտք ունէի որպէս զի քիչ մ'ընթացիւքս գտնեմ Էմինէին
 սուած տանջանքէն :

Ձեր վեհափառութիւնն աննշան պարագաներով չձանձրացնելու հա-
 մար , երկար բարակ չափի պատմեմ իմ այլափոխութեանս վրայ ըրած

խորհրդածութիւններս . այսչափ միայն պիտի բնեմ որ հեռեեալ օրը
խանութիւնը քանի մը բան դնելու համար դուրս ելած ըլլալով՝ ոչ-
խարի գլուխներ , ոտքեր և լեզուներ առած խանութ գարձաւ , և երբ
իր ասլանքը կը շարէր , իմ առնէս դուրս ելայ , և ճամբաս պիտի
շարունակէի երբ շատ մը գրայի շուներ տեսայ՝ որ մնին հոտն առն-
լով եկեր խանութին չորս զին գումարուեր էին՝ որպէս զի իրենց տկոր
մը նետէ , ես ալ անոնց խառնուեցայ և աղբասարկուի գլխը մ'առի :

Որչափ որ կըցայ գիտե՛լ իմ՝ հիւրընկալ նկատելով որ իր տունն ա-
պախնելէս վեր բան մը չեմ կերած՝ մտանաւորապէս ինձի հող տարաւ
աւելի խոշոր կտորներ ստէօլ ինձ նետելով քան թէ միւս շուներուն :
Երբ իր առատաձեռն սրբուհիները լմնցուց , նորէն իր խանութը մանեկ
ուզեցի անոր երեսը նայելով և սոչս օրելով՝ աղբասաղին կերպով մը որ
ինձ նորէն նոյն խորհն ընէ , բայց անողորբի եղաւ և իմ ինդիրս
մերժեց՝ գաւազան ՚ի ձեռին և այնպիսի անդժու թեամբ որ ստիպուե-
ցայ հեռանալու :

Քանի մը առն հեռու՝ հացագործի մը կրպակին առջև եկայ , որ՝
ոչխարի գլուխ ծախողին հակառակ՝ անոր պէս մեղամաղճառութեամբ
չէր մաշեր , այլ ինդու մերս երեցաւ ինձ , ինչպէս որ իրօք ալ էր :
Նոյն միջոցին նախաձաշիկը կ'ընէր , և թէ և բնաւ անօթութեան նշան
մը ցոյց չտուի , սակայն ինքը հացի կտոր մը նետեց ինձ : Անոր վրայ
նետուելու տեղ՝ ինչպէս որ աչքժակ շուները կ'ընեն , գլխի շարժու-
մով մ'անոր երեսը նայեցայ իմ երախտադիտութիւնս յայտնելու հա-
մար : Այս քաղաքալարութեան շատ հաճեցաւ և ժպտեցաւ : Աւեր-
լու պէտք չունէի , սակայն անոր հաճելի ըլլալու համար՝ հացի կտորն
առի և ծանր ծանր կերայ հասկցնելու համար որ զանի պատուելու
մտօք կ'աւանդէ : Այս բոլոր ըրածներս գիտեց և իս իր կրպակին մօտ
սրահել ուզեց : Ես ալ նստայ փողոցին կողմը դարձած՝ հասկցնելու
համար որ նոյն միջոցին մինակ իր սրաշարանութիւնը կը հացեմ :

Այս սրաշարանութիւնը շորհեց ինձ , մանաւանդ զգուցեց որով
համարձակեցայ իր տունը մանելու : Այնպէս մտայ որ իմայնեւուզեցի
թէ իր հրամանով ներս կը մտնեմ : Այս ընթացքս դէշ չգտաւ , ընդ
հակառակն՝ տեղ մը ցոյց ուր կրնայի նստիլ առանց անհանդատութիւն

պատճառելու , նոյն տեղը նստայ և որչափ որ նոյն տունը մնայի՝ այն
տեղն ինն եղաւ :

Այն տան մէջ ինձի հետ շատ աղէկ վարուեցան . տան տէրն ամէն
անգամուն որ նախաձաշիկ , ճաշ և ընթրիք ընէր՝ ինձի ալ բաժին կը
հանէր : Ես ալ իմ կողմէս երախտադիտութիւնէս բողբած ամէն հաւա-
տարմութիւն և սէր կը ցուցնէի անոր :

Իմ աչքս անդադար անոր վրայ յաւած էին , և տան մէջ քայլ մ'որ
առնուր՝ ես ալ անոր հետէն կ'երթայի : Նոյնը կ'ընէի նաև երբ ժա-
մանակ ունենար գործի համար քաղաք իջնելու : Քանի տեսնէի որ իմ
կապակցութիւնս իրեն հաճելի կըլար՝ նոյնչափ ես ալ ճշգրիտ կ'ըլլա-
յի , և շատ անգամ , երբ դուրս ելնելու պէտք ունենար , իս Ասորիսէ
կը կոչէր որ ետէն երթամ :

Այս անունը լսելուս իմ տեղէս կը ցատկէի և փողոցը կը վազէի . կը
ցատկեալէի , գրան առջև կը վազվզէի , կ'ոտտատէի : Երբ դուրս ել-
նէր՝ այն ատեն այս զգուանքն ընէին կը գաղթէի , այն ատեն շխտակ
անոր կ'ուղեկցէի՝ ետէն երթալով կամ առջևէն վազելով , և ատեն
ատեն անոր երեսը նայելով՝ իմ ուրախութիւնս յայտնելու համար :

Արդէն բաւական ատենէ վեր նոյն տան մէջ կը գտնուէի , երբ օրին
մէկը կ'իմ եկաւ հաց գնելու : Հացը վճարեց և տուած ստակին մէջ
կեղծ արծաթէ գրամ մը կար : Հացագործն որ կեղծ գրամը տեսաւ ,
կնկան տուաւ և ուրիշ մը խնդրեց :

Կինը չուզեց առնուլ պնդելով որ լաւ գրամ է . հացագործն ալ
հակառակը պնդեց , և այս վէճին մէջ՝ «Այն ստակն այնչափ յայտնի է
որ կեղծ է , ըսաւ , որ իմ շունն անգամ , անբան կենդանի մ'ըլլալու
վը , կ'ընայ վրայել : «Հոս եկուր , Ասորիսի» ըսաւ անմիջապէս հացա-
գործն իս կոչելով : Այս կոչումին՝ թեթեւ մը գրասեղանին վրայ ցատ-
կեցի , և հացագործը ստակներն առջևս նետելով , «Այլէ , յարեց նա ,
միթէ անոնց մէջ սուս գրամ մը չկայ :» Ես ալ գիտեցի այս ամէն
ստակներն , և թաթս սուտ գրամին վրայ գնելով՝ միւսներէն զատեցի
տիրօջս երեսը նայելով՝ որպէս թէ ցոյց տալու համար :

Հացագործն՝ որ մինակ զուարճանալու համար իմ կարծիքս ուզե-
ր , չարախնդրեց զարմացաւ տեսնելով որ առանց վարանելու սուտ գրա-

մը զատեցի : Ահնն՝ համոզուելով զբամին գեշութեան վրայ , չլրցաւ բան մ՝ըսել և ստիպուեցաւ անոր անդ ուրիշ մը տալ : Այն ինչ դուրս ելաւ , իմ անբոս զբայիները կանչեց և իմ կարողութիւնս չափազանց գովեց՝ իրողութիւնը պատմելով :

Գրացիներն ուղեցին անձամբ փորձել , աղէկ ու գեշ զբամներ խառն առջևս գրին , և ես ամէն գեշերուն վրայ թաթս գրի և լաւերէն զատեցի :

Ահնն ալ իր կողմէն՝ ճամբան իրեն հանդիպող ծանօթներուն պատահածը պատմեց : Քիչ ատենէն սուտ ստակը լաւէն զատելու ճարպիկութիւնս ամէն անդ տարածուեցաւ , ոչ միայն զբացիներուն՝ այլև թաղին և քիչ քիչ բոլոր քաղքին մէջ :

Բոլոր օրն անդրադ չէի . պէտք էր հաց գնողները գոհ ընել և իմ ճարտարութիւնս ցոյց տալ : Ամենուն համար հրապարակ մ՝էր այս , և քաղքին հեռաւոր թաղերէն կղային իմ գիտութիւնս փորձելու : Իմ համբաւս այնքան գնորդ բերաւ տիրօջս , որ հաղիւ կարող էր ամենուն ուզածը տալ : Այս բանս երկար ատեն տևեց , և վարպետս կամայ ազամայ խոստովանեցաւ իր զբացիներուն որ գանձ մը կարծեմ :

Այս իմ սրբիկ ճարտարութիւնս անոր նախանձոտներ զրգուեց : Որոգայթներ լարեցին իս գողնալու համար , և վարպետս ալ իս աչքէն չէր հեռացներ : Օր մը կնկան մէկն՝ այս նորաձեւութեան վրայ զարմանալով՝ ուրիշներուն պէս եկաւ հաց գնելու : Այն ատեն իմ սովորական անդս զրասեղանն էր . իմ առջևս վեց արծաթ դրամ նետեց , որոյ մէջ մէկ հատ գեշ կար : Այս գեշ ստակը միւսներէն զատեցի և թաթս սուտ զբամին վրայ գնելով՝ անոր նայեցայ որպէս թէ հարցնելու համար թէ արդեօք ճիշտ չդատեց :

«Այն , ըսաւ այս կինը՝ նայնդէս ինձի նայելով , կեղծ դրամն է , չսխալեցար :»

Բաւական ատեն զարմանօք ինձ նայեցաւ , մինչդեռ ես ալ անոր կը նայէի : Ծախաւ առած հացը վճարեց , և երբ քաշուիլ ուղեց՝ նշան ըրաւ ինձ որ ետեւէն երթամ հացադործէն ծածուկ :

Միշտ կը մտածէի թէ արդեօք հնար մը կայ այն իմ այլանդակ այլախերպութիւնս փոխելու : Նկատեի էի թէ ինչ ուշագրութեամբ այն

կինն իս քններ էր . կարծեցի որ թերևս իմ դժբաղդութիւնս գուշակած ըլլայ նա , և չէի սխալած : Քանի մը քայլ առնէն ետև՝ ինձի դարձաւ , և տեսնելով որ առանց անդէս շարժելու անոր կը նայէի , նորէն նշան ըրաւ որ իրեն հետեւիմ :

Այն ատեն՝ առանց աւելի մտածելու՝ գիտելով որ հացադործն իր փուռը մաքրելու և հաց եփելու զբաղած ըլլալուն՝ ինձի չէր նայեր , զրասեղանէն վար յատկեցից և այն կնկան ետեւէն գացի որով շատ ուրախացաւ :

Քիչ մ՝ատեն քայլէն ետև՝ կինն իր տունը հասաւ , դուռը բացաւ և երբ ներս մտաւ , «Ներս մտիր , ըսաւ ինձ , չսխալի զդժաս ինձ հետեւելուդ :» Երբ ներս մտնելովս դուռը գոցեց , իս իր խոցը տարաւ և այն անդ ամենազեղանի օրիորդ մը տեսայ որ ոսկի թիկ կը բանէր : Իս ասանող սղորմասէր կնկան աղջիկն էր նա , որ կախարդական արհեստին մէջ ճարտար էր և վորձ , ինչպէս որ շատ չանցաւ հասկցայ :

«Աղջիկս , ըսաւ անոր մայրը , հացադործին նշանաւոր շունը կը բերեմ քեզ , որ քաջ գլխէ սուտ զբամը լաւէն զատել : Գիտես որ այս լուրն առնուտ քեզի անմիջապէս իմ կարծիքս յայանեցի , ըսելով թէ կարելի է անզգամութեամբ շունի կերպարանք առած մարդ մ՝է : Այսօր միտքս գրի այն հացադործէն հաց գնելու : Աչքովս անայս ճշմարտութիւնը զոր հոշակեր էին ամէն անդ և վարպետութեամբ մը զաղտաւի հրաշայիքն եղող այս շունը կանչեցի և ետեւէս բերի : Դ՛նչ կըրես ասոր , աղջիկս , արդեօք այս կնիմազրութիւնս սխալ է :

— Մխալած չես , մայր իմ , պատասխանեց աղջիկը , հիմալ քեզի պիտի ցուցնեմ դործը :»

Օրիորդն ուրք ելաւ , ջրով լեցուն աման մ՝առաւ , որուն մէջ ձեռքը լսովեց , և այս ջրէն երեսիս սրակելով ըսաւ .

«Եթէ շուն ծնած ես՝ շուն մնացիր , բայց եթէ մարդ ծնած ես՝ մարդու կերպարանք առ՝ այս ջրին զօրութեամբը :»

Անմիջապէս հմայութիւնը փարստեցաւ . շան կերպարանը կորուսի և առաջուան պէս մարդու երես առի :

Այսպիսի մեծ բարեգործութիւնէ մը շարժեալ՝ օրիորդին ոտքն ընկայ , և անոր պարեգօտին քրանցքը համբուրելէն ետև՝ «Իմ սիրելի

ազատարարս, ըսի անոր, այնչափ սաստիկ կ'զգամ բարութեանդ արդիւնքն որուն նմանը տեսնուած չէ ինձի պէս անծանօթ մարդու մը համար, որ կ'ազաչեմ ըսէիք ինձ թէ ինչ կ'ընամ ընել քեզի համար որպէս զի իմ երախտագիտութիւնս արժանապէս յայտնեմ' . կամ իս գործածէ իբր քու գերիդ . այսուհետեւ ես ինքզինքիս տէրը չեմ, այլ քու կը եմ, և որպէս զի զիսնաս թէ ո՞վ է քու ստրուկդ, քանի մը խօսքով պատմութիւնս քեզի պիտի պատմեմ :»

Այն ատեն ո՞վ ըլլալս անոր ըսելէն ետե՛ Կովնէին հետ ամուսնութիւնս պատմեցի, անոր գէղութիւնը կրեւու համար ունեցած հեզութիւնս ու համբերութիւնս, իր արտառոց կերպերն և անհնարին անօրէնութեամբ ինձի դէմ բռնած վարմունքն, և խօսքս լմնյուցի շնորհակալ ըլլալով մօրն որ անպատում երջանկութիւն պատճառեց ինձ այս բարիքն ընելով :

«Սիտի Նուման, ըսաւ աղջիկը, մէկդի թողունք առ իս ունեցած շնորհապարտութիւնդ, քեզի պէս բարեկիր մարդու մ'այս հաճողքը պատճառելս ամէն երախտագիտութեան տեղ կը բռնէ : Խօսիմք Կովնէի վրայ, քու կնոջդ վրայ . զանի իր ամուսնութենէ առաջ ճանչցայ, և որովհետեւ զիտէի թէ միջուկ մ'էր, ինքն ալ տեղեակ էր որ այս արհեստին քիչ մը հմուտ եմ, քանի որ մի և նոյն վարժուհիէն առեր էինք մեր դասերը : Նաև ստեղծ բարոյնքն իրարու հանդիպեցանք, բայց որովհետեւ մեր բնութիւններն իրարու հետ չէին յարմարեր, կ'աշխատէի որ անոր հետ յարաբերութիւն մը չունենամ, և այս բանս դժուարին չեկաւ ինձ, վասն զի ինքն ալ նոյնպէս խոյս կտար ինձի հետ տեսնուելու : Հետևապէս իր անդամութեան վրայ չեմ զարմնար : Իսկ գործիդ գալով՝ քեզի ըրածս բաւական չէ . պէտք է որ սկսածս աւարտեմ : Եւ արդարև, հէրիք չէ կախարդութիւնը լուծելս, որով մարդկային ընկերութենէ քեզ արտաքսեր է, պէտք է որ ըստ արժանոյն զանի պատճես, տունդ դառնալով՝ որպէս զի իշխանութիւնդ ձեռք առնուս, և ասոր միջոցն ալ քեզի պիտի տամ : Յօրս հետ քիչ մը խօսէ, հիմակ պիտի դառնամ :»

Ազատուհիս սենեակ մը մտաւ, և մինչդեռ նա այն տեղ էր, նորէն առ ի թ ունեցայ ըսելու մօրը թէ որչափ իրեն և աղջկան շնորհապարտ էի :

«Ինչպէս որ կը տեսնես, ըսաւ նա, աղջիկս Կովնէէն վար չմտար կախարդութեան մէջ, բայց միշտ 'ի բարին կը դորձածէ, և պիտի զարմանաս եթէ լսես թէ ինչ բարիք ըրած է և միշտ կ'ընէ իր արհեստին շնորհիւ : Ահա այս պատճառաւ կը թողում որ այս արհեստն ընէ մինչև այսօր, բնաւ չպիտի ներէի եթէ տեսնէի որ շարաչար կը գործածէ իր գիտութիւնը :»

Մայրն սկսեր էր պատմել ինձ աչքովը տեսած քանի մը հրաշալիքներն, երբ իր աղջիկը ներս մտաւ ձեռքը փոքրիկ շիշ մը բռնած :

«Սիտի Նուման, ըսաւ ինձ, իմ գերիներուս հիմակ խորհուրդ հարցրնելով իմացայ որ Կովնէ տունը չէ այժմ, բայց քիչէն պիտի դառնայ : Նոյնպէս կ'իմանամ որ կեղծաւորը քու բացակայութեանդ համար մեծ մտասանջութիւն կը յայտնէ սոլասսորներուդ առջև . և անոնց այնպէս հաւաքացուց թէ իր հետը ձաշելու ատենդ՝ գործ մը միտքդ եկեր է և ստիպուեր ես անյապաղ դուրս ելնելու . թէ դուրս ելնելու ատեն դուրս բաց ձգեր ես, և թէ շուն մը ներս մտեր և մինչև սեղանը դուրս աքահնէ կեր է, և ինքը զանի վաներ է սաստիկ հարուածելով : Աւստի տունդ գարձիր անյապաղ սա փոքրիկ շիշով զոր քեզի պիտի տամ : Երբ դուրս բանան, սենեակդ սպասէ որ Կովնէն վերադառնայ, և շատ չպիտի սպասես դու : Երբ ներս գայ՝ բակն իջիր, և անոր զիմայն ելիր : Իր ակնկալութեան գէմ՝ քեզ տեսնելուն՝ սաստիկ պիտի զարմանայ, կ'ունակը պիտի դարձնէ խոյս տալու համար . այն ատեն այս շիշին ջրէն անոր վրայ թափէ շուտ մը, և թափելու ատենդ համարձակութեամբ սա խօսքերն արտասանէ :

«Քու անողամութեանդ պատիժն ընդունէ :»

«Աւելի խօսք չեմ ըսեր, անոր ներդործութիւնը պիտի տեսնես :» Բարեբարութեանցս այս խօսքերէն ետե՛ զորս չմտացայ, անոր և մօրը մնաս բարև ըսի, քանի որ ուրիշ գործ չունէի, անկեղծ երախտագիտութեան զգացումներով և կրկին կրկին ըսելով որ բնաւ անոնց ըրած բարիքը չպիտի մոռնամ, և յետոյ տունս դարձայ :

Ամէն բան միջուկ օրիորդին ըսածին պէս կատարուեցաւ : Այնն ինձի դպու ատենն, ես ալ անոր առաջն տաի՝ ձեռքս շուրք բռնած և անոր թափելու պատրաստ : Ահագին աղաղակ մ'արձակեց, և որովհետեւ

դառնալ կ'ուզէր դէսլ 'ի դուռը , ջուրն անոր վրայ թափեցի կախարհ-
ուհինն ապալբաժ խօսքերն արտասանելով , անմիջապէս կինս մատակ
ձի դարձաւ , և ահա այն ձին է զոր Ձեր վեհափառութիւնն երէկ
տեսաւ :

Անմիջապէս անոր բաշէն բռնեցի , մինչդեռ հիացման միջէր , և ա-
նոր գիմաղրութեան չնայելով ախտը քաշեցի : Բերնէն սանձ անցու-
ցի , և անոր յանցանքն ու անպատմութիւնն երեսին տալով կապելէն ե-
տե՛ս : Ետքադանով սաստիկ զարկի , այնչափ շատ որ յոգնու թե՛նէս ծեծը
զաղբեցուցի , բայց միաբա գրի ամէն օր նոյն պատիժը տալու :

Իշխանոյ հաւատացելոյ , յարեց Յիտի Նուաման իր պատմութիւնն ա-
ւարտելով , յուսամ որ Ձեր վեհափառութիւնն իմ վարմունքս ծանր
չդաներ , և պիտի խոստովանի որ այնպիսի չար և նեղ պիտ կին մը
այսչափ չարչարելովս դարձեալ արժանի պատիժը չընդունիր :

Երբ ամիրապետը տեսաւ որ Յիտի Նուաման ուրիշ բնութիւն մը չու-
նէր , Յեղական է պատմութիւնոյ , ըսաւ անոր սուլթանն , և կնկանդ
անզգամութիւնը ներելի չէ : Աստի բողբոլին չեմ դատապարտեր
մինչև ցայսօր անոր սուած պատիժդ : Բայց կ'ուզեմ որ դիտես թէ որ-
չափ մեծ է իր տանջանքն այսպէս անասունի կարգն անցնելուն , և կը
փախարիմ որ այն վիճակին մէջ թողուս իր ապաշխարանքը քաշելու :
Պիտի հրամայեմ նաև քեզ որ երթաս նորաստի վճուլը գանես , և ըսես
անոր որ այն այլափոխութեան վերջ տայ , եթէ վճուկներուն կամակո-
թիւնն ու անուղղելի խտտութիւնն ինձի ծանօթ չըլլային , և զխոնա-
լով որ չարաչար կը գործածեն իրենց արհեստն , անտարակոյս եմ որ իր
վրէժն աւելի անդուլ կերպով օրին մէկը քեզնէ պիտի առնու :»

Ամիրապետն որ բնականապէս քաղցրարարոյ էր և տառապելոյ
համար դու թ կ'զգար , իր կամը Յիտի Նուամանի յայտնելէն ետե՛ս եր-
րորդ անձին դարձաւ , որ ձեաֆէր վէզիբին հրամանաւ այն տեղ եկեր
էր :

« Լօճաւ Հասան , ըսաւ անոր , երէկ քու սպարանդ անցնելու ա-
տենն , այնչափ փառաւոր դաս զայն որ հետաքրքիր եղայ իմանալու
թէ ո՞վ է անոր տէրն : Իմացայ որ հայլու առուր պորէնդ ձարելու հա-
մար բանած արհեստէդ ետքը նոյն շէնքը կառուցանել տուեր ես : Ը-

սին ինձ նաև որ դու շոտլ չես , թէ Աստուծոյ տուած հարստութիւն-
ներն աղէկի կը գործածես , և թէ դրացիներդ քեզի համար աղէկ կը
խօսին : Այս բաներս ինձ հաճոյք պատճառեցին , յարեց ամիրապետն ,
և հաւատարի եմ որ Նախախնամութիւնը քեզ անանկ պարզեանք շնոր-
հելու համար արտաքոյ կարգի միջոցներ գործածեր է : Հետաքրքիր եմ
քու բերնէդ զաննք իմանալու , և ահա այս դո՛հնակութիւնն ունե-
նալու համար քեզ այս տեղ բերել տուի : Արեմն անկեղծօրէն խօսե-
ինձ , որպէս զի ուրախանամ քու երջանկութեանդ զխտակցութեանք
մասնակից ըլլալով : Եւ որպէս զի հետաքրքրութեանս վրայ կատկած
մը չունենաս և չկարծես թէ բաժէս տարբեր նպատակ մ'ունիմ , կը
յայտնեմ որ ոչ միայն քեզի աչք չունիմ , այլև իմ պաշտպանութիւնս
կտամ քեզ որպէս զի ապահովութեանք վայելիս ինչքդ :»

Ամիրապետին այս ապահովութեան վրայ՝ Լօճաւ Հասան անոր դա-
հին առջև կեցաւ , ճակատով օթոցին զարկաւ , և ոտք երնելէն ետե՛ս ,
« Էլ բամանատարդ հաւատացելոյ , ըսաւ , եթէ ուրիշ մ'ինձի չափ մա-
քուր և անարատ խղճմանք մը չունենար , թերևս պիտի վրդովէր
Ձեր վեհափառութեան գահին առջև երեկու : հրամանը սասանալուն .
բայց որովհետև միշտ յարգանք ունեցած եմ և պատկառանք ձե-
զի համար , և ձեզի պարտաւոր եղած հնազանդութեանս , օրինաց
զէմ գործելով սրտնու թիւնդ զրգում չեմ , մինակ վախ մ'ըզացի ,
այս է թէ Ձեր վեհափառութեան պայծառութենէ պիտի շուարիմ :
Սակայն արդէն համարը հոգակած ըլլալով որ Ձեր վեհափառու-
թիւնն ամենէն ստորին հպատակը կրնդունի և մտիկ կ'ընէ յօժարա-
կամ , սիրտ հանդարտեցաւ , և աներկրայ էի որ դուք պիտի աղէք
ինձ արիւթիւն և վատահոթութիւն որպէս զի ձեզ դո՛հ ընեմ : Ահա իմ
յոյս պարսպ չելաւ , իշխանոյ հաւատացելոյ , և փորձով տեսայ ինձ
ձեր պաշտպանութիւնը շնորհելով , որ սխալած չեմ , թէև անարժան
եմ այդ շնորհաց : Սակայն յուսամ որ մի և նոյն նպատաւոր կարծիքը
պիտի պահէք իմ մտախ , երբ իմ արկածից պատմութիւնն ձեր հրամա-
նին համեմատ ընեմ :»

Ամիրապետին բարեսիրտութիւնն և ուշադրութիւնը գրուելու համար
այս քաղաքավարական յորդորը կարգալէն և պահ մը մտքին մէջ բսելի-
քը յիշելէն ետե՛ս Լօճաւ Հասան այսպէս սկսաւ խօսիլ :

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Է Օ Ճ Ա Է Ա Ս Ա Ն Ա Լ Է Ա Պ Ա Լ Ի

Իշխանդ հաւատոյեցող, ըստ Էօճա Հասան՝ Հարուն-ալ-Բաշիտ ամիրայեանին, Չեր վեհախառու թեան քաջ հասկցնելու համար թէ ինչ միջոցներով վայելած երջանկութեանս հասայ, պարտաւոր եմ Պաղտաստի բնիկ՝ իմ երկու խիստ մտերիմ բարեկամացս վրայ խօսիլ, որ զեռ կ'ապրին և կրնան ըսածիս ճշմարտութեան վկայել. իմ երջանկութիւնս անոնց պարտաւոր եմ, Աստուծոյ ետքն, որ ամէն բարեաց և բարօրութեան առաջին հեղինակն է:

Այս երկու բարեկամացս մէկը Սաատի և միւսը Սաատ կը կոչուին: Սաատի՝ որ մեծապէս հարուստ է, միշտ սա կարծիքն ունեցած է որ այս աշխարհիս մէջ մարդ չկրնար երջանիկ ըլլալ եթէ ստացածք և հարստութիւն չունենայ, որպէս զի որ և է մէկէն անկախ ապրի:

Իսկ Սաատ ուրիշ միտք ունի. սա շուրանար որ իրօք հարստութիւն պէտք է, որչափ որ հարկաւոր է կենաց, բայց կը սնդէ թէ առաքինութիւնը մարդոց երջանկութիւն կտայ, և աշխարհային հարստութեան այնչափ միայն կը կապուի որչափ որ պիտոյքը կը պահանջեն և ըստ կարողութեան առատաձեռնութիւն ընելու հարկ կայ: Սաատ այս մարդոց կարգէն է, և իր վիճակին մէջ շատ երջանիկ և դո՛հ կ'ապրի: Թէև Սաատի ամէն կերպով անորմէ շատ հարուստ է, սակայն անկեղծ բարեկամութեամբ կապուած են և հարստագոյնն ինքզինքը միւսէն աւելի բարձր չգասեր: Մինակ այս կիտիս վրայ կը վրձին, իսկ միւս բաներուն մէջ լիովին համաձայն են:

Օր մը նոյն կիտին վրայ հակաձառելու ատեն, ինչպէս որ իրենց բերնէն իմացայ, Սաատի կը սնդէր թէ աղքատներն աղքատ են միայն անոր համար որ աղքատութեան մէջ ծնած են, և կամ հարուստ ծնելէն ետև՝ կորուսած են իրենց ինչքը, կամ ցոփութենէ, կամ անակնկալ ճակատադրային հարուածէ մ'որ տարօրինակ չեն:

«Իմ կարծիքս սա է, կ'ըսէր նա, որ այն աղքատներն այսպէս են անոր համար որ թշուառութենէ ազատելու համար չեն յաջողիր բա-

ւական գումար մը ձեռք ձգել՝ իրենց ճարտարութիւնը գործածելով, և կարծեմ որ եթէ այս կէտս շահելով յարմար կերպով գործածեն այն գրամն, ոչ միայն հարուստ կը դառնային այլև ժամանակին օգնելով երեւելի մեծատուններ:»

Սաատ Սաատիին առաջադրութեան համաձայն չէր: «Աղքատ մարդ մը հարուստ դառնալու համար ցոյց տուած եղանակը սպա՛հով չերեւի ինձ: Շատ տարտամ է ըսածդ, և իմ կարծիքս կրնամ պաշտպանել ընտիր պատճառներ մէջ բերելով, որոնք կրնան մեր վիճաբանութիւնն երկարել: Ինձ ալ նոյնչափ հաւանական կ'երեւի որ աղքատ մը չէ թէ ստակի գումարով այլ խիստ ապրբեր միջոցով կրնայ հարուստ դառնալ. շատ անգամ զիպուածով մարդ աւելի մեծ և զարմանալի հարստութեան ատէր կրնայ դառնալ, քու կարծիքիդ հակառակ, թէև ամէն ինչպէս թիւն և զգուշութիւն ՚ի գործ գրուին նոյն գումարը խոհեմութեամբ առուտուր ընելով բազմապատկելու:»

— Սաատ, վրայ բերաւ Սաատին, կը նայիմ որ բան մը չպիտի շահիմ քու կարծեացդ դէմ իմս պաշտպանելով. ես փորձ մը պիտի ընեմ քեզ համոզելու մնօք, օրինակի համար, գումար մը տալով որդւոց որդի թղքատ ծնող, և օրն օրին ապրող արճեստաւորի մ'որ չքաւոր կը ծնին աղքատ կ'ապրին: Եթէ չյաջողիմ՝ այն ատեն նայինք թէ քու կերպովդ պիտի յաջնղիս:»

Այս հակաձառութենէ քանի մ'օր ետքն, այնպէս սրտասկեցաւ որ երկու բարեկամները պարտելու ատեն՝ չուանամանի արհեստս բանելու ատենս, զոր հօրէս սորվեր էի և հայրս ալ պատէս, թաղէս անցան: Մի միայն իմ վրաս զլուխս տեսնելով՝ մէկէն հասկցան թէ որչափ աղքատ եմ:

Սաատ որ Սաատին խոստումը յիշեց, անոր ըսաւ. «Եթէ մտցած չես խոստումդ, ահա քեզ մարդ մը, յարեց նա ինչոյց տալով, որ շատ ատենէ վեր չուանամանի արհեստը կը բանի և միշտ մի և նոյն չքաւորութեան մէջ կը դստուի: Քու առատաձեռնութեանդ արժանի էակ մի է, և անցած օր ըսած փորձդ ընելու յարմար առ ի՞մ մը կ'ընծայէ:»

— Այնչափ լաւ կը յիշեմ, վրայ բերաւ Սաատի, որ ակնարկած փորձդ ընելու համար պէտք եղածը քովս ունիմ, և մինակ առ ի՞մ մը

սխտուեմ որ միատեղ ըլլանք և դու աչքովդ տեսնես զործն : Աստի
սա մնադուսն մտանանք և նայինք որ իրօք բանի մը պէտք ունի :

Երկու բարեկամներ քովս եկան , և տեսնելով որ ինձ խօսիլ կ'ուզեն ,
զործս մէկի ձգեցի : Երկու քնին ալ սովորական կերպով բարև տուին
ինձ , և Սաստի բերանը բանալով հարցուց թէ ինչ է անուսն :

Ես ալ փոխադարձ բարև տուի , և Սաստիին հարցման պատասխան
տալու համար , «Տէր իմ , ըսի անոր , անուսն Հասան է , և իմ ար-
հետախ պատճառու ընդհանրապէս Հասան Ահապալ կը կոչեն իս :

— Հասան , վրայ բերաւ Սաստի , որովհետև ամէն արհեստագոր
լի արհեստովը կ'ապրի , տարակոյս չունիմ որ դու ալ հանդիստ կ'ապ-
րիս քու արհեստովդ , և մանաւանդ կը զարմանամ որ այս արհեստը
բանեղէք վեր բնաւ քիչ մը ստակ տեղ մը չդրեր ես և բաւական կանեփ
չես դներ աւելի զործ ընելու համար , թէ քեզի և թէ վարձաննե-
րուդ համար , որոնք կրնային քեզ օգնել և դրամադուխտ աւելցնել :

— Տէր իմ , պատասխան տուի , չես զարմանար եթէ ինայտ թիւն
մը չեմ բրած և բսած ճախարգ չեմ բուսած , եթէ ըսեմ որ առաւօտն
մինչև իրկուն աշխատելովս հաղիւ թէ քիչ մը ստակ կը վատտիլիմ ինք-
զինքս և ընտանիքս հացով և բանջարեղէնով կերակրելու : Կին մը և
հինգ զաւակ ունիմ , որոնք շատ փոքր են և չեն կրնար ինձ օգնել որ և
է բանի մէջ . պէտք է զանոնք սնուցանել և հաղուեցնել , և տուն մը
որչափ փոքր ըլլայ միշտ հաղար տեսակ պէտք ունի որ անհրաժեշտ
են : Թէ և կանեփը սուղ չէ , ստակ պէտք է դնելու համար , և այս
ալ ծախած զործէս առած ստակս է զոր մէկի կը դնեմ . թէ ոչ կա-
րելի չէր ըլլար տանս ծախար հոգալու : Հիմա դատէ եթէ հնար է
ինայել և հանդիստ ապրիլ ընտանեօքս : Աստուծոյ տուածովը զոհ
կ'ըլլանք , և մեր պակասներուն անդիտութեամբը հոգ չենք ընել ,
բայց մենք կարծենք թէ ամէն բան ունինք , թէ ապրելու համար
պէտք եղածը ձեռք կը ձգենք և ուրիշէն բան մը ինդրելու ստիպուած
չենք : »

Երբ այս պատմութիւնն ըրի Սաստիին , «Հասան , ըստ ինձ , հի-
մակ չեմ զարմանար , և կ'ըմբռնեմ թէ ինչ պատճառներով վիճակէդ
զոհ գտնուելու ստիպուած ես : Բայց եթէ երկու հարիւր ոսկի քեզի

պարզ և ընէի միթէ աղէկ չէի՞ր զործածեր և միթէ չես կարծեր որ
այն դումարով քու զլխաւոր արհեստակիցներուդ չափ հարուստ կ'ըլ-
լայիր :

— Տէր իմ , վրայ բերի , այնչափ ծանրազլուս անձ մը կ'երևիս ինձ
որ հաւաստի եմ թէ իս չես ծաղրեր և քու ըրած առաջարկութիւնդ
ծանրակշիւ է : Աստի կը համարձակիմ քեզ բնելու , առանց անձնա-
պատանու թեան , որ աւելի փոքր զումար մ'ինձ բաւական է , ոչ մի-
այն արհեստակից զլխաւորներէս աւելի հարուստ ըլլալու համար ,
այլև քիչ ժամանակէն՝ Պաղտտտի պէս բաղմամարդ և մեծ քաղաքի մը
մէջ՝ ես մինակս առաջինը կրնամ ըլլալ արհեստովս : »

Վեհանձն Սաստիին ցոյց տուաւ փորձով որ ինձի հետ կատակ չէր
ըներ : Քսակ մը հանեց ծոցէն , և ձեռքս տալով , «Առ , բսա , ա-
հաւաստի ըսած զումարս , երկու հարիւր ոսկի պիտի գտնես անոր
մէջ : Կ'աղաչեմ Աստուծոյ որ այս գումարն օրհնէ և փափաքածիս
պէս զայն զործածելու օգնէ քեզ . և հաւտա որ իմ բարեկամս Սաստ
որ ներկայ է , նոյնպէս ես մեծ հաճոյք պիտի զգանք երբ իմանանք որ
հիմակուանէ աւելի երջանիկ պիտի դառնաս այն գումարին շնորհիւ : »

Հրամանատարդ հաւատացելոց , երբ քսակն ընդունեցայ և ծոցս
դրի այնչափ մեծ ուրխաութիւն զգացի և երախտադիտութեամբ վա-
ռուեցայ , որ լեզուս կատուեցաւ , և ուրիշ միջոց չցտայ անոր մէկ
նշանը յայտնելու բայց եթէ բարեբարիս պատմութեանին քղանցքն առ-
նուրու պագնել , սակայն նա քաշեց քղանցքն ու ձգեց գնաց իր բարե-
կամին հետ :

Իմ զործս նորէն սկսելով առաջին հոդս եղաւ թէ ո՞ր պէտք է
պահել քսակն որ ապահով ըլլամ : Իմ խեղճ ու փոքրիկ տանս մէջ ոչ
մտաուկ ու պահարան ունէի , և ոչ այնպիսի տեղ մ'որ վստահ ըլլայի
թէ չախտի բացուի :

Այս մտառանջութեան մէջ իմ դատու խեղճ մարդոց պէս մանր
մտնր ստակս ապարօշիս ծաղքին մէջ պահելու սովորութիւն ունենա-
լով՝ զործս ձգեցի և տուն դարձայ ապարօշս կարկանդակու պատրուա-
կաւ : Պէտք եղած զգուշութիւններն ընելով քսակէն տաս ոսկի հանե-
ցի ստիպողական ծախուց համար և մնացածս ապարօշիս մէջ փաթթե-

ցի մինչդեռ կինս և զաւակներս ըրածս չտեսան :

Մի և նոյն օրը բաւական կանեփ գնեցի , և որովհետև շատ ատենէ վեր տանս համար միս առած չէի , մտավաճառին դացի և ընթրիքի համար քիչ մը միս գնեցի :

Գաւնալու ատենս միւր ձեռքս բռներ էի , երբ սովալլուկ ցին մը՝ յանկարծ վրաս յարձակեցաւ և անտարակոյս միւր ձեռքէս պիտի յափշտակէր եթէ լաւ մը սեղմած չըլլայի : Բայց աւաղ , աւելի աղէկ կ'ըլլար եթէ միւր թողտի որ քսակս չկորսնցնեմ : Ես որչափ անոր դէմ կը կենայի այնչափ ինձի դէմ կը մաքառէր : Ատղիս անդին կը քաշքշէր իս , մինչդեռ ցինս օդին մէջ կեցած որսը բռներ չէր թողուր , բայց դժբաղդարար ամէն ճիգս թափելու ատենս ապարօշս գետինն ընկաւ :

Անմիջապէս ցինը թողոց որսն և ապարօշիս վրայ ընկաւ զայն վերցրնելէս առաջ , և առաւ տարաւ : Այնպիսի սուր աղաղակներ արձակեցի որ շրջակայ տուներուն մէջ գանուող կանայք , մարդիկ և տղաք զարհուրեցան և իրենց վայնասունն իմինիս միացուցին որպէս զի ցինին բերնէն որսը ձգել տան :

Շատ անգամ մարդիկ կը յաջողին այս կերպով դիշատիչ թռչունները ստիպել որ յափշտակածնին թողուն , բայց այն աղաղակները չվախցուցին ցինն . ապարօշս այնքան հեռու տարաւ որ զայն մեր աչքէն կորուսինք . ուստի աւելորդ էր յոգնիլ անոր ետեէն վազելով որպէս զի գանձս ձեռք ձգեմ :

Տունս դարձայ տրտում տխուր ապարօշս ու ստակս կորուսելուս համար . սակայն հարկ էր ուրիշ մը գտնել , որով քսակէն հանած տանս ոսկիս իջաւ : Արդէն կանեփ գնելու համար բաւական ծախս ըրեր էի և մնացածը բաւական չէր ունեցած աղւոր յոյսերս ՚ի կատար հանելու :

Իմ ամենէն մեծ ցաւս տա էր որ բարերարս այս բանս իմանալուն պիտի դժգոհի իր նպաստն ինձի պէս անճարակ մէկու մը տալուն , և թերևս անհաւատալի և սպառնալի մը պիտի համարի :

Որչափ որ մնացած փոքրիկ գումարը տեսց' իմ ընտանիքս և ես բաւական աղէկ ապրեցանք , բայց նորէն այն վիճակին և չբաւորութեան

մէջ ընկայ և թշուառութիւնս չկրցայ փարատել , սակայն չէի զանդատեր : «Աստուած , կ'ըսէի ինքն իրենս , ուղեց իս փորձել իմ ակնկալութեանս հակառակ ինձ բարիք ընելով , գրեթէ մի և նոյն ժամանակ ձեռքէս կորդեց , քանի որ այսպէս արժան դատեց : Աստի օրհնեալ ըլլայ իր կամքն , ինչպէս որ ինձ շնորհած բարեաց համար միշտ օրհներ եմ գինքն . իր կամաց կը հպատակիմ :»

Այս հնահուքին մէջն էի , երբ կինս , որուն չէի պահած ըրած կորուստս և թէ ինչպէս այն ստակը ձեռքս հասեր էր , չէր կրնար միտթարուիլ : Կաւ անդուշաբար դրացիներուս ըսեր էի այլայլութեանս մէջ թէ ապարօշս կորուսելով՝ կորուսեր էի նաև հարիւր իննսուտն ոսկի : Բայց որովհետև կարօտութեանս տեղեակ էին , և չէին կրնար ըմբռնել որ այնպիսի խոշոր գումար մը վատակած ըլլամ աշխատանքովս , սկսան ծիծաղել , մանաւանդ տղաքները :

Գրեթէ վեց ամիս կար որ ցին այս փորձանքը բերեր էր գլխիս , երբ բնակած թաղէս երկու բարեկամները հեռուէն անցան : Այն կողմերը տեսնելուն՝ Սաստ իս յիշեց և Սաստիին ալ ըսաւ . «Ալհասպալ Հասանի բնակած փողոցէն հեռու չեմք , եկուր անկից անցնիմք և տեսնենք թէ առած երկու հարիւր ոսկիովդ առաջուանէ աւելի լաւ վիճակի մը հասանք է թէ ոչ :

— Շատ աղէկ , վրայ բերաւ Սաստի , քանի մ'օրէ վեր ես ալ անոր կը մտածէի , ուրախանալով որ իմ առաջարկութեանս իրական փորձը քեզ ցոյց տալու գոհունակութիւնը պիտի զգամ : Հիմակ մեծ փոփոխութիւն մը պիտի տեսնես անոր վրայ , և կարծեմ թէ դժուարաւ պիտի կարենա՞նք զանի ճանչել :»

Երկու բարեկամներն արդէն դարձեր և փողոցը մտնելու վրայ էին , այն միջոցին որ Սաստի տակաւին կը խօսէր : Սաստ՝ որ իս հեռուէն առաջ տեսաւ , իր բարեկամին ըսաւ . «Ինձ կ'երևի որ չափէն աւելի կը յուսաս : Հասանը կը տեսնեմ , բայց կը նայիմ որ անձամբ բնաւ փոխուած չէ : Առջի անգամ ինչ խեղճ վիճակի մէջ որ տեսանք՝ դարձեալ նոյն վիճակին մէջ կ'երևի : Սա տարբերութիւնը միայն կը գիտեմ որ գլխի փաթթոցը քիչ մ'աւելի մաքուր է . դու ալ տես , արդեօք կը սխալիմ :»

Մօտենայու ատեն, Սասա՛ որ իս տեսեր էր, Սաստիին իրաւունք սուտաւ . չէր կրնար հասկնալ թէ ինչո՞ւ համար վիճակս փոփոխութիւն մը չէ կրած, նա մանաւանդ աչնչափ զարմացաւ որ նա չխօսեցաւ ինձ առաջ երբ երկուքնին ալ քովս մօտեցան : Սասա՛ սովորական բարեւր տալէն ետե՛ «Ղաւ ուրեմն, Հասան, ըստ ինձ, աւելորդ է հարցնել քեզ թէ քեզնէ առաջին անգամ՝ հեռանալէն ՚ի վեր ի՞նչպէս կը քալին քու մանր մունր գործերդ, անտարակոյս լաւ ընթացք մը բռնած են, և երկու հարիւր ոսկին մեծ գործ տեսած է :

— Տէր իմ, վրայ բերի երկուքին ալ խօսքս ուղղելով, չափազանց կը վշտանամ որ պարտաւոր եմ իմացնելու ձեզ թէ ձեր և իմ բաղձանքներս և յոյսերս ՚ի գերեւ ելան, թէ և միտքս զբեր էի լիովին յաջողիլ : Գժուարաւ պիտի հաւատար ինձ պատահած արտաբոյ կարգի գէպքին . սակայն՝ պատուոյս վրայ՝ կը հաստատեմ, և դու քալ պէտք է հաւատար որ պատմելիքս ամենաճշմարիտ է : »

Այն ատեն ինձ պատահած արկածը պատմելի անոնց բոլոր պարտականելով, ինչպէս որ պատիւ ունեցայ Ձեր վեհօրհասութեան յայտանելու :

Սաստի խօսքին հտառ չընծայեց և ըստ . «Հասան, իմ քթէս բռնել և իս խարել կ'ուզես : Ըսածդ անհատաւորի բան մ'է : Յինները փաթթոցներուն թշնամի չեն և մինակ իրենց անօթութիւնը գոհ ընելու բաներ կը փնտռեն : Գու ալ քեզի պէտնեբուն պէս ըրած պիտի ըլլաս : Եթէ չափազանց վատակ մ'ընեն կամ եթէ անակնկալ հարստութեան մը վիճակին, իրենց աշխատանքը կը թողուն, կը զուարճանան, կ'զբօսնուն, և մինչև որ ստակնին հասնի՝ կ'ուտեն կը խմեն, և երբ ամէն բան սպառեն, իրենց առաջին կարօտութեան և չբաւարութեան մէջ կ'իջնան : Գու ք ձեր թշուտութեան մէջ կը տատայիք վստան զի անոր արժանի էք, և ձեզի եղած բարեաց անարժան կը դառնաք :

— Տէր իմ, վրայ բերի, այս ամէն յանդիմանութիւնները կը տանիմ, և եթէ աւելի ծանր յանդիմանութիւններ ալ ընէք՝ կրելու պատրաստ եմ, սակայն այս ամէնն այնքան համբերութեամբ կը լսեմ որչափ որ անոնց արժանի չեմ : Այս ըսածս այնչափ հանրածանօթ է

որ ամէն զբայիներս կրնան վկայել : Գու ք ինքնին տեղեկացէք, և պիտի տեսնէք որ սուտ չեմ խօսիր : Ես ալ կը խոստովանիմ որ բնաւ լսած չէի թէ ցիները փաթթոցներ կը յափշտակեն, բայց այս բանս ինձ պատահած է, ինչպէս որ շատ մ'ուրիշ անակնկալ բաներ ամէն օր կը պատահին : »

Սաստ իմ կողմն բռնեց և Սաստիին ուրիշ շատ մը զարմանալից լինի պատմութիւններ պատմեց, որոց մէկ քանին անոր անծանօթ չէին . ուստի իր քսակը ծոցէն հանեց, երկու հարիւր հատ ոսկի համրեց ձեռքին մէջ, և քսակ չուսնալուս հետզհետէ ծոցս դրի : Երբ Սաստի լմացուց, «Հասան, ըստ ինձ, նորէն այս երկու հարիւր ոսկին քեզի պարզեւ կտամ սիրով . բայց նայէ որ ապահով տեղ մը պահես զանոնք, որպէս զի միւսներուն պէս զանոնք չկորսնցնես, և անկից քաղելիք օգուտով՝ զոր միւսներէն ալ պիտի քաղելիք, բոլորովին բնաջինջ չընես : »

Ես ալ ըսի որ այս երկրորդ շնորհին համար այնքան մեծ է շնորհապարտութիւնս որչափ որ անոր արժանի չէի ինձ պատահած ձախորդութենէն ետքն, և թէ բան մը չպիտի մոռնամ իր խորհուրդէն օգուտ քաղելու համար : Շնորհակալիքս պիտի շարունակելի, բայց ժամանակ չթողուց, վստան զի ձգեց գնաց և իր բարեկամին հետ ճամբան շարունակեց :

Անոնց մեկնելէն ետե՛ գործի չսկսայ . այլ տուն դարձայ, ուր ոչ կ'ինս և ոչ զաւակներս կը գտնուէին նոյն միջոցին : Երկու հարիւր ոսկիէն տաս հատը մէկզի գրի, մնացած հարիւր ինստունը լաթի մը մէջ փաթթեցի և կասեցի : Հարկ էր ապահով տեղ մը պահել ծրարը : Ղաւ մը մտածելէն ետե՛ որոշեցի թեփով լեցուն հողէ ամանի մը մէջը դնել, որ անկիւն մը կը գտնուէր, կարծելով որ կ'ինս և զաւակներս զայն չեն խառներ : Քիչ մ'ետքը կ'ինս եկաւ, և որովհետեւ քիչ մը կանեփս մնացեր էր, ըսի անոր որ երթամ պիտի գնելու՝ առանց երկու բարեկամաց դալուստը յոյանելու :

Ուստի դուրս ելայ, և մինչդեռ կանեփ գնելու համար գացի, մաքրիչ կաւ ծախող մը մեր տունէն կ'անցնի և կ'սկսի սրուալ թէ ուզող կայ, քանի որ կ'իններն այն կաւէն բաղնիքը կը գործածեն :

Այնն՝ որուն կաւը հատեր էր, ծախողը կը կանչէ, և որովհետեւ ստակ չունէր, կը հարցնէ անոր թէ կա՞ն ունեցած թեփին հետ կը փոխանակէ: Ծախողը կ'ուզէ թեփը տեսնել, կինս ամանն անոր կը ցուցնէ, սակարկութիւնը կը լմնայ: Աինս մտքը չէ կաւը կ'ընդունի, և ծախողն ալ թեփին հետ ամանը կ'առնու կը տանի:

Որչափ որ կըցայ կանեփ շալակս առնելով տուն դարձայ՝ հինգ բեռնակիրով մէկտեղ, որոնք ինձի պէս ապրանքով բեռնաւորած էին, և անով տանս մէջ մեծ ամպար մը լեցուցի: Բեռնակիրներուն վարձքը տուի, և երբ մեկնեցան՝ նստայ որ քիչ մը խոնջէնքս առնուի: Այն ատեն աչքս թեփի ամանին կողմը նետեցի և տեսայ որ դրած տեղս չէ:

Չեմ կրնար բացատրել Ձեր վեհափառութեան թէ որչափ մեծ եղաւ զարմանքս, և թէ ի՞նչ սպառնումներն ունեցաւ իմ վրայ նոյն միջոցին՝ Հարցուցի կնիանս թէ ո՞ր է ամանն, և կինս ըրած սակարկութիւնը պատմեց այնպիսի կերպով մը որպէս թէ շահաւոր ելած է:

«Ա՛հ, դժբաղդ կին, գոչեցի, չգիտես թէ ի՞նչ մեծ փաստ հասուցիր ինձ, քեզի և զաւակներուդ այնպիսի փոխանակութիւն մ'ընելով որ ՚ի սպառ մեզ կը կործանէ: Գու կարծեցիր թէ թեփ ծախեցիր և նոյն թեփով կաւ ծախողը հարստացուցիր հարիւր իննսուն ոսկիով, զոր Սաստիկն՝ իր բարեկամին հետ գալով ինձի ընծայեր էր:»

Քիչ մնաց որ կինս յուսահատութեան մէջ պիտի իյնար, իմանալով որ անդիտութեամբ մեծ յանցանք մը գործեր է: Ինեղձն ողբաց, կուրծքը զարկաւ, մտքերը փետեց, և հազած զղետը պատուելով՝ «Ո՛րչափ դժբաղդ եմ, գոչեց նա, միթէ արժանի եմ այսպիսի ծանր սխալմունք մ'ընելէն ետեւ սպրիլ: Ո՛ր գտնելու է այն կաւովաճառը, զինքը չեմ ձանչեր, այս անգամ միայն մեր փողոցէն անցաւ, և կարելի է մէյմ'ալ չպիտի տեսնեմ: Ա՛հ, էրիկս, յարեց նա, դու ալ յանցաւոր ես, ինչո՞ւ համար այդչափ զաղանի պահեցիր այդ գործն իլնէ, և թէ սիրող բանայիր՝ այս փորձանքը չէր պատահեր:»

Երկար կ'ըլլայ Ձեր վեհափառութեան պատմել ինչ որ կինս տրամութեան թափեց բերնէն. քաջ դիտէք թէ կիներն որչափ ճարտասան են իրենց վշտաց մէջ:

«Անիկ, ըսի անոր, չափաորէ ցաղ. հիմակ վայնասունը ու ողբը

լսելով՝ բոլոր դրացիները պիտի հոս թափին, պէտք չէ որ մեր ձախորդութիւնը զխնանս: Ոչ միայն մեզի վշտակից չեն ըլլար և չեն մխիթարեր, այլև արորձ պիտի գայն քու և իմ սարգմտութեան վրայ ծիծաղելու: Ամենէն լաւ ճամբան այս մեր կորուստը ծածկել, համբերութեամբ կրել է, որպէս զի մարդ չհասկնայ և Աստուծոյ կամքին ապաւինինք: Ընդ հակառակն պէտք է օրհնենք զանի որ մեզի շնորհած երկու հարիւր ոսկիէն մինակ հարիւր իննսունն առաւ, և վեհանձնօրէն տաս հատը թողուց, որով պէտք եղածը դնելովս կարող պիտի ըլլանք քիչ մը մեր ցաւերը սփոփելու:»

Որչափ որ օրինաւոր էին այս իմ աւարկութիւններս՝ կինս առջի անգամ իր մտքին յարմար չցտաւ, բայց ժամանակն որ ամենէն մեծ ցաւերը կ'ամբը՝ և անտանն լի կ'երեւին, անոր միտքն ալ հանդարտեցուց:

«Երբաւ է որ աղքատութեամբ կ'ապրինք, կ'ըսէի անոր, բայց հարուստները մեզնէ ի՞նչ տնին առելի: Մի և նոյն օրը չենք շնչեր, մի թէ արևուն մի և նոյն լոյսն ու ջերմութիւնը չենք վայելեր: Մեզնէ առելի ունեցած քիչ մը հանգստութիւննին մեր նախանձը կը զրդուէին թէ որ մեզի պէս չլեռնէին: Եթէ լաւ մը քննենք՝ քանի որ ամէն բանի մէջ Աստուծոյ երկիւղն ունինք՝ հարուստներուն ունեցած առաւելութիւնն այնչափ փոքր բան է որ նախանձելու հարկ չմնար:»

Իմ բարոյական խորհրդածութիւններովս չեմ ուզեր Ձեր վեհափառութիւնը տաղակացնել: Այսչափ ըսեմ որ միտքարուեցանք կինս և ես, և արհեստս շարունակեցի այնպիսի մտքի հանգարտութեամբ մը, իբր թէ՛ քիչ ժամանակի մէջ՝ հետզհետէ այնչափ ծանր կորուստներ ընտոյն ես չէի:

Բան մը միայն ստէպ իս կը տալնապէր և ինքն իրենս կ'ըսէի. «Ի՞նչպէս Սաստիկն առջևը պիտի ելնեմ՝ երբ զայ հարցնէ թէ ի՞նչ պէս գործածեցի իր երկու հարիւր ոսկին և իր առատածնունդութեամբն ի՞նչ դրամ ժողովցի. այն ատեն քոչորովին պիտի շփոթիմ, կ'ըսէի, թէ և թէ առաջին և թէ վերջին անգամուն ալ այս ճախորդութեան պատճառն ես չէի:»

Երկու բարեկամներն առջի անգամն առելի ուշ եկան իմ վիճակս իմանալու: Ստատ շատ անգամ Սաստիկն յիշեցուցեր էր գործը, բայց

Սաստիկն երկարաձյեր էր :

«Որչափ ուշ երթանք, կըսէր նա, այնչափ Հասան սիտի հարստանայ, և նոյնչափ մեծ պիտի ըլլայ իմ գոհունակութիւնս :»

Սակայն Սաստիկը բարեկամին առատաձեռնութեան արդիւնքին վրայ նոյն գաղափարը չունէր :

«Ուրեմն, կարծես թէ, կըսէր նա, քու պարզեղ այս անգամ աւելի աղէկ պիտի գործածէ Հասան քան առաջին անգամ : Քեզ չեմ յորդորեր որ շատ յուսա՛ որպէս զի ետքէն աւելի չցատիս եթէ երբէք յոյսդ ՚ի դերև ելած տեսես :

— Բայց կը կրկնէր Սաստիկ, ամէն օր ցին մը շառնուր չտանիր փաթեթոյ մը : Հասան առջի անգամ բռնուեցաւ, անշուշտ պէտք եղած զգուշութիւններն ըրած է որ նորէն չբռնուի :

— Անբովիտ եմ, պատասխանեց Սաստիկ, բայց մեր երեակայած դիպումներն տարբեր դիպումներ են թերևս հասած ըլլայ : Նորէն կ'ըսեսի՛մ քեզ, ուրախութիւնդ չափաւորէ, և կանխաւ մի դատեր Հասանի երջանկութիւնը կամ զժբարդութիւնը : Քեզի բացէ ՚ի բաց կարծիքս կ'ուզե՛ս ըսեմ, թէ և իմ համոզումս անխորժ պիտի դայ քեզի, նախազգացում մ'ունիմ որ նորէն ձախող պիտի երթայ գործն, և ես պիտի յաջողիմ հաստատելու որ աղքատ մարդ մը չէ թէ ստակով, այլ ուրիշ ճամբով մը կրնայ հարստանալ :»

Վերջապէս օր մ'որ Սաստիկ Սաստիկին տունը կը գտնուէր՝ երկար վիճարանութիւն մը բացին և Սաստիկը ըսաւ, «Այլ բաւական է, պէտք է որ այսօր իսկ բանին էութիւնն իմանամ : Ահա պարտելու ատենը հասաւ, դուրս ելնե՛ք, և երթանք տեսնե՛ք թէ մեզնէ՛ք որ մէկը պիտի կորուսէ՛ գրաւը :»

Երկու բարեկամները մեկնեցան, և ես ալ անոնց գալը հեռուէն տեսայ : Բոլորովին այլայլեցայ, և քիչ մնաց գործս թողլով պիտի երթայի պահուելու, որպէս զի անոնց առջևը չերեւիմ, սակայն աւելի լաւ սեպեցի մնալ, և այնպէս ձեացուցի որ բոլորովին գործիս գրաւելով զերեւելու չեմ տեսներ : Երբ շատ մօտեցան ինձ, աչքերս վերուցի զմտնոր նայելու և անոնց բարեն ընդունելով ես ալ բարեկերտ ստիպուեցայ, բայց իսկոյն աչքերս վար տուի, և իմ վերջին զժբարդու-

թիւնս մանրամասն պատմելով հասկցուցի անոնց թէ ի՞նչ պատճառաւ առջի անգամուն պէս աղքատ էլը գտնեն իս :

Երբ խօսքս վնցուցի, «Թերևս ըսէք, յարեցի ես, որ հարիւր ինստուն ոսկին չէ թէ թեփամանի այլ ուրիշ բանի մը մշտպահելու էր որ նոյն օրն իսկ պիտի յափշտակէին : Բայց այն ամանը շատ տարիներէ վեր նոյն տեղը կեցած էր. և ամէն անգամուն որ կրնա թեփը ծախէր՝ ամանը տեղէն չէի շարժեր և հետզհետէ կը լեցուէր : Միթէ կարող էի գուշակել որ նոյն օրն իսկ՝ իմ բացակայութեանս ատեն՝ կուտվածաւ մը պիտի անցնէր անկից և կրնա ստակի համար այն սակարկութիւնը պիտի ընէր : Արնաք ըսել որ հարկ էր կնկանս ինաց տալ, բայց չեմ կարծեր թէ ձեզի պէս իմաստուն մարդիկ այդպիսի խորհուրդ մը տալիք ինձ : Եթէ ուրիշ տեղ մը պահէի՝ ո՞վ կրնար ապահովել որ ուրիշ փորձանք մը չպիտի պատահէր : Տէր իմ, ըսի Սաստիկին ուղղելով խօսքս, Աստուած չուզեց որ քու առատաձեռնութեամբ հարստանամ, իր անքննելի վճռովն զոր մէկը չկրնար թափանցել : Անգից որ աղքատ մնամ և չէ թէ հարուստ : Ես գարձեալ շնորհապարտ եմ քեզ, որպէս թէ այն գումարը փափաքիդ համեմատ կը վայելեմ :»

Այս ըսելով լռեցի, և Սաստիկ, որ բերանը բացաւ, ինձ ըսաւ, «Հասան, եթէ ուզեմ համոզուիլ անգամ որ ըսածներդ ճշմարիտ են, և թէ քու խառնակ ընթացքդ և շուայլութիւնդ ծածկելու համար այդ պատմութիւնը չես հնարած, թէ և շատ հաւանական է, գարձեալ չպիտի միտքս փոխեմ և կամակորութեամբ նոր փորձ մ'ընեմ որ թերևս իս կործանէ : Բնաւ չեմ զջջար քեզ չորս հարիւր ոսկի տալու, որպէս զի քեզ աղքատութենէ ազատեմ, ես միայն Աստուծոյ հաճելի գործ մ'ընելու համար ըրի, առանց ուրիշ վարձ մը սպասելու, բայց միայն քեզ բարիք մ'ըրած ըլլալուս հաճոյքն : Եթէ բան մը կայ որուն վրայ կը զջջամ, փոխանակ քեզի, ուրիշ մէկու մը չզիմեղ է, և այն ուրիշը կարելի է իմ պարզեղ օգուտ կը քաղէր :»

Այս ըսելով իր բարեկամին կողմը դարձաւ և շարունակեց. «Սաստիկ, այս ըսածներէս կրնաս հասկնալ որ բոլորովին իբրաւունք չեմ տար քեզ : Սակայն ազատ ես դիտցած կերպովդ փորձ մ'ընել իմ գրուած թեման հակառակ : Յոյց տուր ինձ թէ աղքատ մարդ մը հարստացնե-

լու միջոց մը կնց ստակէն զատ , ինչպէս որ դու և ես կ'ըմբռնենք , և դարձեալ Հասանին վրայ ըրէ փորձդ : Ինչ որ տաս անոր՝ չեմ կրնար համոզուիլ որ պիտի կարենայ հարստանալ , մինչդեռ իմ շնորհած չորս հարիւր ոսկիովս չկրցաւ բան մ'ընել : »

Սաատ կապարի կտոր մ'ունէր ձեռքն , և զայն Սաատին կը ցուցընէր :

« Տեսար որ , ըսաւ , սա կապարի կտորը գեանէն առի . զայն Հասանին պիտի տամ , պիտի տեսնես թէ ինչօգուտ պիտի բերէ անոր : »

Սաատի քահ քահ խնդաց՝ Սաատին վրայ ծիծաղելով :

« Կապարի կտոր մը , գոչեց նա . ինչօգուտ կրնար բերել Հասանին բայց եթէ թանկ մը : »

Սաատ կապարի կտորը տալով ինչ ըսաւ . « Թող Սաատին որչափ ուզէ ծիծաղի , և դու սա կապարն առ : Օրին մէկն անոր պատճառած երջանկութիւնը մեզի պիտի պատմես : »

Կարծեցի թէ Սաատ կատակ ընել և զբօնուէր կ'ուզէ : Սակայն դարձեալ կապարի կտորն առի , անոր շնորհակալ ըլլալով , և զինքը գոհ ընելու համար , բաձկոնիս մէջ դրի : Երկու բարեկամները հեռացան իրենց պտոյտը լմնցնելու և ես ալ գործս նորէն սկսայ :

Իրիւնը պառկելու համար հանուելու ատենս , զօտիս քակիցի և Սաատին սուած կապարը՝ զոր բոլորովին մոռցեր էի , գետին ընկաւ . գեանէն առի և մէկ կողմ նետեցի :

Նոյն գիշերն իսկ՝ այնպէս պատահեցաւ որ իմ դրացի ձկնորսներէն մէկը՝ ցանցերը շտկելու ատեն՝ տեսաւ որ կտոր մը կապարի պէտք ունի . իր քովը չունէր , և ժամանակն ուշ էր ուրիշ մ'երթալ զնելու շուկայէն : Սակայն պարտաւոր էր , եթէ միւս օրուան օրսպահիկն իր և ընտանիքին համար ճարել կ'ուզէր , լուսնայէն առաջ ձկնորսութեան երթալու . իր կնոջ կը յայտնէ պիտոյքն և զանի դրացիներուն կը զրկէ որ կտոր մը կապար գանէ :

Աինն իր էրկան կը հնազանդի , փողոցին երկու կողմը գտնուած տուները դռնէ դուռ կը զարնէ և ուզածը չկրնար գտնել : Երբ ունայնաձեռն կը դառնայ էրկան քով էրիկը կը հարցնէ թէ արդեօք ամէն դրացիներուն զննց , Աինն Այո կը պատասխանէ . « Հապա Հասան

Ալհապալի տունն ալ դացիբ , յարեց նա , դուա կը դնեմ որ անոր տունը դացած չես :

— Իբաւ է , վրայ բերաւ կինը . հոն չդացի , վասն զի հեռու է , և եթէ երթայի անգամ՝ պարապ պիտի դառնայի : Եթէ բանէ մը պէտք չունենաս այն ատեն պէտք է որ Հասանին տունն երթաս , ես փորձով կը խօսիմ :

— Ինչ փոյթս , վրայ բերաւ ձկնորսը . դու ծոյլ ես , կ'ուզեմ որ անոր տունն ալ երթաս : Հարիւր անգամ անոր տունը դացեր և պարապ ետ դարձեր ես , կարելի է այս անգամ ուզած կապարս կը գտնես . նորէն կ'ըսեմ , պէտք է որ անոր տունն ալ երթաս : »

Ձկնորսին կինը դուրս ելաւ միմուտով և յանդիմանելով , և եկաւ մեր դուռը զարկաւ : Արդէն բաւական ատենէ վեր քուն էի , արթընցայ , և հարցուցի թէ ինչ կ'ուզէր :

« Հասան Ալհապալ , ըսաւ կինը ձայնը բարձրացնելով , էրիկս իր ուսկանը շտկելու համար կտոր մը կապարի պէտք ունի , եթէ ունիս , կ'աղաչէ որ քիչ մը տաս : »

Սաատին տուած կապարը միտքս էր՝ քանի որ հապուստս հանելու ատեն վրայէս ընկեր էր , զբացուհոյս պատասխան տուի որ ուզածն ունիմ , քիչ մը սպասէ , և թէ կինս կտոր մը պիտի ապ անոր :

Աինս որ դրան ձայնէն արթնցեր էր , ոտք կ'իշնէ , խարխաբելով ըսած տեղէս կապարի կտորը կը գտնէ , դուռը կէս մը կը բանայ և դրացի կնկան կտայ :

Ձկնորսին կինը շատ ուրախացաւ որ պարապ չպիտի դառնայ , և ըսաւ . « Գրացուհիս , թէ էրկանս և թէ ինչ պատճառած հաճոյքդ այնչափ մեծ է , որ կը խոստանամ բերել քեզ ինչ որ էրիկս բռնէ առջի անգամ ուսկանը նետելուն , և կը հաւատեմ որ խօսքէս չպիտի ելնէ : »

Ձկնորսն՝ իր ակնկալութեան հակառակ՝ ուզած կապարը գտնելուն վրայ ուրախանալով իր կնկան ըրած խոստումն ընդունեց :

« Շնորհակալ եմ , ըսաւ անոր , որ այս մասին իմ դիտաւորութեանս համեմատ վարուեցար : »

Իր ուսկանը շտկեց վերջապէս և իր սոխըութեան համեմատ արևն

երևելն երկու ժամ առաջ ձկնորսութեան զնայ : Առջի անդամ ուղիւ-
նը քաշելուն մինակ ձուկ մը բռնեց , բայց կանգունէ աւելի երկար էր
և ըստ այնմ խոշոր : Ա երջը քանի մ'անդամ ևս նետեց և աւելի բազ-
դաւոր եղաւ , բայց առջի բռնած ձկէն աւելի մեծ ձուկ մը չբռնեց :

Երբ ձկնորսն իր գործը լննցուց և տունը դարձաւ , առաջին հոգն
եղաւ ինձ մտածել , և աշխատելու ատենս չափազանց զարմացայ երբ
ձկնոյն իմ առջև տեսայ զինքը :

«Գրացի , ըսաւ ինձ , երէկ դիշեր կինս խոտապառ քեզ որ առջի
բռնած ձուկս քեզի տայ ըրած ծառայութեանդ փոխարէն , և' ես ալ
անոր խոտապար բռնեցի : Աստուած մինակ սա ձուկը տուաւ ինձ , և
կ'աղաչեմ քեզ զայն ընդունիլ : Թէ որ ուղիւնս լեցնէր , ամէնն ալ քե-
զի պիտի ընծայէի : Թէ և քիչ է , ինդրեմ ընդունէ զայն՝ իբր մեծ ըն-
ծայ մը :

— Գրացի , ըսի անոր , քեզի տուած կապարի կտորս այնպիսի
պղտիկ բան մ'է , որ հարկ չկար այնչափ արժէք տալ անոր : Գրացինն
ըր պէտք է որ իրարու օգնեն մանր մունր պիտոյից մէջ , իմ քեզի ը-
րածս դու ալ պիտի ընէիր նոյնպիսի պարագայի մէջ : Աստի պարզեզ
չպիտի ընդունէի եթէ համոզուած չըլլայի որ սրտանց կ'ընես , մանա-
ւանդ սիրտդ պիտի կտարեմ եթէ այսպէս վարուիմ : Աստի կ'ընդու-
նիմ , քանի որ այսպէս կ'ուզես , և քեզի շնորհակալութիւնս կը յայտ-
նեմ : »

Այս քաղաքավարական խօսքերն ընելէն ետև՝ ձուկն առի և կնոջս
տարի :

«Առ այս ձուկն , ըսի . մեր դրացին իբր փոխարէն իրեն տրուած
կապարին՝ տուաւ զայն : Մտաւին երէկ ինձ ըրած պարզեզն այս ար-
դիւնքը մինակ կրնայինք ձեռք ձգել , ըսելով թէ մեզի երջանկութիւնս
պիտի բերէ : »

Այն ատեն երկու բարեկամներու գալ իս տեսնելնս պատմեցի ,
նոյնպէս մեր մէջ անցած խօսակցութիւնը :

Կինս շփոթեցաւ այնպիսի մեծ ու խոշոր ձուկ մը տեսնելով , և ը-
սաւ .

«Ե՞նչ կ'ուզես որ ընեմ այս ձուկը : Մեր կասկարան մինակ մանր

ձկներ երկու համար է , և բաւական մեծկակ սան մը չունինք որ խա-
շնէք :

— Այդ քու դիմնալիք բանդ է , ըսի անոր . ինչպէս կ'ուզես այն-
պէս եփէ , տապիկես կամ խաշես , նոյն բանն է ինձի համար : » Այս
ըսելէն ետև՝ իմ գործիս դարձայ :

Չուկն սակելու ատեն՝ կինս աղիքներուն հետ փորէն խոշոր անդա-
մանդ մը հանեց , և զայն սրբելով կարծեց թէ ապակիի մը կտոր է :
Անդամանդի խօսք ըսեր էր միայն , և եթէ դիտած ալ ըլլար՝ չէր
կրնար ապակին անդամանդէն որոշել : Աստի ամենէն պղտիկ տղուս
տուաւ զայն , որպէս զի եղբարցի ու քոյրերուն հետ խաղալիկ մը շի-
նէ , որոնք կարգով կ'ուզէին բռնել նայիլ , և ասոր համար ձեռքէ
ձեռք կ'անցնէին անոր զեղեցկութեան և փայլութեան վրայ զմայլե-
լով :

Երբ իրկունը կանթեղը վառեցինք , մեր տղաքն՝ որ իրենց խաղը
շարունակեցին , անդամանդը քննելու համար ձեռք ձեռք անցնելով՝
տեսան որ լոյս կտայ այն քանի որ կինս կանթեղը կը հեռացնէ , ընթ-
րիքը սրտարատելու համար շարժելու ատեն . և ասոր վրայ տղաքս ա-
ւելի հետաքրքրութեամբ անդամանդն իրարու ձեռքէ կը յափշտակէին
և կը քննէին : Բայց փորքները կ'ըսէին երբ մեծերն աւելի երկար ա-
տեն դահարը կը նայէին , և ասոնք ալ անոնց լացը դադարեցնելու հա-
մար ստիպուած էին զայն անոնց ձեռքը տալ :

Ռոյլհեան տղաք պղտիկ բանով կ'զբօսնուն և երբեմն ալ կը կուռին ,
ոչ ես և ոչ կինս ուշադրութիւն չըրինք եթէ ի՞նչ պատճառաւ այնչափ
գոռ ու գոչում կը հանեն : Ա երջապէս արմուկը դադարեցաւ երբ մեծե-
րը սեղանս նստան մեզի հետ ընթրիք ընելու , և երբ կինս պղտիկներուն
ալ պէտք եղած կերակուրը բաշխեց :

Ընթրիքէն ետքը՝ տղաք նորէն մէկտեղ եկան և առաջուան պէս
սկսան պոռպոռալ : Մեծ տղաս կանիւցի և հարցուցի անոր թէ ինչու
համար այնչափ արմուկ կը հանեն . նա ինձ ըսաւ .

«Հայր իմ , ապակիի կտոր մ'է որ լոյս կը հանէ երբ մութին նա-
յինք : Նոյն ապակին բերել տուի և ես ալ փորձն ըրի :

Այս երևոյթն արտաքոյ կարգի երևցաւ ինձ և կնկանս հարցուցի թէ

այնչապակին նսկից դտեր է :

«Ձգիտեմ, ըստ նա, ձուկը պատրաստելու ասեն անոր փորէն հանեցի :»

Ես ալ ուրիշ բան չկարծեցի եթէ ոչ ապակի է այն . սակայն ես ալ աւելի փորձել ուզեցի : Կնկանս ըսի որ կանթեղը կրակարանին մէջ պահէ , և զիտեցի որ կարծեցեալ ապակիի կտորն այնպիսի լոյս մը կը հանէր , որ առանց կանթեղի կրնայինք պառկիլ : Աստի կանթեղն անցնել տուի , և ես ինքս ապակիին կտորը կրակարանին վրայ դրի լուսաւորուելու համար :

«Ահա ապակի, ըսի, այս ալ ուրիշ մէկ օգուտ մ'է, զոր Սաատիին բարեկամին տուած կասարէն կը քաղենք, և ձեթ գնելու պէտք չենք ունենար :»

Երբ տղաքս տեսան որ կանթեղը մարել տուի և ապակիին կտորն անոր տեղ կը բռնէ, սկսան այս սքանչելի բանին վրայ այնպիսի բարձր ձայնք արձակել զարմանալով որ մեր դրացիներն անգամ լսեցին :

Այս աղմուկն աւելցուցինք իմ և կնկանս ձայներով որպէս զի զազանք հանդարտեցնենք, և չկրցանք լսեցնել մինչև որ չքնայան, երկար ատեն խօսակցելէն ետև, ապակիին հանած լոյսին վրայ :

Մենք ալ անոցմէ ետքը պառկեցանք, և հետևեալ օրը կանուխ, առանց ապակիին կտորը միտքս բերելու, ըստ սովորականին գործիս գացի : Չարմանալի է որ ինձի պէս մտադ մ'այսպէս կ'ընէր, քանի որ ապակի անանելու սովորած ըլլալով՝ բնաւ անգամանոց մ'ի՛նչ է չզիտէի, և եթէ զխանայի անգամ այնչափ մտադիր չէի եղած անոր արժէքը հասկնալու :

Այս տեղ հարկ է յայտնել Ձեր վեհափառութեան որ իմ և դրացոյս տունը լոկ ապիստակէ խիստ թեթև միջնորմով մը կը զատուէր : Այս պատկից տունը խիստ հարուստ Հրէայ ակնադործի մ'էր, և անոր պառկած սենեակը միջնորմին կից էր : Արդէն պառկեր ու քնացեր էին երբ տղոյս ձայներէն արթնցեր և նորէն քնանալու մեծ դժուարութիւն քաշեր են :

Հետևեալ օրը հրէին կինը՝ թէ իր և թէ էրկանը կողմէն, եկաւ իմ կնկանս գանդաւորներ ըրաւ որ իրենց առջի քուրը վրդուեր են մեր

տղաքը :

«Իմ բարեսիրտ Բաշէլ, (այսպէս կ'անուանէր հրէային կինն) ըսաւ անոր կինս, կը ցառիմ այս անպատահութեան վրայ և քեզի ներում կը խնդրեմ : Գիտես արդէն թէ ի՛նչ են տղաք . պզտիկ բանով մը կը խնդան, ինչպէս նաև կ'լան : Ներս մտիր, ցուցնեմ քեզի անոց ծիծաղը շարժող բանը :»

Հրէայ կինը ներս մտաւ, և իմ անգամանոցն առաւ, վասն զի իրօք անգամանոց էր վերջապէս, և խիստ եղանակ անգամանոց մը : Գեռ ևս կրակարանին վրայ էր անգամանոցը, կինս գրացի կնկան տալով ըսաւ . «Առ նայէ, ահա սա ապակիի կտորն է որ երէկ գիշերուան լսած աղմուկը պատճառեց : Մինչդեռ հրէայ կինն, որ ամէն տեսակ գոհարեւրէն կը ճանչէր, դարմանցմամբ կը քննէր այն անգամանոցը, կինս անոր պատմեց թէ ի՛նչպէս ձուկին փորէն գտեր և ի՛նչ պատահեր էր :

Երբ կինս խօսքը լմացուց, հրէայ կինն՝ որ զիտէր անոր անունն, «Աշա, ըսաւ անոր անգամանոցը տալով, ես ալ կարծեմ քեզի պէս որ ապակի է այս, ըսայ որովհետև սովորական ապակիէն աղոր է, և ես ալ գրեթէ նոյնպիսի ապակիի կտոր մ'ունիմ որով երբեմն կը զարդարուիմ, և կրնայ անոր յարմարել, ծախու կ'անուում քուկը ալ եթէ ծախել ուզես :»

Տղաքս լսելով որ ապակին ծախու կ'ուզէ առնուլ հրէայ կինն, սկսան պոռալ կանչել, և աղաչեցին իրենց մայրն սը զայն չծախէ . կինս ալ զանոք հանդարտեցնելու համար ստիպուեցաւ անգամանոցը պահել :

Հրէայ կինը՝ քաշուելու ստիպուած ըլլալով՝ գուրս ելաւ, և կինս թողլէն առաջ՝ որ մինչև դուռը գացեր էր հետը, ցած ձայնով աղաչեց զկնքն որ եթէ ապակիին կտորը ծախելու միտք ունի, մարդու չցուցնէ իր կարծիքը չառած :

Հրէայն իր խանութի կանուխիկի գացեր էր, որ ակնալաճառի շուկան էր : Հրէայ կինն զնայ իր երիկը գտնելու և յայտնեց ըրած զիտալ . ըսցատրեց թէ որչափ խոշոր, ծանր էր անգամանոցն, ի՛նչ ջուր ունէր և ի՛նչ վայլ, մանուսնոց թէ գիշերով լոյս տալու եղական յատկութիւնն, իմ կնկանս խօսքին վրայ իմացուց, և կնկանս խօսքն այնքան

Հատառալի էր որչափ որ ինքը պարզամիտ էր :

Հրէայն իր կիներն իմնինս զրկեց որ ապակիի կտորին վրայ սակարկէ , նախ քիչ մը բան տայ և եթէ դժուարութիւն տեսնէ՝ քիչ մը զինն աւելցնէ և վերջապէս այն անդամանդն առնու ինչ զինն որ ուզէ :

Հրէայ կիներն՝ իր էրկան հրամանին համեմատ իմ կնիկանս հետ առանձնակի խօսք ըբաւ , և առանց հարցնելու թէ արդեօք ապակին ծախելու միտք ունի՞ր , անմիջապէս քսան ոսկի առաջարկեց : Աինս այս դու մարը չափազանց դտաւ ապակիի կտորի մը համար , ինչպէս որ կը կարծէր : Սակայն խօսքը չկտրեց և ըսաւ որ չկրնար բան մ'ըսել մինչև որ նախ ինձի հետ չխօսի :

Նոյն միջոցին՝ գործս ձգելով առն գարձեր և ճաշելու համար դռնէն ներս կը մտնէի՝ երբ անտէք դրան առջև կը խօսակցէին : Աինս իս կեցուց և հարցուց թէ արդեօք կը հաւանիմ՝ ձկին փորէն ելած ապակիի կտորը հրէայ կնոջ ծախել , որ քսան ոսկի զին կտար :

Իսկոյն պատասխան չտուի . միտքս բերի այն վտահոյթիւնն որով Սաստ կապարի կտորը տալով ինձ ըսեր էր թէ բազդս պիտի շինեմ . իսկ հրէայ կիներ կարծեց թէ առաջարկած դումարն արհամարելուս համար է որ չէի ուզեր պատասխանել :

« Լաւ ուրեմն , ըսաւ հրէայ կիներն , ահա յիսուն հատ կտամ , միթէ գնճես : »

Տեսնելով որ հրէայ կիներ քսան ոսկին անմիջապէս յիսունի հասոցց , ես ալ հաստատ կեցայ և ըսի որ իմ ուզելէք զինէս շատ հեռու է :

« Գրացիս , վրայ բերաւ նա , առ հարիւր ոսկի . կարծեմ շատ է . չգիտեմ իսկ որ էրիկս պիտի հաւանի թէ ոչ : »

Երբ այս նոր զինը տուաւ , ըսի անոր որ հարիւր հազար ոսկի կը պահանջեմ . քաջ կը դիտէի որ անդամանդն աւելի կ'արժէր , բայց հրէայ կնիկան էրիկն՝ իբր գրացի՝ հաճելի ըլլալու համար խնդրած դումարովս գոհ եղայ , և անկից վար չպիտի տայի . վասն զի եթէ այս զինը տալու մերժէր , ուրիշ ակնալաճատներ աւելի կրնային տալ :

Այս կարծիքիս մեջ աւելի հաստատուեցայ երբ գիտեցի թէ ինչեռնանդով հրէայ կիներ սակարկութիւնը լմնցնել կ'ուզէր , մինչև անդամ յիսուն հազար ոսկի առաջարկելով կրկին և կրկին , թէ և ես մերժեցի :

« Ասկից աւելի չեմ կրնար տալ , ըսաւ նա , առանց էրկանս կարծիքն առնելու : Այս իրկուն առն պիտի գայ . մինակ կ'աղաչեմ որ շնորհ ընէիք համբերելու և անդամանդն անոր ցոյց տալու : » Խնդիրը չմերժեցի :

Իրկունն երբ Հրէայն իր տունը դարձաւ՝ իր կնիկէն իմացաւ որ առաջարկած յիսուն հազար ոսկիով սակարկութիւնը չէ լմնցեր իր և անոր կնիկան մեջ և խնդրեր է որ համբերելու շնորհ ընէ :

Հրէայն կ'սպասէր որ գործս լմնցնելով տուն գառնամ : Երբ իս տեսաւ , « Հասան դրացի , ըսաւ նա ինձ մտանալով , կ'աղաչեմ որ կնիկանդ իմնինս ցոյց տուած անդամանդն ինձի ալ ցոյցնես : » Հրէայն ներս կանչեցի և ցոյց տուի :

Որովհետեւ շատ մտ թէր և կանթեղն ալ վտած չէր , նախ հասկըցաւ՝ անդամանդին հանած լոյսէն և սոյսծառութենէն՝ որ իր կիներ ճիշտ պատմեր էր գործն : Առաւ զայն , և երկար բարակ զայն քննելէն և անոր վրայ զմայլելէն ետեւ՝ « Լաւ ուրեմն , դրացի , ըսաւ իմ կիներն , ինչպէս յայտնեց ինձ , քնդի յիսուն հազար ոսկի տուեր է անդամանդիդ համար , որպէս զի գոհ ըլլաս , դեռ ես քսան հազար մը կտամ : »

« Գրացի , վրայ բերի , կիսով սէտք էր ըսել նաև որ հարիւր հազար ոսկի խնդրեցի . կամ այս դումարն ինձի պիտի տաս , կամ անդամանդը քովս պիտի մնայ . ուրիշ ճամբայ չկայ : »

Հրէայն երկար ատեն սակարկութիւն ըբաւ յուսալով որ աւելի աժան կտամ , բայց ձեռքը բան մը չանցաւ , և վախնալով որ ուրիշ ակնադործներու կը ցոյցնեմ անդամանդս , հաճեցաւ ուզած զինս տալ : Մինակ ըսաւ հարիւր հազար ոսկի իր տունը չունի , բայց թէ հետեւեալ օրը բոլոր դումարը պիտի վճարէ . նոյն օրն երկու ծրար բերաւ , ամէն մէկը հազարական ոսկի կը պարունակէր , որպէս զի սակարկութիւնը լմնցած սեսլուի :

Հետեւեալ օրը չգիտեմ թէ հրէայն բարեկամ՞ փոխ առաւ , կամ ուրիշ ակնադործներու հետ ընկերացաւ , բայց ինչ որ է , հարիւր հազար ոսկին լեցուց և որոշած ժամուն ամբողջ դումարը բերաւ . ես ալ անդամանդն անոր յանձնեցի :

Այսպէս անդամանդը ծախելէն և ակնկալութենէս վեր հարուստ

բլլայէն ետև՝ Աստուծոյ բարերարութեան և առատաձեռնութեան շնորհակալ եղայ, և Սաստիկն երթալով անոր ոտքը պիտի իյնայի իմ երախտագիտութիւնս յայտնելու եթէ բնական տեղը գիտնայի: Նոյնպէս պիտի ընէի նաև Սաստիկին, որուն պարտաւոր էի իմ երջանակութեանս առաջին հոգը, թէ և իր փափաքներն անկատար մնային:

Յետոյ մտածեցի թէ ի՞նչ կերպով պիտի գործածեմ այնպիսի մեծ գումար մը: Այնս՝ որ արդէն կնային մնափառութեամբ լցուած էր, նախ իրեն և զաւակաց համար ճոխ հաղուաներ շինել առաջարկեց, նոյնպէս ինչոքեց որ տուն մը ծախու առնուի և կահ կարասիով զարգարեմ:

«Այնս, ըսի, պէտք չէ այդ տեսակ ծախսերէ սկսիլ: Գործն ինձի թող, ինչոքիք կատարելու ժամանակը պիտի գայ: Թէ և ստակը ծախ ընելու համար եղած է, սակայն պէտք է այնպէս մը գործածել որ խնդրմը գոյանայ և բնաւ չցյալքի: Ահա այս է իմ մտնուութիւնս, և վաղուան օրն իսկ պիտի սկսիմ եկամուտ մը հաստատել:»

Հետևեալ օրը՝ բաւական ժամանակ անցուցի գործակիցներ երթալ գտնելու, որոնք իմ առջի կարգաւ միջակ ունէին. կանխիկ գրամտուի անոնց և տեսակ տեսակ չուան շինելու համար զանոնք բռնեցի, որպէս զի ամէն մէկն իր կարողութեան և ճարտիկութեան համեմատ իր արհեստը բանի, և խոստացայ ժամանակին իրենց վարձքը մշարել քանի որ ըմբոյցած գործերն ինձ բերեն: Հետևեալ օրն ուրիշ գործաւորներ ալ բռնեցի, և այն ատենէն վեր Պաղտատի բոլոր չուան շինող գործաւորներն ինձի համար կաշխատին, և շատ գոհ են որ խոստմանս համեմատ օրող չէք կրնողունին:

Արովհետև այսչափ բազմաթիւ գործաւորներ համեմատաբար շատ գործ պիտի հանէին, այլ և այլ տեղեր միտերանոցներ վարձու բռնեցի, ամենուն մէջ զբաղիրներ հաստատեցի՝ սպրանքս դնելու և քիչ քիչ կամ մէկէն ծախելու համար, և շատ չանցաւ այս անտեսութեամբ մեծ շահ և եկամուտ մ'ունեցայ:

Յետոյ՝ այսչափ ցիր ուցան միտերանոցներ մէկտեղ բերելու համար՝ մեծ տուն մը ծախու առի, որ ընդարձակ հողի մը վրայ էր, բայց կը փլէր: Բոլորն ալ իջեցնել տուի, և անոր տեղը Ձեր վեհափառու-

թեան երէկ տեսած տունը շինել տուի: Բայց՝ թէ և աղոթ տեսք մը ունի, շատ մը միտերանոցներ կան անոր մէջ, որոնք ինձի հարկաւոր են, նոյնպէս բնակարաններ թէ ինձի և թէ ընտանիքիս համար:

Արդէն բաւական ժամանակ կար որ իմ հին սղփիկ տունս թողեր և այս նոր տունս եկեր բնակելու էի, երբ Սասա և Սաստի՝ որ մինչև այն ատեն իս մտքէ չէին անցուցած, իս յիշեցին: Օր մը պարտելու ելան և իմ առջի փողոցէս անցնելու ատեն, զարմացան զխտելով որ իմ հին տունս չեմ բնակիր: Հարցուցին թէ ուր դացիր եմ, թէ արդևօք ողջ թէ մեռած եմ: Իրենց զարմանքը լմնցաւ երբ իմացան որ հարցուցած մարդը մեծ վաճառական եղեր է, և թէ հիմակ անունը մինակ Հասան չէ, այլ Հօճա Հասան Ալհասպալ, այսինքն չուանագործ Հասան վաճառականն, և թէ փողոցի մը մէջ զոր անուանեցին, տուն մը կառուցանել տուած է որ պալատի կը նմանի:

Երկու բարեկամներն եկան իս եղած տեղս փնտռելու, և ճամբուն վրայ, որովհետև Սաստի չէր կրնար երևակայել որ Սաստին տուած կապարի կտորն այն իմ անբաւ հարստութեանս պատճառ եղած է, անոր ըսաւ:

«Աստարեալ ուրախութիւն մը կը դգամ Հասան Ալհասպալի բողբոջ շինելուս. բայց չեմ կրնար ներել իրեն որ երկու անգամ սուտ ըսէ ինձ չորս հարիւր ոսկի իզնէ քաշելու համար՝ երկու հարիւրին տեղ. վասն զի չեմ կրնար երևակայել որ իր հարստութեանս պատճառը տուած կապարի կտորը է, և ոչ ոք՝ ինձի պէս կրնայ ասոր հաւատալ:

— Այդ քու կարծիքդ է, վրայ բերաւ Սասա, բայց ես քեզի պէս չեմ մտածեր, և չեմ կրնար հասկնալ թէ ինչու համար Հօճա Հասանն յանիրաւի ստախոս կ'անուանես: Ներէ ինձ ըսելու որ ճշմարտութիւնը յայտնեց ինձ, և իրօք անոր տուած կապարի կտորիս պարտաւոր է միայն իր հարստութիւնն: Եւ այս բանս նոյն իսկ Հօճա Հասանին բերնէն պիտի իմանանք:

Այս երկու բարեկամներն այսպէս խօսելով գտնուած փողոցս հասան: Հարցուցին թէ տունս ուր է, և երբ ցոյց տուին, անոր ճակատը նայելով՝ դժուարաւ հաւատացին թէ ինն է: Գուռը զարկին և դռնապանս զայն բացաւ:

Սաստի որ կը վախնար թէ անքաղաքավարութիւն մը չընէ իշխանի մը տունն ինն կարծելով, դո՛նապանին ըսաւ . «Այս տունը ցոյց տուին մեզ ըսելով թէ Հօծաւ Հասանինն է, ըսէ մեզ արդեօք սխալ եկանք :

— Ոչ, տէր իմ, չէք սխալիր, պատասխանեց դո՛նապանը դուռն ամբողջ բանալով, ճիշտ անոր տունն է այս : Ներս հրամայէք, տէրս սրահն է, և գերիներէն մէկը ձեզի պիտի ցուցնէ զինքը :»

Երկու բարեկամներու գալուստն եկան ինձ իմաց տուին և զանոնք ճանչցայ : Երբ զանոնք հեռուէն տեսայ, զէպ անոնց վազեցի և ուզեցի անոնց պատմութիւնն քղանցքն առնուլ համարել, բայց թող չտուին, և հարկ եղաւ իբարու հետ գրկուիլ : Հրաւիրեցի զանոնք մեծ բազմոցի մը վրայ նստելու, որ պարտիզիս վրայ կը նայէր : Իմ հրահրանքս ընդունեցան, բայց ուղեցին որ պատուաւոր տեղն էս նստիմ :

«Տեաք իմ, ըսի անոնց, չեմ մտնցած որ խեղճ Հասան Ալհատարն էմ, և թէ ուրիշ մէկն ալ բլլայի և ձեզի պարտաւորութիւններ չունենայի, դարձեալ ձեզի վայել յարգանքը տալու պարտաւոր էի . կ'աղաչեմ իս աւելի մի շփոթէք և խնդիրս կատարեցէք :»

Այն ատեն իրենց վայել տեղը նստան և ես ալ անոնց զիմացը բազմեցայ :

Այն ատեն Սաստի խօսքն առնելով և ինձի ուղղելով ըսաւ . «Հօծաւ Հասան, չգիտես որչափ ուրախ եմ քեզ փափաքածիս պէս տեսնելով, երբ քեզ ընծայ բրի, յանդիմանութեան տեղ մ'առնուր, երկու անգամ երկու հարիւրական ոսկի . համոզուած եմ որ չորս հարիւր ոսկին այդ փոփոխութեան պատճառ եղան և հարուստ ըրին քեզ, ինչպէս որ ինդութեամբ կը տեսնեմ : Մինակ կը զարմանամ թէ ինչո՞ւ համար երկու անգամ ճշմարտութիւնը պահեցիր ինչէ, պատճառ ելով թէ զլիսիգ այնպիսի փորձանքներ եկեր են որոնք մինչև ցոյսօր ինձի անհատաւորի կերելին : Միթէ ասոր պատճառը սա չէր որ քու սրտիկ զործերդ թէ առաջին և թէ վերջին անգամ տուած երկու հարիւր ոսկիով առաջ տարած չբլլալուդ՝ ամէլցար խոստովանութիւն մ'ընելու : Ես այսպէս կարծեմ, և կ'սպասեմ որ այս իմ կարծիքս հաստատես :»

Սասա՛ Սաստիին այս խօսքերն անհամբերութեամբ չըսեմ՝ սրտնս թեամբ մտիկ ըրաւ, և անոր նշանները ցոյց աչքերը վար

առնելով և զլուին օրելով : Սակայն՝ առանց բերանը բանալու՝ թողուց որ մինչև վերջը խօսի : Երբ լինցուց, «Սաստի, ըսաւ նա, ներէ ինձ եթէ Հօծաւ Հասան քեզի պատասխան չտուած՝ անոր խօսքը կը կտրեմ՝ ըսելու համար որ կը զարմանամ անոր անիկեղծութեան գէմ՝ ունեցած ծուռ կարծիքդ, և կը սնդեւ որ զլուին եկած ձիւնին համար ըսածները չհատարու : Արդէն ըսի քեզ, և կը կրկնեմ, որ իսկոյն հատարի իրեն հասած երկու ձախորդութեան սարդ պատմութիւնը ըսելուս, և դու թէ և հակառակը կը սնդեւ, ես համոզուած եմ որ ճշմարիտ է : Բայց թողուք որ ինքը խօսի, և պիտի տեսնենք թէ որո՞ւ կողմն է իբրաւունքը :»

Այս երկու բարեկամները խօսեցին ետև՝ ես սկսայ խօսիլ և երկուքին ալ նայելով՝ անոնց ըսի . «Տեաք իմ, յախտեան լուռ պիտի կենայի և ձեր ուղած բացատրութիւնը չպիտի տայի, եթէ ստոյգ չբլլայի որ իմ պատճառաւ ձեր մէջ ծագած վէճը թերեւ քակէ այն կտան որ ձեր սիրտերը կը կապէ : Ուստի պէտք եղած բացատրութիւնը պիտի տամ, քանի որ իզնէ կը պահանջէք, բայց նախ կը հաստատեմ որ ինչ որ ասիէ առաջ ինձ պատահած էր՝ կատարելապէս ճշմարիտ էր :»

Այն ատեն մի առ մի պատմեցի անոնց իրողութիւնն, ինչպէս որ Ձեր վեհափառութիւնը լսեց՝ առանց ամենափոքր պարտոյ մը զանց ընելու :

Իմ անիկեղծ խօսքերս Սաստիին վրայ տպաւորութիւն չըրին և անոր ծուռ կարծիքն իմ մասին չցրուեցին : Երբ խօսքս աւարտեցի, «Հօծաւ Հասան, ըսաւ նա, ձուկին և անդամանդին պատմութիւնն, անդամանդ մ'որ ձեռքով գրածի պէս անոր փորէն դտեր ես, նոյնպէս ցինի մը միջոցաւ ապարօշիգ յափշտակութիւնն ու թիփի ամանին կառի հետ փոխանակութիւնն ինձի անհատաւորի բաներ կ'երևին : Ինչ որ է, ուրախ սրտով կը դիտեմ որ ալ ազքատ չես՝ այլ հարուստ, ինչպէս որ իմ քիափաքս ալ ձեռօքս քեզ այս վիճակին բերել էր :

Որովհետև ժամանակն ուշ էր՝ ոտք ելաւ երթալու համար, նոյնպէս և Սասա : Ես ալ ելայ և զանոնք կիցնելով, «Տեաք իմ, ըսի, ներեցէք ինձ ձեզնէ շտոր՝ մը խնդրելու . կ'աղաչեմ չմերժէք զայն . կը խնդրեմ որ հաճէիք այս զիշեր այս տեղ մնալու և ինձի հետ պարզ

ընթացք մ'ընեցու, որպէս զի վաղը նաւակով իմ մէկ պղտիկ զիւղաւտուն տանիմ ձեզ, ուր ատեն ատեն հով առնլու համար կ'երթամ. անկից ալ նոյն օրը ձիերովս ձեզ քաղաք կը դարձնեմ:

— Եթէ Սասա ուրիշ տեղ գործի համար երթալու ստիպուած չէ սրտովին ես կը հաւանիմ, բաւ Սասաի:

— Ես գործ չունիմ, վրայ բերաւ Սասա, քանի որ քու ընկերութիւնդ պիտի վայելի: Աւրեմն պէտք է մարդ զըրկել իմ և քու տունդ իմաց տալու համար որ մեզի չսպասեն:

Իսկոյն գերի մը կանչեցի, և երբ այս յանձնարարութիւնն անոր ըրին, դացի և ապսպրեցի որ ընթացք մը պատրաստեն:

Մինչև ասոր պատրաստութիւնն իմ բարերարներս պտրոցուցի և տունս ցոյց տուի. շատ հառնեցան և իմ վիճակիս յարմար գտան: Երկու քնին ալ բարերարներս կը կռչէի, վասն զի առանց Սասաիին, Սասա կասարի կտորը չպիտի տար ինձ, և առանց Սասաիին, Սասաիին ալ իս չպիտի գար գանէր չորս հարիւր տիկին ընծայելու, որ բոլոր երջանկութեանս աղբիւրն է: Նորէն սրահը դարձանք, և ինձ առուտուրիս վրայ մանր հարցումներ ըրին, իմ պատասխաններուս վերջոյ՝ շատ գոհ եղան ընթացքէս:

Աերջպէս եկան ձայն տալու ինձ որ ընթացքը պատրաստ է: Արովհետև սեղանն ուրիշ սրահ մը դրուեր էր, հիւրերս հոն հրախրեցի: Առսաւոր կանթեղներուն, տեղոյն մաքրութեան, ընտիր ընտիր կերակուրներուն վրայ զգամացան, և իրենց ճաշակին յարմար գտան: Նոյնպէս ճաշի ժամանակ նուագարանի և ձայնական երաժշտութեամբ մը զանոնք մեծարեցի, և երբ սեղանը վերցուցին, պարողներու և սպորտահիներու խումբ մ'եկան և զանազան գրօսալի խաղեր ալ ըրին, և ջանացի անոնց հասկցնելու, որչափ որ ձեռքէս կղար, թէ մեծ երախտագիտութիւն կը տածեմ անոնց համար:

Հետևեալ օրն՝ ինչպէս որ Սասաիին և Սասաին հետ խօսեր էի, առտու կանուխ ելանք որ զով օգ վայելելով արևը շեղած դետեղերը հասանք: Խիստ մաքուր նաւակ մը մտանք որուն մէջ օժոց մը փռեր էին և յորձանքին և վեց հատ քաջ թիավարներու շնորհիւ զիւղատուն մտնեցանք մէկ ու կէս ժամ ջրին վրայ պտրտեւէն ետև:

Երկու բարեկամք ցամաք ելնելով կանկ առին, այնչափ տանս արտաքին գեղեցկութեան վրայ չզմայլեցան որչափ անոր աղ որ զիբքին, չքնաղ տեսարաններուն՝ որ ոչ շատ հեռուսր և ոչ շատ սահմանաւոր էին, և աչաց խիստ ակորձելի: Յետոյ զանոնք զիւղատանս խոցերը պտրոցուցի, անոր յարակից մասերը, հողերն ու դիւրութիւնները ցոյց տուի, և ամեն ալ սիրուն և գեղածիժազ գտան:

Աերջը պարտէզը մտանք, ամենէն շատ տեսակ տեսակ կարնջի և կիտրոնի պուրակներն անոնց աչքը զարկին, որոնք ծաղիկներով և պտուղներով բեռնաւորուած էին. օզը հոտաւէտ էր, ծառուղիներ կային աղիս անդին, և յարստե առուէ մը կ'ոռոգուէին ծառէ ծառ, որուն ջուրը գետէն առնուեր էր: Հովանին, արեւին տապուն ժամանակ զովս թիւնն, առուակին անոյշ կարկաշն, անթիւ թռչուններուն անբաժնակ դայլոյլիկին, և ուրիշ շատ մ'ակորձելի բաներ հիւրերս հիացուցին, այնպէս որ քանի քայլ մ'առնուին կը կենային, երբեմն շնորհակալ ըլլալու այնպիսի զմայլելի վայր մը զանոնք բերելուս, երբեմն շնորհաւորելու իս որ այսպիսի աղւոր կալուած մը ձեռք ձգեր էի:

Հիւրերս մինչև անտառին ծայրը տարի, որ շատ երկայն ու լայն է, և այն տեղ ցոյց տուի անոնց մեծ ծառերու անտառ մ'որով պարտէզը կը վերջանար: Անկից ամէն կողմէ բաց տաղաւար մը տարի զանոնք, բայց արմատնի ծառերով հովանաւորուած էր, որ հեռուն գտնուած բաները տեսնելու չէր արդիւր. նոյն տաղաւարին մէջ գորգով և բարձով բազմոց մը կար, և հրախրեցի հիւրերս որ հոն նստին:

Իմ՝ որդիներէս երկու քը զիւղատունս եկեր էին աղդէն իմ՝ հրամանաւս իրենց գաստիւբակին հետ, որպէս զի քիչ մ'օգ առնուն, և անտառը մտնէին. և որովհետև թռչնոց բոյներ կը փնտռէին, մեծ ծառի մը ձիւղերուն մէջ հատ մը տեսան: Առաջ փորձ մ'ըրին վրանս ելնելու, բայց սրովհետև ոչ ոյժ ոչ ճարպիկութիւն ունէին այս փորձն ընելու, անոնց ընկերացող գերիի մը ցոյց տուին, և ըսին անոր որ այն բոյնէն թռչուններն իրենց բերէ:

Գերին ծառին վրայ ելաւ, և երբ մինչև բոյնը հասաւ, չափազանց զարմացաւ տեսնելով որ ապարօշի մը մէջ շինուած է բոյնս: Բոյնն ա՛

պարօջալի՛ աւնու, վար կ'իջնէ և զայն տղոցս կը ցուցնէ, բայց զխանա-
լով որ հետաքրքիր պիտի ըլլամ զայն տեսնելու, այս բանս որդւոցս ը-
սաւ և բոյնն անդրանկին տուաւ որ ինձի բերէ :

Հեռուէն անոնց զաւր տեսայ տղոց յատուկ ուրախութեամբ, որոնք
բոյն զտած են. նոյն բոյնն ինձ տալով, «Հայր իմ, ըսաւ ինձ անդ-
րանկին, նայէ սա բոյնն որ ասարօջի մը մէջ շինուած է :»

Սաստ և Սաստի այս հետաքրքրական բանին վրայ ինձի չափ զար-
մացան, բայց անոնցմէ աւելի զարմանքս շատցաւ տեսնելով որ ցինին
ինչէ՛ յափշտակած ասարօջն է : Ամէն կողմէն զայն քննելէն ետե՛ կը-
կու բարեկամներուս ըսի. «Միթէ կը յիշէք որ երբ առաջին անգամ ե-
կար իս տեսնելու այս ասարօջը գլուխս դրեր էի :

— Չեմ՛ կարծեր որ ինձի պէս՝ Սաստին ալ այդ բանին ուշադրու-
թիւն ըրած ըլլայ, պատասխանեց Սաստ. բայց երկու քնիս ալ պիտի
հաստանք որ այն ասարօջը քուկդ է, եթէ հարկը իննսուն ոսկին ա-
նոր մէջ կը գտնուին :

— Տէր իմ, վրայ բերի, տարակոյս մ'ունենար որ նոյնն է. ոչ մի-
այն լաւ կը ճանչեմ զայն, կը զիտեմ նաև անոր ծանրութենէն որ ու-
րիշ մը չէ, և դուք ալ նոյնը պիտի ըսէք եթէ ասարօջն աւնուք
քննէք :»

Աստի թո՛ղնիկները մէջէն հանուէն և տղոց տալէն ետե՛ ասարօջն
անոր ձեռքը տուի. Սաստ առաւ զայն և Սաստիին յանձնեց որպէս
զի անոր ծանրութիւնը դատէ :

«Ես կը հաստամ որ քու ասարօջդ է այս, ըսաւ Սաստի, սակայն
աւելի ևս պիտի համոզուիմ եթէ հարկը իննսուն ոսկին աչքովս տես-
նեմ :

— Գոնէ լաւ զիտեցէք, տեարք իմ, յարեցի երբ նորէն ասարօջը
ձեռքս առի, զիտեցէք, կ'աղաչեմ զայն քակելէն առաջ, որ այս ասար-
օջն այսօր ծառին վրայ չէ գտնուած, այլ անոր տեղին ու մէջի բոյնն
որ կողիկ մը շինուած է, ստոյգ նշաններ են որ նոյն ծառին վրայ
մնացեր է այն օրէն վեր որ ցինը զայն յափշտակեց և անտարակոյս այն
ծառին վրայ ձղեց կամ դրաւ և անոր ճիւղերն արգիլած պիտի ըլլան
գետինն ինչպէս : Այս զիտողութիւնս ձեզի աւելորդ չերևի, վասն

զի առաջին հոգս այն է որ փարատէք ձեր մտքէն իմ կողմէս խարէու-
թեան կասկած մը :»

Սաստ իմ խորհրդին աջակից եղաւ, և ըսաւ. «Սաստի, այս զի-
տողութիւնն աւելի քեզ կը նայի քան թէ ինձ, վասն զի ես համո-
զուած եմ որ Հօճա Հասան մեզ չխարեր :»

Մինչդեռ Սաստ կը խօսէր, ասարօջին չորս կողմը փաթթուած լա-
թը քակեցի, և անոր մէջէն քսակը հանուցի. Սաստի վիայեց որ իր
տուած քսակն է, նոյն ոսկիները զորդին վրայ թափեցի և անոնց ըսի.
Տեարք իմ, ահա տափիկ ոսկիները, դուք ձեր ձեռքը համբեցէք և
տեսէք թէ գումարը ճիշտ է :

Սաստ տանակիսն հատ զատեց մինչև իննսուն կտոր, և այն ատեն
Սաստի, որ չէր կրնար այսպիսի ակներև ճշմարտութիւն մը ժխտել,
սիսաւ խօսիլ, և ինձ դառնալով ըսաւ. «Հօճա Հասան, կը խոստովա-
նիմ որ այս հարկը իննսուն հատ ոսկին քեզ հարուստ ընելու չծառա-
յեցին, բայց միւս հարկը իննսուն հատը, զոր թեփի ամանի մը մէջ
պահէր էիք, ինչպէս որ հաստացնել կ'ուզես, հարստութեանդ ձեռն-
տու եղած են անշուշտ :

— Տէր իմ, վրայ բերի, ես քեզի ճշմարտութիւնն ըսի թէ առա-
ջին և թէ վերջին գումարին վրայ : Անտարակոյս չես ուզեր որ սուտ
ըսելու համար խօսքս ետ աւնում :

— Հօճա Հասան, ըսաւ Սաստ, թող Սաստին իր կարծիքին մէջ :
Սրտովին կը հասնիմ որ հաստայ ինքն թէ քու հարստութեանդ
կէսն անոր պարտաւոր ես, միայն ինքն ալ խոստովանի որ քեզի տուած
կապարի կտորին շնորհիւր միւս կէսն ալ ինձի պարտաւոր ես, և կաս-
կածի տակ չընէ՛ ձկին փորին մէջ գտած անոյին անդամանդդ :

— Սաստ, վրայ բերաւ Սաստի. թող այդպէս ըլլայ, հէրիք է
որ ներես ինձ սնուելու որ ստակով միայն ստակ զիղել կարելի է :

— Ի՞նչ, պատասխանեց Սաստ, եթէ զիպուածով յիտուն հազար
ոսկի արժող անգամանդ մը գտնեմ, և այն գումարով վճարեմ, միթէ
այսչափ ստակ ստակով շահած կ'ըլլամ :»

Վիճարանութիւնն այս տեղ լմացաւ : Ուրք ելան և տունը դառնա-
լով սեղան նստանք՝ կերակուրը պատրաստ ըլլալուն : Ճաշէն ետքը

Տիրերս ազատ թողուցի թրջայն տար օրը՝ հանդիստ անցունեն, մինչդեռ ես իմ դունասարնիս և սարտիղղայնիս գացի այլ և այլ բաներ ապսպրելու: Յետոյ ներս մտայ, և աննշան բաներու վրայ սկսանք խօսիլ, մինչև որ սաստիկ ջերմն թխնն անցաւ և սարսեղը վերադարձանք, ուր մինչև երեկոցեան զովութեան ատենը մնացինք: Այն ատեն երկու բարեկամներ և ես ձի հեծանք և մեզի հետ գերի մ'առնելով Պաղտատ հասանք՝ աղւոր լուսնկայով և գրեթէ դիշերուան ժամն երկու քին:

Չգիտեմ թէ ինչպէս սպասաւորներուս անհողութեամբը զարին պահեր էր ձիերուն համար: Մթերանոցները գոցեր էին, և շատ հեռու գանուելով չէին կրնար երթալ ուշ ատեն գնել:

Գրացիներուն հարցնելով՝ գերիներէս մէկը խանութի մը մէջէն թեփի աման մը գտաւ. թեփը գնեց և ամանով բերաւ՝ միւս օրն ամանը դարձնելու պայմանաւ: Գերին մտաբն մէջ սպարպից թեփին, և տարածելու ատեն, որպէս զի ամէն ձիերն ալ ուտեն, ձեռքին տակ կապուած ծրար մ'ըզաց որ ծանր էր: Ծրարն ինձ բերաւ՝ դանուած վիճակին մէջ և ինձի տուաւ, բնելով թէ կարելի է այն լաթն է որուն որուն պատմութիւնը շատ անդամ բարեկամաց պատմած եմ:

Ուրախութեամբ լցուած՝ իմ բարեբայներուս ըսի. «Տեսաք իմ, Աստուած չուզեր որ իմնէ գատախը մինչև որ բողբուլին չհամադուիք բոլոր բաժններուս ստուգութեան վրայ: Ահա տարիկ, շարունակեցի Սաստիսն դառնալով, այս տեղ են քու ձեռքէդ ստացած միւս հարիւր իննսուն ոսկին, այս լաթէն զայն կը ձանչիմ:»

Լաթը քակեցի և դումարն անոնց առջև համոզցիլ: «Նոյնպէս ամանը բերել տուի, զայն ձանչցայ, և կնկանս զրկեցի հարցնելու համար թէ արդեօք ինքն ալ կը ձանչնայ, պատուիրելով որ պատահածին վրայ բնն մը չբռնն անոր: Այնու զայն ձանչցաւ և իմաց տուաւ ինձ թէ Քիշտ այն ամանն է որ թեփով լեցուն կառավաճառին հետ փոխանակեր էր:

Աերջապէս Սաստի խօսք չունէր. և թերահաստութիւնը մէկդի թողլով Սաստին բաւ. «Քեզ իրտունք կտամ և կը հաւանիմ որ ստակը միշտ միջոց մը չէ ուրիշ ստակ շահելու և հարուստ գտնուալու:»

Երբ Սաստ խօսքն աւարտեց, «Տէր իմ, ըսի անոր, չեմ համարձակիր առաջարկել քեզ որ ետ առնուս այն երեք հարիւր ութսուն ոսկին, զոր Աստուած հաճեցաւ այսօր երևան հանելու որպէս զի իմ անկեղծութեանս վրայ ունեցած սխալ կարծիքդ ուղղես: Ղատահ եմ որ ետ առնու մտօք չտուիր ինձ այն գումարն: Իսկ ես ալ չեմ ուզեր գործածել զայն, քանի որ ուրիշ կողմէն ինձ զրկած բազդէն շատ գոհ եմ, այլ յուսամ որ կըլ՝ հաւանիս եթէ ազբաններուն որդրմութիւնը ընեմ, որպէս զի Աստուած փոխարէնը թէ քեզ և թէ ինձ տայ:»

Երկու բարեկամներն այն դիշեր իմ տունս քնայան և հետեւեալ օրն՝ իս դրիկէն ետև իւրաքանչիւրն իր տունը դարձաւ, իրենց ըրած ընդունելութեանս շատ գոհ ըլլալով, և տեսնելով որ Աստուծմէ ետքն իրենց պարտաւոր եղած երջանկութեանս վրայ չեմ խրոխտար: Ես ալ գացի անձամբ շնորհակալ եղայ անոնց, և այն ասանէն վեր մեծ պատիւ կը սեպեմ անձիս որ ազատութիւն տուին իրենց հետ բարեկամութիւն կապելու և ստէպ տեսնուելու:

Հարուն-ալ-Վաշխտ ամիրայպեան այնպիսի ուշադրութեամբ մտիկ կ'ընէր Հօճա Հասանի պատմութիւնն որ անոր վախճանը հասնիլը ըրութեանն միայն հասկցաւ: Ուստի անոր բաւ, «Էօճա Հասան, երկար ատենէ վեր լսած չեմ պատմութիւն մ'որ ինձ այսչափ հաճոյք պատճառէ որչափ այն հրաշալի միջոցներն որով Աստուած հաճեր է քեզ երջանիկ ընել այս աշխարհիս մէջ: Ուրեմն քեզ կ'իմայ փառք տալ անոր, անոր բարեբարութիւնները լուի գործածելով: Նոյնպէս կը փախարիմ որ դիւանաս թէ հարստութիւնդ շինող անդամանդն իմ գանձատանն մէջն է, և ես ալ ուրախ եմ խնայալով թէ ինչ կերպով իմ ձեռքս հասեր է: Բայց կարելի է որ Սաստին դեռ կապած մ'առնենայ այն անդամանդին վրայ, զոր գանձիս ամենէն թանկագին և հիացման արժանի բանը կը սեպեմ, կ'ուզեմ որ Սաստին հետ անոր տանիս, որպէս զի գանձապահս անոր ցուցնէ. և եթէ տակաւին թերահաստութիւն մ'ունի՝ թող քաջ համոզուի որ ազբատ մարդու մը համար դրամն անվրէպ միջոց մը չէ մեծ հարստութիւններ ստանալու քիչ ժամանակի մէջ և առանց մեծ նեղութեան: Կ'ուզեմ նաև որ պատմութիւնդ գանձապահիս պատմես որպէս զի դրի առնել տայ և անդաման-

գին հետ պահուի .»

Այս խօսքերն աւարտելով ամիրապետը գլխի շարժումով մը յայտնեց Հօճա Հասանին, Սիտի Նումանին և Պապա Ապտալլահին որ իրենցովէ գոհ է. ասոր վրայ երեքն ալ մնոր գահին առջև խոնարհութիւն ըրին և ապա ելան գացին :

Վ Ե Բ Զ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Հ Ա Տ Ո Ր Ի

Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Յ

	Երես
Պատմութիւն Արթուր՝ քնացողին	5
» Ալտոտինի կամ հրաշալի կանթեղին	54
Հարուն-ալ-Քաշիտ ամիրապետին արկածները	170
Պատմութիւն Պապա Ապտալլահ կոյրին	174
» Սիտի՝ Նումանի	186
» Հօճա Հասան Ալհամբալի	200

«Ազգային գրադարան



NL0538632

«Ազգային գրադարան



NL0538631

«Ազգային գրադարան



NL0538630

«Ազգային գրադարան



NL0538629

«Ազգային գրադարան



NL0538628

«Ազգային գրադարան



NL0389782

73.359-

-73.364